

ԱՐՄԵՆ ԴԵՏՐՈՍՅԱՆ

ԱՌԱՍԴԵԼ

ԵՎ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРМЕН ПЕТРОСЯН

МИФ  
И  
СОВРЕМЕННАЯ РЕАЛЬНОСТЬ

---

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

ARMEN PETROSYAN

THE MYTH  
AND  
CONTEMPORARY REALITY

ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ НАН РА  
ЕРЕВАН 2019  
IAE PUBLISHING HOUSE  
YEREVAN 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՌԱՍՊԵԼ  
ԵՎ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2019

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

Պետրոսյան Արմեն

Պ 505 Առասպել և ժամանակակից իրականություն / Ա. Պետրոսյան. — Եր.:  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
հրատարակչություն, 2019. — 216 էջ:

Ժամանակակից իրականության առասպելաբանական ընկալումը՝ ժամանակակից առասպելաբանությունն ու նրա հերոսները, կարելի է ասել, դուրս են մնացել հայաստանյան հետազոտողների տեսադաշտից: Այս գրքում ընթերցողը կարող է ծանոթանալ հին առասպելների, առասպելաբանական վերակազմությունների ու կերպարների, առասպելաբանական մտածողության առանձնահատկությունների հետ և տեսնել նրանց դրսևորումները մեր ժամանակներում: Նախատեսվում է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 398  
ԳՄԴ 82

ISBN 978-9939-9178-7-0

© Պետրոսյան Ա., 2019  
© ՀԱԻ հրատարակչություն, 2019

## ՆԱԽԱԲԱՆ

Այս գրքում ներկայացված են որոշ գործեր, որոնք դուրս են իմ աշխատանքի հիմնական ուղղությունների շրջանակից: Դրանք, ի տարբերություն մյուսների, որտեղ քննարկվում են հին ու հնագույն դարաշրջանների իրողություններ՝ վաղնջական առասպելներ, ժողովրդի ծագման և հնագույն պատմության հարցեր են, նվիրված են ժամանակակից իրականության խնդիրներին՝ առասպելաբանական արխետիպերի և մոդելների ժամանակակից դրսևորումներին, ժամանակակից բանահյուսությունը, հետսովետական Հայաստանում գրական հայերենի վիճակին և հայագիտության ներկա խնդիրներին:

«Առասպել և ժամանակակից իրականություն» մենագրությունը ես սկսել եմ գրել 1997-ի ամռանը, երբ վերջացրեցի և հրատարակեցի «Արամի առասպելը»: Գրեցի մի քանի գլուխ, հետո միջոցներ գտնվեցին մեկ այլ, ավելի փոքր ծավալով գիրք հրատարակելու համար, և ես սկսեցի գրել «Հայկական էպոսի հնագույն ակունքները», որը հրատարակվեց նույն տարի աշնանը: Այնուհետև մեկնեցի ԱՄՆ երկարատև գործուղման: Վերադարձին արդեն այլ նախագծեր էին ինձ սպասում, և չչարունակեցի կիսատ թողած գործը: Ձեռագիրը մնաց անավարտ:

Հիմա, 21 տարի անց, ես գտա ձեռագրի մեծ մասը և որոշեցի տպագրել այն: Զբաղվելով առասպելաբանությամբ՝ նկատում էի, որ կյանքը մեր իրականության մեջ հաճախ ընկալվում էր, եթե կարելի է այդպես ասել, առասպելաբանական ակնոցով: Ե՛վ սովետական, և՛ հետսովետական իրականության շատ երևույթներ մարդկանց կողմից իմաստավորվում էին ոչ թե ռացիոնալ, օբյեկտիվ, տրամաբանական կամ գիտական, այլ առասպելաբանական մտածողության և առասպելաբանական կադապարների հիման վրա:

Դրան նպաստում էր սովետական անցյալի ինտերցիան: ՄՍՀՄ-ում մարքսիզմ-լենինիզմը վերածվել էր արխայիկ մի կրոնի, իսկ Ստալինի կերպարը «անհատի պաշտամունքի» ժամանակ վերածվել էր հեթանոսական արև-աստծու մի ժամանակակից տարբերակի: Նրա դատապարտումից հետո մնաց միայն Լենինի՝ ավելի թույլ արտահայտված պաշտամունքը, որը պահպանվեց մինչև ՄՍՀՄ փլուզումը: Իսկ Ղարաբաղյան շարժումը և նրան հաջորդած անկախությունը ծնեցին այլ առասպելաբանական ընկալումներ:

ՄՍՀՄ գոյության վերջին տարիներից երկրում լայն թափ ստացան տարբեր տեսակի կրոնական, աղանդավորական, միստիկական շարժումները. մարդիկ չափազանց հետաքրքրված էին էզոտերիկ, գաղտնի, «ոչ սովետական-մատերիալիստական», դպրոցում չանցած, ՄՍՀՄ-ում չխրախուսվող այլևայլ ուղղություններով: Ողջ երկիրը շնչակտուր դիտում էր Ալան Չումակի, Անատոլի Կաշպերովսկու հեռուստատեսային հաղորդումները և անհագ կարդում անհասանելի Ջոնս Դաթունաշվիլու այլընտրանքային բուժումների մասին: Երկիրը հեղեղվել էր ձեռնագուշակության, աստղագուշակության, տնարույս բուժումների ուղեցույցներով և Նոստրադամուսի ու նորահայտ պայծառատես-գուշակների ստեղծագործություններով: ՄՍՀՄ անկումը մարդկանց ցույց էր տալիս, որ իրենց սովորած գիտությունները սխալ էին՝ աշխարհը այլ իրողություններով է պայմանավորված, գործում են այլ ուժեր ու սխեմաներ:

Մարդիկ նոր ուղիներ էին փնտրում և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ ընդհանրապես կյանքն իմաստավորելու համար: Եվ գտնում էին հիմնականում առասպելաբանական բացատրություններ ու փորձում շարժվել նրանցով: Մարդկանց ընկալումներում առասպելական գծեր էին ձեռք բերում ոչ միայն անցյալի, այլև ներկայի գործիչները, նրանց գործերը, կյանքն ու մահը: Մի անգամ, երբ այդ մասին խոսում էի մեր՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար բանագետ Սարգիս Հարությունյանի հետ, իմ այն խոսքին, թե Եվրոպայի զարգացած երկրներում իրադրությունը ներկայումս այդպիսին չէ՝ ընկալումներն այդքան առասպելաբանական չեն, նա պատասխանեց, որ եթե այնտեղ էլ իրադրությունը ճգնաժամային-օրհասական դառնա, էլի նման մի վիճակ կստեղծվի:

Մինչև վերջերս, և նույնիսկ մինչև հիմա, հայաստանյան հասարակությունը պահպանել է շատ արխաիկ գծեր: Մինչև XX դար թուրքիայում հայ գյուղացիները շատ չէին տարբերվում իրենց միջնադարյան և շատ առումներով՝ անգամ հնադարյան նախնիներից: Գյուղատնտեսության նույն մեթոդները, գործիքները, կենցաղային սովորությունների նույն մոդելները, չնայած լուսավորության որոշակի առաջընթացին, շարունակում էին գոյատևել ողջ Հայկական լեռնաշխարհի բնակչության մեջ, իսկ հայերի մուսուլման հարևաններ, կարելի է ասել, որ ապրում էին ավելի արխաիկ կենցաղով:

Ոչ միայն հայ, այլև շատ ժողովուրդներ, մինչև իսկ լուսավոր Եվրոպայում, այդ առումով շատ չէին տարբերվում հայերից, և նրանց մեջ էլ միանգամայն տարածված էր պատմության, քաղաքականության և այլ իրողությունների առասպելաբանական ընկալումը: Այն, ակնհայտորեն, ավելի ուժեղ էր գործում պատմության վճռական, բախտորոշ ժամերին: Այդպիսիք էին մեզանում Ցեղասպանության, ստալինյան բռնաճշումների, հայրենական պատերազմի դարաշրջանները, որոշ չափով՝ նաև Ղարաբաղյան շարժման, Ադրբեջանի հետ պատերազմի և նույնիսկ հաջորդ տարիները:

Իրականությունը բարդ է՝ բաղկացած բազում տարրերից, որոնց հետևելը հնարավոր և իրատեսական չէ: Հասկանալու համար այն ինչ-որ կերպ պետք է պարզեցնել, մոդելավորել այնպես, որ հնարավոր լինի բացատրություններ ու լուծումներ գտնել: Ահա այդպիսի մոդելավորման եղանակներ է տալիս առասպելաբանությունը, որը շատ առումներով հարևանման մի երևույթ է մարդկային բոլոր հասարակություններում՝ սկսած արխաիկներից մինչև ամենաքաղաքակիրթները:

Գրքի սկզբունքը հետևյալն է: Ներկայացնել առասպելաբանական մի իրողություն և ցույց տալ նրա դրսևորումները հայկական և հայաստանյան իրականության ընկալումներում: Գիրքն անավարտ է և անկատար: Ես ենթադրում էի գրել մի շարք այլ գլուխներ, որոնք կմիավորեին ու կամբողջացնեին ասելիքը, բայց դրանք մնացին չգրված: Հիմա փոխվել է ժամանակը, փոխվել ենք և՛ ես, և՛ իմ հետաքրքրությունների շրջանակը: Ցավոք, չեմ կարող վերադառնալ անցյալ և ավարտել գիրքը: Շատ հղումներ և ծանոթագրություններ,

որ ես ենթադրում էի ավելացնել, նշել էի միայն համառոտագրությամբ և պետք է հիշելի անգիր, սակայն ներկայումս մոռացել եմ: Ապա, եթե ես հիմա ձեռնարկելի գրել այդ գիրքը, բոլորովին այլ բան դուրս կգար:

Ինչևէ, չնայած թերություններին, կարծում եմ, որ գիրքը կհետաքրքրի ընթերցողին: Մարդիկ կարող են ծանոթանալ հին առասպելների, առասպելաբանական վերակազմությունների, կերպարների և առասպելաբանական մտածողության առանձնահատկությունների հետ: Այստեղ է, որ փորձել եմ մանրամասն քննարկել հայաստանցի հայի և սփյուռքահայի այն հատկանիշները, որոնք դուրս են մնացել արվեստագետների և գիտնականների տեսադաշտից: Այստեղ է, որ ես քննարկել եմ հայ իրականության մի շարք այնպիսի ընկալումներ, որոնք այլուրեք չեն քննարկվել: Եվ ընդհանրապես, մինչև այժմ մեր իրականության առասպելաբանական ընկալումը՝ ժամանակակից առասպելաբանությունն ու նրա հերոսները, կարելի է ասել, վրիպել են հետազոտողների հայացքից:

1997-ից շատ բան է փոխվել մեզանում: Դիտելով մեր իրականությունը՝ կարծում եմ, որ ներկայումս աշխարհի առասպելաբանական ընկալումը որոշակիորեն նահանջել է: Այս տարվա հեղափոխությունը դրա ակնառու վկայությունն է: Անցյալում միանգամայն գաղտնի մնացող նմանօրինակ իրողությունները, այդ թվում՝ հեղափոխության ողջ ընթացքը, համացանցի շտրիկով այժմ տեղի էին ունենում, կարելի է ասել, ուղղակի մարդկանց աչքի առջև: Որքան քիչ անհասանելի գաղտնիքներ, այնքան քիչ և մտացածին լուրեր, առասպելաբանական, էգոտերիկ և դավադրական տեսությունների հիմքով ստեղծվող վերլուծություններ ևն: Իհարկե, մյուս կողմից, աշխարհը վերափոխվում է: Եվ այդ տեսություններն ու նրանց դրսևորումները համացանցային դարում նոր ձևեր են ձեռք բերում:

Ես ծնվել եմ ստալինիզմի դարաշրջանում և ամբողջ կյանքի ընթացքում ապրել, կարելի է ասել, անբարոյականության մթնոլորտում, ստի ու կեղծիքի մեջ, սկզբնապես սովետական շրջկոմների, ապա՝ տեղական կոռումպացված իշխանավորների և «բիրդան աղաների» տիրապետության տակ, որոշ լուսավոր պահերով խրուչչովյան ձնհալի, Ղարաբաղյան շարժման ու անկախության առաջին տարիներին:

Իսկ ներկան սքանչելի է թվում (հիշենք «Ֆաուստը»)։ Ինձ հիացնում է երիտասարդական, քաղաքացիական այս մեծ շարժումը։ Նա, հաջող զարգացման դեպքում, կարող է բերել մեզ իրական քաղաքացիական, բարոյական, տնտեսական ազատություն, ազատագրել մեզ դարն ապրած կարծրատիպերի, ստի ու կեղծիքի, գավառամիտ ու հետամնաց «էլիտայի» առաջնորդությունից ու հնարավորություն տալ շարժվելու առաջ։

Այս աշխատությունը գրելիս ես լայնորեն օգտվել եմ Միրչա Էլիադեի, Ժորժ Դյումենգիլի, Վլադիմիր Տոպորովի, Մանուկ Աբեղյանի, Նիկողայոս Ադոնցի, Սարգիս Հարությունյանի, Լևոն Աբրահամյանի և շատ ուրիշների գաղափարներից ու աշխատություններից։



1988-ից, երբ ես սկսեցի աշխատել Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, ինձ զարմացրեց մեր բանագետների մոտեցումը ժամանակակից իրականությանը։ Նրանց հետաքրքրությունը, կարելի է ասել, ուղղված էր դեպի անցյալը և միայն անցյալը։ Մինչդեռ ես, որ զբաղվում էի ամենավաղնշական, մինչև հնդեվրոպական անցյալը հասնող առասպելներով, առասպելաբանական մտածողության, արխետիպների ու հերոսների դրսևորումներ էի տեսնում նաև ժամանակակից հայ իրականության մեջ։ Ընդհանրապես, ժամանակակից առասպելները այլուրեք ևս հայտնի են և ուսումնասիրվում են, բայց՝ սովորաբար որպես նոր իրողություններ, այլ ոչ թե հենց նույն արխաիկ մտածողության ու մոդելների դրսևորումներ։ Դա էր պատճառը, որ ես ձեռնարկեցի այս գիրքը գրելը։

Մեր բանագետները գրանցում և ուսումնասիրում էին բանահյուսության արխաիկ կամ այդպես թվացող, «ժողովրդական» օրինակներ՝ հեքիաթներ, լեգենդներ, վիպական ավանդություններ, երգեր ևն։ Կենդանի, հրատապ անեկդոտները, կատակները, ժամանակակից մանկական բանահյուսությունը և շատ ուրիշ բանահյուսական ժանրեր նրանց հետաքրքրություններից դուրս էին։ Նրանք փնտրում և ուսումնասիրում էին «ժամանակով սրբազործված» հին և հնատիպ, «իսկական» ժողովրդական օրինակներ։ Իսկ ինձ հե-

տաքորքում էին նաև նորերը, և ոչ միայն հին, բնիկ, կամ հին ազդեցություններով ստեղծված, այլև նոր, նորաստեղծ, նոր ազդեցություններով, նոր իրողություններին արձագանքող նյութեր:

Ժամանակակից առասպելների և բանահյուսության թեմային առնչվող իմ առաջին աշխատանքները հրատարակվել են 1990-ին: Հետագայում ևս ես մի քանի անգամ անդրադարձել եմ այդ հարցերին: Եվ քանի որ գիրքն անավարտ էր, ես հնարավոր համարեցի այն լրացնել մի շարք այլ հոդվածներով, նվիրված նույն՝ ժամանակակից իրականության առասպելաբանական ընկալման և նոր բանահյուսության թեմաներին:

Գրքում ներկայացված են նաև իմ մի հոդվածաշարը՝ նվիրված հետսովետական շրջանի հայերենում լեզվական աղավաղումների խնդրին, և մի մեծ հարցազրույց իմ աշխատանքների ուղղությունների, հայագիտության խնդիրների, ներկա վիճակի և մի շարք հարակից թեմաներով:

2018թ. հուլիս

# I ՄԱՍ

---

## ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿՅԱԿ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Արխաիկ հասարակություններում աշխարհի առասպելաբանաստեղծական մոդելավորման և իմաստավորման համար կարևոր է տիեզերքի տարրերը համակարգելու հետևյալ սկզբունքը: Առասպելաբանական գիտակցության ընդդերքում մշակվում է երկյակ (բինար) տարբերակիչ հատկանիշների մի համակարգ<sup>1</sup>: Այն կազմված է սովորաբար 10–20 զույգ իրար հակադիր հատկանիշներից, համապատասխանաբար դրական և բացասական նշանակություններով և հանդես է գալիս որպես աշխարհի առասպելաբանաստեղծական մոդելի իմաստաբանության նկարագրության ամենաընդհանուր միջոցը: Այդ հակադրությունների մի մասը կապված է տարածության կառուցվածքային բնութագրի (վերև–ներքև, երկինք–երկիր, երկիր–ստորերկրայք, աջ–ձախ, արևելք–արևմուտք, հյուսիս–հարավ),

<sup>1</sup> «Երկյակ հակադրությունը» (անգլ. binary opposition, ռուս. бинарная оппозиция) աշխարհի ռացիոնալ նկարագրության համընդհանուր միջոց է. ներկայացվում են հակադիր հասկացություններ, որոնցից մեկը հաստատում, իսկ մյուսը ժխտում է ինչ-որ մի հատկություն: Դիսկուրսիվ մտածողության հատկանիշ է, հակադրված ինտուիցիայի տարբեր ձևերին: Ազգագրության և առասպելաբանության մեջ տարածվել է Կ.Լեվի-Ստրոսի կողմից և հետագայում լայնորեն օգտագործվել ստրուկտուրալիստական ուղղության աշխատանքներում (տե՛ս օրինակ C. Levi-Strauss, *Anthropologie structurale*, Paris, 1958; *Mythologiques I-IV*, Paris, 1964-71): Աշխարհի առասպելաբանաստեղծական մոդելի վերաբերյալ տե՛ս В. Н. Топоров. *Модель мира. – Мифы народов мира*, т. 2, М., 1982, с. 161–164:

ժամանակային կոորդինատների (ցերեկ-գիշեր, ամառ-ձմեռ), գունային բնութագրերի (սպիտակ-սև, կամ կարմիր-սև) հետ: Մյուս խումբը կազմում են այն հակադրությունները, որոնք գտնվում են բնության ու բնակելի և մշակութային-սոցիալական սկզբունքների սահմանագծին (թաց-չոր, հում-եփած, ջուր-կրակ), որոնք օժտված պարզորոշ սոցիալական բնույթով (արական-իգական, ավագ-կրտսեր, յուրային-օտար, մոտիկ հեռու, ներքին-արտաքին): Սրանց հետ է կապվում առավել ընդհանրական, ողջ համակարգը բնորոշող սրբազան-անսուրբ (եվրոպական տերմինաբանությամբ՝ սակրալ-պրոֆան) հակադրությունը:

Հակադրությունների բոլոր աջ և ձախ անդամները կազմում են որոշակի ամբողջություններ, որոնց միջև եղած հարաբերությունը կարելի է նկարագրել ավելի ընդհանուր հակադրությունների միջոցով (արդեն չտեղայնացված տարածական, ժամանակային, բնական կամ սոցիալական պլաններով)՝ երջանկություն-դժբախտություն, կյանք-մահ: Այս երկյակ հատկանիշների հիման վրա ստեղծվում են ընդհանրական նշանային համալիրներ, որոնք և հանդես են գալիս որպես նախնադարյան գիտակցության կողմից աշխարհի իմաստավորման և յուրացման արդյունավետ միջոցներ:

Աշխարհի առասպելաբանաստեղծական մոդելը կարող է բնութագրվել ըստ այն բանի, թե ինչպիսի սիմվոլների միջոցով են հաղորդվում այս ընդհանրական նշանային համալիրները: Շատ արխայիկ հասարակություններում երկյակ սիմվոլիկ դասակարգումը անմիջականորեն կապված է դուրս կազմակերպության, երկու առաջնորդների, ցեղի երկու էկզոգամ կեսերի, երկու նախահայրերի, սիմվոլիկ, ծիսական, ամուսնական, տնտեսական և այլ հարաբերությունների երկկողմանի համակարգվածության հետ:

Ըստ ՄՍՀՄ պաշտոնական գաղափարախոսության՝ մարքսիզմի, մարդկային հասարակությունը բաժանվում է դասակարգերի, որոնք տարբերվում են հասարակական հարստության բաշխման եղանակներով ու չափերով: Յուրաքանչյուր հասարակարգում ձևավորվում են անտագոնիստական՝ հակադիր դասակարգեր, որոնցով էլ հենց բնորոշվում է տվյալ հասարակարգը: Այդ դասակարգերն են ստրկատերերն ու ստրուկները, ճորտատերերն ու ճորտերը, կապի-

տալիստներն ու վարձու բանվորները: Ընդունվում է նաև այլ դասակարգերի գոյությունը, բայց միայն նշվածներն են բնորոշում հասարակարգերը: Ներկայումս մարդկությունը գտնվում է կապիտալիզմի կործանման և կոմունիզմի առաջին՝ սոցիալիզմի փուլում, երբ բարի ու չար ուժերը՝ կոմունիստներն ու կապիտալիստները կյանքի ու մահվան կռիվ են մղում (համաշխարհային հեղափոխություն, իսկ հետո՝ մրցակցություն), որտեղ կոմունիստները պետք է հաղթեն և ապահովեն մարդկության դրախտային կյանքը:

Մարքսիստական այս մոդելի ստեղծման համար հիմք է ծառայել Եվրոպայի հասկապես մեծ ու հզոր երկրների պատմությունը, որը բավականին ընդունելի կերպով հարմարվում է նրան: Բայց, երբ անցնում ենք այլ երկրների, այս մոդելն սկսում է չգործել, և մարքսիստ գիտնականները ստիպված են լինում այլևայլ բացատրություններ գտնել դրա համար: Այս մոդելը չի գործում օրինակ, արևելյան մեծ պետությունների պատմության մեջ, իսկ նրանց ազդեցության տակ գտնվող փոքր երկրներում՝ առավել ևս: Այնտեղ բացի ներքին հակասություններից, որոնք հաճախ ոչ թե դասակարգային, այլ կրոնական են եղել, կարևոր դեր են կատարել բարբարոսների մշտական ներխուժումները, հզոր հարևանների ազդեցությունները ևն, որոնք և պայմանավորել են պատմության ընթացքը, որն ըստ մարքսիստական մոդելի պետք է պայմանավորեին դասակարգային պայքարը և հեղափոխությունները:

Ստորև փորձ է արվում հիմնավորել մի տեսակետ, որի համաձայն Հայաստանի պատմության շարժիչ ներքին գապանակը, հայ ժողովրդի գլխավոր ներքին հակասությունը եղել է ոչ թե սոցիալական կամ կրոնական բաժանումը, այլ երկու՝ արևելյան և արևմտյան կողմնորոշումների գոյությունը, որոնց միջև պայքարն է հաճախ ձևավորել մեր ազգային կերպարը և պատմությունը:



Հայաստանի պատմությունն իր սկզբնական՝ առասպելական-վիպական ավանդության ձևով մեզ հասած մասով ամբողջապես հակահարավային ուղղվածություն ունի, իհարկե՝ պայմանավորված պատմական իրողություններով:

Հայոց նախահայր Հայկը և առաջին Հայկյանները հակադրության մեջ են Բաբելոնի և Ասորեստանի հետ, և այդ հակադրության մեջ է ձևավորվում հայ էթնիկական հանրության ըստ առասպելի: Հայկի հակառակորդն է Բելը՝ Բաբելոնի տիրակալը (Խորենացի Ա, Ժ-Ժգ. Մեքեոս Ա): Մյուս վիպական շարքերում՝ «Վիպասանք», «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ», նրանց փոխարինում է Պարսկաստանը, իսկ «Սասնա ծռերի» արխաիկ տարբերակներում՝ Ասորեստանը, մյուսներում՝ Մսրը-Եգիպտոսը<sup>2</sup>:

Հայաստանի մ.թ.ա. երկրորդ հազարամյակի վերջին դարերի պատմությունից մեզ հայտնի փաստերը (սկսած ասորեստանյան արշավանքներից դեպի Նաիրի, հետո՝ Ուրարտու) մինևույն բանն են վկայում՝ որ Հայկական լեռնաշխարհի այդ հնագույն պետական կազմավորումները ձևավորվել և զարգացել են հարավային մեծ ու հզոր հարևանի՝ Ասորեստանի հետ մշտական քաղաքական ու ռազմական հակադրության պայմաններում: Պատմության հաջորդ փուլերում Ասորեստանի դերը կատարել է Իրանը: Այդ հակադրության արդյունքում են ձևավորվել ու բյուրեղացել են հայոց ինքնության, ազգային կերպարի ու մշակույթի տարրերը:

Եվ Խորենացու (Գ. կր) խոսքը հայերի մասին՝ «հանուրց հիւսիսականաց վեհագոյն» (բոլոր հյուսիսային [ազգերի] մեջ վեհագույն), ցույց է տալիս, որ հայերը հնում իրենց դասակարգել են իրենցից հյուսիս գտնվող ժողովուրդների՝ վրացիների, աղվանների, լեզգիների և մյուս կովկասյան ժողովուրդների շարքում, որոնց մեջ ամենաբարձրն են համարվել:

Հատկանշական է, որ վրաց պատմիչ Լեոնտի Մրովելու մոտ ներկայացված իրենց ժողովրդի ազգածին ավանդության մեջ ևս Հայկը վրացիների և կովկասյան ժողովուրդների անվանագիր նախնիների՝ էպոնիմների ավագ եղբայրն է և տիրակալը, նրանցից առավել հզորը և նշանավորը (տե՛ս հաջորդ գլուխը):

<sup>2</sup> Հայ վիպական բանահյուսության վերաբերյալ տե՛ս Մ. Աբելյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966 և ստորև, «Հայոց պատմությունը և վիպական բանահյուսությունը» հոդվածը:

Այսպիսով, հնագույն Հայաստանի աշխարհի մոդելում ի հայտ է գալիս հյուսիս-հարավ հակադրությունը, որտեղ հյուսիսն է աշխարհի «մեր, յուրային» մասը (այնտեղ Հայաստանը ինքն է տիրողը և չունի համարժեք հակառակորդ):

Եվ միայն մի տեղ է առասպելական պատմությունը հիշատակում հայոց հակադրությունը արևմտյան հարևանի հետ, երբ Արամ նահապետը ներկայիս Կեսարիա քաղաքի տեղում (Կապադովկիա) հաղթում է իր հակառակորդներից մեկին՝ Պայապիս Քադյային (որը, ի միջի այլոց, ներկայացվում է որպես «տիտանյան», այսինքն՝ ազգակից Բելին): Բայց, սկսած Ալեքսանդր Մակեդոնացու դարաշրջանից, Հայաստանի քաղաքական պատմության այս առանցքը փոխվում է: Ի հայտ է գալիս արևմտյան գործոնը, որն այդ ժամանակներից մինչև հիմա կարևոր դեր է կատարում Հայաստանի պատմության մեջ: Ի միջի այլոց, մ.թ.ա. II հազարամյակում հայկական լեռնաաշխարհի առաջին պետական կազմավորումները, այդ թվում Հայասան, ձևավորվել են արևմտյան՝ Խեթական տերության հետ հակադրության պայմաններում, բայց այդ մասին հայոց ավանդական պատմությունը լռում է:

Արևմտյան այդ գործոնը պայմանավորվում է սկզբնական շրջանում հելլենիստական քաղաքակրթության և պետությունների, հետո՝ Հռոմի հանրապետության ու կայսրության, այնուհետև՝ Բյուզանդիայի և ի վերջո՝ Եվրոպայի ու արևմտյան քաղաքակրթության երկրների ազդեցությամբ ու քաղաքական շահերով: «Հարավային» հակառակորդը արևմտյան նոր ուժի շնորհիվ ձեռք է բերում «արևելյան» գունավորում, թեև շարունակում է մնալ սովորաբար Հայաստանից հարավ տեղայնացված (Պարթևական ու Սասանյան Իրան, Արաբական խալիֆաթ և, ի վերջո՝ Նոր Պարսկաստան): Բյուզանդիայի կործանումից հետո սրանց է ավելանում Թուրքիան, որը գտնվում էր հայկական հիմնական տարածքներից արևմուտք, բայց տիպիկ արևելյան բռնակալություն էր: Այսպիսի իրադրության մեջ հյուսիս («մենք»)–հարավ (թշնամի) մոդելը չէր կարող գործել, և առաջանում է արևելք–«մենք»–արևմուտք եռաստիճան մոդելը, որտեղ արդեն առկա էին երկու «ոչ մեր» հզոր ուժեր:

Մշտապես երկու հզոր և հակադիր՝ արևմտյան և արևելյան աշխարհների միջև գտնվելը իր հզոր կնիքն է դրել Հայաստանի ողջ պատմության, ճակատագրի և հայերի կերպարի ձևավորման վրա: Նման իրավիճակում, կապված պատմական պահից, Հայաստանը և հայերը, որ հաճախ գտնվել են մեկ այս, մեկ մյուս կողմում, պետք է բնութագրվեին որպես անհուսալի դաշնակիցներ և նույնիսկ ոչ համակրելի ժողովուրդ: Եվ մ.թ. I-II դարերի հռոմեական ականավոր պատմիչ Տակիտոսը գրում է, որ հայերն անվստահելի ժողովուրդ են՝ և իրենց հոգևոր կառույցի, և՛ աշխարհագրական դիրքի պաճառով, և ատում են հռոմեացիներին ու նախանձով վերաբերվում պարթևներին: Իրոք, զարմանալի բան կլիներ, եթե հայերը սիրեին թշնամի հռոմեացիներին և հիանալին իրենց տիրող պարթևներով:

Այսպիսով, հելլենիզմի դարաշրջանից սկսած Հայաստանում և հայերի մեջ գործել է երկու կողմնորոշում: Այսպես, Արտաշիսյան արքաները իրենք իրենց կոչում էին «հելլենասեր», հելլենականացված էին հասարակության վերնախավը և քաղաքային բնակչությունը (մի սովոր մասով այլագգի): Մյուս կողմից, Հայաստանում երկրի գաղափարախոսությունը բնորոշող հիմնական երևույթը՝ կրոնը ենթարկված էր իրանական հզոր ազդեցության և գոնե իր պաշտոնական, վերնախավային-պետական մակարդակով կարող էր դիտվել որպես իրանական կրոնի մի տեղական տարբերակը: Ստրաբոնը (XI. 4. 16) մ.թ. առաջին դարում գրում է, որ հայերը, ինչպես և մարերը, պաշտում էին պարսկական աստվածներին և կատարում նրանց ծեսերը: Հայկական թագավորների անուններն իրանական էին, կապված զրադաշտական կրոնական տերմինաբանության հետ (հմմտ. *արյրա*-յով սկսվող թագավորական անունների շարքը՝ Արտաշես, Արտավազդ, որտեղ *արյրա*-ն կարևոր զրադաշտական տերմին է, հայ. *արդ*, *արդար*, *գ-արդ* բառերի իրանական ստուգաբանական համապատասխանությունը): Հայաստանում, ինչպես և այլուր, իրանական և տեղական աստվածները համապատասխանեցվել-նույնացվել էին իրենց մոտավոր հունական համապատասխանությունների հետ, օրինակ՝ Զևս-Արամազդ, Արտեմիս-Անահիտ, Հերակլես-Վահագն, Ափրոդիտե-Աստղիկ ևն, բայց գիտակցվում էր նաև տեղական աստվածների հիմնականում իրանական բնույթը: Չնայած

դրան, ակնհայտ է, որ գոնե ժողովրդական մակարդակում պետք է մնացած լինեին նաև հնագույն տեղական կրոնական պատկերա-  
ցումների և դիցաբանական կերպարների հուշերը:

Այսպիսով, հին հայոց աստվածներն իրենցում միավորում էին արևմտյան և արևելյան կերպարներ, և մինևույն աստվածը հասա-  
րակության մի մասի կողմից կարող էր պաշտվել և ընկալվել առավե-  
լապես իր հունական, իսկ մյուսի կողմից՝ իրանական և հայկական  
դրսևորումներով: Այդ երևույթը շարունակվեց նաև Արշակունյաց  
Հայաստանում, մինչև քրիստոնեության ընդունումը: Արքաները շա-  
րունակում էին կրել իրանական, բայց այլ՝ Արշակունիներին բնորոշ  
անուններ (Տրդատ, Տիրան, Արշակ ևն), իսկ աստվածները մնացին  
նույն՝ տեղական-հունական անուններով: Այսպես, Ագաթանգեղոսը  
հայոց նախաքրիստոնեական աստվածներին ներկայացնում է իրենց  
տեղական՝ իրանական-հայկական անուններով (Արամազդ, Ասա-  
հիտ, Վահագն, Միհր, Աստղիկ, Նանե), իսկ Խորենացին, որն ան-  
թաքույց հելլենասեր էր՝ հունական (Դիոս-Ջևս, Արտեմիս, Հերակ-  
լես, Հեփեստոս, Ափրոդիտե, Աթենաս):

Քրիստոնեությունը ծագումով մերձավորարևելյան կրոն էր,  
բայց ձևավորվեց Հռոմեական կայսրության տարածքներում և ար-  
մատավորվեց արևմուտքում: Հայաստանում այն պետական կրոն  
հռչակվելուց հետո արևմտյան կողմնորոշումը, փաստորեն, հաստա-  
տագրվեց նաև կրոնական-աշխարհայացքային մակարդակով: Արև-  
մտյան արժեքների հետ էին կապվում լույսը, ճշմարտությունը, իմա-  
ցությունը ևն, իսկ արևելյանը՝ հին կրոնը, աշխարհայացքը, արժեք-  
ները ևն բնորոշվում որպես պիղծ, բացասական մի բան: Հայաստա-  
նում ձևավորվեց քրիստոնեության հիմնական հոսանքներից տարբեր,  
առանձին ուղղություններից մեկը, որը ձեռք բերեց բազում առանձ-  
նահատուկ, տեղական հատկանիշներ, կապվեց տեղական արմատ-  
ների հետ և որոշակիորեն տարբերակվեց արևմտյան եկեղեցիներ-  
ից:

Արևմտյան կողմնորոշումն ի սկզբանե և մինչև այժմ եղել է առա-  
վել բնորոշ հայոց բարձր, կրթված խավերին՝ արիստոկրատիային և  
հոգևորականությանը, որոնք և հայոց պատմությունը շարադրելիս  
հաճախ որպես քաղաքական գործիչների գնահատման չափանիշ են

ընդունել նրանց կողմնորոշումը: Չնայած քրիստոնեական կրոնի այս «արևմտյան» ուղղվածությանը, հայոց պետականության կրողները՝ արքաները և իշխանները միավորում էին երկու կողմնորոշումները. շարունակում էին կրել իրենց տոհմական արևելյան անունները (Արշակունիների ժամանակներում՝ իրանական, Բագրատունյաց շրջանում՝ նաև արաբական) և իրենց քաղաքական գործունեությամբ էլ հարմարվում հաճախ Հայաստանի սահմաններում ընթացող արևելք-արևմուտք, իսլամ-քրիստոնեություն պատերազմական և քաղաքական հակադրությանը:

Պետականության և արիստոկրատիայի վերացումից հետո Հայաստանն ամբողջությամբ հայտնվեց արևելյան ճամբարում, իսլամական պետությունների ու ցեղերի իշխանության տակ, և արևմտյան կողմնորոշման ու արժեքների կրողը մնաց միայն եկեղեցին: Առնվազն վերջին հազարամյակում հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը՝ աշխատավոր, ցածր խավը, հենց Հայաստանում շրջապատված արևելյան՝ իշխող իսլամական բնակչությամբ, որոշակիորեն պահպանելով հին՝ հայկական-քրիստոնեական արժեքները, յուրացրել էր իր մահմեդական հարևանների ճաշակը, կենսակերպն ու աշխարհայացքի տարրերը և այսպիսով շատ հարցերում էլ եղել «արևելյան» կողմնորոշման կրողը: Նոր ժամանակներում ի հայտ եկավ արևմտյան նոր՝ եվրոպական և հատկապես ռուսական կողմնորոշումը և նոր բարձր խավերի առաջացմամբ (ռուսականացած արիստոկրատիա, մտավորականություն) ձևավորվեց նաև արևմտյան կողմնորոշման արշխարհիկ կրողների նոր շրջանակը: XIX դարում, երբ ձևավորվեցին հայ քաղաքական միտքը և հոսանքները, նրանք այլևայլ պատճառներով հիմնականում արևմտյան ուղղվածություն ունեին:

Հասկանալի է, որ Հայաստանում կողմնորոշումների այս համառոտ տեսությունը միայն առաջին մոտեցման արդյունք է և չի հավակնում ամբողջական և ճշգրիտ լինելու, բայց ներկա աշխատության սահմաններում այն բավարար է: Բավական է կարդալ Հայաստանի պատմության ճակատագրական դարաշրջանների պատմությունը՝ տեսնելու համար արևելյան և արևմտյան կողմնորոշումների քաղա-

քական դրսևորումների այն հզոր պայքարը, որն ընթանում էր արևելք-արևմուտք հակամարտության ընդհանուր համատեքստում և ի վերջո կանխորոշում Հայաստանի հետագա վիճակը:

XIX դարի վերջին և XX դարասկզբին արդեն վաղուց հայերի համար արևմուտքը խորհրդանշում էր քրիստոնեությունը, բարին, ազատությունը, պետականության և անկախության ձգտումը, լույսը, գիտությունը, առաջընթացը, քաղաքակրթությունը, Եվրոպան, որտեղից պետք է բացվեին «հուստ դռները» (ըստ Նահապետ Ռուսի-նյանի հայտնի բանաստեղծության): Դրան հակառակ, արևելքը խորհրդանշում էր օտար, թշնամական հավատը՝ իսլամը, չարը, խավարը, տգիտությունը, հետամնացությունը, բարբարոսությունը, վայրի բռնապետություն Թուրքիան, որի լծից պետք էր ազատագրվել: Այս դարաշրջանում հայ քաղաքական միտքը, ոգևորված կործանվող Օսմանյան կայսրության արևմուտքում ազատագրված բալկանյան ժողովուրդների օրինակից, հավատում էր Հայաստանի «հեղափոխական ազատագրության» և արևմտյան օգնության իրականություն դառնալուն: Հետաքրքիր է, որ արևմտյան քաղաքակրթության կարևորագույն ներդրողը հայոց մեջ Ռուսաստանն էր, որը գտնվում էր հյուսիսում:

Թվում է, թե քաղաքական հոսանքների մեջ լիարժեք ներկայացված չէր հայերին ներհատուկ, նաև արևելյան-պահպանողական, արևմտյանին հակակշիռ կողմնորոշմանը համարժեք քաղաքական ուժը, որը կարող էր բնորոշվել Թուրքիայի բարբարոսական պետության նկատմամբ առավել հանդուրժողական վերաբերմունքով: Այդ քաղաքականության կրողները փաստորեն անկարող էին իրենց գաղափարախոսությունը հակադրել մտավորականության շրջանում և ռուսահայերի մեջ համատարած արևմտյան, ազատագրական-հեղափոխական կողմնորոշմանը: Արևմտյան և արևելյան կողմնորոշումների միջև, փաստորեն, ներդաշնակ հավասարակշռություն չկար: Բայց հայերը, հատկապես Թուրքիայում, չափազանց արևելյան ժողովուրդ էին: Նույնիսկ կարելի է պատկերացնել, որ Ցեղասպանությունն ու հայրենիքի կորուստը, որոնք հնարավոր է գնահատել նաև որպես քաղաքական պարտություն, թեև պայմանավորված էին հիմ-

նականում այլ պատճառներով, ինչ-որ չափով արդյունքն էին նաև ներքին՝ արևմտյան և արևելյան կողմնորոշումների այդ անհավասարակշիռ վիճակի:

Արևմտյան գաղափարների համար հայերը, որպես ամբողջություն, դեռևս անկարող էին ոտքի կանգնել ազգովին, կազմակերպված, պետականություն ունեցող կամ հազարամյա ստրկություն չտեսած ազգերի մակարդակով, իսկ արևմտյան ազգերը և Ռուսաստանը, որոնց օգնությամբ ազատագրվեցին բալկանյան ժողովուրդները, չօգնեցին հայերին: Մինչդեռ կործանվող Թուրքիան, հավասարակշռված պրագմատիկ քաղաքականություն վարելով արևելյան և արևմտյան ուժերի միջև, կարողացավ իր կազմում պահպանել Արևմտյան Հայաստանի տարածքը և գոյատևեց:

Այստեղ անհրաժեշտ է անել մի դիտողություն: Թեև արևմտյան կողմնորոշումն ուղղված է կարծես դեպի կյանքը՝ լույսը և երջանկությունը, իսկ արևելյանը՝ մահը՝ խավարը և ստրկությունը, իրականում կյանքի փիլիսոփայության կրողն է եղել արևելյան կողմնորոշումը, իսկ մահվանը՝ արևմտյանը: Եվ իրոք, ըստ անցյալ դարի արևմտյան լուսավորության շատ քաղաքական հետևորդների, «լավ է մեռնել, քան ապրել ծնկաչոք», պետք է կովել և թեկուզ մահվան գնով ձեռք բերել ազատությունը, իսկ արևելյան կողմնորոշումը գերադասում էր գոյատևել եղած պայմանների խավարում՝ սպասելով լավագույն ժամանակների (համապատասխան Ադոնցի Մամիկոնյանց և Բագրատունյաց ուղղություններին)<sup>3</sup>:

<sup>3</sup> Մեր այս մտտեցումը հայոց արևելյան և արևմտյան կողմնորոշումների վերաբերյալ համահունչ է Նիկողայոս Ադոնցի հանրահայտ «Քաղաքական հոսանքներ հին Հայաստանում» հրաշալի հոդվածի գաղափարին, թեև՝ ոչ նույնական (տե՛ս Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 18–47): Ըստ Ադոնցի, հայոց քաղաքական երկու հիմնական հոսանքները հնում հանդես են եկել պայմանականորեն Մամիկոնյան և Բագրատունի նախարարական տոհմերի անուններով կոչված քաղաքական-գաղափարական հոսանքների՝ «ըմբռստության արյունոտ ուղու» և «խոհեմության զգուշավոր դիրքերի» ձևով: Ընդ որում, մաքսիմալիստ Մամիկոնյանների ուղին տանում էր մահվան և կործանման, իսկ իրատեսական Բագրատունիներինը՝ կյանքի և փրկության: Հեշտ է նկատել, որ Ադոնցի «Մամիկոնյանների ուղին» մեզանում միշտ կապված է եղել արևմտյան կողմնորոշման հետ (պայքար, ազատություն, հերոսու-

Արևմտյան և արևելյան կողմնորոշումները Հայաստանում ի հայտ են եկել խոր անցյալում և շարունակվում են մինչև այժմ: Այս երկու կողմնորոշումների մշտական գուգակցությունն է բնորոշում հայերին իբրև արևմտյան և արևելյան քաղաքակրթությունները, մշակույթներն ու արժեքները սինթետիկ ազգի: Եվ իրոք, հայերին կարելի է բնութագրել և՛ որպես արևելյան ազգերի մեջ ամենաարևմտյանը, և՛ որպես արևմտյան ազգերի մեջ ամենաարևելյանը: Այս երկու կողմնորոշումների սինթեզը և հավասարակշռությունն է մեր ճանապարհը, իսկ որևէ կողմնորոշմանն ավելորդ առավելություն տալը կարող է սասանել ներագգային հավասարակշռության վիճակը:

Մեզանում ամեն ինչ չափազանց քաղաքանացված է: Կողմնորոշումները, Ադոնցի ներկայացրածի պես, քաղաքական են: Եվ համատարած առասպելաբանական: Այս կողմնորոշումների կրողները հաճախ լավ-վատ, կյանք-մահ և մյուս երկյակ հակադրությունների համատեքստում են տեսնում երևույթները, սակայն բոլոր դրական երևույթները միայն մեկ կողմին, իսկ բացասականը մյուսին վերագրելը սխալ է, անընդունելի և երբեմն՝ նույնիսկ՝ կործանարար: Հետաքրքիր է, որ Ռուսաստանը, որը նախկինում արևմտյան ուղղության հիմնական ներկայացուցիչն էր մեզ համար, ՍՍՀՄ դարաշրջանում և հետո իր ոչ դեմոկրատական էությանը և Արևմուտքի նկատմամբ հակադիր կեցվածքով դարձավ արևելյան՝ Արևմուտքին հակադրված հիմնական ուժը: Եվ ներկայումս մեզանում արևմտյան և արևելյան կողմնորոշումները հանդես են գալիս Արևմուտք-Ռուսաստան առանցքով, կան արևմտամետներ և ռուսամետներ և այդ երկուսի մեջ էլ՝ իրենց պրագմատիկ «հայամետ» համարողներ:

---

թյուն, ինքնագոհություն, ըստ Եղիշեի՝ «մահ իմացեալ»), իսկ «Բագրատունիներինը»՝ արևելյան (համակերպվել արևելյան բռնակալների իշխանությանը, պահպանել եղածը, չգնալ մահաբեր առճակատումների առավել հզոր ուժերի դեմ): Ահա և Ադոնցի դասը». «մեր ազգային թերությունն այն է, որ անկարող ենք ընթանալ իրերի հետ ոտն առ ոտն, շտապում ենք կանխել դեպքերը, առջևն ընկած վագում ենք, փոխանակ հետևից գնալու, գնալու համարաքայլ»: Մեր մոտեցումն առավել ընդհանրական է. խոսքը վերաբերում է աշխարհայացքային և մշակութային կացութաձևերի, հետո միայն դրանցով պայմանավորված քաղաքական տարբերություններին ու կողմնորոշումներին:

## ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԵՎ ՅԱՅՈՑ ԵՆԹԱԷԹՆԻԿ ԽՄԲԵՐԸ

Առասպելաբանության մեջ միևնույն ցեղի տարբեր խմբերը, նույն ժողովրդի տարբեր հատվածները, երբեմն էլ՝ ազգակից և նույն-իսկ ոչ ազգակից ժողովուրդները ծագեցվում են եղբայրներից: Օրինակ, ըստ ավանդության, հին հունական ցեղերը ծագում են Պրոմեթևսի թոռ Հելլենի որդիներից ու թոռներից: Աստվածաշնչում հին հրեաների ցեղերը ծագում են Հակոբ նահապետի որդիներից, և աշխարհի ժողովուրդների համար ևս բավական մանրամասն ծագունաբանություն է մշակված, որոնք բոլորն, ի վերջո, հանգում են Նոյ նահապետի երեք որդիներին:

Վրաց պատմագիր Լեոնտի Մրովելիին վերագրվող «Քարթլիի արքաների կյանքը» ստեղծագործության մեջ ներկայացված պատմության համաձայն Նոյի որդի Հաբեթի թոռն էր Թարգամուրը, որի ութ որդիներից էլ ծագել են հայերը, վրացիները և մի շարք կովկասյան ժողովուրդներ: Եղբայրների անուններն են՝ Հաոս, Քարթլոս, Բարդոս, Մովական, Լեկան, Հերոս, Կավկաս, Էգրոս, որոնցից էլ ծագել են, իբր, համապատասխան ցեղանուններն ու տեղանունները: Թարգամուսի երկրի լավագույն կեսը բաժին է հասնում ավագ և ամենահզոր եղբորը՝ Հաոսին՝ մյուս եղբայրների տիրակալին, իսկ մնացած կեսը՝ մյուսներին<sup>4</sup>: Այս ավանդությունը չի կարող իրական հիմքեր ունենալ: Հնում մարդիկ տարբերակում էին ժողովուրդներին ըստ լեզուների, իսկ հայերի, վրացիների ու կովկասյան ժողովուրդների լեզուները ծագումնաբանորեն իրար ազգակից չեն: Ցեղերի նախահայրերի անուններն արհեստական են, ստեղծված են տեղական ցեղանուններից և տեղանուններից, հունական -ոս վերջավորությամբ՝ թերևս գրվածին ավելի ավելի վեհ, հելլենական հին աղբյուրի արժեք տալու համար: Ակնհայտ է, որ ավանդությունը ստեղծվել է հայոց նախահայր Հայկի՝ Թորգոմի որդու առասպելի հիման վրա, և հնարավոր է, որ այն ծագում է Հայկի առասպելի մեկ այլ, Խորենացու և Սեբեոսի ներկայացրածից տարբեր ավանդությունից (առասպելները և լեզնողները կարող են ունենալ իրարից նշանակալիորեն

<sup>4</sup> Леонти Мровели, Жизнь картлийских царей (пер. Г.В. Цулая), М., 1979, с. 21–23.

տարբերվող փոփոխականեր): Այստեղ հատկանշական է, որ հայերը անդրկովկասյան և կովկասյան ժողովուրդներն իրար եղբայր են համարվում, որը համահնչյուն է Խորենացու «Ողբում» հայերի հյուսիսային ազգերի մեջ «վեհագույն» կոչման հետ:

Ըստ հայկական ավանդության, Հայկի երկիրը ժառանգում է նրա ավագ որդին՝ Արամանյակը, որն իր կենտրոնն է դարձնում Արարատյան դաշտավայրը: Արամանյակը իր եղբայրներից Խոռին և Մանավազին թողնում է Վանա ծովի հյուսիսում, որտեղ սկզբնապես հաստատվել էր Հայկը: Սրանցից են ծագում Խորխոռունի և Մանավազյան իշխանատոհմերն իրենց անուններով կոչվող գավառով (Խորխոռունիք) և քաղաքով (Մանազկերտ), իսկ Մանավազի որդի Բագից՝ Բզնունի տոհմը նույն կերպ կոչվող գավառով և լճով (Բզնունյաց ծով = Վանա լիճ): Հայաստանի ծայր հարավային մի շրջանն էլ մինչ այդ տրված է լինում Արամանյակի Կադմոս որդուն: Այս մանրամասն պատմվում է Արամանյակի հաջորդներից սերող տոհմերի ու նրանց հետ նույնական անուններով գավառների ու շրջանների բնակեցման մասին: Ինչպես ասվել է, անվանում ստանալը առասպելաբանորեն հավասարվեցվում է ստեղծման, արարման հետ, և այսպիսով, Հայկի և նրա յոթ սերունդների (Արամանյակից մինչև Արա Գեղեցիկ) դարաշրջանում կերտվում է Հայաստանը՝ հայոց տիեզերքը (հմմտ. Լեոնտի Մրովելու մոտ Հայկի և նրա յոթ եղբայրների միջոցով ողջ Անդրկովկասի և Կովկասի արարում-անվանումը):

Հայաստանի պատմության ամենավաղ շրջանից արդեն աչքի է գարնում Հայկական լեռաշխարհի քաղաքական բաժանման ակնհայտ համապատասխանությունը աշխարհագրականի հետ: Որպես այդպիսի պատմաաշխարհագրական միավոր է հանդես գալիս գավառը՝ սովորաբար լեռներով շրջափակված մի տարածք, որը հազարամյակների ընթացքում գոյատևում է միևնույն անունով, բնակչության ազգագրական որոշակի մեկուսացման պայմաններում որպես մի իշխանական տան տոհմական տիրույթ: Արդեն Նաիրի երկրի մասին ասորեստանյան առաջին հիշատակություններից (մ.թ.ա. XII դ.) հիշվում են այդ երկրի բազում «թագավորները», որոնք համապատասխանում են ուշ ժամանակների գավառների իշխաններին,

ընդ որում, արդեն այդ ժամանակներից և քիչ ավելի ուշ ուրարտական արձանագրություններից հայտնի բազմաթիվ գավառանուններ և այլ տեղանուններ մնացել են նույնը (Կադմուլսի՝ Կադմյաց տուն, Ալզի՝ Աղձնիք, Ծուփանի՝ Ծոփք, Տուարածինի խուրի՝ Տվարածատափ, Արիլիանիխի՝ Արեղյանք ևն)<sup>5</sup>: Ահա այս գավառները և նրանց միավորումներն են (նահանգներ), որոնք հայկական ավանդության մեջ բնակեցվել և կոչվել են Հայկի հետնորդների, հետո՝ նաև այլ իշխանական տների անուններով:

Հին տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ գավառների բաժանումը, ինչպես և պետք էր սպասել, համապատասխանում էր նաև բնակչության էթնիկական և ենթաէթնիկական բաժանման հետ: Օրինակ՝ պատմական Այրարատ նահանգի տարածքը ուրարտական արձանագրություններում հիշվում է որպես Էթիունի կամ Էթիուլի ցեղախմբի երկիր, որն իր հերթին բաժանված էր մի շարք ցեղային երկրների, այսինքն՝ մեծ ցեղային միավորը բաղկացած էր ավելի փոքր միավորներից (նույնը վերաբերում է նաև Ուրարտուի այլ տարածաշրջաններին):

Չնայած դրան, սկսած արդեն հին հունական աղբյուրների առաջին տեղեկություններից (մ. թ. ա. V դ.), հայերը հանդես են գալիս որպես մեկ միասնական, ցեղերի չբաժանված ժողովուրդ, որով տարբերվում են, ասենք, հենց հին հույներից: Հայոց ցեղային այս միատարրությունը տարբերակում է մեզ նաև մեր տարածաշրջանի մյուս հնագույն ժողովրդից՝ վրացիներից, որոնք ներկայումս իրենց մեջ ներառում են իրենց շատ հեռու ազգակից սվաններին, ավելի մոտ, բայց նույնպես անհասկանալի լեզվով խոսող լազերին ու մեգրելներին, ապա և մի շարք բուն վրացական ցեղերի (ներկայումս՝ ազգագրական խմբերի):

Իսկ հայերը, թեև միավորված մեկ ընդհանուր ցեղանունով և էթնիկական միասնական ինքնագիտակցությամբ, իրարից նշանակալիորեն տարբերվում էին և այժմ էլ տարբերվում են իրենց լեզվով ու ազգագրությամբ, և, օրինակ, հայոց տարբեր խմբերի բարբառային և ազգագրական տարբերությունները երբեմն ավելի նշանակալի

<sup>5</sup> Տե՛ս օրինակ Н.В. Арутюнян, Ономастика Урарту, Ереван, 1985:

են, քան որոշ առանձին ժողովուրդների միջև (ռուսներ-բելոռուսներ-ուկրաինացիներ, նորվեգացիներ-դանիացիներ ևն):

Ներկայիս Հայաստանի հայերը ազգագրորեն պարզորոշ բաժանվում են մի քանի աշխարհագրորեն տարբերակվող ենթաէթնիկ խմբերի՝ պունեցիներ, շիրակցիներ, լոռեցիներ, դարաբաղցիներ, արխազահայեր ևն, որոնք իրարից տարբերվում են բազմաթիվ առումներով՝ բարբառով, սովորություններով, կենսակերպով, նախասիրություններով, և նույնիսկ կողմնորոշումներով: Այսպես, դարաբաղցիները և պունեցիները (որոնք լեզվով մոտ են դարաբաղցիներիին), պատմական և աշխարհագրական դիրքի պատճառներով, սերտ կապեր ունեին Ադրբեջանի և հատկապես Բաքվի հետ, շիրակցիները երկրաշարժից հետո, երբ ամենահզոր կառուցող հնարավորություններ ուներ Ռուսաստանը, ձեռք բերեցին ուժեղ ռուսական կողմնորոշում, իսկ լոռեցիները վաղուց ի վեր սերտորեն կապված էին հարավային Վրաստանի ու Թբիլիսիի հետ:

Ներկայումս հայերի ենթաէթնիկ բաժանման առավել պարզորոշ միավորներ են դարձել տարբեր երկրների սփյուռքահայերը, որոնք երկար ժամանակ ապրելով իրենց հյուրընկալող երկրներում՝ ձեռք են բերել նոր հատկանիշներ և ձևավորվել որպես նոր հանրություն (լիբանանահայեր, պարսկահայեր, ֆրանսահայեր ևն):

Հետաքրքիր է նշել, որ հայոց ենթաէթնիկ բաժանման դրսևորումներն ի հայտ են եկել վաղուց: Դեռևս Իվան Շոպենը գրում է, որ Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կողմից նվաճվելու ժամանակներում (1827–28), ի տարբերություն ակտիվ, առևտրի և խաբեության հակված Հայկական մարզի ու Պարսկաստանի հայերի, օսմանյան կայսրության հայերը ճշմարտասեր են, ավելի քիչ են կեղծում, քիչ շողոքոքթում, ավելի քիչ են պատրաստ խաբեության<sup>6</sup>: Իսկ Ալեքսանդր Շիրվանզադեն հիշում է, որ XX դարասկզբին Փարիզում սովորող ռուսահայ ուսանողները կապեր չունեին թուրքահայերի հետ և

<sup>6</sup> И. И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху её присоединения к Российской империи, СПб., 1852, с. 707–708 ([https://armeniansite.ru/books/istor\\_pam\\_arm.pdf](https://armeniansite.ru/books/istor_pam_arm.pdf)).

ձգտում էին ընկերություն անել վրացի ուսանողների հետ<sup>7</sup> (ընդամենը մի քանի տասնամյակ Ռուսական կայսրությունում միասին ապրելը մոտեցրել էր հայերին նույնպես ռուսահպատակ վրացիների հետ և հեռացրել տաճկահայերից): 1946-ից Հայաստան եկած սփյուռքահայերը, որոնք բոլորն էլ հայաստանցու համար «ախպար» էին, իրար մեջ տարբերակվում էին մի քանի խմբերի՝ ֆրանսահայեր, բալկանյան երկրներից ներգաղթածներ, սիրիա-լիբանանցիներ, պարսկահայեր ևն, ընդ որում նրանցից շատերի համար դա այնքան կարևոր էր, որ խուսափում էին փոխադարձ ամուսնական կապեր հաստատելուց (իրենց բարձր էին համարում, ասենք, ֆրանսահայերը, իսկ սիրիահայերին՝ ցածր):

Նույնիսկ մեկ երկրի հայությունը կարող է բաղկացած լինել մի քանի ենթաէթնիկ խմբերից, որոնք նույնպես տարբերվում են իրենց քաղաքական կողմնորոշումներով: Այդ տեսակետից լավ օրինակ է Վրաստանը, որտեղ կարելի է տարբերել հայոց երեք ենթաէթնիկ հոծ զանգվածներ՝ բուն վրացահայեր, ջավախքցիներ և արխազահայեր: Սրանք տարբերվում են իրարից և՛ պատմական ձևավորման ընթացքով, և՛ բարբառով ու սովորություններով, և՛ քաղաքական կողմնորոշմամբ: Բուն վրացահայերը՝ թիֆլիսահայերը և մյուսները, իրենց կենսակերպով շատ նմանվել են վրացիներին, և իրենց կողմնորոշումն էլ «վրացական» է: Ինչ որ լավ է Վրաստանին, լավ է նաև իրենց: Նրանք բարձր են գնահատում նաև վրացական մշակույթը, սովորությունները, գրականությունը և հաճախ, որպես մայրենի լեզու, հայերենից լավ տիրապետում են վրացերենին:

Ջավախքցիները այստեղ են եկել 19-րդ դարի առաջին տասնամյակներին, պատմական Բարձր Հայքից, և միշտ էլ կապված են եղել իրենց սահմանակից, Հայաստանի Հանրապետության հյուսիսի իրենց ազգակիցների հետ: Վրացիների և վրացական իրականության հետ հարաբերությունները եղել են թույլ: Ներկայիս Ջավախքի հայերի ճնշող մեծամասնությունը չգիտի վրացերեն, քաղաքանապես էլ ունի ուժեղ հայկական և հայաստանյան կողմնորոշում և դեմ է վրացական կողմնորոշմանը:

<sup>7</sup> Ա. Շիրվանզադե, Կյանքի բովից. – Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, երևան, 1951, էջ 367:

Աբխազահայերը, ինչպես և ՄՍՀՄ մյուս «երկրորդ տեսակի» ինքնավար կազմավորումների բնակիչները (Աբխազիան ինքնավար հանրապետություն էր Վրաստանի կազմում), գտնվում էին «մի քանի հարկանի» ազգային ճնշման տակ: Առաջին «հարկը» ռուսականն էր, երկրորդը՝ վրացականը, երրորդը արխազականը: Նման դեպքում հաղթում էր առաջին «հարկը», և ազգային շարժումները ձեռք էին բերում կայսերական ուղղվածություն: Աբխազահայերի կյանքը կապված էր առավելապես Ռուսաստանի հարևան շրջանների հետ (որտեղ ևս շատ էին համշենահայերը), և նրանց քաղաքական կողմնորոշումն էլ ռուսական էր: Աբխազա-վրացական հակամարտության ընթացքում արխազահայերից շատերը կովում էին արխազական կողմում՝ իրենց դեմ ունենալով նաև վրացահայ կամավորներ վրացական բանակում (իհարկե, այս վիճակը պարտադրված էր, բայց այն կարող է ցույց տալ ենթաէթնիկ խմբերի կողմնորոշումների և հարաբերությունների հակասությունները):

Սովետական Ադրբեջանում հայերին կարելի էր ստորաբաժանել հետևյալ ենթաէթնիկ խմբերի. 1. Նախիջևանցիներ, որոնց ժամանակի ընթացքում Ադրբեջանը կարողացավ գլխավին արտաքսել Նախիջևանի «ինքնավար հանրապետությունից», 2. Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների հայեր, որոնք կարողանում էին պահպանել իրենց հայկական ինքնությունը, և 3. Բաքվի, ապա ավելի փոքր քանակով՝ այլ քաղաքների հայեր, որոնք չնայած ծագումով և լեզվով հիմնականում շատ չէին տարբերվում Ղարաբաղի հայերից, բայց արդեն վաղուց մերվել էին Ադրբեջանի քաղաքային, հատկապես Բաքվի բնակչությանը և հանդես էին գալիս որպես «սովետական ինտերնացիոնալիստներ», լեզվով հիմնականում ռուսախոս, որոշ ադրբեջանական առոգանությամբ և տեղական «կոլորիտային» սովորություններով: Եվ դարաբաղցիներին, և՛ մյուս ադրբեջանահայերին բնորոշ էր կայսերական՝ ռուսական կողմնորոշումը: Ղարաբաղյան շարժումը հակադրություն ստեղծեց դարաբաղցիների և մյուսների միջև, որոնք մեծ հալածանքների ենթարկվեցին այդ շարժման պատճառով և ի վերջո արտաքսվեցին իրենց բնակավայրերից: Ղարաբաղցիների կողմնորոշումը հայաստանյան է, բայց էականորեն նաև անկախական և մնում է շատ ավելի ռուսամետ, քան հայաստանցիներինը:

Մեծ տարբերություններ կան նաև Ռուսաստանի հայերի միջև, բայց այստեղ, ինչպես և Միջին Ասիայում, հայերի կողմնորոշումներն փոքր փոփոխություններով հակադրված են իրարը: Վերջինս ավելի լայն է:

Ներկայումս ենթաէթնիկ իրադրության տեսակետից ամենահետադարձությունը ԱՄՆ-ի, հատկապես Լոս Անջելեսի հայ գաղութն է (միակը, որը ես հնարավորություն եմ ունեցել տեսնելու մոտիկից): Այստեղի հայերը ստորաբաժանվում են հետևյալ հիմնական ենթաէթնիկ խմբերի. 1. բուն ամերիկահայեր, որոնք այստեղ են հաստատվել մի քանի (3-4) սերունդ առաջ, 2. Մերձավոր Արևելքից վերջին տասնամյակներում ներգաղթածներ՝ լիբանանահայեր, սիրիահայեր և ուրիշներ, որոնց խոսակցական լեզուն գրական արևմտահայերենն է, 3. պարսկահայեր, որոնք առանձնանում են նախորդներից իրենց արևելահայ բարբառով և համախմբվածությամբ, և 4. հայաստանցիներ, որոնք այստեղ են հայտնվել հիմնականում վերջին տասնամյակի ընթացքում:

Ըստ իմ ունեցած տեղեկությունների, Կանադայի հայ գաղութը, չնայած իր բավական երկար պատմությանը, հիմնականում ձևավորվել է վերջին երեսուն տարվա ընթացքում և կազմված է գլխավորապես Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից, Թուրքիայից և Հունաստանից գաղթածներից ու նրանց սերունդներից: Այստեղ առաջատար դեր են կատարում լիբանանահայերը, որոնք թեև ուշ են ներգաղթել, բայց ավելի լավ են տիրապետում հայերենին և ավելի կազմակերպված ու բազմաքանակ են: Քաղաքական կողմնորոշումները բաշխված են, ինչպես և այլուրեք, դաշնակցականներ-հակադաշնակցականներ և չեզոք գանգված սկզբունքով, որտեղ, ըստ մեր աղբյուրի (չեզոք հակադաշնակցական), ռեալ ուժը 95%-ով կենտրոնացած է դաշնակցականների ձեռքում: Տարբեր երկրներից գաղթած լինելը և, այսպիսով, որոշակի ենթաէթնիկ տարբերակումը կանադահայության ձևավորման ընթացքում պատճառ է դառնում որոշակի հակասությունների, որոնց հաղթահարումը և տարբեր ենթաէթնիկ տարբերից նորի սինթեզը կարող է նոր հատկանիշներ ձևավորել:

Այստեղ, ինչպես և շատ այլ գաղութներում, կարևոր դեր են կատարում հայերի երկրորդային տեղաշարժերը՝ կապված Մերձավոր Արևելքի դեպքերի հետ, և Հայաստանից նվազագույն չափով հեռու գտնվող և իրենց հայությունը առավելագույնս պահպանած լիբանա-

նահայերի գաղթը մի կողմից թուլացնում է Մերձավոր Արևելքի հին գաղութները, մյուս կողմից՝ սոր որակի հասցնում տեղի հայկական կյանքը:

Որքանով ինձ հայտնի է, կանադահայությանը բավական նման կառուցվածք ունի Ավստրալիայի հայ գաղութը:

Հայաստանցու և սփյուռքահայի վառ արտահայտված հակուռնյա տիպերի հակադրությունը լավագույնս երևում է սփյուռքի այն գաղութներում, որտեղ շատ են Հայաստանից արտագաղթածները:

ԱՄՆ-ում հնաբնակ հայերը ասում էին՝ «երկար տարիներ մենք ապրել ենք այստեղ, հարգանք ձեռք բերել տեղական բնակչության շրջանում, բայց ահա եկան հայաստանցիները և իրենց արարքներով անարգում են մեր ազգի պատիվը»: Ասում էին նաև, որ հայերը Կալիֆորնիայում մինչև վերջերս բանտ չէին նստել, բայց ահա եկան հայաստանցիները, և արդեն կան բազում հայ քրեական բանտարկյալներ: Այս երևույթը հայտնի էր և ՄՍՀՄ-ում, ուր մտավորականները և ռուսահայերը նեղսրտում էին հայաստանցիների «ոչ գովելի» վարքից Ռուսաստանում և մյուս հանրապետություններում:

Սփյուռքահայերը միշտ փոքրամասնություն են եղել և չեն ուզում իրենց թերություններն ու օրինախախտ անհատներին ի ցույց դնել: Նրանք, որ Ցեղասպանությունից հետո դժվարությամբ հարմարվել են սոր հայրենիքի պայմաններին, չէին կարող ռիսկի դիմել և այլ կեցվածք ընդունել իրենց հյուրընկալած երկրներում: Հարկավոր էր ընդունել տեղի կարգերը, դառնալ երկրի օրինապահ քաղաքացի: Բայց իրականում խաբեությունը և հակաօրինական վարքը, թեև շատ ավելի փոքր չափով, առկա է նաև սփյուռքահայերի շրջանում: Ի տարբերություն սովետահայի, որը կարող է խաբել բոլորին՝ և՛ մերձավորին և՛ օտարին, և՛ պետությանը, սփյուռքահայ խաբեբան խաբում է հիմնականում իր ազգակցին: Ասում էին, որ Մերձավոր Արևելքի երկրներում հայերը չեն խաբել, ասենք, մուսուլման տեղացիներին, քանի որ կպատժվեին, այլ միայն իրար, քանի որ այդ դեպքում գործը հաճախ օրենքին չի հասնում, պատիժն էլ ավելի մեղմ է լինում, և հնարավոր է ընդհանրապես խուսափել պատժից:

Ներկայացնենք այս երևույթի մեկնաբանությունը առասպելաբանական մտածողության տեսակետից: Աշխարհի շատ տարբեր ժո-

դովուրդների առասպելներում ի հայտ է գալիս առասպելաբանական խաբերայի՝ տրիքստերի կերպարը (անգլերեն *trickster* «խաբերա» բառից. այս մասին տե՛ս ստորև, «Առասպելաբանական խաբերան և հայաստանցի հայը»): Այս կերպարը հայտնի է նաև իրականության մեջ: Կյանքի նկատմամբ տրիքստերային վերաբերմունքը կախված է ոչ թե բուն իրականությունից, այլ անհատի կողմից այդ իրականության ընկալումից: Տրիքստերային վարքի անհատն աշխարհը՝ իր գործունեության դաշտն ընկալում է որպես անկարգ ու քառսային, և, այսպիսով՝ պատահականության, հնարավորության ոլորտ: Ըստ այդմ, սփյուռքահայի տեսակետից հասարակության առավել թույլ ու չկարգավորված շերտը իր հայրենակիցներն են, որոնցից առավել բարձր են տեղացի այլազգիները և պետությունը: Իսկ հայաստանցու համար, ըստ տրիքստերային վարքի թիրախի, հասարակության մակարդակներն ըստ կարգավորվածության աստիճանի աճի, սովորաբար բաշխվում են հետևյալ հերթականությամբ. պետություն (որին ՍՍՀՄ-ում խաբում էր ով կարող էր), «հարիֆ» այլազգիներ, և նոր միայն հայրենակիցներ. Այսինքն՝ պատկերը միանգամայն հակառակն էր:

Երբ խոսվում է սփյուռքահայերի օրինապաշտության մասին, ի նկատի է առնվում քրեական օրինականությանը: Բայց կային և հիմա էլ կան բանտարկված սփյուռքահայեր, որոնք կազմում են նրանց մի փոքր, բայց շատ կարևոր հատվածը: Խոսքը վերաբերում է թուրքական հաստատությունների նկատմամբ ահաբեկչական գործողություններ կատարած ԱՍԱԼԱ-ի և մյուս կազմակերպությունների անդամներին:

Արևմտահայաստանի կորուստը, Թուրքիայի կողմից Ցեղասպանության ժխտումը և մյուս երկրների անտարբեր դիրքորոշումն այս հարցում գոնե որոշ սփյուռքահայերի մոտ կարող էին առաջացնել աշխարհի՝ որպես «հակատիեզերքի» ընկալում: «Հակատիեզերք», որը գործում է «մեր»՝ հայերի արդարության դեմ: Այդ «հակատիեզերքը» հենց կարգի, արդարության թշնամի քառսն է, որը հաղթել է:

Աշխարհը թերևս կարգավորված է այլ ազգերի համար, բայց ոչ հայերի: Պետք է վերաստեղծել մեր տիեզերքը: Մեր տիեզերքի

արարման համար պետք է պայքարել «հակատիեզերական» կարգի դեմ: Առասպելաբանական մտածողության մեջ քառսի հաղթահարման և նոր տիեզերքի արարման մեխանիզմը հայտնի է. դա առաջնագոհի մեռնող և հարություն առնող կերպարն է և գոհաբերության ծեսը (տե՛ս ստորև, «Ջոհի առասպելայթը և հայոց ողբերգությունը» գլուխը): Ահա ինչպես կարելի է նկարագրել հայ վրիժառուների ահաբեկչական գործողությունները այս հայեցակետից: Եվ կարգավորված, արդար երկրներում սփյուռքահայ վրիժառուները հայրենիքի ազատագրության համար գնում էին անօրեն համարվող գործողությունների՝ թուրքական պաշտոնյաների ահաբեկչությանը:

Դրությունն այլ էր ՍՍՀՄ-ում, ուր նույնպես իբրև կառուցվում էր տիեզերք, բայց այն կարող էր ընկալվել ոչ միայն որպես հակատիեզերք, այլև քառս, չտարբերակված անկարգության ոլորտ: Սա էր, որ հանգեցնում էր տրիքստերային գործունեության: Հայրենասեր սովետահայերից շատերի համար այս քառսն էր, որ գաղութացրել էր Հայաստանը և դեմ էր Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: Պետք էր պայքարել քառսի՝ ՍՍՀՄ-ի դեմ:

Եվ արտասահմանում ու ՍՍՀՄ-ում միևնույն նպատակի՝ հայոց հարցի բարձրացման համար պայքարի ձևերը երբեմն տրամագծորեն հակառակ էին: Արտասահմանում՝ կարգավորված, բայց հայոց տեսակետից «հակատիեզերական» երկրներում անհրաժեշտ էր անկարգություն մտցնել նրանց կարգի մեջ, փլուզել կամ գոնե սասանել հակահայ տիեզերքը, այսինքն դիմել անօրինական համարվող գործողությունների: ՍՍՀՄ-ում, որտեղ, ընդհակառակը, չկար կարգ, և իրականում ամեն մի գործողություն անօրինական էր, նույն նպատակի համար պետք էր արդարություն, կարգ մտցնել այդ քառսի մեջ, կատարել հնարավորինս օրինական գործողություններ: Եվ հատկանշական է, որ սկզբնապես հայ այլախոհների և հետագայում՝ դարաբաղյան շարժման ղեկավարության կողմից որդեգրվեց սահմանադրական ճանապարհով գործելու սկզբունքը (քանի որ ՍՍՀՄ սահմանադրությունը անկախության գոնե տեսական հնարավորություն նախատեսում էր):

Պետք է նկատել, որ որոշակիորեն տարբեր էին նաև սփյուռքահայերի և սովետահայերի պայքարի նպատակները. մի դեպքում

նպատակն Արևմտահայաստանի ազատագրումն էր, մյուս դեպքում՝ Սովետական Հայաստանի անկախացումը, որոնք և պայքարի տարբեր ձևեր էին պարտադրում: Միյուրքում հայերի և հայկական կազմակերպությունների մեծ մասը հայոց իրավունքների և Յեղասպանության ճանաչման համար պայքարում էր օրինական ճանապարհով, և ահաբեկչության գնացողները փոքրամասնություն էին, իսկ օրինական պայքարի սահմանափակ հնարավորությունները ՍՍՀՄ-ում կարող էին հանգեցնել հակաօրինական գործողությունների, որոնք ՍՍՀՄ-ի փլուզման ընթացքում տեղի ունեցան ոչ քիչ չափով:

Ինչևէ, իրադրությունն այսպիսին էր: Արտասահմանում բանտերում էին գտնվում պայքարի անօրինական եղանակներ օգտագործող հայ ահաբեկիչները, իսկ ՍՍՀՄ-ում՝ օրինական՝ սահմանադրական ճանապարհով Հայաստանի ազատագրման համար պայքարող մարտիկները (այդ թվում՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները): Հայաստանի ազատագրության համար ակտիվ գործողություններով պայքարողները մտնում էին հայաստանցի սակավաթիվ օրինապահների և սփյուռքահայ սակավաթիվ օրինազանցների մեջ: Նրանց միավորում էին ինքնագոհողությունն ու հայրենիքի ազատագրման գաղափարը, և տարբերակում էր օրենքի նկատմամբ կեցվածքը:

## ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արխաիկ առասպելներում տարբերակվում է սկզբնական, վաղ, նախնական, այլ կերպ՝ «առասպելաբանական ժամանակը», որը նախորդում է «մեր» պատմական, չարքագործված, ընթացիկ ժամանակին<sup>8</sup>: Այս ժամանակի հետ են կապվում տիեզերածնությունը, դիցածնությունը, մարդաձնությունը, պատճառաբանական առասպելները, առաջին նախնիների գործունեությունը ևն, և այս ժամանակ տեղի ունեցած գործողություններն են պայմանավորում հետագա ժամանակների բոլոր երևույթներն ու իրադարձությունները: Սրա

<sup>8</sup> См. Е. М. Мелетинский, *Время мифическое.* – Мифы народов мира, т. 1, М., 1980, с. 252–253.

դասական օրինակն է ավստրալիական տեղաբնիկների «երագների ժամանակը»՝ դարաշրջան, երբ գործել են նրանց առասպելական տոտեմական նախնիները:

Այս պատկերացումներն իրենց ձևափոխված դրսևորումներն ունեն զարգացած առասպելաբանություններում, որտեղ առասպելական ժամանակը կարող է բնութագրվել որպես «ոսկե դար» կամ «քառսի դարաշրջան», որը ձևավորված կառույցի է ձևափոխվում տիեզերական կարգի ուժերի կողմից: Այս մոդելով են ստեղծվում հերոսական անցյալի պատկերները դասական վիպական ստեղծագործություններում (հմմտ. Կառլոս Մեծի, Արթուր թագավորի, Վլադիմիր իշխանի էպիկական դարաշրջանները եվրոպական էպոսներում): Զարգացած առասպելաբանություններում արդեն հանդես են գալիս ժամանակի մի քանի շրջաններ: Դարաշրջանների մի ամբողջ հիերարխիա է մշակված հինդուիզմում. 1. սատյայուգա՝ «արդար դար», 2. տրետայուգա՝ արդարությունն անկում է ապրում, 3. դվապարայուգա՝ աշխարհում սկսում են գերիշխել չարիքն ու արատը, 4. կալիյուգա՝ վատթարագույն ժամանակներն են (մեր դարաշրջանը): Դարաշրջաններից յուրաքանչյուրը տևում է հազարամյակներ: Սրանք կրկնվում են, բայց կարող են միավորվել ավելի ընդարձակ ցիկլերի, իսկ վերջիններս՝ էլ ավելի մեծ դարաշրջանների մեջ:

Առավել հայտնի է դարերի հերթագայության հին հունական մոդելը (ըստ Հեսիոդոսի). ոսկե դարին հաջորդում են արծաթե, պղնձե, հերոսական և երկաթե դարերը, և այստեղ ևս բարքերն անկում են ապրում ըստ հերթականության:

Զարգացած առասպելաբանություններում, ուր աշխարհը ներկայացվում է որպես քառսի և տիեզերքի (անկարգության ու կարգի, չարի ու բարու) պայքարի թատերաբեմ, նախնական ժամանակի հետ մեկտեղ ի հայտ է գալիս աշխարհի կործանման վերջնական ժամանակը (կատարածաբանական՝ էվիստոլոգիական առասպելներ), որին կարող է հետևել, թեև ոչ միշտ, նոր աշխարհի առաջացումը: Ըստ քրիստոնեության, մարդկությունն սկսվում է Ադամի և Եվայի դրախտային կյանքով Եդեմի պարտեզում և պետք է ավարտվի ահեղ դատաստանով (այս գաղափարի հիմքերը կան արդեն Հին Կտակարանում): Բոլոր մարդիկ՝ մեռածներն ու ողջերը պետք է դատվեն,

արդարները գնան դրախտ, իսկ մեղսագործները՝ դժոխք: Ժամանակի վերջում գալու է Քրիստոսի հակառակորդը՝ Նեոը (հակաքրիստոս), որը պետք է գլխավորի Քրիստոսի դեմ պայքարը, բայց վերջում պարտվի:

Նեոը Քրիստոսի հակոտնյան է այնպես, ինչպես սատանան՝ Աստծու: Նա մարդ է, ինքնակոչ արքա՝ Քրիստոսի դիմակով, նրա ուսմունքը ժխտողը, որը կնաստի տաճարում և իրեն կներկայացնի որպես աստված: Նա իր հատկանիշներով նման է նախկին կեղծ մարգարեներին և բռնակալ թագավորներին: Որոշ պատկերացումների համաձայն, նա պետք է լինի հրաշքով վերակենդանացած հռոմեական Ներոն կայսրը, որի անունից էլ հենց ծագում է հայերեն Նեո(ս) ձևը<sup>9</sup>: Նեոի թագավորությունը չարիքի թագավորություն է, ուր մարդիկ կլինեն ինքնասեր, հպարտ, հայհոյիչ, ապերախտ, անսուրբ, անգութ, անհաշտ, անժուժկալ, դաժան, բանասարկու, մատնիչ են: Նեոը պետք է արյունոտ հալածանքների ենթարկի ճշմարտության բոլոր վկաններին և բռնությամբ հաստատի իր ճշմարտությունը: Պետք է սպանվեն նրանք, ովքեր չեն երկրպագի նրա գազանի պատկերը:

Հայկական իրականության մեջ կարևոր են եղել իրանական գրադաշտականության պատկերացումները դարաշրջանների և աշխարհի ավարտի մասին, քանի որ քրիստոնեությանը նախորդող դարաշրջանում իրանական մշակույթը և կրոնը նշանակալի ազդեցություն են թողել հայոց ժողովրդական հավատալիքների և պետական պաշտոնական կրոնի վրա: Ըստ հին իրանական սուրբ գրքի՝ «Ավեստայի», գոյություն ունի արարիչ աստծու՝ Ահուրա Մազդայի և նրա հակառակորդ Անգրա Մայնյուի միջև բարու և չարի պայքարի պատմության երեք շրջան. ոսկե դարին հաջորդում է դաժան պայքարի ժամանակը, որն ավարտվելու է աղետով՝ սկսվելու է հրեշավոր մի ձմեռ, վիշապ Աժի Դահական ազատվելու է իր կապանքներից, և աշխարհն այրվելու է կրակում, բայց հետո վերածնվելու է սկզբնական վիճակով: Ուշ գրադաշտականության մեջ այս պատկերացումները փոփոխվել էին. ժամանակը բաժանվում էր երեքհազարամյա ցիկլե-

<sup>9</sup> Տե՛ս Հ. Աճառյան, հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 441–442:

րի, որոնք ավարտվում են բարու հաղթանակով, մեռյալների հարությանը և ահեղ դատաստանով. արդարներին բաժին կհասնի հավերժական երանությունը, մեղսագործներին՝ հավերժ տանջանքները<sup>10</sup> (իրանական կրոնը նշանակալի ազդեցություն է ունեցել հուդայականության և քրիստոնեության վրա, և ինքն էլ ուշ շրջանում ազդվել է վերջինից):

Մարքս-լենինյան տեսության համաձայն, մարդկային հասարակության պատմությունը բաժանվում է հետևյալ փուլերի: Նախնադարյան համայնական՝ կոմունիստական հասարակարգին հաջորդել են ստրկատիրությունը, ճորտատիրությունը, կապիտալիզմը, որին պետք է հաջորդի նոր անդասակարգ հասարակարգը՝ կոմունիզմը, ներկայումս սկսված իր առաջին՝ սոցիալիստական փուլով: Պատմության զարգացումը և առաջընթացը պայմանավորվում է հակադիր դասակարգերի պայքարով, որի հետևանքով էլ իրար են հաջորդում տարբեր հասարակարգերը: Պետությունը իշխող դասակարգի կողմից մյուսների ճնշման գործիքն է, իսկ հասարակարգերը փոխարինում են իրար սոցիալական հեղափոխությունների միջոցով:

Ակնհայտ է այս մոդելի համադրելիությունը իրար հաջորդող առասպելաբանական դարաշրջանների հետ, ինչը վաղուց ի վեր նկատվել է և՛ մարքսիզմի քննադատների, և՛ առասպելաբանության մասնագետների կողմից, հմմտ. սկզբնական և վերջնական հասարակարգերի նույնական բնույթը (անդասակարգ «դրախտ»), այսինքն՝ ժամանակի ցիկլիկ բնույթը, բարու և չարի մշտական պայքարի թեզը ևն: Դա, իհարկե, չի ժխտում այս մոդելի նաև գիտական բնույթը, և մինչև հիմա բազում գիտնականներ մարքսիստական մոտեցումների կրողներ են, որը ցույց է տալիս առասպելաբանության և գիտության խնդիրների և նրանց լուծումների որոշակի ընդհանրությունները:

Կարելի է ավելացնել, որ «մարքսիզմ-լենինիզմը», չնայած հակակրոնական ուղղվածությանը, իր մի շարք սովետական դրսևորումներ-

<sup>10</sup> Տե՛ս օրինակ Ի. Ս. Брагинский, Иранская мифология. - Мифы народов мира, т. 1, с. 562-563:

րով, հատկապես մարքսիզմի դասականներ համարվող ՄՍՀՄ առաջնորդների պաշտամունքով, հանդես էր գալիս որպես մի արխաիկ առասպելա-կրոնական համակարգ: Եվ մարքսիստական հերթագայող հասարակարգերը հիշեցնում են առասպելաբանական դարաշրջանների հերթագայությունը, որտեղ ևս սկզբնական ու վերջնական փուլերը համընկնում են (մարքսիզմում՝ նախնադարյան կոմունիստական հասարակարգ և կոմունիզմ):



ՄՍՀՄ բոլոր ժողովուրդներին վիճակված էր դաժան մի ճակատագիր, իսկ հայերին՝ առավել ևս: Արևմտյան Հայաստանում XIX դարի վերջի և XX դարի սկզբի կոտորածներին հաջորդեց Մեծ Եղեռնը և պատմական հայրենիքի մեծ մասի կորուստը, գաղթը, աշխարհով մեկ տարածումը և գրոյից նոր կյանքի սկզբնավորումը, իսկ Արևելյան Հայաստանում՝ նոր Հայաստանի ստեղծումը, ապա նրա բաժանումը Սովետական Ռուսաստանի, Թուրքիայի ու Ադրբեջանի միջև: Արդեն մի քանի անգամ իրար հաջորդած ցեղասպան կոտորածներ տեսած ժողովրդին սովետական նոր ղեկավարները պարտադրում էին քաղաքացիական պատերազմ, որին հաջորդեցին սովը, կոլտնտեսացումը, 1930-ական թվականների բռնությունները, ապա՝ սհավոր «Հայրենական պատերազմը», 1940-ականների վերջի զանգվածային աքսորը, որոնցից յուրաքանչյուրը տասնյակ ու հարյուր հազարավոր զոհեր պատճառեց հայ ժողովրդին (և տասնյակ միլիոններ՝ ՄՍՀՄ ժողովուրդներին):

Հայոց պատմության դարասկզբի իրողությունները լուրջան էին մատնված, 1918–20 թվականների «բուրժուական Հայաստանը» և Դաշնակցությունը մեղադրվում էին բոլոր մահացու մեղքերի մեջ, կրոնն արգելված կամ կիսաարգելված վիճակում էր: Որպես Հայաստանի փրկիչներ գովերգվում էին Հայաստանին ու հայությանը անչափելի վսասներ հասցրած Լենինն ու Ստալինը: Սպանվում էին բոլոր փոքրիշատե նշանավոր մարդիկ՝ մտավորականությունը, երկրի հենց սովետական ղեկավարները, խրախուսվում էր իրար վրա մատնություններ գրելը, որոնց հիման վրա ոչնչացնում էին մարդկանց, ապա և՛ մատնագրերի հեղինակներին, և ոչնչացնողների մի սերն-

դին հաջորդում էր մյուսը, որը ոչնչացնում էր նախորդին: Այս պայմաններում էր ընթանում նոր Հայաստանի բնակչության կերպարի ձևավորումը՝ ստեղծվում էր նոր սովետահայր: Այս էկզիստենցիալ պայմաններում բացահայտվում էր մարդու էությունը, և քիչ թե շատ կարգին մարդիկ կարող էին միայն թաքնվել կամ գոհ գնալ. ասպարեզը սրիկաներին էր: Պատերազմի հաղթանակից հետո, արդարության հույսը ի դերն ելավ նոր բռնություններով:

Դժոխային ժամանակներ էին, և Սովետական Միության բոլոր քրիստոնյա ժողովուրդների պատկերացումներում ստալինիզմի դարաշրջանը համադրվել է Նեոի թագավորության հետ: Թվում էր, որ մարդկության պատմության ոչ մի դարաշրջան այնպես չի համապատասխանում Նեոի թագավորությանը, որքան Ստալինի իշխանությունը: Նմանություններն ակնհայտ են: Սովետական գաղափարախոսությունը ժխտում էր Քրիստոսի ուսմունքը և աստծո գոյությունը, բայց Ստալինն աստվածացվել էր կենդանության օրոք՝ մի երևույթ, որը սովետական իրականության մեջ հետագայում սահմանվեց որպես «անձի պաշտամունք»: Նա և՛ կեղծ մարգարե էր (անսխալ համարվող գիտնական և պետական գործիչ), և՛ ակնհայտ բռնակալ, որը, նստած ցարերի գահին, պահանջում էր երկրպագել իրեն ու իր պատկերը: Ամբողջ երկրում իշխում էր մատնությունների ու բռնությունների մթնոլորտը, և ընդիմության կամ այլախոհության ամենաչնչին դրսևորումները պատժվում էր մահվամբ ու քստորով, իսկ հավատացյալները և կղերականությունը հալածվում, ծաղրվում և ոչնչացվում էին:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ մի հատված Հայաստանում առավել շոշափելի էր դարձնում Ստալինի ու Նեոի նույնացումը: Հովհաննու հայտնության մեջ (ԺԷ. 3-18) Նեոի տիրապետության շրջանում նկարագրվում է մի կին՝ նստած կարմիր գագանի վրա, հագած ծիրանի և կարմիր, և նրա ճակատին գրված է «Խորհուրդ, Մեծ Բաբելոն, պոռնիկների և գարշելիների մայրը», նա արքուն է սրբերի արյունով և խորհրդանշում է այն մեծ քաղաքը, որը թագավորություն ունի երկրի թագավորների վրա: Կարմիրը ՍՍՀՄ դրոշի գույնն էր, խորհուրդը՝ սովետական «խորհրդային» իշխանության անվանումը, իսկ ՍՍՀՄ-ը և Մոսկվան՝ «երրորդ Հռոմը», իրոք

որ համեմատելի էին հին Հռոմի՝ Քրիստոսի դեմ բոլոր ուժերի կիզակետի և հենց Բաբելոնի հետ: Ըստ մի հավատացյալ կնոջ մեկնաբանության, Նեոի թիվը՝ 666, արտացոլված է ՄՍՀՄ ռուսերեն անվանման տառերի նմանության մեջ՝ СССР (ըստ Սիմոն Հմայակյանի հաղորդման): ՄՍՀՄ-ը հիշված է համարվել նաև Նոստրադամուսի ապոկալիպտիկ գուշակություններում, ինչի մասին թերթային հոդվածներ են հրատարակվել ՄՍՀՄ գոյության վերջին շրջանում:

Ստեղծված էր մի աշխարհ, մի նոր տիեզերք, որը հակադիր էր մնացած աշխարհին, աստծուն, նախնիների հազարամյա կրոնին, որը պետք է կործաներ հին աշխարհը: Կոմունիստական կուսակցության հիմնում ասվում էր. «Այս հին աշխարհը կփոքենք մենք մինչև հիմքերը և հետո մեր նոր աշխարհը կշինենք, ուր ոչ ստրուկ կա, ոչ դժգոհ»: Սա ակնհայտ հակատիեզերք էր, տիեզերք հակառակ նշանով, ուր նախկին կարգը համարվում է անկարգություն, արդարությունը՝ անարդարություն, որն իր մեջ կրում է քառսի՝ չտարբերակված նախաստեղծ խառնակության բացահայտ նշաններ (բոլոր ազգերը, բոլոր մարդիկ իբր հավասար են իրար նն): Այս ապոկալիպտիկ քառսին իբր հաջորդելու էր կոմունիզմի դրախտը:

Հակատիեզերքը պարտադրում էր հակավարքի կանոններ, որոնք և ընդունվում էին բռնությամբ կամ ճարահատյալ: Մերձավորին, նույնիսկ հորը մատնելը և այսպիսով նրա ոչնչացումը համարվում էին ամենահերոսական արարք և թմբկահարվում ողջ երկրով մեկ (հիշենք Պավլիկ Միրոզովի օրինակը, որը, ասում են, ունեցավ նաև հայ հետևորդներ): Ամբողջ գիտություններ՝ գենետիկան, համեմատական լեզվաբանությունը, կիրեռնետիկան, փիլիսոփայության և արվեստի սոցիալիստականին ոչ հարիր ուղղությունները օրենքից դուրս էին հայտարարվել, իսկ այդ ուղղությունների գիտնականներն ու արվեստագետները հալածվում էին և ոչնչացվում:

Ստալինիզմի դատապարտումը 1956-ին բացահայտեց սովետական դիցարանի գլխավոր աստծու՝ «ժողովուրդների հոր» ու նրա շրջապատի հրեշավոր դեմքը: Այն մարդկանց համար, ովքեր հավատում էին կոմունիզմի գաղափարին, դա սարսափելի հարված էր: Նրանցից շատերը չհաշտվեցին այդ մտքի հետ: «Կար անհատի պաշ-

տամունք, բայց կար նաև անհատ», ասել է Միխայիլ Շոլոխովը, որը բազում այլոց պես չէր կարողանում լուրջ ընդունել Նիկիտա Խրուշչովի, ըստ նրա, ծաղրանկարային կերպարը: Սովետական ղեկավարությունը աստվածային բարձունքներից շատերի աչքում իջել էր խեղկատակ ծաղրածուի մակարդակի, որի մասին ժողովուրդը անեկդոտներ էր պատմում: Խրուշչովը թեև գահազերծեց ստալինիզմը, բայց այն համարվեց ընդամենը դեպի մարդկության վեհ իդեալը՝ կոմունիզմ տանող վատ ու սխալ ճանապարհ: Իդեալները մնացին նույնը, և նույնիսկ կոմունիզմը խոստացվեց 1980-ին: Խրուշչովին հաջորդած Լեոնիդ Բրեժնևի իշխանության տարիներին Խրուշչովը նշավակվեց որպես «վոյյունտարիստ», բայց Բրեժնևն ինքը, իր ինտելեկտուալ կարողություններով, մեղալների նկատմամբ ունեցած մանկամիտ ձգտման ու ծնոտի հիվանդության պատճառով, որը նրան թույլ չէր տալիս նորմալ խոսել, դարձել էր ծաղրի առավել մեծ առարկա, քան Խրուշչովը:

Կոմունիստական իդեալները մնացել էին նույնը, բայց հենց կուսակցության գործիչները, որոնք իրենց ձեռքում էին պահում երկրի ողջ իշխանությունը, կաշառվող և կաշառող էին, ինչը համարյա չէր թաքցվում: Կոմունիստ (ըստ պետական քարոզչության՝ ոչ թե սեփական, այլ հանրության շահերին և վեհ իդեալին անշահախնդրորեն նվիրված մարդ) դատնալու համար, հատկապես Անդրկովկասի ու Միջին Ասիայի հանրապետություններում, կաշառք էր տրվում, որը ենթադրվում էր, որ կհատուցվի կուսակցական պատկանելության շնորհիվ հասարակության մեջ բարձր դիրքի հասնելուց հետո: Երկրի տնտեսությունը, կարելի է ասել, գտնվում էր ողբալի վիճակում: Մանդի և առաջին անհրաժեշտության կենցաղային ապրանքների մշտական դեֆիցիտի և եղած սովետական ապրանքների՝ արևմտյանների համեմատությամբ անհուսալի մակարդակի, նշված և բազմաթիվ այլ կեղծիքների ֆոնին պաշտոնական քարոզչությունը ամեն օր տեղեկացնում էր բնակչությանը երկրի աշխատավորների նորանոր նվաճումների, ապա՝ երկրի և կուսակցության ծեր, մատազմատիկ ու թոթովախոս ղեկավարի ամենօրյա գործունեության մասին, ինչն ավելի էր շեշտում իրադրության երկիմաստ, կոմիկական

կողմը: Ստալինից հետո խոսքի որոշ ազատության պայմաններում ՍՍՀՄ ժողովուրդների բանահյուսության տարբերակիչ երևույթը դարձավ անեկդոտը, հատկապես պետության, երկրի կարգերի և ղեկավարների մասին: Սովետական դիցարանը, որպես առասպելաբանության մեջ հայտնի, գործերից հեռացած «պարապ աստված» (որը ստեղծել է տիեզերքը և մի կողմ կանգնել) գլխավորող Լենինի կերպարը ևս բանահյուսության մեջ իջեցվեց, և բազում էին նաև նրա մասին անեկդոտները:

ՍՍՀՄ ժողովուրդների, այդ թվում և սովետահայերի ժամանակակից կերպարը ձևավորվեց Խրուշչովի և Բրեժնևի դարաշրջանում: Մինչ այդ կատարվել էր «արհեստական ընտրություն»՝ ոչնչացվել էին ընդհանույն բոլոր տեսակների անհատները, և ասպարեզը մնացել էր հարմարվողներին և նրանց ժառանգներին: Ստալինիզմի դժոխքին հաջորդող «անհատի պաշտամունքի» դատապարտումը, իսկ հետո՝ ծաղրանկարային կոմունիզմի և կեղծիքի մթնոլորտը կերտեցին գոյատևման նոր մեխանիզմներ և «արդարության»՝ կարգի ու բարոյականության նոր չափանիշներ: Ողջ հասարակությունը քրեականացված էր: Ստալինի իշխանության ավարտին բնակչության նշանակալի մի մաս՝ 2,5 միլիոն մարդ գտնվում էր բանտերում և արտորավայրերում: Միայն 1953 թ. ամռանը, հետստալինյան՝ «վորոշիլովյան» կոչված մեծ համաներումից հետո ավելի քան մեկ միլիոն մարդ դուրս եկավ բանտերից: Դրան հաջորդեցին մարդկանց նոր խմբերի ազատումներ և նոր համաներումներ: Կարճ ժամանակամիջոցում հսկայական քանակությամբ քրեական և բանտային անցյալ ունեցող մարդկանց՝ հիմնականում տղամարդկանց հայտնվելը պատերազմից հետո տղամարդկանց խիստ պակաս ունեցող հասարակություն որոշակիորեն փոխեց այն: Երկրում մեծ տարածում ստացան քրեական ապրելակերպը, արժեքային համակարգը, գողական «օրենքները» և բանտային «մշակույթը», որոնք դարձան սովետական կյանքի և մշակույթի մի կարևոր բաղկացուցիչը: «Երկաթե վարագույրով» աշխարհից սահմանազատված և այլախոհությունն ու բազմակարծությունը հետապնդող ՍՍՀՄ-ն ինքը նույնպես պատկերանում էր «ժողովուրդների բանտ» Ռուսաստանի հաջորդը: Հատկանշական է, որ ՍՍՀՄ ամենաժողովրդական արտիստը՝ Վլադի-

միր Վիտոցկին, որը մինչև իր մահը մնաց պաշտանապես չընդունված, հենց քրեական երգերի ոճով էր ստեղծագործում:

Այսպիսով, ստալինիզմի հրեշավոր էությունը և բրեժնևյան կեղծության մթնոլորտը կերտել էին գոյատևման նոր մեխանիզմներ և արդարության այլ չափանիշներ, և խաբեությունը դարձել էր կյանքի մշտական ուղեկիցը: Սովետական իրականության մեջ հաջողության հասնելու համար պետք էր գնալ խաբեության ու օրինազանցության, և այդ կենսակերպը փաստորեն, կարելի է ասել, ներդրվում էր «վերևից»:

Ըստ Լևոն Աբրահամյանի, Հայաստանում, ինչպես և ՍՍՀՄ հատկապես հարավային հանրապետություններում, երիտասարդի կողմից երկրում իշխող կոմունիստական կուսակցության մեջ ընդունվելը չէր նշանակում իրոք կոմունիստական իդեալիստական գաղափարախոսության հետևորդ դառնալ, այլ քայլ էր հասարակության լիիրավ անդամ դառնալու ճանապարհին, ինչպես պատանիների՝ հասուն մարդկանց կատեգորիայի անցման նվիրագործության ծեսը արխաիկ հասարակություններում<sup>11</sup>: Մեկ այլ արխաիկ երևույթ ՍՍՀՄ իրականության մեջ: Աբրահամյանը ցույց է տվել նաև Լենինի և առասպելաբանական խաբերայի՝ տրիքստերի կերպարային ընդհանրությունները<sup>12</sup>: Տրիքստերը նմանակում է արարչի ստեղծագործությունները՝ սկիզբ դնելով բնության և մշակույթի վատ ու սխալ դրսևորումներին: Ըստ այդմ, այս երկիրը, այս «տիեզերքը» ստեղծված էր տրիքստերի կողմից, իսկ առասպելաբանական ընկալումներում ամեն մի նշանակալի արարք, ամեն մի ծես, ամեն մի էական գործողություն համադրվում է արարչի տիեզերածին գործողության հետ: Ուրեմն, խաբեությունը ՍՍՀՄ-ում նաև այս մակարդակով էր ներդրվում «վերևից»:

Ժողովուրդը, իրոք, սպրում էր խաբեության մթնոլորտում: Կոմունիզմի գաղափարախոսությանը մարդիկ չէին հավատում, և ոչ պաշտոնական մակարդակում այն միայն ծաղրվում էր: Հայաստանի

<sup>11</sup> Л. А. Абрамян, Тайная полиция как тайное общество: страх и вера в СССР. – Этнографическое обозрение, 5, 1993, с. 36–37).

<sup>12</sup> L. Abrahamian, Lenin as a trickster – Anthropology & Archeology of Eurasia, 1999, 38, № 2, pp. 7–26.

բոլոր խանութներում բոլոր վաճառողները խաբում էին բոլոր հաճախորդներին՝ մի քանի կոպեկ ավել վերցնելով նրանցից: Բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում, բոլոր շինարարություններում, բոլոր գործարաններում, բոլոր դատարաններում, կուսակցության բոլոր շրջկոմներում «ձախ» եկամուտներ էին իրացվում, որը հոսում էր ավելի բարձր: Հիշելով Սունդուկյանին՝ կարելի է ասել, որ խաբում էին բոլորը, և խաբված էին բոլորը:

Մեզանում, ինչպես և ողջ Անդրկովկասում, խաբեությունը, խարդախությունը մինչև որոշ՝ ավելի բարձր աստիճան, քան ՍՍՀՄ մեծ մասում, չէր դատապարտվում, այլ ընդհակառակը, ընկալվում էր «ըմբռնումով», իսկ երբեմն հիացմունքի էր արժանանում: Օրինակ, ոչ ոք չէր զարմանա, եթե ասեին, որ այսինչ դատավորը, կուսակցական ղեկավարը կամ գործարանի տնօրենը «փող է ուտում»: Ընդհակառակը, բացարձակապես նորմալ չէր ընկալվի, եթե նա «չուտեր»։ դա կարող էր անհասկանալի լինել և թշնամանք հարուցել ոչ միայն գործընկերների, այլև ենթակաների և հասարակության նշանակալի մասի մեջ: Հիացմունքի էր արժանանում այն ղեկավարը, որն իբր հարբեցրել էր բարձր մոսկովյան պաշտոնյային և մեծ միջոցներ կորզել իր ղեկավարած տնտեսության, մարզի, հանրապետության համար:

Հայաստանում իշխում էր կեղծիքը, կաշառակերությունը, սուտը, առավել բացահայտ ու լկտի, քան Ռուսաստանում և ՍՍՀՄ եվրոպական հանրապետություններում: Մարդիկ կորցրել էին արդարության նորմալ, մարդկային ընկալումը: Հայերը, ինչպես և ՍՍՀՄ մյուս ժողովուրդները, ստիպված և պարտավոր էին հարմարվել այդ նոր, սովետական կյանքին ու արժեքներին: Այդ պայմաններում արդարությունը գոյատևելու խնդիր ունեցող փոքր ազգերի համար չէ: Վայ չհարմարվողին, և հայերը առավել հարմարվածներից էին: Առավել ևս, հայերը տրիքստերի կերպարի լավագույն մարմնավորողներից էին, և այստեղ իրենց դերն էին կատարել մեր ժողովրդի պատմության ընթացքում ձևավորված որոշ որակներ (հարմարվողականություն, առևտրական տաղանդ, գործարարություն, հասարակության տարբեր խմբերի միջև կապերի իրականացում ևն):

Այս կերպարը քիչ է արտացոլվել պաշտոնական «սոցոեալիզմի» գրականության և արվեստի մեջ, որոնց եթե հավատանք, ապա

ՄՍՀՄ հայերը Վիլյամ Սարոյանի հայ հերոսների պես դրական ու արդարամիտ իդեալիստներ են, սովետական ու կոմունիստական արժեքներին նվիրված, հավատարիմ հետևորդներ:

Ասվածը, իհարկե, չի ներկայացնում սովետահայերի կերպարային ողջ համալիրը, այլ միայն տիպիկ, վառ արտահայտված մի կերպարի ձևավորման նախադրյալների բացահայտումն է: Պետք է նշել նաև, որ հենց հայերի միջից էին դուրս եկել բազմաթիվ այլախոհներ, Հայաստանի անկախության և արդարության համար պայքարող իսկական հերոսներ (Պարույր Հայրիկյան, Աշոտ Նավասարդյան, Ազատ Արշակյան և այլք), որոնք, ի տարբերություն ասենք շատ-շատերի, չնայած եղած հնարավորություններին, նույնիսկ բանտերում հետ չկանգնեցին իրենց գաղափարներից: Սա արդեն սովետահայերի տիպերի մյուս բևեռն է:

## ԱՌԱՄՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԽԱԲԵԲԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՀԱՅՇ

Առասպելաբանության մեջ քառսի ուժերի դեմ հաղթանակը սկիզբ է դնում տիեզերքի և նրա բաղկացուցիչ տարրերի արարմանը: Ամենուրեք հայտնի է արարչի կերպարը (հուն. տերմինաբանությամբ՝ դեմիուրգոս), որը, հաճախ որպես երկնային արիեստավոր, ստեղծում–արարում է տիեզերքը, նրա բաղկացուցիչ տարրերը, մարդկանց, մշակութային առարկաները ևն<sup>13</sup>: Այս կերպարը զարգացում է ավելի վաղնջական «մշակութային հերոսի», որը առաջինն է մարդկանց համար հայթայթում կամ ստեղծում մշակույթի առարկաները (կրակ, մշակովի բույսեր, գործիքներ): Առասպելներում արարիչը և մշակութային հերոսը նույնանում են մեկ՝ ցեղի կենդանական (տոտեմ), իսկ առավել զարգացած աստիճանում՝ մարդակերպ նախահոր կերպարում: Այս վերջինս կարող է հանդես գալ նաև որպես առասպելաբանական խաբեբա՝ տրիքստեր կամ, հասկապես երկվորյակային առասպելներում՝ որպես նրա զույգը<sup>14</sup>:

<sup>13</sup> Այս մասին տե՛ս Ե.Մ.Մելետինսկի, Դեмиург. – Мифы народов мира, т. 1, с. 366.

<sup>14</sup> Այս մասին տե՛ս Ե.Մ.Մելետինսկի, Культурный герой. – Мифы народов мира, т. 2, с. 25–28:

Առասպելաբանական տրիքստերը բնորոշվում է դիվային և կոմիկական գծերով<sup>15</sup>: Նա հաճախ ծաղրանմանակում է «լուրջ» հերոսի գործողությունները, խորամանկության դիմում կարևոր իրադրություններում: Նմանակելով արարչին կամ մշակության հերոսին՝ նա կամ ձախողվում է, կամ դիտմամբ ստեղծում բնության և մշակույթի վատթար տարրերը՝ չար գազանների, թշնամական ցեղերին, մահը: Նրա չարությունները (հաճախ՝ չարաճճիությունները) նպատակաուղղված են նրա արտասովոր շատակերությանն ու վավաշությանը հագուրդ տալուն, ինչի համար նա խարդախում է, խախտում հասարակական բարոյականության և իրավունքի նորմերի ամենախիստ արգելքները, սրբազերծում սրբությունները: Գործելով ընդունված կարգերի դեմ՝ տրիքստերը հաճախ հաջողության է հասնում, հիմարացնում իր զոհերին, թեև երբեմն ձախողվում է: Տրիքստերի տիպում է ամփոփվում համընդհանուր կոմիզմը, որը դրսևորվում է նրա և նրա խաբեության զոհերի կերպարներում, ապա և՛ նրա հակահասարակական անգուսպ գործողություններում:

Առասպելաբանական այս կերպարի նմուշներ են, օրինակ, հունական աստված Հերմեսը և նրա նմանները, որոնք շարունակվում են մինչև եվրոպական «խաբեբայական» վեպերի հերոսները և սովետական Օստապ Բենդերը:

Տրիքստերի կերպարը մանրամասն և բազմակողմանիորեն ուսումնասիրված է բազմաթիվ տեսանկյուններից: Ներկայացնենք մի քանի հեղինակների մեկնաբանություններ: Ըստ Կառլ Կերենյիի, տրիքստերը սոցիալական կերպար է և «սահմանների թշնամի»: Ոչինչ այնպես տպավորիչ կերպով ցույց չի տալիս ամեն ինչ վերահսկող հասարակական կարգը, որքան այն խախտողի կերպարի կրոնական ճանաչումը: Նա ղեկավարվում է մարմնական պահանջներով և հանդես է գալիս որպես կյանքի անկարգության ոգին, կարգի սահմանների խախտման փորձարկողը<sup>16</sup>:

<sup>15</sup> Տրիքստերի կերպարի վերաբերյալ մեծածավալ գրականությունից մեր նպատակների համար կարելի է առանձնացնել P. Radin, *The trickster: a study in American Indian mythology* (with commentaries by Karl Kerényi and C.G. Jung), New York, 1956. E. M. Мелетинский, *Культурный герой*:

<sup>16</sup> K. Kerényi, *The trickster in relation to Greek mythology.* – P. Radin, նշվ. աշխ., p. 171-191.

Ժորժ Դյումեզիլը, վերլուծելով հնդեվրոպական տրիքստերային տիպի կերպարները (իսլանդական Լոկի, օսական Սիրդոն), շեշտում է նրանց այլ, «ցածր» ծագումը և բոլորից տարբերակող հատկանիշը՝ խելքը, որը կարող է և՛ հաջողության հասցնել, և՛ կործանման տանել: Հասարակական կարգը անհանգիստ խելքի հզոր ուժին, որպես ինքնապաշտպանություն, հակադրում է թշնամանքը, և տրիքստերը հաճախ իր եռանդի մեծագույն մասը ծախսում է խորամանկելու, խաբելու և ինտրիգների վրա: Լոկին երկսեռ բնույթ ունի և կարող է «մեղադրվել» հոմոսեքսուալիզմի մեջ, ինչը հոգեբույժները կարող են բացատրել նրա կյանքի գաղտնի ուղով և խաբեության հակվածությամբ, որ ի վերջո հանցագործության է հասցնում նրան<sup>17</sup>:

Ըստ Վլադիմիր Տոպորովի, տրիքստերը ձգտում է կոլեկտիվ նպատակներից տարբեր և ավելի բարձր ինչ-որ մի գերնպատակի: Ինչը պահանջում է իր հերոսը, բոլորից տարբեր, հատուկ վարքով և հոգեկան կառուցվածքով: Տրիքստերի էական հատկանիշն է մյուսներից տարբերվող վարքը, որն առողջ դատողության տեսակետից կարող է ընկալվել որպես անբացատրելի պարադոքս: Տրիքստերային բնույթի մարդը, ինչպես և բանահյուսական տրիքստերը, միշտ փնտրում է իր միակ շանսը ոչ ընդհանուր ուղիներում (և ոչ թե ընդհանուր կարգին միայն հակադիր ձևեր, որոնք հեշտությամբ բացահայտելի են), ինչը կոլեկտիվի կողմից գնահատվում է որպես սխալ, վատ և անաարդյունավետ: Կոլեկտիվի հիմնական նպատակը նրա պահպանումն է, գոյատևելը, և այն չի կարող մաքսիմալիստական լինել, մինչդեռ տրիքստերին բնորոշ է «ամեն ինչ կամ ոչինչ» սկզբունքը, որը և պայմանավորում է նրա մշտական հաջողություններն ու ձախողումները: Տրիքստերի կերպարը հանդիպում է ոչ միշտ և ոչ ամենուրեք, բայց «տրիքստերային շերտը» առկա է ամենուրեք, ըստ երևույթին՝ ամեն մի մարդու և կոլեկտիվի մեջ, գոնե կյանքի վճռական պահերին<sup>18</sup>:

<sup>17</sup> G. Dumézil, *Loki*, Paris, 1986, p. 214–225.

<sup>18</sup> В. Н. Топоров, *Образ трикстера в енисейской традиции. – Традиционные верования и быт народов Сибири*. Новосибирск, 1987, с. 5–23.



Քրիստոնեության մեջ տրիքստերի բացահայտ կերպար չկա, բայց, ինչպես և ամենուր, այնտեղ ևս կարելի է գտնել «տրիքստերային շերտ»: Հին կտակարանում առկա են բազում պատմություններ, որտեղ «մեր»՝ դրական հերոսները հաջողության են հասնում խաբեության միջոցով, որն, ընդ որում, բացասական գնահատանքի չի արժանանում: Աբրահամի կին Սառան Եգիպտոսում ներկայացվում է որպես նրա քույրը, Իսավը իր հորից խաբեությամբ է ստանում ավագ որդու իրավունքն ու օրինանքը ևն:

Տրիքստերի բացահայտ կերպար չկա նաև հայ առասպելաբանության մեջ, բայց եղած սուղ տեղեկությունները հնարավորություն են տալիս վերականգնելու այն: Հայկ նահապետի թոռ Արամայիսն իր որդի՝ բազմագավակ ու շատակեր Շարային իր ընտանիքով ուղարկում է բնակվելու Շիրակի արգավանդ ու բերրի դաշտում (Շիրակ անունն էլ բխեցվում է Շարայի անունից): Շարայի մասին հնում խոսք է եղել: «Թե քո որկորը Շարայի որկորն է, մեր ամբարները Շիրակինը չեն» (Խորենացի Ա. Ժբ):

Արամայիսի որդի Շարան իր անունով և հայրանունով հիշեցնում է Արամի որդի Արային, որը խորհրդանշում է կարգը, արդարությունը, և Շարան, այսպիսով, կարող է դիտարկվել որպես կարգը խորհրդանշող Արայի «իջեցված», ձևափոխված անունով նմանակը, ավելի ճիշտ՝ ծաղրանմանակը: Առասպելաբանական տրիքստերի ամենաբնորոշ հատկանիշներից են, ինչպես ասվեց, որկրամոլությունը և սեռական անհագորդությունը: Արայի դաշտը՝ Արարատյան արքայանիստ դաշտավայրը Հայաստանի քաղաքական, հոգևոր, մշակութային կենտրոնն էր՝ «Հայկական տիեզերքի» կարգի կենտրոնը, իսկ Շարայի՝ Շիրակի դաշտը՝ երկրի հացի շտեմարանը, որի անվանադիր կերպարը բնութագրվում է որկրամոլությամբ: Այսպիսով, Շարայի կերպարում տրիքստերի առաջին հատկանիշը ներկա է բացահայտորեն, իսկ երկրորդը կարելի է ենթադրել նրա «բազմածին» (բնագրում՝ *յոլովածին*) բնորոշումից: Առաջին Հայկյանների ավանդությունում բոլոր նահապետների մեջ շեշտվում է միայն Շարայի բազմաբեղունությունը, որը շատակերության հետ միասին, հատկանշական է համարվել նրան բնութագրելու համար: Այստեղ

ևս Շարան կարող է դիտվել որպես Արայի ծաղրական հակապատկերը. Արան չի համաձայնում կատարել վավաշուտ Շամիրամի ցանկությունը (դեմ գնալ կարգին), իսկ բազմաբեղուն և բազմազավակ Շարան ինքը կարող է բնորոշվել վավաշոտությամբ:

Որկրամոլ տրիքստերին բնորոշ է ուտելիքը «հենց հիմա և այստեղ» ուտելը՝ հակադրվելով հետագայի համար այն հեռատեստրեն ամբարելու գաղափարին, որն ավանդության մեջ ի հայտ է գալիս բացահայտորեն՝ Շարայի և ամբարների հակադրմամբ: Տրիքստերը նաև կոմիզմի ու հումորի կրողն է, և հատկանշական է, որ հայ առասպելաբանության հնագույն շերտում՝ Հայկյանների պատմության մեջ սա երգիծական միակ դրվագն է:

Հետաքրքիր է, որ Հայաստանում հումորի նկատմամբ առանձնահատուկ, պաշտամունքի մոտեցող վերաբերմունք կա միայն Շիրակում՝ Գյումրիում: Եվ թեև ժամանակակից գյումրեցիները ծագումով հիմնականում Էրզրումի, Կարսի և Բայազետի շրջաններից թուրքահայ ներգաղթյալների ժառանգներ են, հումորի նկատմամբ այդ վերաբերմունքը նրանք, տեսականորեն, կարող էին ժառանգել և զարգացնել տեղի հին բնակիչներից:

Առասպելաբանությունից դուրս տրիքստերային հատկանիշներով օժտված կերպարներ կան գրականության այլ ժանրերում, լեզվաբանության միջև և վեպ, և, ասենք, իրական ու անիրական պատումների դաշտեր են ստեղծվել «ժողովրդական գվարձախոս» կոչվող նրանցից մի քանիսի շուրջը (Պըլը Պուղի, Պուղոգ Մուկուչ ևն): Հատկանշական է գյումրեցի Պուղոգ Մուկուչի օրինակը, որի անունը տալիս ոմանք իրենց պարտավորված էին համարում յոթ անեկդոտ պատմել նրա մասին, ինչը սրբազանի և չսրբազործվածի հետաքրքիր համադրության մի օրինակ է:



Ստալինիզմի տարիներին ԽՍՀՄ ժողովուրդների ներկայացուցիչները, խորհրդային պաշտոնական գաղափարախոսության համաձայն, չէին կարող վատ կերպով տարբերակվել իրարից, թեև որոշ կաղապարներ, իհարկե, կային. Ասենք՝ ռուսն ավագ եղբայրն էր, կովկասցին՝ իրականում վրացին՝ երկրորդ եղբայրը (որպես Ստալինի ազգակից): Որպես վատ արտահայտված օրինակ, հիշենք Երկ-

որո՞ղ համաշխարհային պատերազմի ավարտին ռայխստագի վրա սովետական դրոշ բարձրացրած երկու հերոսների ազգանունները՝ սերժանտ Եգորով (ռուս) և կրտսեր սերժանտ Քանթարիա (վրացի): Ասում էին, որ դրոշ բարձրացնելու համար մինչ այդ մոտ մեկ տասնյակ այդպիսի երկյակներ են ուղարկել, որոնք զոհվել են: Հավանաբար՝ բոլորն էլ ռուս և վրացի, ընդ որում, ռուսի կոչումը՝ մի քիչ ավելի բարձր: Որպեսզի հաճելի լինի Ստալինին: Ինչևէ, վրացու կերպարը բնորոշվում էր ասպետությամբ, տաքարյունությամբ և ազգային խոհանոցի համադամ խորտիկներով: Որոշ չափով տարբերակվում էին նաև մյուսները՝ ուկրաինացիները, միջինասիացիները, սովետական արտասահմանցիները՝ մերձբալթյան երկրների ժողովուրդները, և պաշտոնապես չէին հիշվում, կարծես գոյություն չունեին, հրեաները:

Ռուսական, հետագայում համասովետական դարձած բանահյուսության մեջ, ինչպես հիշում են Իլյա Իլֆն ու Եվգենի Պետրովը, ամենաբարձր համարում ունեին հրեական և կովկասյան թեմաներով անեկդոտները<sup>19</sup>: Ռուսական իրականության մեջ վաղուց արդեն հայերն ունեին մյուս կովկասցիներից տարբեր կերպար, բայց ՍՍՀՄ պաշտոնական համակարգում հանդես էին գալիս որպես մի տեսակ թույլ արտահայտված վրացիներ, որոնց խոհանոցը և գինին լավս է, բայց գիջում է վրացականին, պարերը, երգերն ու արվեստը՝ նույնպես, իսկ հայկական պարի պետական անսամբլը դեռևս 60-ականների սկզբին լեզգիկա էր պարում, բայց՝ արդեն թույլատրված դոգայով հայրենասիրության ֆոնի վրա այն ներկայացնելով որպես հայկական ժողովրդական պար «Նաիրի»:

Իսրուչյովյան «ձնհալից» սկսած հայերը շուտով վերագտան իրենց տեղը արդեն համասովետական դարձած ռուսական բանահյուսության մեջ, թեև գրականության ու արվեստի մեջ երբեմն շարունակում էին հանդես գալ որպես հին, վրացական թեքումով կովկասցիների մի դրսևորումը: Ռուսական իրականությունը ժողովրդական մակարդակում ընդհանրապես որպես «ներքին» այլազգիներ տարբերակում էր կովկասցիներին, հրեաներին, ուկրաինացիներին ու թաթարներին (նաև իրենց արհամարհական անվանումներով), իսկ ՍՍՀՄ մյուս ժողովուրդների կերպարները վառ արտահայտված

<sup>19</sup> Ի. Իլֆ, Ե. Պետրով, Տասներկու աթոռ. Ոսկե հորթը, Երևան, 1962, էջ 442:

չէին: Բանահյուսության մեջ՝ անեկդոտներում, կովկասցիներից տարբերակվում են վրացիները՝ որպես սնապարծ, դատարկ, ուտող-խմող, գերսեքսուալ և հարուստ ժողովուրդ, իսկ ադրբեջանցիները վառ արտահայտված կերպար չունենին: Մինչդեռ հայերը թեն հանդես էին գալիս որպես կովկասցի, բայց տարբերակված մոտեցման դեպքում արդեն բացարձակապես գատվում էին մյուսներից, ընդ որում, համասովետական (ռուսական) բանահյուսության մեջ հայը ամենավառ արտահայտված կերպարներից էր (ինչպես հրեան): Այս բանահյուսական կերպարը գալիս էր, ակներևաբար, հնից, բայց իր բարձրակետին հասավ ԽՍՀՄ գոյության վերջին տասնամյակներում<sup>20</sup>:

Հայը տիպիկ տրիքստեր էր: Անեկդոտներում «մեր» ժողովրդի ներկայացուցիչը, հաճախ խաբելով ու խորամանկելով, հաղթում է մյուսներին, բայց խորամանկությունն ու խաբեությունն առավել բնորոշ են, ասենք, հրեայի կերպարին՝ նույնիսկ այն դեպքերում, երբ նա պարտվում է, իսկ ռուսական անեկդոտի ռուս հերոսը կարող է հաղթել ոչ թե խորամանկությամբ, այլ ուղղագիծ պարզամտությամբ և անխոհեմ խիզախությամբ: Իսկ հայը հանդես էր գալիս որպես դասական տրիքստեր: Ռուսաստանում հայտնի էին հայերի՝ իբր հրեաներին առևտրում հաղթելու մասին զավեշտական տեքստեր, ինչպես, օրինակ, «Կազբեկ» ծխախոտի անվան որպես հապավման վերծանումն իբրև *когда армянин заходит на базар—евреям капут՝ «երբ հայը մտնում է շուկա, վայ հրեաներին»*: Ի միջի այլոց, իրենց մասին նման պատմություններ էին պատմում նաև ուկրաինացիներն ու թաթարները, բայց խորամանկ ու խաբերա հայի կերպարը մինչև նույն է, չափազանց հայտնի էր:

Հյուսիսամերիկյան հնդկացիների առասպելներում տրիքստերին (կոյոտին) բնորոշ է «փոխանակության մանիան», իսկ հունական առասպելաբանության տրիքստեր Հերմեսը առևտրի, առևտրականների ու գողերի, բայց նաև «այս» և «այն» աշխարհների միջև

<sup>20</sup> Սկսած 1990-ականներից, ռուսական բանահյուսության, ինչպես և իրականության մեջ հայերը նորից սկսեցին նույնացվել որպես «կովկասցի»՝ միավորվելով մի տեսակ պաշտոնական դարձած «կովկասյան ազգության անձինք» կոչումով:

տեղաշարժերի ու հոգիների տեղափոխության աստվածն է, որը կարող է բնորոշվել որպես փոխանակության, ավելի լայն իմաստով՝ փոխադարձության աստված: Հայերը ռուսներին հայտնի էին դեռևս Կիևյան Ռուսիայի ժամանակներից: Նրանք հաջողակ առևտրականներ էին, և արդեն XVII դարում, Ալեքսեյ Միխայլովիչ ցարի օրոք՝ 1667 թ., նրանք ստացան այնպիսի առանձնաշնորհներ, որոնց չէր կարողանում հասնել ոչ մի եվրոպական պետություն (բացառությամբ Հոլանդիայի դքսության, 1636 թ.): Հաջորդ ցարի՝ Պետրոս I-ի ժամանակ հայ վաճառականների նշանակությունը զգալիորեն աճեց, և նրանց տրվող արտոնությունները մեծացան: Հայերը, որ զբաղվում էին հատկապես արևելյան ապրանքների առևտրով, հանդես էին գալիս որպես արևելքի ու արևմուտքի միջև միջնորդներ, սահմաններն անցնողներ (հիշենք, որ տրիքստերը «սահմանների թշնամին» է): Խաբեությունը առևտրականների բանահյուսական հատկանիշն է, որը նույնպես հային մոտեցնում էր տրիքստերին: Ռուսաստանում հայի՝ որպես տրիքստերի կերպարի պատմական ակունքների համար հիշենք Բաֆֆու «Բազազոդի հիշատակարանը», որտեղ ներկայացվում է արդեն XIX դարի Ռուսաստանում որոշ հայերի իրոք որ տրիքստերային կյանքը (կերպարանափոխություններ, խաբեություն, գողություն են): Իսկ իմ պատանեկության տարիներին Սոչիում բիլիարդի 6 : 3 հաշիվը անվանվում էր армянский баланс «հայկական հաշվեկշիռ» (լսել եմ 1967 թ.), այսինքն՝ 6 = 3, ահա ինչպես էին ռուսները պատկերացնում հայի մաթեմատիկական հավասարումը, որը գործում էր, իհարկե, հոգուտ հայի:

Սովետական-ռուսական բանահյուսության հայերը, ինչպես և մյուս կովկասցիները գերսեքսուալ էին: Դա ուներ իր օբյեկտիվ պատճառները: Կովկասում և Անդրկովկասում սեռերի հարաբերությունները շատ ավելի փակ ու խիստ են, քան Ռուսաստանում, և կովկասցի տղամարդիկ, հայտնվելով Ռուսաստանում, իրենց պահում էին ինչպես գայլերը փարախում՝ բաց չթողնելով ոչ մի հնարավորություն: Կանանց դա կարծես դուր էր գալիս, իսկ տղամարդկանց համար նրանք ընդամենը չբավարարված չտեսներ էին: Ինչևէ, գերսեքսուալությունը տրիքստերի կարևոր հատկանիշներից է, որը հանգեցնում է ընդունված նորմերի խախտումների՝ այդ թվում և արվա-

մուլության (մյուս հաճախ հանդիպող տրիքստերային խախտումն է արյունապղծությունը): Ընդհանրապես տրիքստերի կերպարի կարևոր հատկանիշներից է սեռական անբարոյականությունը: Ռուսական հանրահայտ «Четыре татарина и один армян» («Չորս թաթար և մեկ հայ») գրեհիկ երգում հայը սեռականապես գերազանցում է թաթարներին, և այդ հարաբերակցությունն էլ՝ 4 : 1, թերևս բնորոշում է այդ ազգերի «հայկական հաշվեկշռի» աստիճանը (ռուսերենում թաթարը բոլոր թյուրքալեզու ժողովուրդների, այդ թվում և ադրբեջանցիների հավաքական անվանումն էր): Մի զինվորական անեկդոտում զինվորները հերթով պատմում են հրամանատարին, թե ինչ են մտածում աղյուսին նայելիս. ռուսը՝ տներ, դպրոց, մանկապարտեզ կառուցելու, վրացին՝ առանձնատուն, ավտոտնակ ունենալու, իսկ հայը՝ կանանց հետ սեռական կապի մասին (քանի որ միշտ այդ մասին է մտածում):

Հայը ռուսական-սովետական անեկդոտներում հանդես է գալիս նաև որպես արվամոլ, և այն անեկդոտները, որոնք Հայաստանում պատմում են ադրբեջանցի-թյուրքերի մասին, ՍՍՀՄ մյուս ազգերը պատմում էին հենց հայերի մասին: Ադրբեջանցիների դեպքում, ըստ որոշ տեղեկությունների, սովետական ժամանակներում այդ երևույթը տարածված է եղել նույնիսկ երկրի ղեկավար մարմիններում<sup>21</sup>: Հանրահայտ է նաև արվամուլության թեման թյուրքական իրականության և արվեստի մեջ, և հայերն այդ հատկանիշով անշուշտ գիշում էին իրենց հարևաններին: Սակայն ռուսների կողմից այդ երևույթը հայերին վերագրելն ունի իր հին արմատները (տես օրինակ Իսահակ Բաբելի «Իմ առաջին հոնորարը» պատմվածքը)<sup>22</sup>: Դե, անկասկած, ուժեղացնում էր հայի՝ որպես տրիքստերի ընկալումը: Հատկանշական է, որ անեկդոտ կա նույնիսկ հայերի առնանդամի առանձնահատուկ կառուցվածքի մասին՝ հարմարված իբր արվամուլությանը: Ի միջի այլոց, ըստ Կերենյիի, ֆալլոսը տրիքստերի կրկնակն է, նրա երկրորդ եսը<sup>23</sup> (հիշենք Հերմեսի պատկերումը ցցված ֆալլոսով

<sup>21</sup> <https://www.lragir.am/ru/2010/09/07/15155/>.

<sup>22</sup> <http://ruslit.traumlibrary.net/book/babel-ss04-01/babel-ss04-01.html#work008008>.

<sup>23</sup> K. Kerényi, նշվ. աշխ., p. 182.

կամ ուղղակի որպես ֆալլոս): Հայի, որպես խաբեբա առևտրականի կերպարին, ակնհայտորեն, բնորոշ պիտի լիներ խելքը, որով նա տարբերվում էր մյուս կովկասցիներից: Ըստ այդմ, նրա արվամուտությունը կարող է պատկերացվել որպես «խելք» տրիքստերի խոր անբարոյականության արտահայտություն:

Այս համատեքստում, կարելի է ասել, որ ռուսական բանահյուսական արվամուտ հայը միջին դիրք է գրավում կնոջ և տղամարդու միջև, այսինքն՝ ինչպես և առասպելաբանական տրիքստերը, միավորում է հակադրությունները: Մեկ այլ նկատառում: Ռուսաստանյան իրականության մեջ առկա են ազգային, ռասայական և կրոնական երկու հիմնական խմբեր՝ շիկահեր, քրիստոնյա սլավոններ և սևահեր, մուսուլման թյուրքալեզու ժողովուրդներ: Սևահեր հայերը ռուսների համար տեսքով նույնն էին, ինչ թյուրքերը, իսկ կրոնով քրիստոնյա էին ռուսների պես, այսինքն՝ նորից հանդես էին գալիս որպես հակադրությունները միավորող և սահմանները խախտող տիպիկ տրիքստերներ (սա կարող է վերաբերել նաև վրացիներին, որոնց բանահյուսական կերպարը ևս տրիքստերային էր, բայց առանց հայի ինտելեկտուալ-խաբեբայի հատկանիշի):

Եվ, ի վերջո, տրիքստերին բնորոշ կոմիզմի, հումորի և հեզնանքի մասին: Չնայած, ինչպես ասվեց, հրեական ու կովկասյան անեկդոտների լայն տարածմանն ու բարձր վարկանիշին, 1960-70-ական թվականներին ՍՍՀՄ-ում մյուսներին մթագնեց «հայկական ռադիոյի» շարքը: Այս անեկդոտների ծագումն ակհայտորեն հայկական չէ, և նրանք ցույց են տալիս հայի կերպարը ոչ հայի աչքերով: Ինչո՞ւ հատկապես ընտրվեց «հայկական ռադիոն»: Այս հարցի ճշգրիտ պատասխանը հայտնի չէ: Սակայն պարզ է, որ հարցերին սրամիտ, պարադոքսալ՝ «տրիքստերային» պատասխաններն ավելի բնորոշ կարող են լինել մի ժողովրդի ռադիոյին, որի մոտ հավասարությունը բնութագրվում է 6:3 հաշվով, և որի բանահյուսական կերպարը, ի տարբերություն մյուսների, օժտված է ինտելեկտով ու ճարպիկ խաբեբայի հատկանիշերով (այստեղ այլընտրանք կարող էր լինել միայն «հրեական ռադիոն», բայց ՍՍՀՄ-ում հրեական ռադիո գոյություն չուներ): Եվ նույնիսկ անեկդոտի այդ տեսակը՝ հարց ու պատասխան՝

պարադոքսալ հանելուկ, որը ծագում է ժամանակին տարածված «հարցրեք՝ կպատասխանենք» ռադիոհաղորդումներից, համադրելի է արխաիկ մշակույթներում «խոսքային մենամարտերի» և քրմական՝ ծիսական հարց ու պատասխանների հետ (ինչպես է հին հնդկական բրահմոդյան), որոնք ի վերջո հանգում են արարիչ աստծու և նրա հակառակորդի առասպելական մենամարտին և աշխարհի արարմանը (հայկական ռադիոյի շատ անեկդոտներ իրոք կարող են ուղղված լինել արարչին. «ի՛նչ է մտածում արյուրը հավի հետևից վազելիս», «կարո՞ղ է տղամարդը ծննդաբերել», «կմ՞ արդյոք կյանք Մարսի վրա» են): Միայն այս դեպքում հարցերին պատասխանում է ոչ թե արարիչը (կամ նրա ներկայացուցիչ քուրմը), այլ տրիքստերը՝ նրա ծաղրանմանակը:

Այսպիսով, ռուսական և համասովետական ժողովրդական պատկերացումներում և բանահյուսության մեջ հայի կերպարը բնութագրվում էր որպես տրիքստեր: Սովետական իրականության մեջ ոչ մի այլ ազգային կերպար, բացի չափազանց հարուստ ներկայացված հրեականից, այս տեսակետից չի կարող համեմատվել հայի հետ. մյուսներին կարող են բնորոշ լինել տրիքստերի որոշ հատկանիշներ միայն: Եվ հատկանշական է, որ, ըստ մի անեկդոտի, հայկական ռադիոյի հարցերին պատասխանողը հրեա է եղել. այսինքն՝ այստեղ էլ խաբեություն կա: Իսկ «Հայկական ռադիոյի» անեկդոտների ստեղծման ու տարածման գործում հավանաբար իրոք կարևոր է եղել հրեական ներդրումը:

## ՉՈՐԻ ԱՌԱՄԴԵԼՈՒՅԹԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպե՞ս են մարդիկ դիմանում պատմության մեջ հաճախ հանդիպող մեծ աղետներին, երբ, ըստ Ֆյոդոր Դոստոևսկու, աշխարհը մի երեխայի արցունք չարժե: Մինչդեռ աշխարհի տարբեր մասերում միշտ էլ տանջվել, խոշտանգվել ու սպանվել են միլիոնավոր երեխաներ ու մեծահասակներ: Արխաիկ մտածողությունը համապատասխան մեխանիզմ պետք է մշակեր նման իրադրությունները հաղթահարելու համար:

Ըստ այդ մտածողության, աշխարհի երևույթները դառնում են իմաստալից, իրական և էական միայն այն չափով, որքանով կրկնում են առասպելական նախադեպը<sup>24</sup>: Եվ բոլոր պատերազմները, բախումները, պատմական դեմքերն ու դեպքերը համադրվում և համապատասխանեցվում են առասպելական, կրոնական կամ ավանդական նախնական պատմության հերոսներին ու իրադարձություններին, որոնց միջոցով էլ նրանք նշանակալի են դառնում և իմաստավորվում: Մարդկությունը կարողանում էր կրել իրեն բաժին հասած տանջանքները որպես «վերին», «սրբազան» երևույթների արտացոլում. ամեն մի հերոս կրկնում էր առաջին հերոսներին, ամեն մի պատերազմ՝ բարու և չարի, «յուրային» և թշնամական ուժերի պայքարը, անարդարությունը, տառապանքն ու մահը՝ «գոհվող աստծու» չարչարանքները, զանգվածային սպանությունները՝ սուրբ նահատակների պատմությունները են: Պատմությունն ինքնին, առանց այս համադրությունների, անիմաստ էր և չէր կարող ունենալ սեփական արժեք: Ըստ Միրզա Էլիադեի, նույնիսկ XX դարում Եվրոպայի բնակչության նշանակալի մասը (իսկ աշխարհի մյուս մասերում՝ առավել ևս) ապրում էր այս «հակապատմական» հեռանկարով, որը հնարավորություն էր տալիս մարդկանց դիմագրավելու պատմության հզոր ճնշմանը:

Ըստ արիստիկ պատկերացումների, ժամանակի շարժումը ցիկլիկ է (շրջանաձև)<sup>25</sup>: Պատմությունը կրկնվում է, ինչպես և տարվա եղանակները, և իրադարձությունները համադրվում են իրար, ինչպես, ասենք, այս ձմեռը անցյալ ձմռանը ևն: Եվ սա հնարավորություն է տալիս համադրելու ներկա իրադարձությունները միակ իմաստալից, «իսկական», առասպելական պատմության նախատիպերի հետ:

Եվ ամեն մի նոր տարուց, ինչպես տիեզերքի առաջին արարումից հետո հնարավոր էր դառնում նոր, մաքուր կյանքի սկիզբը: Մտածողության այս նախադեպային մոտեցումը հաղթահարվեց նոր կրոններում, երբ նոր մակարդակի հասցվեց հավատը: Այն հավատը, որը կարող է սարեր շարժել (Մարկոս, XI. 22–24), այսինքն՝ արարել և վերաարարել տիեզերքն ու պատմությունը: Այդ հավատը հնարավոր

<sup>24</sup> Այս գլխի տեսական դրոյթների վերաբերյալ տե՛ս M. Eliade, *Cosmos and History. The Myth of the Eternal Return*, New York, 1959.

<sup>25</sup> Այս մասին տե՛ս E. M. Мелетинский, *Время мифическое*:

րություն է տալիս հաղթահարելու իրականության մարտահրավերները արդեն նույնիսկ պատմության իրական, ոչ ցիկլիկ ընկալման դեպքում, առանց նախադեպային համադրությունների: Չնայած դրան, աշխարհի բնակչության նշանակալի մասը նույնիսկ մեր ժամանակներում շարունակում է ապրել այդ «հակապատմական» մոդելով, որը հնարավորություն է տալիս մարդկանց դիմագրավելու իրականության հզոր ճնշմանը:

Առասպելաբանական գիտակցության տեսակետից այն, ինչ կա հիմա, առաջին, սկզբնական «Դեպքի» (նախադեպ, առաջնադեպ)՝ տիեզերքի արարչագործության զարգացման արդյունք է: Տիեզերքի արարումով բարի և չար ուժերի հավերժական պայքարը չի ավարտվում, այլ մղվում է տարածության և ժամանակի ծայրամասային, ոչ հրատապ անկյունները: Որոշ իրադրություններում՝ նոր և հին տարիների, դարաշրջանների սահմանագծին իրադրությունը փոխվում է, այդ նախնական պայքարը վերատեղափոխվում է կենտրոն՝ «այստեղ» և «հիմա», որը և վերածվում է քառսի, հակադիր ուժերի կենտրոնի: Այս դրությունը լուծվում է տիեզերածնության գործողության կրկնությամբ՝ նոր տիեզերքի ու նոր ժամանակի սկզբնավորմամբ:

Սա առասպելաբանության մակարդակում: Իսկ մարդկանց ինչ գործողություններ էին անհրաժեշտ այս իրադրությունները լուծելու համար, կամ նույնն է թե՛ ինչ ծես է կատարվում նման իրադրություններում:

Ծեսը, ընդհանրապես, հասարակական կեցության ամենավաղ ձևն է, մարդկային գործունեության բոլոր դրսևորումների աղբյուրը և մարդկային կոլեկտիվի կյանքի գոյատևման երաշխավորն ու ապահովողը<sup>26</sup>: Ցանկացած ծեսի կենտրոնական գործողությունը գոհաբերությունն է: Ելման դրությունը հետևյալն է. աշխարհը տարրալուծվել է քառսում, նախկին բոլոր կապերը խախտված և ոչնչացված են: Խնդիրն է վերամբողջացնել տիեզերքը նրա բաղադրիչներից:

Տիեզերքի տարրերը համապատասխանեցվում են գոհի՝ մասնավորապես մարդկային գոհի մարմնի մասերի հետ: Մասնատված

<sup>26</sup> Ծեսի վերաբերյալ այս համատեքստում տե՛ս В. Н. Топоров, О ритуале: введение в проблематику. – Архаический ритуал в фольклорных и раннелитературных памятниках, М. 1988, с. 7–60.

գոհի հետ ծիսական գործողություններով և համապատասխան տես-  
տի արտասանությամբ քուրմը կրկնում է տիեզերածնության նախնա-  
կան գործողությունը, որի հետևանքով վերականգնվում է իրերի բնա-  
կանոն վիճակը: Սա ծեսի ընդհանուր սխեման է, վերակազմված մի-  
ջուկը: Իրական ծեսերը կարող են բավականաչափ տարբերվել սրա-  
նից:

Ծիսական գոհի և տիեզերքի նույնացման մեխանիզմը հետև-  
յալն է. տիեզերքի մասերը ծագում են առաջնագոհի մարմնի մասե-  
րից, օրինակ, աչքերից՝ արևը, շնչից՝ քամին, մազերից՝ բուսականու-  
թյունը, արյունից՝ ջրերը, ոսկորներից՝ քարերը ևն, կամ մարդն է  
կերտվում տիեզերքի համապատասխան տարրերից<sup>27</sup>: Մինչույն  
մտայնության տրամաբանությունը հանգեցնում է «գոհաբերության  
գաղափարախոսության» այն աստիճանին, որ կենսագործունեու-  
թյան ամեն մի դրսևորում հանգում է գոհաբերության և վերածնու-  
թյան (օրինակ, ուտելիքը և խմիչքը ստեղծված են գոհի մարմնից ու  
արյունից և պահպանում են մարդկանց կյանքը):



Քրիստոնեական կրոնի գլխավոր գործող անձը՝ Քրիստոսը  
հանդես է գալիս որպես աստծու որդի, որը գոհաբերվում է մարդկու-  
թյան փրկության համար և, հարություն առնելով, բարձրագույն դիրք  
է գրավում երկնքում, արարիչ աստծու կողքին: Քրիստոնեական  
պատկերացումներն այնքան հայտնի են և այնքան ակնհայտորեն են  
համընկնում «գոհաբերության գաղափարախոսությունը», որ հա-  
տուկ քննության անհրաժեշտություն չի ծագում (հմմտ. հացը Քրիս-  
տոսի մարմնի, իսկ գինին՝ արյան հետ նույնացնելու փաստը, որը  
ցույց է տալիս «գոհաբերության գաղափարախոսության» դրսևորու-  
մը քրիստոնեության մեջ նույնիսկ այս մակարդակում):

Հին հայոց ազգածնության ավանդության մեջ (ազգածին առաս-  
պել) որպես առաջնագոհ հանդես են գալիս երկու կերպար՝ Բելը և  
Արա Գեղեցիկը: Ընդ որում, Բելը խորհրդանշում է քառսը, անկար-  
գությունը, չար, թշամական ուժերը, իսկ Արան բուն հայ առաջնա-

<sup>27</sup> Այս հարցերի վերաբերյալ տե՛ս օրինակ B.Lincoln, Death, war, and sacrifice, Chi-  
cago, 1991, 167–175:

գոհն է և պետք է խորհրդանշի տիեզերական կարգը, «մեր», դրական ուժերը:

Արայի կերպարը մանրամասն քննարկվել է հայագիտության մեջ (Ալեքսանդր Մատիկյան, Նիկողայոս Ադոնց, Գրիգոր Ղափանցյան)<sup>28</sup>: Եվ հայկական տվյալների վերլուծությունը, և Հայաստանին շրջակա երկրների համանման առասպելները ցույց են տալիս, որ Արան հանդես է գալիս որպես մեռնող և հարություն առնող աստվածության վիպականացած տարբերակը (նա գոհվում է պատերազմում, բայց Ասորեստանի թագուհի Շամիրամն իբր իր աստվածների՝ արալեզների միջոցով կարողանում է վերակենդանացնել նրան):

Հայկական առասպելաբանության մեջ մեռնող և հարություն առնող աստվածության մյուս աչքի ընկնող ժառանգներն են Արտավազդը, որը փակվել է Մասիսի մի քարայրում, բայց կարող է դուրս գալ այնտեղից և տիրել աշխարհին (սովորաբար ներկայացվում է որպես բացասական կերպար), և Փոքր Մհերը, որը պետք է դուրս գա Ագռավու քարից արդարության և բարեկեցության հաղթանակից հետո (միննույն դիցաբանական կերպարի դրական անձնավորումը): Ըստ Նիկողայոս Ադոնցի, ընդհանրապես, մեռնող և հարություն առնող աստծու առասպելն է պայմանավորել հին հայոց աշխարհայացքը նույնիսկ մինչև քրիստոնեությունը, իսկ քրիստոնեությունն արդեն հենց մեռնող ու հառնող աստծու կրոն էր: Եվ հայոց մեջ նույնիսկ քրիստոնեական սրբերը համապատասխանեցվել են նախաքրիստոնեական նմանատիպ կերպարների հետ (սպենք, Գրիգոր Լուսավորիչը լեզենդում հանդես է գալիս որպես Արա Գեղեցիկի քրիստոնեական ժառանգը):

Այս երևույթը բնորոշ է նաև այլ մշակույթներին, երբ ժողովուրդը նոր կրոն, օրինակ՝ քրիստոնեություն կամ իսլամ ընդունելիս այդ կրոնի սրբազան կերպարներին համապատասխանացնում է իր հին աստվածությունների և հերոսների հետ: Եվ քրիստոնեական ժողովուրդների կրոնական ավանդություններում մեռնող և հարություն առնող աստվածության դրսևորումներ են հավատի համար գոհվող

<sup>28</sup> Տե՛ս հատկապես Ա.Մատիկյան, Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930. Ն.Ադոնց, նշվ. աշխ. Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944:

բոլոր սրբազան նահատակները, որոնք մահվանից հետո իրենց տեղն են գտնում Քրիստոսի կողքին, երկնքում:



Թեև չափազանց մակերեսային կլինի ասել, որ Հայոց ցեղասպանության պատճառը կրոնական էր, բայց ակնհայտ է, որ քաղաքական, պատմական, սոցիալական պատճառների հետ կարևոր դեր է կատարել նաև կրոնական գործոնը: Իսկ ժողովրդական պատկերացումներում կրոնական գործոնն ամենաէականն էր: Հայը տարբերվում էր շրջակա թուրքերից ու քրդերից որպես «հայ քրիստոնյա», իսկ նրանք, անկախ ազգությունից, հակադրվում էին հային որպես ոչ քրիստոնյաներ՝ մուսուլմաններ: Նման իրադրության մեջ ցանկացած էթնիկական հակադրություն ընկալվում է կրոնական հիմքի վրա:

Քրիստոնեության պատմության մեջ հանրահայտ են քրիստոնյաների հալածանքները և նրանց դեմ կատարված զանգվածային բռնությունները: Իրական պատմության իրադարձությունները առասպելաբանական և կրոնական նախատիպերի հետ նույնացման և նրանց միջոցով իմաստավորման արխաիկ տրամաբանությունից բխում է, որ Ցեղասպանության զոհերը կենդանի մնացածների համար իրենց հավատի նահատակներն են, ինչպես և՛ քրիստոնեության վաղ պատմության գործիչներն ու զոհերը, որոնք այսպես թե այնպես կրկնում են աստծու որդու չարչարանքներն ու ճանապարհը՝ զոհաբերություն և հարություն՝ ի վերջո տեղ գրավելով Քրիստոսի կողքին:

Եվ եթե պատմությունն իմաստավորվում է առասպելաբանական և կրոնական նախադեպերով ու կերպարներով, ուրեմն Ցեղասպանության զոհերի չարչարանքն ու մահը պետք է իմաստավորվեն ինչպես Քրիստոսինը՝ իբրև զոհաբերություն մարդկանց փրկության համար: Ուրեմն, նրանք զոհվեցին մեր փրկության համար, ընդ որում, այստեղ ի նկատի է առնվում ոչ միայն ֆիզիկական փրկությունը, այլ նաև բարոյական և կրոնական փրկությունը:

Ինչպես ասվեց, զոհաբերության ծեսը տեղի է ունենում այն ճակատագրական տեղում և պահին, որտեղ և երբ քառսի ուժերը կործանել են տիեզերական (այդ թվում նաև մարդկային, սոցիալական

նն) կարգը, և այդ ծեսի իրագործումը այդ պահին ու այդ տեղում (աշխարհի կենտրոնում) հանգեցնում է տիեզերքի վերաստեղծմանը և նոր, առավել բարձր կարգի արդարության հաստատմանը: Ընդ որում, կարգը համատիեզերական է, այսինքն՝ այդ գոհաբերությունն է ապահովում, օրինակ, արևի և աստղերի կանոնավոր շարժումը, գետերի հոսքը, տարվա եղանակների հերթավոխությունը, բույսերի աճը նն, ապա և հասարակության, ընտանիքի և մարդկային կյանքի դրսևորումները՝ կարգ, արդարություն, պտղաբերություն, առատություն նն:

Սա պարզորոշ կերպով երևում է արխաիկ մտածողության լեզվական դրսևորումներում: Լեզուն է այն միջոցը, որով մարդը ձևավորում և ձևակերպում է իր պատկերացումները: Եվ ծեսը կարող էր կոչվել «կարգ», «սովորույթ», «կանոն», «օրենք» նշանակող բառերով: Հնդեվրոպական որոշ լեզուներում ծեսն անվանվում է \**r-to-* նախաձևով՝ հմնտ. լատ. *ritus* «կրոնական ծես» (որից և ծագել են ծեսի անվանումները բազմաթիվ եվրոպական լեզուներում՝ անգլ., գերմ. *ritual*, ֆրանս. *rituel*, ռուս. *ритуал* նն), հին հնդ. *ṛta-* «տիեզերական կարգ», «ծես», ռուս. *обряд* «ծես» և *ряд* «շարք, կարգ» (հնդեվրոպական \**ar-* «հարմարեցնել, կարգավորել, համապատասխանեցնել» արմատից): Ծեսը ոչ այլ ինչ է, քան համաշխարհային օրենքի արարչական գործողության վերարտադրությունը, և դա է բացատրում լեզվում արտացոլված «ծես» և «տիեզերական կարգ» հասկացությունների նույնացումը: Հետաքրքիր են նաև այս արմատի դրսևորումները (հին) հայերենում. հմնտ. *արդ* «հարդարումն», «ձև», «հորինվածք», «կարգավորություն», *արդար* «ուղղագործ, բարի» և *արդարություն*, որպես այդ կարգի մարդկային դրսևորումներ: Հատկանշական են նաև քառսի, անկարգության անվանումները նույն արմատից \**n-* ժխտական մասնիկով՝ հին հնդ. *an-ṛta-*, հին իսլ. *un-rim*, ռուս. *не-урядица*, հայ. *անարդ* «անկարգ, անհեղեղ, տձև, տգեղ» և *ան-արդարություն*:

Հին հայերենում գոհաբերության ծեսի անվան մեջ այդ արմատը չի պահպանվել, բայց նրանով է կոչվում գոհաբերության գործողությունը՝ *յաշյր առնել* կամ *յաշյր արարել*, որտեղ *յաշյր*-ը նշանակում է «գոհ», իսկ *առնել* (նշանակում է «անել») և *արարել* բառերը ծագում են հնդեվրոպական նույն \**ar-*ից: Ընդհանրապես, հայերենի

տվյալներն այս արմատի առասպելաբանաստեղծական համատեքստի համար հետաքրքիր են: Տեսականորեն հնարավոր է Արա Գեղեցիկի անվան ստուգաբանական կապը քննարկված ձևերի հետ, արմատի \*rH- տարբերակի \*rH-tiyo- ածանցյալ նախաձևից, որը կարող է հիմնավորվել վերևում բերված դատողություններով՝ Արան առանջագոհ կերպար է, նրա մահը խորհրդանշում է տիեզերական անկարգության՝ *ան-արդարության* ժամանակավոր հաղթանակը, իսկ վերածնությունը՝ նոր կարգի՝ *արդ-ի, արդարության* գալուստը<sup>29</sup> (սա միարժեք չէ. հնարավոր են նաև այլ ստուգաբանություններ):

Ինչևէ, հնագույն հայոց աշխարհայացքին բնորոշ է եղել զոհաբերության, նախագոհ աստվածության և կարգի, արդարության առասպելաբանաստեղծական կապը, որը հետագայում առավել ուժեղացել է քրիստոնեության ընդունումից հետո: Ըստ այդմ, Ցեղասպանությունը վերապրողների պատկերացումներում եղեռնին ընկած իրենց ազգակիցները կարող էին և պետք է որ ընկալվեին որպես տիեզերական կարգի և արդարության հաստատման համար ընկած զոհեր: Ընդհանրապես, ցեղի անդամի զոհաբերությունն ընկալվում է ոչ միայն ցեղի սեփական էության և ապրելավայրի, այլև ամբողջ տիեզերքի պահպանման գործողություն: Սա բարձրագույն զոհաբերությունն է, երբ զոհաբերվում է ոչ թե մեկ մարդ-անհատը, այլ ամբողջ մի ժողովուրդ:



Եղեռնից հետո հայության եռանդն ուղղված էր փրկվածների, հատկապես երեխաների գոյատևման համար պայմաններ ստեղծելուն, իսկ քաղաքական միտքը, ի թիվս այլ խնդիրների՝ կորուսյալ հայրենիքի ազատագրմանը: Հայաստանի հանրապետության սովետականացումից հետո, 1920-ական թվականներին պարզ դարձավ, որ ո՛չ եվրոպական պետությունները, ո՛չ ՍՍՀՄ-ը և ո՛չ էլ նրա կազմում գտնվող Հայաստանը չեն զբաղվելու Արևմտյան Հայաստանի խնդրով: Այդ ընթացքում աշխարհի տարբեր երկրներում, որտեղ հայտնվել են նախկին արևմտահայերը, ձևավորվում էր հայի՝ որպես մարդկային

<sup>29</sup> Տե՛ս Ա. Պետրոսյան, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման խնդիրը, Երևան, 1997, 104–105:

անարդարությունից տուժած ազգի ներկայացուցչի կերպարը, որը, որոշ փոփոխություններով, շարունակվում է մինչև մեր օրերը: Սփյուռքահայերն իրենք իրենց և ուրիշներին պատկերանում են որպես մարդկային մեծ անարդարությունից տուժած, բայց շատ արդարամիտ, ամենուրեք օրենքներ և կարգ ու կանոն հարգող, իրենց հյուրընկալող երկրների իշխանություններին ու ժողովուրդներին գնահատող, նրանց երախտապարտ և նրանց հարգանքին արժանացած, իրենց հայրենիքի հիշատակը և ազգային կերպարը պահպանող, բայց տեղի ավանդույթները գնահատող ու ընկալող, աշխատասեր, մարդկային գործունեության շատ բնագավառներում հաջողակ ժողովուրդ:

Յեղասպանությունից հետո իրենց առաջին հանգրվանում՝ Առաջավոր Արևելքի երկրներում արդեն հայերը, որոնք և՛ կրոնով, և՛ քաղաքական կողմնորոշմամբ կապված էին Արևմուտքի հետ, հանդես եկան որպես արևմտյան առաջավոր արժեքների, նոր կենցաղի, տեխնիկայի, գիտության ու արվեստի, քաղաքակրթության ու առաջընթացի ջահակիրներ: Ստեղծվում էր ժամանակակից հայկական սփյուռքը, և ձևավորվում սփյուռքահայի կերպարը, որը նրան բնորոշում էր որպես հյուրընկալող պետությանը նվիրված, արդարամիտ, գործունյա, հաջողակ և օգտակար մի տարր: Այս հատկանիշները համատեղվում էին հայրենիքը կորցրած Յեղասպանության գոհի կերպարի հետ:

Հայերի գործարար հատկանիշները հայտնի էին վաղուց, իսկ ինչ վերաբերում է նրանց՝ պետությանը նվիրված քաղաքացիներ դառնալուն, այստեղ, պետք է կարծել, որ նշանակալի է եղել նրանց՝ Յեղասպանությունից փրկված լինելու հանգամանքը: Հայրենիքում հաղթել էր թշնամին, վիշապը, քառսը, անարդարությունը, այստեղ իշխում էր մահը: Վերապրող հայերը հարազատներին կորցրած մարդկանց ոչ մի կառույց չունեցող խումբ էին, որը պետք էր ձևավորել և կառույցներ ստեղծել, ինչը և արվեց: Կարելի է ասել, որ տեղի ունեցավ նոր տիեզերածնություն և ազգածնություն: Այս երևույթներն ընթանում էին կարգի, որոշակիորեն՝ նոր կարգի հաստատմամբ, որը և բնորոշվում էր արդարության գաղափարով:

Սկզբնական շրջանում հայերը չափազանց թույլ էին և կարող էին միայն ենթարկվել իրենց հյուրընկալած մարդկանց կարգերին:

Նրանք շնորհակալ էին իրենց հյուրընկալողներից, և դա նրանց արդեն պարտադրում էր հարմարվել նրանց, ենթարկվել նրանց օրենքներին: Մյուս կողմից, հայերին ապաստան տված երկրները կամ գտնվում էին քրիստոնեական մեծ պետությունների ազդեցության ոլորտում (Մերձավոր Արևելք), կամ էլ հենց քրիստոնեական էին (Եվրոպա, Ամերիկա), որը և պետք է պայմանավորեր հայերի հավատարիմ կեցվածքը այլադավան թուրքերի ատելի տիրապետությունից հետո: Հայրենիքում մահն էր իշխում, անարդարությունը, իսկ սփյուռքում հնարավոր էր կյանքը, ուրեմն և՛ արդարությունը: Եվ անմեղ զոհերի՝ ծերերի, մանուկների, ողջ գերդաստանների հիշատակը արդարության էին կոչում մարդկանց և արդարություն պարտադրում:

Այսպիսով, պատմությունը և օբյեկտիվ իրականությունն են ձևավորել սփյուռքահայի հավատարմահպատակ, արդարամիտ կերպարը: Հասկանալի է, որ որևէ ժողովուրդ չի կարող բաղկացած լինել միայն հույժ արդարամիտ անհատներից, և սփյուռքահայերի մեջ ևս եղել են և կան այլ կեցվածք ունեցողներ, բայց այստեղ խոսվում է սփյուռքահայի ընդհանրական կերպարի մասին: Այն արտացոլված է բազում վավերագրական և գեղարվեստական տեքստերում, կինոյում, թատրոնում ևն:

## ԱՌԱՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԸ, ՅԱՅԸ ԵՎ ԵՂԲԱՅԻՐԸ

Ամենուրեք, ամենատարբեր ժողովուրդների ավանդույթներում հայտնի են առասպելներ հրաշալի երկվորյակների մասին, որոնք հանդես են գալիս որպես ցեղի նախահայրեր կամ մշակութային հերոսներ<sup>30</sup>: Դուալիստական առասպելաբանություններում (հատկապես Ամերիկայի հնդկացիների և Օվկիանիայի ժողովուրդների մոտ) եղբայրներից մեկը կապվում է ամեն լավի և օգտակարի, իսկ մյուսը՝ վատի ու վսասակարի հետ: Նրանց միջև հենց ծննդյան պահից

<sup>30</sup> Այս մասին տե՛ս В.В.Иванов, Близнечные мифы.–Мифы народов мира, 1, с. 174–176. Տե՛ս և Л. А. Абрамян, А. Р. Демирханян, Мифологема близнецов и мировое древо. – Историко-филологический журнал, 1985, 4, с. 66–84:

մրցակցություն է սկսվում: Հուրոնների և իրոկեզների առասպելներում Իոսկեհան բոլոր օգտակար բաների՝ պտղավետ հովիտների, օգտակար կենդանիների և մարդկանց ստեղծողն է, իսկ նրա երկվորյակ եղբայր Տավիսկարոնը՝ ժայռերի, վնասակար, գիշատիչ կենդանիների, փշերի ևն: Տավիսկարոնն ընդդիմանում է եղբոր բոլոր բարի նախաձեռնություններին, խանգարում նրան: Առասպելի մի տարբերակում նա, եղբոր հետ մենամարտում վիրավորված, իր փրկությունն է գտնում ստորերկրյա աշխարհում: Իոսկեհան, ընդհակառակը, բարձրանում է երկինք:

Որոշ դուալիստական առասպելներում երկվորյակ եղբայրները հակադիր չեն, այլ մարմնավորում են երկու սկզբունք, որոնցից յուրաքանչյուրը վերագրվում է ցեղի կեսերից մեկին: Բայց այս դեպքերում ևս սովորաբար ի հայտ են գալիս նրանց հակադիր հարաբերությունների հետքեր:

Դուալիստական առասպելները հիմնված են առասպելաբանական սիմվոլների երկու շարքերի հակադրության վրա: Այդ շարքերից մեկը ցեղի կամ դրա մի մասի կողմից համարվում է օգտակար, մյուսը՝ վնասակար: Այս առասպելների սոցիալական հիմքը արխաիկ հասարակությունների դուալիստական բաժանումն է, երբ ցեղը բաղկացած էր երկու մասից (սրանք էլ իրենց հերթին կարող են տարբերակվել այլ երկմաս կառույցների): Դուալիստական առասպելները մասնավոր դեպքն են արխաիկ մտածողության մեջ երևույթների երկյակ սիմվոլիկ դասակարգման, երբ աշխարհը նկարագրվում է իրար հակադիր տիեզերական խորհրդանիշներով կամ հատկանիշներով (արև-լուսին, տղամարդ-կին, աջ-ձախ ևն):

Հնդեվրոպական որոշ ժողովուրդների առասպելներում բարձրագույն էակների աշխարհը բաժանված էր նրանց երկու դասերի միջև (օրինակ, հին հնդկական դևաներ և ասուրաներ կամ հյուսիսգերմանական՝ սկանդինավյան ասեր և վաներ)<sup>31</sup>: Նրանք գտնվում են թշնամանքի մեջ, որը լուծվում է դաշինքով և ամուսնական հարաբե-

<sup>31</sup> Տե՛ս Ա. Պետրոսյան, Արամի առասպելը..., էջ 102–109. Առավել մանրամասն, համահնդեվրոպական վերակազմությունը՝ A. Petrosyan, The Indo-European \*H2ner(t)-s and the Danu tribe. - Journal of Indo-European Studies, 2007, p. 297–310.

րությունների հաստատմամբ: Դիցաբանական հակադիր խմբերը կապվում են առասպելաբանության տարբեր գործառույթների հետ, և նրանց միավորումն է ստեղծում դիցաբանական հասարակության լիարժեք կառույցը: Հնդեվրոպական համանման զուգահեռների հիման վրա կարելի է կարծել, որ այսօրինակ դիցաբանական դասերը արտացոլում են հին հնդեվրոպական հասարակության դուալ մասերի բաժանվածությունը:

Ըստ հին հնդկական առասպելաբանության, Պրաջապատի արարիչ աստվածը ստեղծում է դևաներին (աստվածներ), ցերեկը, վերևում, աջ ձեռքով, իսկ ասուրաներին (դևերի բարձրագույն դասը) գիշերը, ներքևում, ձախ ձեռքով: Կարելի է ասել, որ սրանք եղբայրներ են: Հնդկականին մոտ ազգակից հին իրանական ավանդության մեջ այս դիցաբանական հակադրության անդամների հատկանիշները շրջվել են: Բարձրագույն էակն այստեղ կոչվում է Ահուրա Մազդա («Տեղ իմաստուն», որտեղ իրան. *ashurra*-ն հնդ. ասուրայի ստուգաբանական համարժեքն է), իսկ բացասական կերպարները՝ դևեր (այս անուններից են ծագում հայկական Արամազդ և դև անվանումները):

Ջրադաշտականության զրվանական աղանդում չար ոգի Անգրա-Մայյուն՝ Ահուրա-Մազդայի հակառակորդը, նրա երկվորյակ եղբայրն է: Նրա կերպարը, ինչպես և զրադաշտական դուալիզմը նշանակալի ազդեցություն են ունեցել հուդայականության և քրիստոնեության վրա (հմմտ. սատանայի կերպարը): Հնդեվրոպական ժողովուրդների առասպելներում և սնշանակալի դեր ունեն երկվորյակային կերպարները, որոնք հաճախ կոչվում են «աստծու որդիներ» (այդպիսիք են հնդկական Նասատյաները, հունական Կաստորն ու Պոլիդևկեսը, հռոմեական Ռեմոսն ու Ռոմուլոսը ևն)<sup>32</sup>:

Հայոց ազգածին ավանդության մեջ հակադիր կողմերը մարմնավորվում են հայոց նախնի Հայկի և Բաբելոնի տիրակալ Բելի, ապա՝ նրանց հաջորդների կերպարներում: Հայերենում Հայկի անունով է կոչվել Օրինո համաստեղությունը: Համաստեղությունները, աստղերն ու մոլորակները հնում կոչվել են աստվածների և դիցաբա-

<sup>32</sup> Հնդեվրոպական առասպելներում երկվորյակների վերաբերյալ տե՛ս օրինակ D. J. Ward, *The Divine Twins*, Los Angeles, 1968:

նական կերպարների անուններով, և Հայկը, այսպիսով, իրենից ներկայացնում է հայոց մի հին աստծու վիպականացած (էպիկական հերոսի վերածված) կերպարը, իսկ նրա անունը՝ նույն աստծու անունը կամ մականունը: Հայկ նահապետի՝ «հայոց տիեզերքի» արարչի աստվածային նախատիպը պետք է լիներ աստվածների ընտանիքի նահապետը՝ գերագույն արարիչ աստվածը:

Որոշ բարբառներում *հայ* բառը հանդես է գալիս որպես կանանց կողմից ամուսնուն տրվող անվանում՝ «ամուսին», «տանտեր, ընտանիքի գլուխ» իմաստով: Այդ բառը, մեծ հավանականությամբ, կարող է լինել հնդեվրոպական \**poti-* «տեր, տանտեր, ամուսին, նահապետ» արմատի հայերենի օրինաչափություններով ձևափոխված ձևը: Եվ Հայկի անունը պետք է նշանակի հենց «տեր, նահապետ», մի կոչում, որ բնութագրական է մեծ աստվածներին (հմմտ. «տեր աստված»), ածանցված *-իկ(ն)* քնքշական-հարգալից (հմմտ. Աստղիկ դիցանունը նույն ածացով): Հատկանշական է, որ Հայկի մակդիրն է *նահապետը*, իրանական բառ, որի երկրորդ բաղադրիչը ծագում է նույն արմատից (այս անգամ իրանական զարգացման օրինաչափությամբ)<sup>33</sup>:

Նույնը կարելի է ասել և Հայկյանների վերջին առասպելական նահապետի՝ Արայի մասին: Մի միջնադարյան տեքստում ասվում է, որ Արան ավելի նվազ է, քան Արուսյակը: Վերջինս Վեներա՝ հայերեն Աստղիկ, Արուսյակ, Լուսաստղ և այլ անուններով կոչվող մոլորակն է: Հին աշխարհում, բարելոնյան ազդեցությամբ, սկսած մ. թ. ա. առաջին հազարամյակի կեսերից, մոլորակները կոչվում էին մեծ աստվածների անուններով: Եվ Արուսյակը ողջ հին աշխարհում կոչվել է մեծ դիցուհու անունով՝ աքքադերեն Իշտար, պարսկերեն Անահիտ, հունարեն Ափրոդիտե, լատիներեն՝ Վենուս (Վեներա): Իսկ հայոց մեջ կոչվել է Աստղիկ դիցուհու անունով: Համեմատությունը Աստղիկի՝ ամենապայծառ մոլորակի հետ ցույց է տալիս, որ Արան ևս պիտի լիներ մոլորակի անուն:

<sup>33</sup> Ա. Պետրոսյան, Արամի առասպելը..., էջ 144–145, առավել մանրամասն՝ A. Petrosyan, Forefather Hayk in the Light of Comparative Mythology. Journal of Indo-European Studies. Vol. 37, 2009, p. 155–163. А. Петросян, Самоназвание армян hay. Вопросы ономастики, 2016, 2, 146–161:

Հին աշխարհում ամենուրեք կարմիր Մարս մոլորակը կոչվել է պատերազմի (և անդրաշխարհի) աստծու անվամբ՝ աքքադերեն Ներգալ, պարսկերեն Բահրամ, հունարեն Արես, լատիներեն Մարս<sup>34</sup>: Հունական առասպելաբանության մեջ Ափրոդիտեն Արեսի՝ պատերազմի աստծու սիրուհին էր: Այս պատկերացումը հինարևելյան կամ հելլենիստական ազդեցությամբ պետք անցած լիներ հայերին. մեզանում Աստղիկը համարվել է պատերազմի աստված Վահագնի սիրուհին: Հատկանշական է, որ Արա անունը հաճախ համադրվում է հունական Արեսի հետ, Արան էլ, հավանաբար, Վահագնի համապատասխանությունն է<sup>35</sup>: Այս փաստերը ցույց են տալիս, որ Արայի աստղը, ամենայն հավանականությամբ, եղել է Մարս մոլորակը, և Արան, իրոք, եղել է հունական Արեսի համապատասխանությունը: Այսպիսով, Հայկի և Բելի, ապա և նրանց հաջորդների հակադրությունը կարծես առասպելաբանական երկվորյակների և նրանց սերունդների հակադրության հայկական համապատասխանությունն է:

Հայկի և Բելի մենամարտը, որից հետո ստեղծվում է Հայկի երկիրը՝ Հայաստանը (հայոց տիեզերքը), կարելի է ասել, տիեզերածնության հայոց առասպելի վիպականացած՝ տարածաժամանակային սահմաններ ստացած տարբերակն է: Իսկ Բելը Բաբելոնի տիրակալն է, և նրա անունը Բաբելոնի գլխավոր աստված Մարդուկի մակդիրն է, որը աքքադերեն նշանակում է «տեր»: Այսինքն, Հայկը և Բելը, որոնք խորհրդանշում են հայերին և Բաբելոնը, հայոց և բաբելացիների մեծ աստվածների վիպականացած կերպարներն են: Մարդուկի հիմնական սխարանքը Տիամատ հրեշի դեմ տարած հաղթանակն է, որից հետո նրա մարմնից ստեղծվում է տիեզերքը (վերին մասից՝ երկինքը, ներքևի մասից՝ երկիրը, աչքերից՝ Տիգրիս և Եփրատ գետերը): Հատկանշական է, որ Հայկը սպանում է Բելին այնպես, ինչպես Մարդուկը Տիամատին՝ նետով: Եվ կարելի է ասել, որ Բելը Հայկի հայելային հակադարձ կերպարն է, նույնիսկ՝ բացասա-

<sup>34</sup> Б. Ван-дер-Варден, Пробуждающаяся наука II. Рождение астрономии, М., 1991, с. 194–199.

<sup>35</sup> Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 263–264. Ն. Աղոնց, նշվ. աշխ., էջ 259–266:

կան հատկանիշներով երկվորյակը, «բաբելական Հայկը», որը թշնամի է «մեր» Հայկին:

Հայոց ազգածին ավանդությունը՝ Հայկից մինչև Արա Գեղեցիկ, պատմում է երկու տոհմերի՝ Հայկյանների և Բելից սերող բաբելական ու ասորեստանյան իշխողների հակադրության մասին: Հնդեվրոպական որոշ էպիկական ցիկլերի տրամաբանությամբ, այն կարող էր ավարտվել երկու տոհմերի միջև ամուսնական հարաբերությունների հաստատմամբ և միասնական հասարակության ստեղծմամբ, բայց հայկական պատմականացած ավանդությունն ավարտվում է այլ կերպ. Արան զոհվում է (թեև կողմնակիորեն կարելի է վերականգնել նրա ամուսնությունը Շամիրամի հետ, քանի որ, ըստ Շամիրամի, նա վերակենդանանում է և ապրում իր հետ): Արային հաջորդում է նրա նույնանուն որդին՝ Արայան Արան, որը մեռնում է Շամիրամի հետ: Կարելի է կարծել, որ նա հենց վերածնված Արան էր, որն առասպելի պատմականացած տարբերակում վերածվել է նրա որդու:

«Մասնա ծներում» արդեն երկվորյակները հանդես են գալիս բացահայտ կերպով: Այստեղ նրանց հակադրությունը վառ չի արտահայտված, այլ ի հայտ է գալիս միայն նրանց կովի դրվագում, որը խաղաղ լուծում է ստանում: Հակադիր են նաև նրանց կերպարները. Մանասարը խելացի է ու սառնասիրտ, իսկ Բաղդասարը, ընդհակառակը՝ «ծուռ»: Հենց նրա կերպարի հետնորդներն են Մասունի մյուս ծները, հատկապես Դավիթը, որոնք թեև Մանասարի ժառանգներն են, բայց «քաշել են» իրենց նախնու եղբորը: Հատկանշական է, որ որոշ տարբերակներում Բաղդասարը ինքն է հիմնում Բաղդադը՝ թշնամի քաղաքը, և մեռնում այնտեղ: Դրանով նա կարծես կրկնում է որոշ առասպելներում և էպոսներում հակադիր կողմերի՝ երկու եղբայրների հետնորդներ լինելու պատմությունը:

«Մասնա ծների» արխաիկ տարբերակների առաջին մասում «մեր» կողմի հակառակորդն է Ասորեստանը, մյուսներում՝ Բաղդադը, հետո՝ Մսրը-Եգիպտոսը: Արդեն Մանասարից հետո Մասունի հակառակորդը Մսրն է: Էպոսը պատմում է Մասունը և Մսրըը խորհրդանշող երկու տոհմերի հակամարտության մասին և ավարտ-

վում Արա Գեղեցիկի նման մեռնող և հառնող աստծու հատկանիշներ ունեցող Փոքր Միերի վերածնության սպասումով: Հատկանշական է, որ տոհմերի գլխավոր ներկայացուցիչները՝ Դավիթն ու Մելիքը նույն հորից՝ Մեծ Միերից սերած եղբայրներ են (հակադիր եղբայրները կրկնում են երկվորյակների առասպելությունը):

Քրիստոնեության մեջ, ինչպես արդեն ասվել է, Քրիստոսին հակադրվում է Նեոի կերպարը, որը երկվորյակային առասպելաբանության համատեքստում կարող է դիտվել որպես Քրիստոսի հակոտնյա երկվորյակը (սա նկարագրվում է Քրիստոսի շրջված հատկանիշներով. օրինակ, կոչվում է *Αντίχριστος*՝ «Հակաքրիստոս», ծնվում է որպես կույս ընդունվող մեղսագործուհուց ևն): Աստծո հակոտնյան է սատանան՝ չարիքի մարմնավորումը և դժոխքի տիրակալը, որն, իհարկե, աստծու հավասարազոր հակառակորդը չի, այլ ավելի ցածր մակարդակի մի էություն՝ նույնպես աստծու կողմից արարված, բայց ժողովրդական պատկերացումներում կարող է ընկալվել նաև որպես «հակաստված»:

Հայկական ժողովրդական հավատալիքներում հակադիր երկվորյակների առասպելությոթի բացասական եղբոր ժառանգներն են թվում քաջքեր կոչված դիվային կերպարները, որոնք հանդես են գալիս որպես մարդու չար, շրջված կրկնակներ: Համարվում էր, որ նրանց կրունկները շրջված են առաջ, նրանք քայլում են գետնի տակով (մարդու հայելային անդրադարձումները գետնի մակերեսի տակ) և ամեն ինչ անում են հակառակ ձևով (անում են որևէ բան, երբ ասում են «մի՛ արա»)՝<sup>36</sup>:

Առասպելաբանական երկվորյակներն, այսպիսով, արտացոլում և իմաստավորում են հասարակության երկու կեսերի բաժանումն ու նրանց միասնությունը: Տիեզերքի տարրերի և հասարակության տարրեր մասերի համադրությունը հակոտնյա երկվորյակների հետ հաջորդ մակարդակում իմաստավորում է «մեր» և օտար, «ոչ մեր» աշխարհների և այլ ցեղերի տարբերությունն ու մեր նկատմամբ թշնամությունը: «Ոչ մեր» տիեզերքը՝ այլ ցեղերի աշխարհը համադր-

<sup>36</sup> Քաջքերի վերաբերյալ այս համատեքստում տե՛ս Լ. Ա. Абрамян, Первобытный праздник и мифология, Ереван, 1983, с. 143–146:

վում է ստորերկրյայքի, անդրաշխարհի, քառսի, անկարգության, հրեշների ու վիշապների բնակության առասպելական վայրերի հետ: Եվ օտար աշխարհն ու անդրաշխարհը հաճախ պատկերացվում են որպես «մեր» աշխարհը հայելային արտացոլող, բայց բացասական նշանով մի երևույթ, որը խորհրդանշվում է բացասական երկվորյակի կերպարով:



Հակադրված եղբայրների կերպարների դրսևորման մի կարևոր դաշտն էլ հեքիաթն է: Այստեղ հերոսը սովորաբար արքայազն է, երեք եղբայրներից կրտսերը, հաճախ որպես տհաս կամ հիմար ներկայացվող, որն ի վերջո դառնում է թագավոր: Նա, ի հակադրություն ավագ եղբայրների, կարողանում է գնալ ստորերկրյա անդրաշխարհը, որտեղ վիշապը փակել է քաղաքի միակ աղբյուրը, չարչարում է ժողովրդին և մշտական գոհեր է պահանջում: Հերոսը սպանում է վիշապին, ազատում գերված արքայադուստրերին և երբեմն՝ նաև իր եղբայրներին: Բայց եղբայրները դավաճանում են նրան, և հերոսը մեծ դժվարությամբ է կարողանում վերականգնել արդարությունը և թագավոր դառնալ:

Իրականության իմաստավորումը հեքիաթի միջոցով սովորական երևույթ չէ: Հեքիաթը առասպելից, էպոսից ու լեգենդից տարբերվում է հենց այն բանով, որ այն ընդունվում է որպես հնարանք, որին պետք չէ հավատալ, և այդ է ցույց տալիս, օրինակ, հայկական հեքիաթների մշտական նախաբանը՝ «լինում է չի լինում»: «Հեքիաթային» բնորոշում կարող էին ստանալ արտասովոր, արտառոց, համարյա անհավատալի, «դրական» երևույթները (հեքիաթներում միշտ բարին է հաղթում): Եվ հեքիաթի հետ համադրել կարելի է համապատասխանաբար արտասովոր, անհավատալի իրադարձությունը, իրադրությունը, երևույթը:

Հենց այդպիսին էր վիճակը ՄՍՀՄ-ում: «Մենք ծնվել ենք, որ հեքիաթը դարձնենք իրականություն». ահա պաշտոնական գաղափարախոսության բանաստեղծական սահմանումներից մեկը (երգի բառեր են): Կոմունիզմի գաղափարն ինքնին, ի սկզբանե, մարդկանց մեծամասնության համար անհավատալի էր: Անհավատալի էր նաև

այն, որ 1930-ական թվականների դժոխային կյանքը ներկայացվում էր որպես սոցիալիզմի կառուցման լուսավոր շրջան, և արտասահմանի կյանքն էր ներկայացվում որպես դժոխք: Անհավատալի էր մարդկանց ու ժողովուրդների «դրական» և հավասար լինելը, երբ աչքի առաջ խախտվում էր մարդկանց իրավահավասարությունը:

Մարքսիզմ-լենինիզմում անհնար է ժողովուրդների բացասական գնահատականը, և այն դրույթը, որի համաձայն արտասահմանյան երկրներում տեղի «վավ» ժողովուրդներին տանջում և մեր դեմ են հանում նրանց «վատ» իշխանավորները՝ կապիտալիստ-ինյերի-ալիստները, բանահյուսության մեջ իր լավագույն համապատասխանությունը կարող է գտնել հենց հեքիաթներում: Ժողովուրդները եղբայրներ են, միայն թե, եղբայրների մի մասը գտնվում է վիշապի լծի տակ: «Մեր» եղբայրական խնդիրն էր ազատագրել մյուս ժողովուրդներին ինյերիալիզմի լծից (համաշխարհային հեղափոխություն): ՍՍՀՄ-ում ով բացեիբաց չէր հավատում կոմունիզմի հեքիաթին, ոչնչացվում էր, և կենդանի մնացածները կամ իրոք հավատում, կամ ձևացում էին, թե հավատում են: Կյանքը ՍՍՀՄ-ում իրոք որ լուսավոր հեքիաթ էր կոմունիզմի ապագային հավատացողների համար և հեքիաթային հրեշի բռնապետություն էր բռնադատվողների ու իրենց կարծիքը թաքցնող անհավատների համար:



Հայաստանի XIX–XX դարերի պատմության մեջ տեղի են ունեցել բնակչության մի շարք նշանակալի տեղաշարժեր: 1827-ին Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ ներգրավվելուց հետո բազմաթիվ հայեր Պարսկաստանից և Թուրքիայից (հիմնականում պատմական Հայաստանի տարածքներից) գաղթեցին այստեղ, ինչը նշանակալիորեն փոխեց տեղի ժողովրդագրական վիճակը: Բայց ամենանշանակալի ներգաղթերը տեղի են ունեցել քսաներորդ դարում: Միայն 1915–16 թվականներին Թուրքիայից Կովկաս, հիմնականում՝ Ռուսահայաստան են գաղթել հարյուր հազարավոր հայեր (ճշգրիտ թիվը դժվար է ասել): Գաղթականների մեծ մասը անպաշտպան կանայք ու երեխաներ էին, առանց ունեցվածքի: Էջմիածնում, որը նրանց հավաքատեղին էր, սովից ու հիվանդություններից եր-

բեմն օրական հարյուրավոր գաղթականներ էին մեռնում: Տեղական բնակչությունը անում էր ինչ հնարավոր է, բայց գաղթականների թիվը չափազանց մեծ էր: Այդ տարիներին ժողովուրդը տեսավ և՛ պատերազմ, և՛ սով, և՛ նորանկախ Հայաստան ու նրա կործանումը և կորցրեց Ռուսահայաստանի տարածքի կեսը: Ծայրահեղ ծանր, դաժան ժամանակներ էին: Նույնիսկ տեղացիների կյանքն ապահովել հնարավոր չէր, իսկ ներգաղթյալները չափազանց շատ էին: Եվ շուտով նրանց նկատմամբ ձևավորվեց բացասական վերաբերմունք:

Այս երևույթը նկատվում է ամենուրեք, նույնիսկ բարձր զարգացման հասած երկրներում, որտեղ ներգաղթողները հիմնավոր կերպով հովանավորվում են պետության կողմից (Իսրայել, Գերմանիա): Հայաստանում սկսեցին տարբերակել ներգաղթյալներին *գաղթական* անվանումով՝ դասակարգելով նրանց ավելի ցածր, քան տեղացիներին, որոնք *եղևական* էին կոչվում («բնիկ, տեղացի» իմաստով): Գաղթականները տարբերվում էին տեղացիներից իրենց բարբառով, մշակույթով և դարձել էին հասարակության ամենացածր խավը, այսինքն՝ այս բաժանումը նաև սոցիալական էր: Հայաստանյան՝ այն ժամանակ չափազանց արխաիկ հասարակական գիտակցության մեջ այս երևույթը պետք է իմաստավորվեր արխետիպային մոդելների վրա: Կարելի քննարկել և վերլուծել գաղթականներին ավելի ցածր կարգի մարդիկ համարելու տարբեր, այդ թվում նաև հոգեբանական պատճառները: Բայց այս համատեքստում էական էր նաև գաղթականների գալուստը Թուրքիայից, որը ջարդերի ժամանակ հայերի համար իսկական մի դժոխքի էր վերածվել: Ուրեմն, գաղթականները փախստականներ էին մահվան թագավորությունից՝ «այն աշխարհից», որն ակնհայտ էր դարձնում նրանց համադրությունը կյանք-մահ, մենք-նրանք երկյակ հակադրությունների երկրորդ անդամներով բնորոշվող շարքի հետ:

1921–36 թթ. արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթեց մոտ 44 հազար, իսկ 1946–49 թթ.՝ շուրջ 100 հազար հայ<sup>37</sup>: Այս հետպատերազմյան ալիքն էր, որ հայաստանցիների համար ստեղծեց սիյուռքահայի այն կերպարը, որը հիմնականում շարունակվում է մինչև այժմ: Հետագա տասնամյակներում հայրենադարձվեցին ևս

<sup>37</sup> Այս տեղեկությունների համար ես երախտապարտ եմ Համլետ Սարգսյանին:

50 հազար մարդ, բայց նրանք չփոխեցին արդեն ձևավորված կադապարը:

1946–49 թթ. հայրենադարձները արդեն երեսուն տարի ապրել էին օտար միջավայրում: Նրանցից շատերը եվրոպական երկրներից էին և շփվել էին քսաներորդ դարի արևմտյան քաղաքակրթության հետ, ձեռք բերել նոր նիստուկաց և սովորություններ, իսկ երիտասարդ սերունդը տեսել էր միայն իր նոր հայրենիքի կյանքը: Շատերը կորցրել էին մայրենի բարբառները, և նրանց հայերեն խոսակցական լեզուն էր դարձել գրական արևմտահայերենը: Որոշ չափով ձևավորվել էին ֆրանսահայի, հունահայի, սիրահայի և մյուս կերպարները:

Իսկ սովետահայերն ապրել և շարունակում էին ապրել ստալինյան դաժան իրականության մեջ: Նոր էր վերջացել երկրորդ համաշխարհային պատերազմը, որը միլիոնավոր զոհեր խլեց ՍՍՀՄ ժողովուրդներից (և հարյուրիսկազարավոր՝ հայերից): Պետական գաղափարախոսության համաձայն, սովետական ժողովուրդները կերտում էին մարդկության ապագա դրախտը՝ կոմունիզմը, իսկ արտասահմանյան՝ հատկապես արևմտյան քաղաքակրթության երկրները՝ իմպերիալիզմի հրեշը, պայքարում էր մեր դեմ ամբողջ ուժով: ՍՍՀՄ-ի սահմանները բացարձակապես փակ են եղել, և միայն Եվրոպան գրաված զինվորներն էին տեսել արտասահմանը՝ կապիտալիզմի վիշապի որջը: Այնտեղ քառսի, անկարգության աշխարհն էր, երկրային անդրաշխարհը, «մեզ» և մարդկությանը թշնամական հրեշների տիրապետության աշխարհը՝ չափազանց նման հեքիաթների «մույթ» աշխարհին, որտեղ վիշապը փակում է աղբյուրը և չարչարում գերիներին: Երկրում հալածված և կիսաարգելված վիճակում էր գտնվում եկեղեցին. աթեիզմն էր քարոզվում, մինչդեռ սովետական գաղափարախոսությունը վերածվել էր մի արխաիկ հեթանոսական կրոնի, որի գլխավոր աստվածը պետության և կուսակցության առաջնորդն էր, իսկ հրեշտակները՝ ավելի ցածր դեկավարները:

Հենց պատերազմից հետո դատապարտվեցին և սիբիրյան ճամբարներ տարվեցին գերմանական գերությունից ազատվածները, և կարճ ժամանակաշրջանից հետո նորից սկսվեցին զանգվածային բռնությունները: ՍՍՀՄ ժողովուրդներն ապրում էին սարսափի թագավորության մեջ, և հարևանի մատնագիրը, անզգույշ խոսքը,

պատահական զանցանքը կամ պաշտոնյայի քմահաճույքը ամենա-  
խիստ պատժի կամ մահվան կարող էր հանգեցնել:

Այսինքն, պետական քարոզչությանը չտրված անկախ մտածող  
մարդու համար հենց սա էր վիշապի թագավորությունը, որտեղ վեր-  
ջինս տանջում էր բնակչությանը և աստվածային պատիվներ ու նո-  
րանոր զոհեր պահանջում: ՄՍՀՄ պրոպագանդիստական մեքենան  
աշխատում էր, Հայաստան էին գալիս ՄՍՀՄ-ին համակրանքով վե-  
րաբերվող հայերը, որոնց համար ՄՍՀՄ-ը աշխարհի փրկիչն էր ֆա-  
շիզմից, մեծ ու հզոր, հավասար և եղբայրական ազգերի մի պետու-  
թյուն և այլն՝ նույն ոգով:

Պրոլետարական, «սոցիալիստական» նոր մշակույթը և մտավո-  
րականության գլխատումը հանգեցրել էին այն բանին, որ այստեղ  
շատ ցածր էր մնացել մարդկանց կենցաղային մշակույթը: Չկային  
քաղաքակիրթ վարվեցողության կանոններ, և դրանք կարող էին  
«կապիտալիստական բարքեր» նկատվել: Մովետական մարդկանց,  
այդ թվում և բարձրագույն ղեկավարության հագուստը ևս մեծապես  
տարբերվում էր եվրոպականից:

Այսպիսով, հայաստանցիների և ներգաղթողների միջև առկա  
էին լեզվական, կենցաղային, մշակութային, գաղափարախոսական-  
կրոնական և այլ նկատելի տարբերություններ: Նրանց հանդիպումը  
ստալինյան դարաշրջանում սարսափելի պետք է լիներ հայրենա-  
դարձների համար:

Հայաստանցիները սփյուռքահայերի մեջ սպասում էին տեսնել  
իրենց նմաններին, իրենց հարազատ եղբայրներին, բայց դուրս  
եկավ, որ նրանք տարբեր էին: Նրանք, բացի նշված մշակութային  
տարբերություններից, չէին անցել նաև սովետական կյանքի բովով՝  
դասակարգային պայքար, «անհարազատ» տարրերի ոչնչացում են:  
Նրանք հարմարվել էին իրենց հյուրընկալած երկրների սովորու-  
թյուններին և պատրաստ էին հարմարվելու նաև հայրենի երկրին,  
բայց այն նվաստացնում էր նրանց: Հայրենադարձների նկատմամբ  
տարբերակված, որոշ առումներով թշնամական էր հենց պետության  
վերաբերմունքը, որը մի կողմից նպաստներ էր տալիս նրանց, բայց  
մյուս կողմից՝ հետապնդում նրանց չեղած քաղաքական պատճառ-  
ներով, ստիպում նրանց յուրացնել մատնությունների կենսատճը ևն:

Հայրենադարձվելուց նույնիսկ տասնամյակներ անց հայրենադարձի և նրանց սերունդների իրավունքները լիովին չէին հավասարեցվել տեղացիներին (պաշտոնյաների ընտրության, արտասահմանյան գործուղումների դեպքերում ևն):

Առասպելաբանական մտածողության մեջ «ոչ մեր» աշխարհը համադրվում է անդրաշխարհի, մահվան թագավորության հետ, և այս պատճառով այլ ցեղերի տարածքները, երկրները համարվում են վիշապների ու օձերի բնակության վայրեր: Անդրաշխարհի ամենակարևոր հատկանիշը նրա և մեր աշխարհի միջև սահմանների փակ լինելն է, մեր և անդրաշխարհի մարդկանց փոխադարձ աներևութությունը և անմիջական շփումների անհնարիխությունը, որը խախտվում է միայն հազվադեպ, շատ որոշակի դեպքերում:

Այս և այն աշխարհների բնակիչները պետք է ապրեն ամեն մեկն իր տեղում, և ծնունդն ու մահն են միայն օրինական իրավունք տալիս խախտելու աշխարհների սահմանները: Մնացած դեպքերում սահմանների խախտումն անօրինական է, և մեր աշխարհում հայտնված անդրաշխարհի սահմանախախտները վնասակար էակներ են, մարդու թշնամիներ, որոնք բնորոշվում են որոշ «շրջված» մարդկային հատկանիշներով: Նրանք, որքան էլ փորձեն թաքնվել, միշտ ինչ-որ ձևով բացահայտում են իրենց էությունները, օրինակ՝ քաջքերի հետ թեքված կրունկները, ասվածին հակառակ գործողություններ անելը ևն:

ՄՍՀՄ-ն իր փակ սահմաններով և այդ սահմաններից դուրս կապիտալիզմի հրեշի տիրապետության թեզով արդեն ակնհայտ անդրաշախարհիկ պատկերացումներ էր ստեղծել արտասահմանի մասին: Եվ արխաիկ մտածող սովետական իրականության մեջ արտասահմանից ներգաղթյալ հայր դրական չէր: Հայրենադարձի կերպարում տարաշխարհիկ, «կապիտալիստական», օտար, ոչ հայկական, ոչ սովետական տարրերն աչք էին ծակում և չէին կարող դրական ընդունվել: Լայնեզր գլխարկը և փողկապն արդեն ցույց էին տալիս նրա «ոչ մեր» արտաքինը, որն ամբողջանում էր գրական արևմտահայերենի գործածությամբ և ռուսերենի ու «մեր» խոսվածքի չիմացությամբ:

Շուտով բացահայվեցին նաև այլ տարբերություններ, և նրանց նկատմամբ ձևավորվեց համապատասխան վերաբերմունք: Նրանք «շուտ տված են, այսինքն՝ այլ ազդեցությունների տակ շրջված՝ վերափոխված (հիշենք անդրաշխարհի քաջքերի շրջված կրունկները), չակերտավոր «կուլտուրական», ժլատ՝ ոչ հյուրընկալ (նրանց հյուրընկալության սովորություններն իրոք որ մեծապես տարբերվում էին կովկասյան սրտաբաց-ցուցադրական հյուրասիրությունից), հաշվենկատ, մոլորապաշտ, օրենքին կառչած, բողոքող (*կյլարսզնիկ*), բայց և հեշտ ծախվող (իբր թե նրանցից շատերը ԿԳԲ-ի գործակալներ են)»:

Հայրենադարձների մեջ իր հերթին ձևավորվեց հայաստանցիների բացասական հատկանիշներով մի կերպար՝ օրինազանց, խաբեբա, անկարգ, անարդարամիտ, անկիրթ, գռեհիկ, ցուցամոլ, բայց դա «ներքին» օգտագործման համար էր, իրական կյանքում իրենք էին կրում բացասական կերպարի բեռը:

Այսպիսով, հայաստանցիները ներգաղթող հայրենակիցների մեջ սպասում էին տեսնել իրենց հարազատ «հայրենադարձ եղբայրներին», բայց նրանք դուրս եկան սպասվածից տարբեր, «շուտ տված», այսինքն «մեր» կերպարին դավաճանած (թեև այդ կերպարը ստեղծել էր հիմնականում սովետական իշխանությունը), ուրեմն՝ դավաճան, չակերտավոր «եղբայրներ», հայի բացասական կրկնակներ:

Առասպելաբանական մտածողության մեջ չափազանց կարևոր է երևույթի անվանումը. այստեղից բխում է առասպելաբանական անունների ստուգաբանության հաճախ վճռական դերը այդ անունը կրող կերպարների մեկնաբանության մեջ: Արարիչ աստվածն արարում է աշխարհի տարրերն այն անվանելով, և որոշ կրոններում աստված նույնիսկ ինքն իրեն է ստեղծում իր անունը տալով: Մի երևույթը սկսում է տարբերակվել մյուսից, և մարդկանց մի խումբը՝ մյուսից, երբ ընդունված անուն է ստանում: Եվ Հայաստանում հայրենադարձներին սկսեցին կոչել ախպար «եղբայր» նվաստացուցիչ ընկալվող անվանումով:

Տարբեր ավանդություններում հայտնի են իրենց ազգակից և ոչ ազգակից հարևան ժողովուրդներին նվաստացուցիչ անվանումներով կոչելու բազում ձևեր, որոնք կարող են ծաղրական լինել (ինչպես

ռուսները սափրվող և գլխին մազափունջ պահող ուկրաինական կոզակներին կոչում էին *խախուլ*՝ «մազափունջ, քյաքյուլ», իսկ ուկրաինացիները չսափրվող-մորուքավոր ռուսներին՝ *կազսապ* «այծ»), խոհանոցային (իտալացիներին հարևան ժողովուրդներն անվանում են «մակարոն», ֆրանսիացիներին՝ «գոբրո»), կարող են լինել իսկական ցեղանվան ձևախեղված, նվաստացուցիչ ձևը՝ հմնտ. ռուսերեն *արմյաշկա* («հայիկ»), ծաղրական-նկարագրական են՝ ռուս. *չեռնասժոպի* «սևահետույք» («կովկասցի, միջին ասիացի») ևն: Ընդունված է նաև այլ ազգերին կոչել նրանց դիմելաձևերով՝ *մայր* («Ֆրանսիացի»), *սինյոր* («իտալացի»), *միսսեր* («անգլիացի») և նույնիսկ *լրավարիչ* «ընկեր» («ռուս, սովետական քաղաքացի»): Այսպիսի մի կիսածաղրական մականուն ունեին հայերը Սովետական բանակում՝ *սնոր* (հայ երիտասարդների խոսքում անընդհատ կրկնվող *արս* դիմելաձևից), որը վիրավորական չէր համարվում և ընդունվում էր հումորով:

Հայերի մեջ շատ ընդունված է իրար կոչել «եղբայր» ձևով, որը կիրառվում է նաև անդեմ ձևով՝ «եղբայր, սա ի՞նչ բան է»: Արևմտահայերենում օգտագործվում է *աղբար* ձևը, որն արևելահայի ականջին հնչում է *ախպար*: Այդ անվանումը ցույց էր տալիս ն՝ նրանց իրար դիմելու ձևը, ն՝ նրանց՝ մեզ «եղբայր» լինելը, ն՝ նրանց ոչ իսկական եղբայր («մեր» լեզվով՝ «ախպեր»), այլ մեզանից տարբեր, «շուռ տված», կեղծ, չակերտավոր «եղբայր» լինելը:

Սփյուռքահայերի համար արհամարհական ենթաէթնիկ ցեղանվան արժեք ձեռք բերած «ախպարը» շեշտում էր եղբայրության գաղափարը, որն իր խոր առասպելաբանական և առասպելածին էությանը ու կապերով ռեզոնանսի մեջ էր մտնում այլ պատկերացումների հետ և ձևավորում ու բացահայտում էր սփյուռքահայի կերպարը:

Կարելի է առավել մանրամասն վերլուծել ժամանակակից հայերի երկու մեծ ճյուղերի՝ հայաստանցի-սփյուռքահայ բաժանումը հիշյալ առասպելոյթի տեսակետից, բայց, հաշվի առնելով ՄՍՀՄ իրականության «հեքիաթային» բնույթը, արժե նշել, որ սփյուռքահայ եղբայրներն իրոք արժանացան հեքիաթի դավաճան եղբայրների ճակատագրին: Կարմիր բանակը Եվրոպայում գերությունից ազատեց միլիոնավոր սովետական քաղաքացիական և զինվորական գերիներին, որոնց, հատկապես վերջիններին, հիտլերյան մահվան ճամբար-

ներից հետո արտրեցին սիբիրյան նույնատիպ ճամբարները (հեքի-  
աթում ևս վիշապին գերի ընկած եղբայրները, որպես դավաճաններ,  
պատժվում են): Վիշապի թագավորության մեջ անցկացրած կյանքը  
չէր ներվում:

Մինևույն բանը տեղի ունեցավ նաև «հայրենադարձ եղբայրնե-  
րի» հետ, որոնցից շատերն արտրվեցին: Նկատենք նաև արխաիկ  
հասարակության մի երևույթի՝ պատանիների նվիրագործության ծե-  
պը հիշեցնող մի երևույթ: ՄՍՀՄ հայերը անցել էին «դասակարգային  
մաքրման» ֆիլտրով, տվել համապատասխան զոհեր և այսպիսով  
վերածվել սովետական լիարժեք ազգի, իսկ հայրենադարձները դեռ  
պետք է անցնեին այդ բովով:

Հայրենադարձների նկատմամբ վատ վերաբերմունքը սովորա-  
կան բան էր: Սահմանափակված էին փոխադարձ ամուսնություննե-  
րը, և դա ավելի արխաիկ, ներամուսնական (էնդոգամ) խմբի բնույթ  
էր տալիս հայրենադարձներին, որոնք իրենք ևս իրար մեջ տարբե-  
րակում էին իրենց ըստ պանդխտության երկրների մշակութային մա-  
կարդակների:

Հայրենադարձների մասին իբր ասվում էր՝ «մի ախպար չկամր,  
որ այսինչի փոխարեն մեռներ», և, որպես բարձրագույն գովեստ՝  
«այսինչը, չնայած ախպար է, բայց լավ մարդ է»: Իհարկե, միշտ էլ  
եղել են հայրենադարձների նկատմամբ նաև լավ վերաբերմունքի  
կրողներ ու դրսևորումներ, բայց այստեղ քննարկվում է երևույթը՝  
տիպականը և այն սահմանայինը, որը բաժանում էր հայաստանցուն  
հայրենադարձից:

Ժամանակի ընթացքում վատ վերաբերմունքը և հայրենադարձ-  
ներին երկրորդ կարգի հայեր համարելը վերափոխվեց, և ՄՍՀՄ գո-  
յության վերջին շրջանում, ընդհակառակը, հայրենադարձի հետ  
ամուսնությունը կարող էր բաղձալի լինել հայ երիտասարդներից շա-  
տերի համար, որոնք այդպիսով իրական հնարավորություն էին  
ստանում արտասահմանում ազգականներ ձեռք բերելու և ճեղքել-  
անցնելու սովետական սահմանի «երկաթե վարագույրը»: «Ախպար»  
անվանումն արդեն ավելի շատ հումորով էր ընկալվում և միայն  
փոքր չափով էր կրում նախկին նվաստացնող վերաբերմունքի կնի-  
քը:

Հայրենադարձները և հայրենադարձությունը նշանակալի դեր կատարեցին ժամանակակից մշակույթի և հայաստանցու կերպարի ձևավորման մեջ: Նրանցից շատերը մասնագետներ էին, արհեստավորներ, արվեստագետներ, որոնք նոր որակ մտցրեցին իրենց բնագավառներում, իրական դարձրին օտար լեզուների իմացությունը: Նրանց վարք ու բարքը թեև ծաղրանքով էր ընդունվել, բայց ժամանակի ընթացքում այն նշանակալիորեն բարձրացրեց հայաստանցիների կենցաղային մշակույթը: Ըստ մի կարծիքի, մինչև հայրենադարձների գալը «շնորհակալություն» բառը հայաստանյան կենցաղում համարյա չի օգտագործվել: Նույնը վերաբերում է նաև հագուստին, անձնական հիգիենայի որոշ ձևերի: Հայրենադարձների միջոցով Հայաստանը իրական, չմիջնորդավորված կապեր հաստատեց մինչ այդ անիրական, հեքիաթային արտասահմանի հետ, հարողակցվեց արևմտյան արժեքների հետ:

1960-ական թվականներին, երբ «երկաթե վարագույրը» կիսաբաց էր արվել, նաև հայրենադարձների շնորհիվ էր, որ հայ «առաջադեմ»՝ արևմտամետ երիտասարդները ՍՍՀՄ իրենց սերնդակիցներից (բացառությամբ թերևս Մոսկվայի, Լենինգրադի և մերձբալթյան հանրապետությունների) ավելի լավ էին տեղյակ արտասահմանյան մոդայիկ իրողություններին՝ պոպ երաժշտություն, հագուստ, հիփիական շարժում ևն, որը թույլ էր տալիս ոչ թե գավառացու խեղճացած կեցվածք դրսևորել Հայաստանից դուրս, այլ ընդհակառակը, իրենց ավելի բարձր և «ժամանակակից» համարել մյուսներից:

ՍՍՀՄ վերջին տարիներին հայրենադարձների և նրանց սերունդների մի նշանակալի մասը, օգտագործելով նոր առաջացած հնարավորությունները, կարողացավ արտագաղթել Հայաստանից՝ իր հետ տանելով այստեղ ձեռք բերած բազմաթիվ հայաստանցի հարսներ-փեսաներ ու խնամիներ, հայաստանյան սովորություններ, մշակույթ և կենսակերպ, արևելահայերենի՝ որպես մայրենի լեզվի վարժ իմացություն, լեզվամտածողություն և գուցե ամենահետաքրքիրը՝ հայաստանցի հայի կերպարը, որն օտարության իրողությունների նկատմամբ իր ավելի ակտիվ դիրքով, տրիքստերային հակումներով ու սեփական արժեքների (այդ թվում՝ նաև ռուսական և սովե-

տական) թերևս ավելի բարձր գիտակցությամբ կարող է փոխել, առավել հարստացնել և հայաստանցուն մոտեցնել սփյուռքը:

Հայաստանցիները և հայրենադարձները իրար նկատմամբ սիմետրիկ հակադրության մեջ չեն եղել, այլ ժամանակի ընթացքում փոխարացրել են իրար: Հայրենադարձների միջոցով բազմաթիվ նորամուծություններ մտան հայաստանյան կյանք, իսկ հիմա, հայաստանցիների շնորհիվ, հնարավոր է, որ ավելի պահպանողական (հայկական կենցաղի և արժեքների տեսակետից) գծեր ձեռք բերի սփյուռքը:

## «ԵՌԱՄԱՍ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ Ժորժ Դյումեզիլի, հնդեվրոպական առասպելաբանությունը ձևավորված է երեք հիմնական «ֆունկցիաների» շուրջ՝ 1. գերագույն իշխանություն, 2. ֆիզիկական ուժ, հատկապես ռազմական բնույթի և 3. պտղաբերություն՝ իր էրոտիկ և երկրագործական առումներով<sup>38</sup>:

Այս ֆունկցիաներին հատուկ է ներքին հակասականությունը: Առաջին՝ գերագույն իշխանության ֆունկցիան բնորոշվում է իր երկու՝ «միտրայական» և «վարունայական» ասպեկտներով, որոնք այդպես են կոչվել հին հնդկական Միտրա և Վարունա աստվածների անուններով: Այդ ասպեկտները փոխարացման սկզբունքով մոդելավորում են աշխարհն իր երկյակ հակադրություններով՝ աշխարհիկ-հոգևոր, մոտ-հեռու, միավորող-տարանջատող, բարեկամական-թշնամական, լուսավոր-մութ են: Ներքուստ հակասական է նաև երկրող ֆունկցիան: Ռազմիկը կարող է լինել միայնակ, միայն մա-

<sup>38</sup> Տե՛ս օրինակ G.Dumézil, *Mythes et dieux des indo-européens. Textes réunis et présentés par Hervé Coutau-Bégarie*. Paris, 1992, p. 81-115: Դյումեզիլի տեսության կողմ և դեմ կարծիքների քննարկումը տե՛ս S.C.Littleton, *The New Comparative Mythology*, Berkley, Los Angeles, London, 1982, p.153-203, 216-236: Հայկական առասպելաբանության մեջ դյումեզիլյան ֆունկցիաների դրսևորման վերաբերյալ տե՛ս Ժ.Դյումեզիլի, Ս.Աիյանի, Ս.Պետրոսյանի, մեր և այլոց աշխատություններում:

հակով գինված, առանց կարգի կովող, կամ ընդհակառակը՝ կարգով հանդես եկող, լավ գինված, արհեստավարժ գինվոր (համապատասխանաբար՝ «հերակլեսյան» և «աքիլլեսյան» տիպեր): Երկակի բնույթ ունի և երրորդ ֆունկցիան, որը արտահայտվում է նրա՝ հաճախ երկվորյակային հակադիր կերպարների միջոցով դրսևորվելով:

Այս «եռամաս գաղափարախոսությունն» անվերջանալիորեն կրկնվելով՝ ի հայտ է գալիս աստվածների և հերոսների համակարգերում, կերպարներում, նրանց հերթագայության մեջ, առասպելներում, գոհաբերություններում, օրինանքներում, անեծքներում, երկնային և երկրային տարածաշրջանների, հասարակության դասակարգումներում և այլուր: Դա, ըստ Դյումեզիլի, հնդեվրոպական մշակույթների բնորոշ, առանձնահատուկ հատկանիշն է՝ կապված հասարակության եռամաս դասային կառուցվածքի հետ (քրմեր, ռազմիկներ, բարիքներ արտադրողներ): Այդպիսի ձևավորված հասարակություն դժվար է պատկերացնել հնդեվրոպական միասնության վաղնջական դարաշրջանում՝ նեոլիթում և էնեոլիթում, բայց այդ եռամաս կառույցի հետքերը պարզորոշ ի հայտ են գալիս հնդկական, իրանական, հունական, լատինական, կելտական իրականության մեջ, այսինքն՝ հին հնդեվրոպական հասարակությունն ունեցել է համապատասխան նախադրյալներ, որոնց հիման վրա և ձևավորվել են իրար այդքան նման դասային կառուցվածքներ<sup>39</sup>:

Դյումեզիլի տեսությունը շատերի կողմից ընդունվել է, շատերի կողմից էլ քննադատվել: Մեր նպատակներից դուրս է այդ տեսության վերաբերյալ թերևս և դեռ կարծիքները ներկայացնելը: Ինչ վերաբերում է «եռամաս գաղափարախոսության» դրսևորմանն առասպելաբանության մեջ, ապա Դյումեզիլի և նրա հետևորդների ներկայացրած հսկայական նյութը չափազանց տպավորիչ է և ստիպում է հաշվի նստել իր հետ: Պետք է նկատի ունենալ նաև որ, ըստ Դյումեզիլի, այդ գաղափարախոսությունը, ի վերջո, ոչ այլ ինչ է, քան իդեալ և միաժամանակ՝ քննության մեթոդ<sup>40</sup>:

<sup>39</sup> G. Dumézil, նշվ. աշխ. էջ 87–95. Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, с. 787–788.

<sup>40</sup> G. Dumézil, Mythe et épopée, t. 1, Paris, 1968, p. 15.

Արդեն իսկ ՄՍՀՄ-ում, որը բազմաթիվ հատկանիշներով նմանվում էր արխաիկ հասարակություններին, կարելի էր տեսնել հին հնդեվրոպացիների «եռամաս գաղափարախոսության» հետ համադրելի երևույթներ, որոնք շարունակվում են հետսովետական իրականության մեջ (Դյումեզիլն ինքը գրել է, որ ՄՍՀՄ-ը և ֆաշիստական Գերմանիան կարող են քննվել երեք ֆունկցիաների համատեքստում)<sup>41</sup>: Մեզանում «մարքսիզմ-լենինիզմը»՝ երկրի միակ թույլատրված գաղափարախոսությունը հանդես էր գալիս որպես մի արխաիկ կրոն, իր աստվածություններով (Լենին, Ստալին), սրբերով և լեգենդար հերոսներով (ավելի ցածր կարգի առաջնորդներ, քաղաքացիական պատերազմի մարտիկներ են): Երկրի գաղափարական առաջատար ուժը կոմունիստական կուսակցությունն էր, մի ահռելի, խորապես կրոնական կազմակերպություն, իր տարաբնույթ կառույցներով, որը կատարում էր արխաիկ հասարակության քրմության դերը (առաջին ֆունկցիա): Երկրորդ՝ ռազմական ֆունկցիան իրականացնում էին հսկայական ու հզոր բանակը, իսկ մնացած ժողովուրդը կազմում էր երրորդ ֆունկցիան՝ աշխատավորությունը (արդյունաբերական և գյուղատնտեսական բարիքների արտադրողները):

Ըստ պաշտոնական գաղափարախոսության, ՄՍՀՄ-ը աշխատավորության՝ այսինքն երրորդ ֆունկցիայի իշխանության երկիր էր, ուր աշխատավոր-բանվորները համարվում էին հեգեմոն («գերիշխան») դասակարգ: Դա, իհարկե, նոր երևույթ էր մարդկության պատմության մեջ: Բայց իրականում երկիրը խարխալում էր արխաիկ, քսաներորդ դարի համար աներևակայելի խավարում: Կարծես իրականացել էր մարքս-լենինյան ուսմունքի՝ հասարակության առաջին և վերջին ֆորմացիաների նույնականության թեզը՝ ձգտելով մարդկության լուսավոր ապագային՝ կոմունիզմին, երկիրը վերադառնում էր նախնադարյան համայնական կոմունիստական հասարակարգին: Երկրի առաջին ղեկավարները, ինչպես ասվեց, ուղղակի աստվածացված էին, որոնց նկատմամբ ոչ պաշտամունքային վերաբերմունքը կարող էր հանգեցնել խստագույն պատժի: Ընդհանրապես, սովետական ղեկավարը լինում էր առաջնորդը՝ նաև երկրի մի-

<sup>41</sup> S.C.Littleton, նշվ. աշխ., էջ 232.

ակ օրինական՝ կոմունիստական կուսակցության, որի նկատմամբ «սխալ» վերաբերմունքը կամ նրա կուրսից ցանկացած շեղումը, ինչպես քրիստոնեական հերձվածները և աղանդները միջնադարյան Եվրոպայում, խստորեն պատժվում էին: Եվ ՄՍՀՄ ղեկավարը մի տեսակ արխաիկ «արքա-քուրմ» էր, որը հաճախ պաշտոնապես կոչվում էր արխաիկ «առաջնորդ» (ռուսերեն՝ вождь «առաջնորդ, ցեղապետ») տերմինով և հանդես էր գալիս որպես դյումեզիլյան առաջին ֆունկցիայի երկու՝ և՛ աշխարհիկ և՛ հոգևոր ասպեկտների կրող: Ընդ որում, սովետական ղեկավարը սովորաբար լինում էր առաջին ֆունկցիայի առավելապես հոգևոր, մութ, դաժան, «վարոնայական» կերպար (բացառություն էր «միտրայական» Գորբաչովը, որոշ չափով՝ Խրուշչովը, և հաճախ այդպես էին ներկայացնում Լենինին):

ՄՍՀՄ-ը ծայրահեղ ռազմականացած էր, և նրա հսկայական բանակը երկար ժամանակ որոշ առումներով ամենահզորն էր աշխարհում: Երկրում գործում էին նաև ռազմականացված այլ կառույցներ, որոնցից առավել հիշատակելի են պետական անվտանգության կոմիտեն և միլիցիան (ոստիկանությունը), իր ներքին գորքերով, իրենց օժանդակող բազում կազմակերպություններով:

Հատկանշական է, որ երրորդ ֆունկցիան ևս ուներ իր երկակի դրսևորումը՝ ՄՍՀՄ-ում աշխատավորությունը բաժանված էր երկու կատեգորիայի՝ բանվորներ և «կոլտնտեսական» գյուղացիներ, որոնցից առաջինն ավելի առաջադիմական և բարձր էր համարվում: Այդ բաժանվածության լավագույն արտահայտությունը կարելի է համարել Վերա Մուխինայի հանրահայտ «Բանվորը և կոլտնտեսուհին» մոնումենտալ քանդակը՝ ՄՍՀՄ սիմվոլներից և «սոցիալիստական ռեալիզմի» բարձրագույն դրսևորումներից մեկը:



Պետության կառուցումը և կայացումը, կիսագաղութային ազգից անկախ ազգ դառնալու գործընթացները արարչագործության՝ տիեզերածնության և նրա ազգաբանական ասպեկտի՝ ազգածնության ամենաբարձր դրսևորումներն են: Քննությունը ցույց է տալիս այս երևույթների առասպելականացած ընկալումը ՄՍՀՄ նախկին հանրապետությունների՝ անկախ պետություններ դարձած նորան-

կախ ժողովուրդների պատկերացումներում, որտեղ շարունակում են գործել վաղնջական առասպելաբանական արխետիպերը:

Աշխարհը կարելի է ընկալել որպես ինչ-որ մի կանոնավոր, կամ ընդհակառակը՝ քառասյին, անկարգ գոյացություն: Երկրորդ ընկալումը բնորոշ է տրիքստերի կերպարին, որն արարիչ աստծու պարողիկ, կոմիկական դրսևորումն է: Սովետական բանահյուսության մեջ, ինչպես տեսանք, հայի կերպարը բացահայտորեն համապատասխանում է տրիքստերին, առավել, քան որևէ այլ կերպար: Սա ցույց է տալիս, որ հայերի մեծամասնության (ինչպես և այլ ազգերի) կողմից ՄՍՀՄ-ն ընկալվում էր որպես ոչ կարգավորված մի աշխարհ:

Ներկայումս միակ երկիրը, ուր հայերի համար չկա ո՛չ ազգային ճնշում, ո՛չ էլ խիստ օրինական դաշտ, Հայաստանն է, որտեղ լավագույն հնարավորություններ կան ՄՍՀՄ տրիքստերային կենսակերպի շարունակության համար:

Ո՞վ է տրիքստերը և ի՞նչ դեր է վերագրվում նրան «եռաֆունկցիոնալ» գաղափարախոսության համատեքստում: Դյումեզիլը, քննելով սկանդինավյան առասպելաբանության տրիքստերի՝ Լոկիի կերպարը, դիտում է նրան որպես իմպուլսիվ գիտակցության մարմնավորում և տեղ չի գտնում նրա համար աստվածների եռամաս դասակարգման մեջ: Սակայն երևույթը կարելի է դիտարկել այլ դիտանկյունից: Հոգեբանության մեջ տրիքստերի կերպարի դրսևորումները սովորաբար դիտվում են հասարակության շարքային անդամների մակարդակում: Իսկ ի՞նչ կարելի է ասել պետության ղեկավարների մասին: Նորանկախ երկրների ղեկավարները՝ նախագահները, ինչպես նախկինում թագավորները, առասպելաբանական մտածողության մեջ համադրվում են տիեզերածին արարիչ աստծու հետ (նրա շուրջն է կենտրոնանում ողջ իշխանությունը և նոր պետության ինստիտուտները ձևավորելիս նա հանդես է գալիս որպես տիպիկ արարիչ): Ակնհայտ է, որ երկրի ղեկավարը, առավել, քան որևէ մեկը երկրում, առաջին՝ տիրակալության ֆունկցիայի կրողն է: Այդ դեպքում նախագահի ձախողումները և անօրինական (կամ որպես այդպիսին գնահատվող) քայլերը մոտեցնում են նրան ձախողված՝ պարողիկ արարչին՝ տրիքստերին: Դա հանգեցնում է հասարակության և պետության՝ որպես առավել չկարգավորված տիեզերքի ընկալմանը,

որն ավելի է ուժեղացնում տրիքստերային աշխարհայացքի ձևավորումը լայն զանգվածների մեջ:

Մյուս կողմից, պետության ղեկավարի անօրինական պահվածքը և ձախողումը հանգեցնում են նրա համադրությանն արարիչ աստծու հակառակորդի՝ քառսի, թշնամական ուժերի մարմնավորման հետ, որը պարզորոշ դրսևորվում է հատկապես ընդդիմադիր շրջանակներում:

Մեկ այլ նկատառում. արքան, ըստ առասպելաբանական պատկերացումների, իդեալական մարդ է, որը խորհրդանշում է հասարակության դասերի դաշինքը և իրենում ամփոփում դյումեզիլյան երեք ֆունկցիաները: Սովետական դարաշրջանում հասարակության «թշնամական» խմբերը (բուրժուազիա, ազնվականություն, հոգևորականություն, այլ կուսակցություններ, այլ գաղափարախոսությունների կրողներ) օրենքից դուրս էին ու փաստորեն վերացվել էին, և ղեկավարն ու ղեկավարությունը միշտ աշխատավորության (երրորդ ֆունկցիայի) կողմն էր: Բայց ՄՍՀՄ կործանումից հետո մյուս դասերի, այլևայլ քաղաքական ուժերի, շարժումների և կուսակցությունների գոյությունն օրինականացվեց, և ղեկավարն արդեն պարտավոր էր լինել հասարակության դաշինքի՝ առաջին ֆունկցիայի «միտրայական ասպեկտի» իրավական երաշխավորն ու իրականացնողը: Հետսովետական երկրներում այդպես չէր: Ասենք, հաղթած նոր ուժերը հակառակորդներն էին դեռևս հզոր կոմունիստական ուժերի և հաճախ իրենց կուսակցությունների նվիրյալներ (ինչպես ՄՍՀՄ դարաշրջանում): Իսկ որևէ կուսակցության կամ գաղափարախոսության նվիրյալ նախագահները մյուսների նկատմամբ բռնություններ կամ հալածանքներ նախաձեռնողները կարող են ընկալվել որպես հասարակության դաշինքը խախտող կերպարներ և որոշ շրջանակներում ուժեղ հակազդեցություն առաջացնել:

Հատկանշական է, որ նորանկախ երկրների ղեկավարների մեծամասնության մոտ, ինչպես ՄՍՀՄ-ում, գերակշռում է «վարունայական»՝ մուօ ասպեկտը (ի հակադրություն եվրոպական և ամերիկյան ժողովրդավարական երկրների, ուր «վարունայական» կողմը ամբողջովին մթագնված է):

Նորանկախ երկրների այն մասում, որտեղ ՍՍՀՄ անկումը և անկախության ձեռք բերումն ուղեկցվում էին էթնիկական բախումներով (Ռուսաստան, Անդրկովկաս, Միջին Ասիա), արագորեն ռազմական ուժեր ստեղծելու անհրաժեշտություն էր առաջացել: Այդ ուժերը սկզբնապես ստեղծվում էին կամավորներից, իսկ իսկական՝ կազմակերպված բանակների ձևավորումը տեղի ունեցավ հետագայում: Այդ երկու տիպի միավորումների հարաբերությունը հիշեցնում է հնդեվրոպական ռազմական ֆունկցիայի երկու ասպեկտների հարաբերությունը :

Վերջում պետք է նշել, որ այս համադրությունները բացարձակապես ուղղված չեն արխաիկ և ժամանակակից հասարակությունները նույնացնելու նպատակին: Ինչպես ասվեց, ըստ Ժ. Դյումենզիլի, նրա տեսությունն առավելապես քննության մեթոդ է, և մենք փորձում ենք այն կիրառել հենց որպես մեթոդ: Բերված առասպելաբանական գուգահեռների դրսևորումներն ակնհայտ են քաղաքական գործիչների ելույթներում, հողվածներում, զանգվածային լրատվության հրապարակումներում, բանահյուսության մեջ և տարածվող լուրերում, որտեղ այդ մեթոդի կիրառությունը թույլ է տալիս նոր նոր հայացքով դիտել և իմաստավորել որոշ պատմաքաղաքական երևույթներ:

## ՀԱՅՈՑ ԴԱՏԱՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ<sup>1</sup>

Հայոց ինքնության ամենաէական հատկանիշներից է մեր մշակույթի, այսպես ասած, պատմական ուղղվածությունը՝ ամեն ինչի խորը ներթափանցվածությունը պատմությամբ: Թվում է, թե երբ անցյալի հեղինակները գրիչ են վերցրել իրենց ձեռքը, կարծես ինքնաբերաբար սկզբից գրել են վերնագիրը՝ «Հայոց պատմություն»: Հաճախ գրվածքը չի համապատասխանել իր այդ ընդգրկուն վերնագրին, այլ վերաբերվել է միայն մի կարճ դարաշրջանի, հաճախ էլ այդ վերնագիրը դրվել է հետագայում, ինչը նորից շեշտում է նույն՝ ամեն մի գրվածք որպես պատմություն ընկալելու միտումը: Հայոց նոր գրականությունն էլ, որոշ չափազանցությամբ, կարելի է ասել, որ պատմավեպերի՝ այսինքն, «հայոց պատմությունների» մի շարան է: Եվ հայոց հայացքը, թվում է, ուղղված է ոչ թե դեպի առաջ, այլ՝ հետ:

Հայկական վիպական բանահյուսությունը ևս պատմական է: Բացառությամբ ազգածին ավանդության և «Մասնա ծոերի», էպոսների գործող անձինք հիմնականում պատմական կերպարներ են՝ Արտաշիսյան և Արշակունի արքայատոհմերի արքաներ, Մամիկոնյան տոհմի իշխաններ և այլն: Երբ դեռ չկա գիրը և գրավոր պատմությունը, ժողովուրդն իր պատմությունը գրանցում է այսպես ասած, էպիկական կողավորման միջոցով: Այդպիսիք են ազգածին ավանդությունը և «Վիպասանքը»: Բայց դպրության ի հայտ գալուց հետո

---

<sup>1</sup> Հողվածի նախնական, համառոտ տարբերակը տպագրվել է «Բանբեր Մատենադարանի» հանդեսում (№ 21, 2014, էջ 131-142):

էլ ժողովուրդը շարունակել է ստեղծել էպոսներ, որոնցով ներկայացվել են պատմական դարաշրջանները: Եվ հայկական միտքը փորձել է կողավորել երկրի ողջ պատմությունը իրար հաջորդող էպոսների և էպիկական շարքերի միջոցով:

Հայկական վիպական բանահյուսությունը վերին աստիճանի հարուստ է, բաղկացած մի քանի խոշոր էպոսներից և բազում փոքր ստեղծագործություններից<sup>2</sup>: Սրանց պետք է գումարել նաև հայոց քրիստոնեական դարձի վիպական պատմությունը (Ազաթանգեղոս) և վանական բանահյուսության այլ ստեղծագործություններ: Սովորաբար, Աբեղյանի հետևությամբ, հայոց էպոսներ են համարվում հետևյալ ստեղծագործությունները՝ 1) «Վիպասանք», 2) «Պարսից պատերազմ», 3) «Տարոնի պատերազմը», 4) «Սասնա ծռեր»: Այդ ցանկը պետք է լրացվի: Ներկա հոդվածում կքննարկվեն հետևյալ վիպական ստեղծագործությունները.

- 1) Ազգածին ավանդություն կամ «ազգածին առասպել», ավանդված Խորենացու և Մերետսի մոտ (չնայած երբեմն «առասպել» կոչմանը, դա տիպիկ հերոսական էպոս է, մյուսների համեմատությամբ՝ առավել բնիկ տարրերով),
- 2) «Վիպասանք» (Երվանդյան և Արտաշիսյան դարաշրջանի մասին պատմող վիպական գրույցներ, ավանդված Խորենացու մոտ),
- 3) «Պարսից պատերազմ»՝ էպիկական պատմություններ Արշակունյաց Հայաստանի վերջին շրջանի մասին, արձանագրված Ազաթանգեղոսի, Փավստոս Բյուզանդի, Խորենացու, Մերետսի և Հովհան Մամիկոնյանի գրքերում,
- 4) «Տարոնի պատերազմը»՝ Տարոն նահանգի վիպական պատմությունը, որը կազմում է Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» մի զգալի մասը,

<sup>2</sup> Հայ վիպական բանահյուսության համակարգման վերաբերյալ տե՛ս Աբեղյան Ս., Երկեր, հ.Ա, Երևան, 1966; Petrosyan A.Y., The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic. – Journal of Indo-European Studies Monograph 42. Washington DC, 2002; Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010, էջ 139–161:

- 5) «Սասնա ծռեր» (երբեմն գլխավոր հերոսի անունով կոչվում է «Սասունցի Դավիթ»)՝ հայոց ժողովրդական մեծ էպոսը, արձանագրված առաջին անգամ XIX դարում, սակայն կողմնակի աղբյուրներից հայտնի XII դարից,
- 6) «Քյոռողլի»՝ թյուրքական ցեղերի գերիշխանության դարաշրջանի թյուրքական էպոս, որը մտել է հայերի և այլ ժողովուրդների ավանդույթ (վրացիներ, քրդեր, պարսիկներ և այլն),
- 7) հայդուկի երգեր՝ Օսմանյան լծի դեմ պայքարող հերոսների մասին,
- 8) էպիկական ստեղծագործություններ խորհրդային դեկավարների մասին:

Երկու խոսք Արեղյանի ցանկին ավելացված ստեղծագործությունների՝ որպես էպոս բնարոշման վերաբերյալ: Ընդհանրապես, աշխարհի ժողովուրդների ազգածին ավանդությունները հանդես են գալիս տարբեր ձևերով՝ որպես առասպել, լեգենդ և էպոս: Հայկյանների վիպական պատմությունը մի տիպիկ հերոսական էպոս է, մյուս հայկական էպոսների նման միավորված մի քանի սերունդ (ճյուղ) ընդգրկող մեկ վիպական ամբողջության մեջ, Հայկից մինչև Արա Գեղեցիկ, որտեղ հայոց նախահայրերի և նրանց հակառակորդների՝ ծագումով դիցաբանական կերպարները էպոսին միանգամայն բնորոշ կերպով վիպականացել և պատմականացել են, դարձել արխայիկ էպոսի տիպիկ հերոսներ՝ դյուցազուններ: Այն մեզ է հասել Խորենացու և Սեբեոսի գրքերում, որոնց աղբյուրն է ասորի հեղինակ Մար Աբասի կողմից արդեն մշակված տարբերակը, համապատասխանեցված աստվածաշնչի և հունական աղբյուրների հետ, բայց և այնպես, նշանակալի չափով վավերական է և մյուսների համեմատությամբ այժի է ընկնում առավել բնիկ տարրերով<sup>3</sup>: Կարծես հայոց ազգածագման ավանդության համար է ասված հերոսական էպոսի հետևյալ բնութագիրը՝ «Հերոսական էպոսը ձևավորվում է էթնիկական

<sup>3</sup> Ազգածին ավանդության հնդեվրոպական ակունքների վերաբերյալ տես Ahyan S., *Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes*. – *Revue de l'histoire des religions* CIC-3, pp.251–271; Dumézil G., *Le roman des jumeaux*, Paris, 1994, pp.133–134; Petrosyan A., *The Indo-European*, passim; Idem: *The Indo-European \*H2ner(t)-s and the Danu Tribe*. – *Journal of Indo-European Studies*, 35 (2007), pp.297–

կոնսոլիդացիայի գործընթացում, զարգանում և տարածվում էթնո-գենեզի (ազգագոյացման – Ա.Պ.) և ցեղերի տեղաշարժման ընթացքում...»<sup>4</sup>:

«Քյոռոզլին» թյուրքական էպոս է, որը մտել է հայերի և բազում այլ ժողովուրդների ավանդույթ (վրացիներ, քրդեր, տաջիկներ և այլն): Բայց այն, պարզվում է, ստեղծվել է հայկական որոշակի ենթաշերտի վրա, հայերի նշանակալի մասնակցությամբ և դարձել վերջին դարերի հայոց մեջ ամենատարածված էպոսը: Էպոսի նման օրինակներ են նաթթական էպոսը և հնդկական «Մահաբհարատան» ու «Ռամայանան», տարածված բազում ժողովուրդների մեջ:

Հայդուկի երգերը, իհարկե չի կարելի էպոս անվանել: Դրանք հիմնականում տարբեր պատմական հայդուկների նվիրված էպիկական կարճ ստեղծագործություններ են: Ինչ վերաբերում է Լենին-Ստալինյան «էպոսին», այն, հիմնականում արհեստական է, ստեղծված քաղաքական պատվերով և երբեք ժողովրդական տարածում չի ունեցել: Սակայն և՛ հայդուկների, և՛ սովետական ղեկավարների մասին տեքստերը ստեղծվել են այն նույն արխետիպերի և կադապարների հիման վրա, ինչ հին էպոսները: Այսինքն՝ մեր հին վիպական ավանդույթը, կարելի է ասել, շարունակվել է մինչև 20-րդ դար:

Առաջին վեպերը հայտնի են հին պատմիչների աշխատություններից (Ազաթանգեղոս, Փավստոս, Խորենացի, Սեբեոս, Հովհան Մամիկոնյան), իսկ «Սասնա ծռերը» և «Քյոռոզլին»՝ ավանդված են բանավոր և պատմվել են մինչև 20-րդ դար: Գրառված հին վեպերը ժողովրդի կողմից հետագայում չեն պատմվել՝ դեր է խաղացել գրավոր խոսքի հեղինակավոր լինելու հանգամանքը:

Ազգածին ավանդությունը սկսվում է բաբելոնյան աշտարակաշինությունից, այսինքն՝ ժողովուրդների առաջացման ժամանակից, և ավարտվում հայերի պարտությամբ ասորեստանյան թագուհի Շամի-

310; Idem: Forefather Hayk in the Light of Comparative Mythology. – Journal of Indo-European Studies, 37 (2009), pp.155–163:

4 Мелетинский Е. М., Введение в историческую поэтику эпоса и романа. М., с. 62: Առաջին Հայկյանների գրոյցների՝ որպես վարդապետական էպոսի նմուշների մասին տե՛ս և Հարությունյան Ս.Բ., Բանագիտական ակնարկներ, Երևան 2010, էջ 143:

րամից (մ. թ. ա. 9-րդ դարի վերջ), որը հայկական ավանդույթում անձնավորում է Ուրարտու պետությունը (նրան են վերագրվում Ուրարտուի նշանակալի կառույցների, այդ թվում՝ մայրաքաղաք Վանի, Մենուա արքայի ջրանցքի կառուցումը, ուրարտական սեպագիր արձանագրությունները և այլն): Ուրարտուի տիրապետությունը՝ մ. թ. ա. 9-7-րդ դդ., այսպիսով, ժողովրդական հիշողությունը համարում է ասորեստանյան գերիշխանության դարաշրջան: «Վիպասանքը» հետուրարտական դարաշրջանի էպոս է՝ նրա առաջին նշանակալի հերոսը՝ Տիգրան Երվանդյանը թվագրվում է մ. թ. ա. 6-րդ, իսկ վերջինները՝ Արտաշեսը և Արտավազդը՝ մ. թ. ա. երկրորդ-առաջին դարերով, բայց նրանց կերպարներն էպոսում խառնվել են ավելի ուշ՝ Արշակունի արքաների կերպարների հետ<sup>5</sup>: «Պարսից պատերազմը» պատմում է Արշակունիների դարաշրջանի (1-4-րդ դդ.) հատկապես վերջին շրջանի, իսկ «Տարոնի պատերազմը»՝ հետարշակունյաց դարաշրջանի Տարոն նահանգի տերերի՝ հիմնականում Մամիկոնյան իշխանների՝ պարսիկների դեմ ունեցած պատերազմների մասին: «Մասնա ծոերը» ընդգրկում է արաբական տիրապետության և հետագա ժամանակահատվածը (7-13-րդ դդ.): Հայկյանների և Սասունի էպոսները առավել առասպելական են (Հայկը, Արամը, Արան, Ծովինարը, Սանասարը, Մհերը հին աստվածների վիպականացած կերպարներ են): Մյուս էպոսների հերոսները հիմնականում կամ հաճախ պատմական դեմքեր են (Տիգրանը, Արտաշեսը, Արտավազդը, Տիրանը, Արշակը, Մուշեղը հին և միջնադարյան Հայաստանի արքաներ և իշխաններ են): Չնայած պատմականացմանը, թշնամական կերպարները երբեմն հանդես են գալիս հին դիցաբանական անուններով (Հայկի հակառակորդ Բելը Բարեղունի մեծ աստված Բել-Մարդուկն է, Արամի հակառակորդ Բարշամը՝ սիրիական Բաալշամին աստվածը, Տիգրանի հակառակորդ Աժդահակը՝ իրանական առասպելական օձ-վիշապ Աժի Դահական):

Բոլոր վեպերը, բացի «Բյոռոզլուց», ներկայացնում են մի քանի սերնդի հերոսների պատմություն, ինչը հայկական էպոսի բնորոշ առանձնահատկությունն է: Վեպերի սյուժեները քիչ ընդհանրություն-

<sup>5</sup> Այդ մասին տե՛ս Петросян А. Е., Армянская Сатеник/Сатиник и кавказская Сатана/Сатаней. – Вестник Владикавказского научного центра, 1, 2016, с. 8–17:

ներ ունեն (նրանք արտացոլում են տարբեր դարաշարջանների պատմական իրողություններ): Մակայն, համեմատությունը բացահայտում է նրանց բոլորին բնորոշ մի սխեմա, որը կարող է պարզեցվել որպես որոշակի կերպարների հաջորդականություն՝ 1) աստվածություն կամ նրա սիմվոլը, 2) նրա որդիները՝ երկվորյակներ, որոնցից առաջինը ներկայացնում է ամպրոպի աստծու էպիկական տարբերակը, 3) «զոհվող (և հարություն առնող)» կերպար:

Հնդեվրոպական համատեքստում այդ սխեման կարելի է դիտարկել որպես երկու առասպելների համադրություն՝ 1) աստվածային երկվորյակների՝ երկնային աստծու որդիների առասպելայինը և 2) ամպրոպի աստծու և նրա «պատժվող / զոհվող» որդու առասպելայինը<sup>6</sup>: Ակնհայտ է, որ այս վիպական սխեման ծագում է աստվածային պարադիգմից՝ դիցաձևությունից (թեոգոնիա): Դիցաբանական վերակազմության մեջ նախնական սխեման պատկերանում է որպես պարզ ծննդաբանական շարք.

1) երկնային աստված,

2) նրա որդիները, երկվորյակներ, որոնցից մեկն ամպրոպի աստվածն է, վիշապամարտիկ,

3) ամպրոպի աստծու որդին, «զոհվող» աստվածություն:

Այս սխեման օգտագործվել է առասպելական արխետիպային կերպարների միջոցով Հայաստանի պատմական դարաշրջանների կողավորման և մոդելավորման համար: Տոնմի հիմնադիրը՝ երկվորյակների հայրը, որը հնդեվրոպական վերակազմության մեջ հանդես է գալիս որպես երկնքի (արևի) հայր աստված՝ \*dyus ph2ter-, շարքում կարող է փոխարինվել այլ աստվածությամբ կամ նրա սիմվոլով (Հայկ, Ծովինար, «Վիպասանքում» երկվորյակային հերոսների հայրը ցույն է, իսկ «Մասնա ծոերի» մի տարբերակում՝ ըստ երևույ-

<sup>6</sup> Երկվորյակների հնդեվրոպական առասպելների վերաբերյալ տես օրինակ Ward D., *The Divine Twins: An Indo-European Myth in Germanic Tradition*, Berkeley, Los Angeles, 1968; Mallory J.P., Adams D.Q., *Encyclopedia of Indo-European Culture*, London, Chicago, p. 161 ff; West M.L., *Indo-European Poetry and Myth*, New York, 2007, p. 186 ff.; հնդեվրոպական ամպրոպի աստծու վերաբերյալ՝ Иванов В.В., Топоров В.Н., *Исследования в области славянских древностей*. М., 1974:

թին՝ ձին<sup>7</sup>): Նա, ի դեպ, երբեմն ոչ մի դեր չի խաղում, և տոհմը, ըստ էության, սկսվում է երկվորյակներից:

Երկվորյակային կերպարները բնորոշվում են իրար նման անուններով (Արամանյակ և Արամայիս, Երվանդ և Երվագ, Սանասար և Բաղդասար)<sup>8</sup>. նրանք, կամ նրանցից մեկը, հիմնում է նոր ավանդույթը սկզբնավորող քաղաքը (Արմավիր, Երվանդաշատ, Սասուն): Հայկական, ինչպես և որոշ այլ ավանդույթներում, ամպրոպի աստվածը հանդես է գալիս որպես երկվորյակային կերպար: Դրա վառ օրինակն է Սանասարը, Սասունի հերոսների հիմնական զենքի՝ «թուր-կեծակիի» առաջին տերը<sup>9</sup>: Էպիկական տոհմաբանություններում այդ սխեման հաճախ բարդանում է՝ հանդիպում են տոհմագծեր երկու սերունդների երկվորյակներով, և ամպրոպի աստծու կերպարը կրկնվում է որպես շարքի հիմնական հերոս՝ տոհմի նախավերջին անդամ (ազգածին ավանդության մեջ՝ Արամ, «Վիպասանքում»՝ Արտաշես, «Սասնա ծռերում»՝ Դավիթ):

Շարքն ավարտվում է վերջին հերոսի (Արա, Արտավազդ, Փոքր Մհեր) վերջով/մահվամբ, հարության ակնկալիքով, որից հետո դարաշրջանն ավարտվում է (տեղի են ունենում աղետներ, փոխվում կամ վերջանում է արքայատոհմը, Հայաստանը կորցնում է անկախությունը ևն):

7 Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 349–350:

8 Արամանյակի և Արամայիսի երկվորյակային բնույթի վերաբերյալ տես Պետրոսյան Ա., Տիրացյան Ն., Հայոց առաջին մայրաքաղաք Արմավիրը պաշտամունքային կենտրոն. – ՊԲՀ, 2012, թիվ 1, էջ 169–184: Երվանդի և Երվագի մասին՝ Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, էջ 341–345:

9 Սանասարի՝ որպես ամպրոպի աստծու վիպականացած կերպարի վերաբերյալ տես Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, էջ 414 հուն.: Երվանդի վերաբերյալ՝ Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, էջ 103 հուն.: Ի դեպ, ամպրոպի աստվածը հանդես է գալիս որպես երկվորյակային կերպար նաև որոշ այլ ավանդույթներում՝ այդպիսիք են հին հնդկական Ինդրան, խոտիական Թեշուրը և շումերական Իշկուրը: Տես Petrosyan A. Y., *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, p. 14 f., 20 ff.; Петросян А.Е., *Армяно-индийские эпические параллели, Армянский эпос и мировое эпическое наследие*. Ереван, 2007, с. 38:

Վիպական շարք	Երկվորյակային տիպի հերոսներ	Մեծ հերոս	Վերջին՝ զոհվող և վերածնվող, կամ փակված հերոս
Ազգածին ավանդություն	Արամանյակ և Արամայիս	Արամ	Արա Գեղեցիկ
«Վիպասանք»	Երվանդ և Երվազ	Արտաշես	Արտավազդ
«Սասնա ծռեր»	Սանասար և Բաղդասար	Դավիթ	Մհեր



«Քյոոզլիում» («Կոյրի որդի», XVI-XVII դարերի սահմանի պատմական անձ, ջալալիների ապստամբության առաջնորդներից), չկա տարբեր սերունդների հերոսների հերթագայություն: Սա թյուրքական էպոս է, բայց նրա արևմտյան տարբերակներում գործողությունները տեղի են ունենում Հայկական լեռնաշխարհում և այն ներառել է իր մեջ հայկական մոտիվներ: Հետաքրքիր է, որ Քյոոզլու անունն առաջին անգամ հիշատակվում է Առաքել Դավրիժեցու մոտ, իսկ էպոսի առաջին գրառումը կատարվել է հայի կողմից, հայատառ թյուրքերեն (1721թ.)<sup>10</sup>: «Քյոոզլու»՝ հայոց մեջ ամենալայն տարածվածության մասին է խոսում այն, որ ոչ մի այլ դիցաբանական կամ վիպական հերոսի անունով չկան այդքան տեղանուններ (մեծ մասամբ ավերակ ամրոցներ, բայց նաև լեռներ, գյուղեր ևն, տարածված ողջ Հայկական լեռնաշխարհում)<sup>11</sup>:

Հայոց մեջ «Քյոոզլին» պատմվել է ժողովրդական ասացողների կողմից մինչև վերջերս (գրանված է շուրջ երկու տասնյակ տարբերակ, գրանցված և ուսումնասիրված են էպոսի նաև երաժշտական

<sup>10</sup> Արրահամյան Ա., Գաբրիելյան Դ., Քյոո-զլու նորահայտ երգերը, Հայկ. ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտություններ, 1954, 9, էջ 71-93; Каррыев Б. А., Эпические сказания о Кёр-оглы у тюркоязычных народов, М., 1968, 10 сл.:

<sup>11</sup> Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 404-405:

հատվածները)<sup>12</sup>: Հայագիտության մեջ «Քյոոզլու» վերաբերյալ նշանակալի գրականություն է ստեղծվել: «Կույրի որդու» առասպելությոթը հնագույն ծագում ունի և հանդիպում է մի շարք ժողովուրդների առասպելներում<sup>13</sup>: Ցույց է տրվել, որ «Քյոոզլու» համապատասխան սյուժեն ծագում է «Պարսից պատերազմից», ըստ որի Տիրան թագավորին՝ Արշակ թագավորի հորը, կուրացնում է Վարազ-Շապուհը (Փավստոս III, 20–21): «Քյոոզլին» ներառում է Արշակի լեգենդի առանցքային տարրերը՝ հորը կուրացնելը, պայմանավորված ձիու հետ կապված մի թյուրիմացությամբ և հերոսի վրեժը<sup>14</sup>: Կան բազմաթիվ համապատասխանություններ «Քյոոզլու» և «Մասնա ծների», միջև՝ օրինակ, Քյոոզլու թուրը պատրաստվում է կայծակից (հմմտ. Սասունի հերոսների Թուր-կեծակին), նրա կախարդական ձին, ինչ-

<sup>12</sup> Քյոոզլու հայկական տարբերակներից տես հատկապես Քյոո-օղլի, ժողովրդական վիպասանություն, Երևան, 1941: Էպոսի հայկական երաժշտակատարողական առանձնահատուկ ավանդույթի վերաբերյալ տես Երնջակյան Լ., Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համատեքստում, Երևան, 2009, 97–165:

<sup>13</sup> Dumézil G., Les légendes de “Fils d’aveugles” au Caucase et autour du Caucase. - Revue de l’histoire des religions 1938, 117, pp. 50–74.

<sup>14</sup> Քյոոզլու և Արշակի վեպերի կապի և ընդհանրությունների վերաբերյալ մանրամասն տես Dumézil G., նշվ. աշխ., էջ 73–74; առավել խորությամբ հիմնավորված՝ Պէրպէրեան Հ., Արշակ Բ. և Քեսոօղլու, Փարիզ, 1938; տես և Մելիք-Օհանջանյան Կ., Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի. - Տեղեկագիր, 1947, 7, էջ 77; կույրի որդու առասպելույթի հնագույն արտացոլումների և Քյոոզլու հայկական ակունքների ու կապերի վերաբերյալ՝ Ռամազյան Ս., Քյոոզլի, Իրան-Նամե, 1996, 4–5, 1997, 4–5–6, 1998, 1–2–3; նույնի՝ «Քյոոզլի» էպոսի պատմական հենքը և XVII–XVIII դդ. հայերեն ժամանակագրությունները, Բանբեր Մատենադարանի 25, Երևան 2018, էջ 277–290; Ախյան Ս., Կույր հոր ու իր տատայալ որդիների առասպելական թեման և Քյոոզլին, - Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1997, 3, էջ 148–153; Petrosyan A., The Indo-European and Ancient Near Eastern Sources..., p.158; Russell J., From Parthia to Robin Hood: The Epic of the Blind Man’s Son. - The Embroidered Bible: Studies in Biblical Apocrypha and Pseudepigrapha in Honour of Michael E. Stone, Leiden 2017, p. 877–898; Մելքոնյան Ռ., Քյոոզլու էպոսի հայկական հիմքերի շուրջ, Արևելագիտության հարցեր VII, Երևան, 2014, էջ 170–175: Ի միջի այլոց, «կույրի որդու» առասպելությոթը բնորոշ է էպոսի միայն արևմտյան տարբերակներին (արևելյաններում հերոսի անունն այլ կերպ է մեկնաբանվում՝ «Գերեզմանի որդի»), և այն պարունակող սյուժեները, կարելի է ասել, որ ծագումով հայկական են:

պես և Սասունի հերոսների ձին, ջրային ծագում ունի, Քյոոզլու ընկերները կոչվում են *ղալի* «խենթ», ինչպես «Սասնա ծռերի» հերոսները և այլն: Որոշ տարբերակներում կյանքի ավարտին Քյոոզլին մտնում է քարանձավ, հմնտ. Փոքր Մհերի և Արտավազդի վերջը (Արշակ թագավորը ևս շղթայվում և նետվում է Անհուշ բերդը, որտեղ և ավարտվում է նրա կյանքը): Այսպիսով, Քյոոզլին, կարելի է ասել, որ անկախ թուրքական տարրերից, շարունակում է նաև Հայաստանի վիպական ավանդույթը:

Հայ իրականության մեջ, բացի ժողովրդական ասացողներից, Քյոոզլու սյուժեն մշակվել է մի շարք ստեղծագործողների կողմից: Այսպես, հայտնի են Զ. Անտոնովի և Ս. Ավյանի «Քյոո-ոլի» թատերգությունները և Ա. Տիգրանյանի համանուն անավարտ օպերան<sup>15</sup>: Հայոց մեջ հնից ի վեր Քյոոզլու՝ ծագումով հայ լինելու վերաբերյալ կայուն կարծիք է եղել: Այդ մասին գրել են Արովյանը «Վերք Հայաստանի» գրքի առաջաբանում և Աղայանը վիպերգության իր մշակման մեջ: Ք. Պատկանյանի անավարտ «Քյոոզլուում» ևս հերոսը հայ է, որն իսլամ էր ընդունել գաղափարական պատճառներով<sup>16</sup>: Քյոոզլին հայ է նաև դարաբաղյան ժողովրդական պատումներում (այդ մասին կան նաև թուրքերեն տեքստեր): Արևմտյան Հայաստանի հարավային շրջանների պատումներում ևս Քյոոզլին հայ է, Արշամ անունով (սա կարծես հայոց արքա Արշակի անվան հեռավոր արձագանքն է), Վանի շրջանի Անկշտան գյուղից (ինչպես որ քրդերի մեջ Քյոոզլին քուրդ է, օսմանցիների մեջ՝ օսմանցի են): Այս տարբերակները հազեցած են հայկական բանահյուսությամբ և կենցաղով և այնքան են հեռացած թուրքականներից, որ իրենցից ներկայացնում են «Սասնա ծռերը» հիշեցնող մի նոր հայկական էպոս<sup>17</sup>:

<sup>15</sup> Ստեփանյան Հ., Ա. Տիգրանյանի «Քյոոզլի» անավարտ օպերան. – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, Գյումրի 2000, 3, էջ 195–198.

<sup>16</sup> «Իմ դյուցազնը յուր նվիրական իղեայի համար զոհում է մարդուս ամենաթանգ սրբությունը – կրոնը. դրա մեջ ես ուզում եմ երկու տարերք միավորել՝ աստվածատուր քանքար, վեհ հոգի, նուրբ հայրենասիրություն և սխալ սկզբունք բարոյականության. դրան (Քյոոզլուն – Ա. Պ.) կանեմ ես զոհ յուր ազնիվ իղեային...», տե՛ս Պատկանյան Ռ., Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 309:

<sup>17</sup> Մամվելյան Խ., Նշվ. աշխ., էջ 18–20; Ռամազյան Ս., Նշվ. աշխ., 1996, էջ 32:



Հայդուկի երգերում ևս չկա հերոսների սերունդների հաջորդականություն: Հայդուկները կոչվում էին մուսուլմանական-արաբական ֆիդայի տերմինով (նաև՝ ֆիդա, ֆեդա, ֆեդային «գոհ»)՝ նրանք երդվում էին զոհվել հայրենիքի համար): Երգերում հայդուկի մահվան օրը կոչվում է տոն, զատիկ՝ Քրիստոսի հարության տոնի անունով, և նա պետք է հարություն առնի և հասնի անմահության՝ «երկնային փառքի», «փառքի պսակի»: Գերեզմանից ելնելու, հարություն առնելու կոչը երգերի ամենահաճախ հանդիպող մոտիվներից է: Հայդուկների մշտական կոչումը՝ «առյուծ» և չամուսնանալու երդումը հիշեցնում են էպոսի Մհերներին (հմմտ. Մեծ Մհերի «առյուծ» կոչումը և անզավակ Փոքր Մհերի կերպարը): Արևմտյան Հայաստանի ազատագրման ողբերգական պատերազմը ճակատագրական կերպով կենտրոնացված էր Սասունում և հարակից շրջաններում, որտեղ մեծ հայդուկ Անդրանիկի մասին պատմել են «Սասնա ծռերի» դրվագները հիշեցնող պատմություններ (նա, իբր, մարմնի վրա խաչ է ունեցել, ամեն կովից հետո լողացել և նոր ուժեր է ստացել և այլն): Այսպիսով, հայդուկի երգերը շարունակում են էպոսի վերջին հերոսի՝ մեռնող և հառնող կերպարի ավանդույթը<sup>18</sup>:



Խորհրդային Հայաստանի առաջին տասնամյակներին հասարակ մարդկանց, ժողովրդական երգիչների և պրոֆեսիոնալ բանաստեղծների կողմից ստեղծել են բազմաթիվ էպիկական ստեղծագործություններ՝ երգեր, բանաստեղծություններ և պոեմներ խորհրդային ղեկավարների, մասնավորապես Լենինի և Ստալինի մասին: Դրանց նկատմամբ վերաբերմունքը, ինչպես ստեղծվելիս, այնպես էլ հետագայում, չափազանց քաղաքականացված է եղել: Դրանք բոլորը երբեմն բնութագրվել են որպես «կեղծ բանահյուսական» (անգլ.

---

Հայկական տարբերակների առանձնահատուկ բանահյուսական ակունքների վերաբերյալ՝ Chadwick N., Zhirmunsky V., *Oral Epic of Central Asia*. Cambridge, 2010, p. 302:

<sup>18</sup> Ա. Պետրոսյան. Ֆիդայու կերպարը հայ բանահյուսության մեջ. Ավանդականը և արդիականը հայ մշակույթում. Հայ ժողովրդական մշակույթ XV. Երևան, 2010, էջ 447–453:

fakelore, ռուս. фальшлор), ինչը պարզունակեցնում է խնդիրը: Մինչդեռ հայտնի է, որ դրանց մեջ կան նաև պատվերով ստեղծված կեղծ հորինվածքներ, նաև իսկական բանահյուսական ստեղծագործություններ (թեև դրանք երբեք իսկական բանահյուսական կյանք չեն ունեցել): Այդ տեքստերը որոշ չափով աղավաղում են նախորդ բանահյուսական ավանդույթը, բայց գործառնությամբ իմաստով նրանք ենթադրում, իսկ հաճախ վերարտադրում են նույն ավանդույթի օրինաչափությունները<sup>19</sup>: Եվ ներկայումս, ԽՍՀՄ-ի փլուզումից տասնամյակներ անց, անհրաժեշտ է երևույթի գիտական քննարկումը և լիարժեք իմաստավորումը:

Այդ ժողովրդական (կամ «կեղծ ժողովրդական») ստեղծագործություններն այն ժամանակվա գիտության մեջ համարվում էին մեր էպոսի «հինգերորդ ճյուղը», այսինքն՝ «Սասնա ծռերի» շարունակությունը Փոքր Մհերի ճյուղից հետո<sup>20</sup>: Դրանցում Լենինն ու Ստալինը հաճախ են հանդես գալիս որպես առասպելական հիմնադիր-երկվորյակներ հիշեցնող կերպարներ:

<sup>19</sup> Եվ արևմտյան, նաև ռուսական գիտության մեջ վաղուց ի վեր կան մեծաքանակ աշխատություններ, որտեղ ուսումնասիրվում են «խորհրդային էպոսը», նրա ստեղծման առանձնահատկությունները, կեղծիքի և իրականի համամասնությունը նրանում ևն, տես օրինակ Miller F., *Folklore for Stalin: Russian Folklore and Pseudofolklore of the Stalin Era*, New York, 1991; Топорков А. Л. и др. *Рукописи, которых не было: подделки в области славянского фольклора*, М., 2002 (հատկապես Иванова Т. Г., *О фольклорной и псевдофольклорной природе советского эпоса*, с. 403–431); Богданов К. А., *Vox populi: фольклорные жанры советской культуры*, М., 2009 ևն: Ի միջի այլոց, խորհրդային դարաշրջանի այդ ստեղծագործությունները ներկայացվում և քննարկվում են էպոսագիտական հիմնարար աշխատություններում, տես օրինակ Бойра С. М., *Героическая поэзия*. М., 2002, с. 154–157:

<sup>20</sup> Խորհրդային առաջին առաջնորդների մասին էպիկական ստեղծագործությունների վերաբերյալ տես Մելիք-Օհանջանյան Կ. (խմբ.), *Լենինը հայ ֆոլկլորի մեջ*, Երևան, 1936; Մելիքյան Հ., *Լենինը և Ստալինը հայկական ֆոլկլորում*, Երևան, 1941; Մուրադյան Մ., *Լենինի և Ստալինի կերպարները սովետական հայկական երաժշտական ստեղծագործություններում*. – *Տեղեկագիր*, 1949, 10, էջ 111–128: Նազինյան Ա., *Սովետահայ գրականությունը և բանահյուսությունը*, Երևան, 195; Դեղորոյան Ա., *Առասպելաբանական մի սխեմայի արտացոլումը հասարակական գիտակցության մեջ*. – *Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հանրապետական գիտական նստաշրջան*, 1984–1985 թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների արդյունքները, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1990, էջ 47–50:

Բայց կարելի է նշմարել նաև նշված սխեմային ավելի մոտ շարքի ակնարկը՝ Մարքս-Էնգելս, որպես երկվորյակային տիպի հերոսներ, Լենին, գլխավոր հերոս, որը սպանում է վիշապին՝ ցարին, և Ստալին՝ վերջին հերոս: Իրոք, Մարքսը և Էնգելսը նախախորհրդային դարաշրջանը խորհրդանշող համաժամանակյա կերպարներ են, մարքսիզմի հիմնադիրներ և ապագայի նախակարապետներ, Լենինը և Ստալինը՝ նրանց գործի շարունակողները<sup>21</sup>: Խորհրդային հերալդիկ շարքի հաջորդական պրոֆիլները՝ Մարքս-Էնգելս-Լենին-Ստալին և վերջինների հուղարկավորությունները դամբարանում կարող էին ամրապնդել այս առնչությունները (կա օրինակ, երբ դամբարանում «քնած» առաջնորդը դիտվել է որպես Փոքր Միերի տիպի քարանձավում «քնած հերոս», իսկ Ստալինի մարմնի դուրս բերումը դամբարանից համեմատելի է Միերի՝ ժայռից ելնելու հետ)<sup>22</sup>: Ասվածը միատիկական կապերի բացահայտման միտում չունի: Հասկանալի է, որ այս տիպի համընկումները պատահական բնույթ են կրում, բայց և այնպես, դրանք կարող էին ռեզոնանսի մեջ մտնել հին, արխետիպային սխեմայի հետ: Ինչևէ, ասվածը մատնանշում է մի հնարավորություն, թե ինչպես կարող էր ստեղծվել նոր վեպը:

<sup>21</sup> Միայն մեկ օրինակ՝ Նաիրի Զարյանի «Ստալին» բանաստեղծության մեջ Մարքսին և Էնգելսին միասին հատկացված է մեկ տող, իսկ Լենինին և Ստալինին՝ հաջորդ առանձին տողերը: Մարքսը և Էնգելսը ներկայացված են է մեկական, Լենինը՝ երկու, Ստալինը՝ երեք մակդիրով: Այս անձինք միավորվում են որպես «հանճարի արեգնափայլ չորրորդությունը տիտան»:

<sup>22</sup> Փոքր Միերի և եվրոպական «քնած հերոսների» կապի վերաբերյալ տե՛ս Петросян А. Е., Влияние армянского Мгера на европейских героев. – Вестник Матенадарана, т. 20 (2014), с. 169–174; Լենինի վերաբերյալ՝ Топорков А. Л. и др., Ук., раб., с. 405–406:

Խորհրդային պաշտոնական գաղափարախոսությունն ուներ վերին աստիճանի արխաիկ հատկանիշներ, համադրելի հնագույն առասպելների հետ: Այսպես, Ստալինի սովորական մակդիրները՝ «արև» և «հայր», հիշեցնում են հնդեվրոպական արևային երկնքի աստծուն (\*dyēus ph2ter- «լուսավոր երկինք-հայր»), իսկ մյուս մշտական մակդիրը՝ «ընկեր» համընկնում է Միտրա աստծու անվան հնդկական իմաստավորմանը: Այդ նույն աստվածն Իրանում դարձել էր Միթրա և Միհր, արևի աստված, տե՛ս Պետրոսյան Ա., Առասպելաբանական մի սխեմայի արտացոլումը հասարակական գիտակցության մեջ:

Սակայն Ստալինի «անձի պաշտամունքի» դատապարտումը և խորհրդային իրականության զարգացումները թույլ չտվեցին ամբողջանալու այդ վերջին «Էպոսը»: Խրուշչովի դարաշրջանը դարձավ խորհրդային հերոսական էպիկայի ավարտը՝ հրատապ դարձավ բանահյուսության մեկ այլ ժանր՝ անեկդոտը: Դրանց հիմնական թիրախը ԽՍՀՄ ընթացիկ ղեկավարներն էին, բայց Լենինը և Ստալինը շարունակում էին մնալ կարևոր կերպարներ (կա, օրինակ, Լենինի մասին ուշ հայկական անեկդոտների շարք): Հազվադեպ հանդես էին գալիս նաև Մարքսը և Էնգելսը:



Հայ ժողովրդական վիպական միտքը հույժ պատմական է, ինչը մեր վիպական ավանդույթի բնորոշ առանձնահատկությունն է (որով և այն նմանվում է իրանականին և տարբերվում հարևան կովկասյաններից): Դա կարող է բացատրվել հնում երկարատև և հզոր պետականություն ունենալու հանգամանքով: Հայ ժողովուրդը էպոսներով կողավորել է իր պատմության դարաշրջանները սկսած ժողովրդի ծագումից մինչև 20-րդ դարի կեսը («Առաջին Հայկյանները»՝ մինչուրարտական, «Վիպասանքը»՝ հետուրարտական՝ Երվանդունիների և Արտաշիսյանների, «Պարսից պատերազմը»՝ Արշակունյաց, «Տարոնի պատմությունը»՝ հետարշակունյաց, «Մասնա ծոերը»՝ արաբական և սելջուկյան, «Քյոոսողլին»՝ հետմիջնադարյան, «ԽՍՀՄ առաջնորդները»՝ խորհրդային շրջաններ)<sup>23</sup>:

Առաջին վեպի Հայկը, Արամը և Արան ծագումով հին, բնիկ աստվածների կերպարներ են, որոնք, ժողովրդի կրոնական համակարգը փոխվելուց՝ իրանական դիցարանի ներդրումից հետո, անցել են ավելի ցածր, էպիկական հերոսների մակարդակ (սրանց անունները հին աստվածների անուններ կամ մականուններ են): Նույն երևույթը նկատվում է և հաջորդ նոր կրոնի՝ քրիստոնեության ընդունումից հետո՝ Վահագն աստվածը Խորենացու մոտ հանդես է գալիս որպես

<sup>23</sup> Հին էպիկական, հատկապես «Մասնա ծոերի» ավանդույթն են շարունակում նաև հայդուկների երգերը, որոնց հերոսները համեմատելի են «մետոդ և հաոնոդ» կերպարի հետ, տե՛ս Պետրոսյան Ա., Ֆիդայու կերպարը հայ բանահյուսության մեջ. – Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ XV, Երևան, 2010, էջ 447–453:

Տիգրանի որդի, իսկ Միհրը՝ որպես «Մասնա ծոերի» Մեծ և Փոքր Մհերներ<sup>24</sup>: Լենինը և Ստալինը, որոնք ՄՍՀՄ-ում, կարելի է ասել, աստվածացվել էին, խորուշուկյան «Ձնհալից» հետո իջնում են անեկ-դոտի հերոսի մակարդակի: Այսպիսով, պատմության ընթացքում նախորդ դարաշրջանի դիցաբանական կերպարներն իջնում են ավելի ցածր մակարդակ: «Մասնա ծոերից» հետո ողջ ծննդաբանական շարքը պարունակող նոր լիարժեք էպոսներ, կարելի է ասել, չստեղծվեցին՝ և՛ դարաշրջաններն էին ուրիշ, և՛ պատմական հանգամանքները թույլ չտվեցին: Բայց եղած նյութը թույլ է տալիս ասելու, որ մեր էպոսները ստեղծվել են առասպելական արխետիպային կերպարների միջոցով Հայաստանի պատմական դարաշրջանները որպես անգիր պատմություն կողավորման եղանակով:



«Պարսից պատերազմը» և «Տարոնի պատերազմը» որոշակիորեն տարբերվում են մյուսներից: Նրանք չափազանց շատ են պատմականացած և հեղինակային: Ավելին, դրանք գրված են որպես պատմություն, որտեղ շատ դրվագներ ուղղակի վերցված են ժողովրդական ակունքներից (հմմտ. օրինակ Մուշեղի վերակենդանացման ակնկալիքը արավելզների միջոցով, Գիսանե ու Դեմետր երկվորյակատիպ կերպարների կողմից Վիշապ քաղաքի կառուցումը ևն): Ակնհայտ է, ժողովրդական վեպեր ու գրույցներ են եղել նաև այդ դարաշրջանի արքաների և իշխանների պատերազմների, արքունական ինտրիգների մասին: Իսկ ուշ հերոսական գրույցներից կարծես միայն մեկը՝ «Կաշտի քաջերն» է հեղինակային մշակմամբ ամբողջացվել որպես լիարժեք գրական էպոս<sup>25</sup>: Բազմաթիվ ժողովուրդներ որ-

<sup>24</sup> Ընդ որում, Միհր/Մհերի կերպարն էլ, իր հերթին, ծագում է ուրարտական Խալդիից: Այդ կերպարն է Հայաստանից անցել արևմուտք և հիմք դրել արևմտյան միթրաիզմի աստծուն: Իսկ Փոքր Մհերը հետագայում իր ազդեցությունն է ունեցել հարավային սլավոնների էպիկական մի հերոսի՝ Մարկո Կրավիչի, ապա և «քնած հերոսների» կերպարների ձևավորման վրա, տե՛ս Petrosyan A., Haldi and Mithra/Mher. – Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2006, 1, pp. 222–238; Петросян А., Влияние армянского Мгера на европейских героев:

<sup>25</sup> Տե՛ս Սիտալ Կ., Կաշտի քաջեր. Ամերիկահայ առաջադիմական միություն, 1942; Russell J., The Heroes of Kasht (Kašti k'ajer): An Armenian Epic. Ann Arbor, 2000.

պես իրենց ազգային էպոս են ընկալում նմանատիպ ստեղծագործություններ (Ռուսթավելու «Ընձենավորը», Հ. Լոնգֆելլոյի «Հայավաթան», Է. Լենրոտի «Կալևալան», Ա. Պոմպոյրի «Լաչպլեսիսը» են), և «Պարսից պատերազմի» ու «Տարոնի պատերազմի» կողքին, «Կաշտի քաջերն» էլ կարող է դիտվել որպես այդպիսին: Այն ևս, ի միջի այլոց, զուրկ է ծննդաբանական սխեմայից:

# ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՃՆՈՒԹՅՈՒՆ<sup>1</sup>

Տիեզերքն անսահման մեծ է, այնտեղ տեղի ունեցող գործողությունները՝ անսահման բարդ: Մարդը չի կարող իմաստավորել աշխարհը՝ առանց այն մոդելավորելու: Սա բնորոշ է ն՝ արխաիկ՝ առասպելաբանաստեղծական, ն՝ ժամանակակից մտածողությանը: Տարբերակվում են միայն մոդելավորման առասպելաբանական, կրոնական և գիտական մակարդակները: Բայց երևույթի իմաստավորումը թե՛ նախկինում, թե՛ այժմ, հաճախ կատարվում է մտածողությանը բնորոշ արքետիպերի հիման վրա, որոնք իրենց առավել պարզ դրսևորումներն ունեն առասպելներում:

Իրականության և առասպելի համադրությունը կոչված չի ժխտելու եղելությունների պատմականությունը: Ընդհակառակը, դա ավանդական հասարակության անդամի կողմից պատմությունն ընկալելու միակ ձևն ու հնարավորությունն է: Այդ մոտեցումը մինչև վերջերս գերակայում էր նույնիսկ Եվրոպայի, էլ չասած մյուս աշխարհամասերի բնակիչների մեջ<sup>2</sup>: Ինչ վերաբերում է XX դարի սկզբի հայությանը, ապա այն իր հսկայական մեծամասնությամբ պահպանել էր ավանդական և նույնիսկ վաղնջական կենսակերպն ու պատկերացումները:



Մարդ արարածն իր մտածողության յուրահատկության բերումով մշտապես, ամեն ինչում փնտրում է սկիզբը. երևույթը հասկանալու և գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել ծագումից

<sup>1</sup> Հողվածի նախնական, համառոտ տարբերակը գրվել է 1995-ին և հրատարակվել «Հայացք Երևանից» հանդեսում (1997 №4, էջ 43–54): Այլ ուսումնասիրողներ ևս առաջ են քաշել որոշ համահունչ տեսակետներ, տես R. Adalian. A Conceptual Method for Examining the Consequences of the Armenian Genocide. In: Problems of Genocide. Proceedings of the International Conference on “Problems of Genocide”. Cambridge (Massachusetts) and Toronto: The Zoryan Institute, 1997, p. 331, Л. Абрамян. Армения и армянская диаспора: расхождение и встреча. – Диаспоры, 2000, № 1–2, с. 60, 74, прим. 29:

<sup>2</sup> М. Элиаде. Космос и история. М., 1987, с. 129, 135.

սկայալ: Հատկանշական է, որ փիլիսոփայության և սկզբնական շրջանում դրանից չտարանջատված գիտության համար, դրանց ծագման իսկ պահից, իրականության էությունը, իմաստը հանգեցվել է «սկզբի» խնդրին՝ որպես ամենայնի բացարձակ աղբյուր և հիմք: Ցանկացած տեսակետ, որը փորձում է բացատրել տիեզերքի, երկրի, կյանքի ծագման հարցերը, որպես իրական սկզբնաղբյուր ունի ոչ թե իրերի օբյեկտիվ տրամաբանությունը, այլ «աշխարհի սկզբի» առասպելաբանական-կրոնական գաղափարը, որը ժառանգել են հետագա փիլիսոփայությունն ու գիտությունը<sup>3</sup>: Դա պայմանավորված է ոչ միայն մեր գիտելիքների թերությամբ, այլև առասպելաբանության և գիտության առաջադրած խնդիրների նմանությամբ ու մարդկային մտածողության առանձնահատկություններով:

«Սկզբի» առասպելները կարևորագույն տեղ են զբաղեցնում արխաիկ մարդու՝ առասպելաբանաստեղծական մտածողությամբ պայմանավորված աշխարհայացքի մյուս ձևերի շարքում: Մրանք կազմում են աշխարհի՝ տիեզերքի ծագման, այդ դարաշրջանի աստվածների ու հերոսների «սրբազան պատմությունները», որոնց հետևում է արդեն «մեր»՝ մարդկային դարաշրջանը: Տիեզերածնության առասպելները, որոնք բացատրում են բնության (մակրոկոսմ) առաջացումը, սերտ կապված են մարդու (միկրոկոսմ) ծագման՝ մարդածնության առասպելներին (առասպելներում հաճախ տիեզերքի կառույցը ծագում է մարդու մարմնի մասերից, և կամ մարդն է ստեղծվում տիեզերքի բաղկացուցիչներից): Սոցիալական ոլորտը՝ մարդկային հասարակության (մեզոկոսմ) կառուցվածքը և գործունեությունը, նույնպես առասպելաբանաստեղծական մտածողության մեջ պայմանավորվում են տիեզերածնության սկզբունքներով<sup>4</sup>:

Ընդհանրապես, ծագման և արարման ավանդություններն ու դրանց հետ կապված պատկերացումները ամենաառասպելականն

<sup>3</sup> В. И. Вернадский. Химическое строение земли и ее окружение. М., 1987, с. 313–314.

<sup>4</sup> Այս մասին տես օրինակ В. Н. Топоров. Космогонические мифы. – Мифы народов мира. Т. 2, М., 1982, с. 6, В. Lincoln. Myth, Cosmos, and Society. Cambridge (Massachusetts) and London, 1986, Նույնի՝ Death, War, and Sacrifice. Chicago and London, 1991:

են: Պատմական հեռանկարում արարչագործության տիեզերածին առասպելները վերածվում կամ փոխարինվում են նախնիների սկզբնավորման պատմություններով (ազգածնություն՝ էթնոգոնիա): Արխաիկ մտածողության մեջ, որտեղ աստվածների և մարդու միջև սահմանները դեռևս թափանցիկ են, արարչագործության առասպելի տարրերը՝ դիցածնությունը (թեոգոնիա), մարդածնությունը և տոհմական վեպը (էպոս), կարող են խառնված լինել տարբեր համամասնությամբ<sup>5</sup>:

Տիեզերածնության առասպելներում հաճախ հստակ սահմանագատվում են «սկզբից» առաջ եղած և դրան հաջորդած դարաշրջանները: Արարչագործությունը բնորոշվում է սրբազան «առասպելական ժամանակով», որի ընթացքում են տեղի ունենում ներկա իրադրությունը պայմանավորած և որպես նախադեպ ձևավորված երևույթները: Այն հակադրվում է մեր՝ ժամանակակից, աշխարհիկ, չնվիրագործված, անսուրբ (պրոֆան) ժամանակին: Զարգացած առասպելաբանություններում առասպելական ժամանակը կարող է դրսևորվել և՛ որպես դրախտային «ոսկե դար», երբ տեղի են ունեցել աստվածների, առաջին հերոսների ու նախահայրերի գործերը, և՛ որպես «նախնական» դարաշրջան, որին բնորոշ է անևությունը, քառսը: Նախնական և իրական ժամանակների «զծային» կապը վերաճում է ժամանակի ցիկլայնության պատկերացման՝ կապված բնության հավերժական ծերացման ու նորացման, կրկնվող սեզոնային ծեսերի ու դրանց դիցաբանական մարմնավորման՝ մեռնող և հարություն առնող աստվածների ու հերոսների առասպելների հետ<sup>6</sup>:

Մեռնող և հարություն առնող առասպելական կերպարներն իրականացնում են կապը անցյալի ու ներկայի, սրբազան ու ներկա ժամանակների, անմահ աստվածների ու մահկանացու մարդկանց միջև: Առասպելաբանական մտածողության մեջ իրական անցքերը կրկնում են առասպելական դարաշրջանի դեպքերը. այսպես, նոր հողերի գրավումն ու յուրացումը կրկնում են տիեզերածնությունը,

<sup>5</sup> J. Puhvel. Comparative Mythology. Baltimore, London, 1987, p. 21–22.

<sup>6</sup> Е. М. Мелетинский. Время мифологическое. – Мифы народов мира. Т. 1, М., 1980, с. 252–253.

ամեն պատերազմ՝ աստվածների կամ նախնիների կոիվը չար ուժերի ու վիշապների դեմ, անմեղի տառապանքը՝ մեռնող ու հառնող աստծու տանջանքները, ամեն մահ՝ «առաջնագոհի» և առաջնամարդու մահը և այլն:

Տիեզերածնությունը ամեն մի արարման, ստեղծագործության և ընդհանրապես էական գործողության օրինակելի մոդելն է: Առապելաբանական հայացքի համար տարածությունն ու ժամանակը համասեռ (հոմոգեն) չեն. տարածության և ժամանակի մեջ ամենաբարձր արժեքով՝ առավելագույն սրբությամբ օժտված է այն կետը, որտեղ և երբ կատարվել է արարչագործությունը, այսինքն «աշխարհի կենտրոնը»: Այն օժտված է կենտրոնի տարբեր խարհրդանիշներով՝ Աշխարհի առանցք, Տիեզերական ծառ, Տիեզերական լեռ և այլն, որոնք միացնում են երկիրը, երկինքը և ստորերկրայքը, և որոնց միջոցով են տեղի ունենում տիեզերքի այդ ոլորտների միջև անցումները: Տարածության սրբազան արժեքն ընկնում է այդ կետից հեռացմանը զուգընթաց: Տիեզերածնության պատկերացումների հիման վրա է ձևավորվում և արարչագործության երկրային պատկերը՝ ծեսը: Այն կրկնում է տիեզերածնության առաջին գործողությունները՝ «առաջնածեսը» և ժամանակագրորեն և տեղայնացմամբ համապատասխանեցվում «աշխարհի կենտրոնի» իր նախատիպին: Արխաիկ ծեսի հիմնական նպատակը «առաջնագոհի» սպանության և նրա մարմնի մասերից տիեզերքի կառուցման գործողության կրկնումն է<sup>7</sup>:



Հայ ժողովրդի համար այս պատկերացումները պետք է խարսխված լինեին նրա հավատքի՝ քրիստոնեության վրա: Ըստ Աստվածաշնչի, Աստված արարում է աշխարհը, իսկ հետո մարդուն և տեղադրում նրան Եդեմի դրախտային պարտեզում: Մարդկային ցեղի առաջին զույգը՝ Ադամն ու Եվան, Իմացության ծառի պտուղը ճաշակելու համար (առաջին մեղսագործություն) արտաքսվում են Եդեմից ու դատապարտվում մարդկային տառապալի գոյության: Անմեղության «ոսկե դարի» այդ պարտեզը տեղայնացվում է չորս

<sup>7</sup> В.Н.Топоров. О ритуале. Введение в проблематику. – Архаический ритуал в фольклорных и раннелитературных памятниках. М., 1988.

գետերի ակունքներում, որոնցից երկուսը գտնվում են Հայաստանում (Տիգրիս և Եփրատ), իսկ մյուս երկուսը չափազանց առասպելականացած են և դժվար տեղայնացվող: Այսինքն, արարչագործության առաջին առասպելն ու մարդկության առաջին տարածումը կարող են տեղայնացվել Հայաստանում, որը հանդես է գալիս որպես «աշխարհի կենտրոն»:

Աստվածաշունչն ունի արարչագործության նաև երկրորդ տարածամանակյա տարբերակը: Աստված, տեսնելով մարդկանց չարությունը, ջրհեղեղի միջոցով կործանում է մարդկությունը, բացի մի արդար մարդու՝ Նոյի ընտանիքից ու կենդանական աշխարհի մեկական գույգից: Նոյան տապանը հանգրվանում է Արարատ լեռան գագաթին, որը տեղայնացվում է Հայաստանում (Կորդվաց լեռ կամ Մասիս): Այստեղից է սկսվում մարդկանց երկրորդ տարաբնակեցումն աշխարհում՝ այստեղ է Աստվածաշնչի աշխարհի երկրորդ կենտրոնը: Այսպիսով, հայն այն ժողովուրդն էր, որը թեև ընդունել էր օտար երկրում ստեղծված նոր, համաշխարհային տարածում ստացած կրոնը, բայց հենց այդ կրոնի համաձայն կարող էր իր հայրենիքում տեղայնացնել և՛ աշխարհի ստեղծումն ու մարդածնությունը, և՛ աշխարհի կենտրոնն ու դրախտը, ինչը և կարող էր պայմանավորել Հայաստանի ու հայերի առանձնահատուկ, «Աստծո ընտրյալ» լինելու գաղափարը:

Հայաստանը, որպես Աշխարհի կենտրոն և Մարդկության օրրան, միշտ նշանակալի տեղ է գրավել կրոնական ու միստիկական պատկերացումներում: Ավանդական հասարակության անդամի համար տիեզերքը նեղ էր, պարփակված իր իմացության սահմաններում: Եվ հայերի կողմից աշխարհի կենտրոնի Հայաստանում գտնվելը պիտի ընկալվեր որպես սովորական մի բան: Բայց, հատկապես նոր ժամանակներում, այդ գաղափարը հատուկ շեշտվել է ավելի լայն աշխարհագրական սահմաններ ճանաչող և հայոց արժեքները վերածնող մտավորականների ու եկեղեցական հեղինակների կողմից (Մ. Չամչյան, Խ. Աբովյան, Ղ. Ալիշան և այլք): Հիշենք Խ. Աբովյանի տողերը՝ «Մասիս առաջին էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս, թե ինչ աշխարհի ծնունդ եմ ես, դրախտը մտքումն էր կենդանի, որ ինձ երագում թե լուրջ միշտ մեր երկրի անունն ու պատվակա-

նությունը իմ առաջ էր բերում... Եվրոպա թե Ասիա՝ ինձ անդադար ձեն էին տալիս, թե Հայկա զավակն եմ ես, Նոյան թոռը, էջմիածնա որդին, դրախտի բնակիչը»:

Թեև հնագույն հայկական առասպելաբանությունը շղարշվել էր սկզբում իրանական կրոնական պատկերացումների, ապա քրիստոնեության տարածմամբ, բայց հին հեղինակների երկերում պահպանվել են պատմական ավանդություններ, որոնց համադրությունը հնդեվրոպական այլ ժողովուրդների առասպելների հետ թույլ է տալիս բացահայտել բնիկ հայ առասպելաբանության որոշ դրվագներ: Առհասարակ, առասպելների պատմականացումը տարածված երևույթ է: Այն, հայկականին համեմատելի ձևով ի հայտ է գալիս, օրինակ, հռոմեական, սկանդինավյան և իռլանդական ավանդական պատմագրության մեջ, ուր որպես պատմական ներկայացվող դեպքերը ներկայացնում են հին հնդեվրոպական առասպելների վիպականացած արձագանքները<sup>8</sup>:

Արարչագործության առասպելի հայկական տարբերակն է հայոց առաջին նախնի Հայկի և նրա յոթ սերունդների ավանդությունը: Այն իրար է կապում է դիցաձևությունը, տիեզերածնությունը, ազգաձևությունը, ոչ բացահայտ կերպով կրելով մարդաձևության և հասարակության սոցիալական կառուցվածքը որպես նախադեպ ձևավորող առասպելների տարրեր: Այսպես, Հայկը և նրա հաջորդները ներկայացնում են հայոց աստվածներին (դիցաձևություն), նրանց անուններով են կոչվում լեռներ, գետեր, բնակավայրեր, ինչպես նաև աստղեր ու աստղախմբեր (տիեզերածնություն. անվանումն առասպելաբանության մեջ համապատասխանում է արարմանը), նրանց հետ են կապվում հայոց ցեղանունները (ազգաձևություն), նրանցից են սերում իշխանական որոշ տոհմեր (տոհմական վեպ): Հայկ նահապետի՝ երեք հարյուր այր ընդգրկող հսկայական ընտանիքն արտացոլում է հին հայոց տոհմի և նահապետական ընտանիքի կառուցվածքը: Գործողությունները տեղի են ունենում «Աստվածների դարաշրջանից» հետո, հսկա հերոսների ու կիսաստվածների ժամանակ, որին հաջորդում է մեր՝ իրական ժամանակը (ժամանակի տեր-

<sup>8</sup> Տես Մ. Դյումեզիլի և նրա հետևորդների աշխատություններում, օրինակ՝ J. Puhvel. op. cit., passim:

մինները ևս՝ ամիսները և օրվա ժամերը, կոչվել են իբր Հայկի որդիների ու դուստրերի անուններով): Առասպելաբանական շարքն ավարտվում է մեռնող ու հառնող Արա Գեղեցկով, որի մահվամբ վերջանում է Սրբազան ժամանակը և վերածննդով սկսվում մեր ժամանակը<sup>9</sup>:



Այս տողերի հեղինակի, ինչպես և հայ ժողովրդի մի ստվար մասի տոհմագրությունը սկսվում է 1915 թվականի ցեղասպանությունից: Այդպիսին է եղեռնի բազում որբերի ժառանգների «տոհմական վեպը»: Դրանից առաջ եղած սերունդների մասին հաճախ ուղղակի տեղեկություններ չեն պահպանվել: Նրանց համար, ովքեր եղեռնը վերապրել էին հասուն տարիքում, ժամանակը բաժանվում էր «մինչև գուլումը» և «գուլումից հետո» շրջանների: Առաջին դարաշրջանը՝ դրախտային հատկանիշներով բնորոշվող բուն հայրենիքում՝ արբազան «էրգրում», իսկ երկորդը՝ իրական, հետագա կյանքն էր՝ մարդկանց հաստատումը բնակության նոր վայրերում և գոյատևումը նոր պայմաններում: Եղեռնի ու գաղթի ճանապարհներին տարած տառապանքները, Արևելյան Հայաստանում ու արտերկրում հայության վերապրումը և Հայաստանի ու Սփյուռքի ձևավորումը պարզորոշ համադրվել են մեռնող ու հառնող կերպարների հետ (հմմտ. «փյունիկի պես վերածնված հայ ժողովրդի» մշտական թեման հայ գրականության ու հրապարակախոսության մեջ):

Հատկանշական է, որ բազմաթիվ ժողովուրդների ազգածին ավանդությունները սկսվում են առաջին նախահայրերի՝ իրենց բուն հայրենիքից արտաքսմամբ կամ հեռացմամբ (այդ ավանդությունները հաճախ արտացոլում են պատմական իրողությունները՝ ժողովուրդների գաղթերը, նվաճողի կողմից հին հայրենիքից դուրս մղումը և այլն, որը հաճախ շարունակվում է շղթայական սկզբունքով և ներառում հսկայական տարածքներ):

<sup>9</sup> Ա. Պետրոսյան. Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան, 1997, էջ 133–136, 143, Ա. Е. Петросян. Армянский эпос и мифология. Ереван 2002, с. 171–175:

Եղեռնը տեղի է ունեցել հայոց նախնական հայրենիքում՝ Աշխարհի կենտրոնում, «Երկիր դրախտավայրում»: Եղեռնին նախորդող իրականությունը տոհմական ավանդություններում համադրելի է անէության հետ: Եղեռնից հետո հայերը հաստատվեցին նոր վայրերում՝ տեղի էր ունենում մի նոր «տիեզերածություն»: Ձևավորվեցին Ափյուռքը և հայոց նոր պետականությունը (առաջին և երկրորդ հանրապետությունները): Ոչ միայն առանձին անհատներ, այլև ողջ ազգը համեմատվում էր մեռնող և հարություն առնող կերպարի հետ: Նախնական, նախաեղեռնյան ժամանակներում տեղի ունեցած պատմական անցքերը կարծես կրկնում էին աստվածների կամ առասպելական նախահայրերի կոիվները: Հատկանշական է, որ հայդուկների կերպարներն առասպելականացել էին՝ համադրվել մեռնող ու հառնող հերոսի հետ հենց ժամանակակիցների կողմից<sup>10</sup>, մինչդեռ դրա համար սովորաբար շատ ավելի երկար ժամանակ է պահանջվում<sup>11</sup>:

Կարելի է մանրամասն քննարկել հայոց ցեղասպանության, դրա հետևանքների և ազգաճնության ու առասպելական «սկզբի» պատկերացումների ընդհանրությունները, կետ առ կետ հիմնավորել համապատասխանությունները, բայց ասվածը միանգամայն բավարար է ցույց տալու այդ պատկերացումների և պատմական եղելության բացահայտ համադրելիությունը: Եղեռնը վերապրողների կյանքը, բնակության նոր վայրերում հաստատվելը (առասպելաբանորեն՝ նոր երկրների «տիեզերացումը») որպես հայոց պատմության և ինքնության նոր փուլի սկիզբ, ինչպես և ամեն սկիզբ, մարդկային մտածողության մեջ պետք է առասպելականանար, համապատասխանեցվեր եղած առասպելական կաղապարին՝ համադրվեր ազգաճնության հետ: Ընդ որում, հայոց ցեղասպանության դեպքում առկա են նաև այլ՝ կրոնական, աշխարհագրական և պատմական գործոններ, որոնք խորացնում են այդ համադրությունը:

Միաժամանակ, հարկ է նշել հետևյալ էական հանգամանքը: Ցեղասպանությունն ազգաճնություն է հակառակ նշանով: Տիեզերած-

<sup>10</sup> Ա. Պետրոսյան. Մեռնող և հարություն առնող հերոսը՝ հայդուկ. – Գոյամարտ 1991, № 4 (10):

<sup>11</sup> М. Элиаде. Նշվ. աշխ., էջ 55–64:

նության և ազգածնության առասպելներում հաղթում են «դրական», «յուրային», կարգավորությունը ներկայացնող աստվածներն ու նախնիները, սպանում իրենց հակառակորդներին, որոնք միշտ նույնացվում են անկարգությունը խորհրդանշող հրեշների, վիշապների ու թշնամի ցեղերի հետ<sup>12</sup> (հմմտ. Հայկի հաղթանակն իր թշնամի Բելի նկատմամբ՝ հայոց տիեզերածնության սկիզբը): Մինչդեռ, այս դեպքում հաղթել է չար սկզբունքի կրողը, և երկիրը մնացել է գերության մեջ:

Այս իրադրությունն առասպելաբանության մեջ մոդելավորվում է որպես դրական հերոսի վերջնական հաղթանակին նախորդած ժամանակավոր պարտություն, մահ, այց անդրաշխարհ (հմմտ. օրինակ Սասունցի Դավթի ժամանակավոր պարտությունը): Այսինքն, պարտությունը համադրվում է զոհվող աստծու մահվանը, որը պետք է վերածնվի: Մինչ այդ հաղթել է անկարգությունը, քաոսը, անարդարությունը:

Մյուս կողմից, թեև կործանվել է «մեր» տիեզերքը (Արևմտահայաստանը), բայց և ձևավորվել է նոր տիեզերք՝ Արևելյան Հայաստանը, սփյուռքի առանձին գաղութները և Սփյուռքն ամբողջությամբ: Այս նոր տիեզերքի նկատմամբ հնարավոր են տարբեր մոտեցումներ՝ դրան համակերպվելուց մինչև բացարձակ ժխտումը, անցումը մի մասից մյուսը, այն կարող է ընկալվել որպես ժամանակավոր մի էտապ և այլն<sup>13</sup>:

Առասպելական տիեզերածնությունների դասակարգումը թույլ է տալիս Տիեզերածնությունն ընդհանրացված ձևով բնորոշել որպես իդեալական մի նախասկզբի վերափոխություն իրական բազմակիության: Ընդ որում, այդ երևույթը պատկերացվում է իբրև վերին աստիճանի ողբերգական իրադարձություն՝ «առաջնասպանություն», զոհաբերություն, զոհի մասնատում<sup>14</sup>:

<sup>12</sup> М. Элиаде. Եղվ. աշխ., էջ 61:

<sup>13</sup> Հնարավոր է իրականության նաև հետևյալ ընկալումը՝ «մեր տիեզերքի» կործանումը հանգեցրել է թշնամական «հակատիեզերքի» առաջացմանը, որի դեմ պետք է պայքարել, կամ, այլ մոտեցման դեպքում՝ հակատիեզերքի գոյությունը պարտադրում է «հակավարքի» կանոններ:

<sup>14</sup> М. Евзлин. Космогония и ритуал. М., 1993, с. 172–173.

Ընդհանրապես, կայուն սփյուռքը հաճախ ձևավորվում է ողբերգական իրադարձությունների հետևանքով: Ցեղասպանությունը որպես տիեզերածնություն և ազգածնություն հանդես է գալիս հատկապես հայկական սփյուռքի դեպքում, քանի որ հենց ցեղասպանության հետևանքով և դրանից հետո ձևավորվեցին հայոց նոր ժամանակների կարևորագույն գաղութները՝ Մերձավոր Արևելք, Ֆրանսիա, ԱՄՆ և այլն (հայոց նոր «տիեզերքները»): Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի և Պարսկաստանի հայերի համար ցեղասպանությունը «բացարձակ» ազգածնության նշանակություն չունեցավ, բայց էականորեն փոխեց նաև նրանց ժողովրդագրական ու քաղաքական դրությունը և սկիզբ դրեց ազգագոյացման ու ինքնության նոր փուլի:



Տիեզերածին և ազգածին ավանդությունները, որոնք վերարտադրվում են այլ տիպի առասպելաբանական և բանահյուսական տեքստերում, գրականության մեջ, անվերջ կրկնվելով տարբեր մակարդակներում, փոխանցվում են սերունդներին՝ ապահովելով տվյալ ազգի, էթնոսի, հասարակության պահպանումը: Ծեսերը կրկնում, վերարտադրում են տիեզերածին և ազգածին սխեման և այդ առասպելների համապատասխանություններն են ծիսական մակարդակում: Դա պարզորոշ երևում է Սփյուռքում, որտեղ բոլոր նշանակալի հանդիսությունների ժամանակ ոգեկոչվում է Եղեռնը:

Հատկանշական է, որ ժամանակակից ազգաբանական տեսություններում, որպես ազգի գոյության պարտադիր նախապայման, շեշտվում է մարդկանց տվյալ խմբի ընդհանուր առասպելների և հիշողությունների դերը<sup>15</sup>: Ազգածին ավանդության կորուստը, այսպիսով, հավասարագոր է էթնիկ ինքնության կորստի: Ըստ այդմ, Եղեռնի մոռացումը կարող է հանգեցնել սփյուռքահայ ինքնության և Սփյուռքի կորստին: Այս գործընթացի արագացման դեպքում միանգամայն ծանր կլինեն հետևանքները նաև մյուս հայ հանրությունների

<sup>15</sup> Տես օրինակ J.Armstrong. Nations before Nationalism. Chapel Hill, 1982, chap. I; A.D.Smith. The Nation in History. – Historiographical Debates about Ethnicity and Nationalism. Hanover 2000, p. 16:

համար, որտեղ Եղեռնը հանդես է գալիս որպես երկրորդային ազգածնություն:

Անկասկած է՝ ցեղասպանության թեմայի չարչրկումը կարող է հանգեցնել բարդությունների ու հոգեկան վնասվածքների: Բայց բացասական հետևանքների կարող է հանգեցնել նաև մոռացումը: Այսպիսով, մեր ժողովրդի և պետության առջև կանգնած ամենատեղական խնդիրներից են, թե ինչ ձևերով և ինչպիսի ուղղվածությամբ պիտի եղեռնի թեման արծարծվի ոչ միայն քաղաքականության, այլև գիտության մեջ, դպրոցում, հասարակական կյանքում և արվեստում:

Նախնիների տառապանքը, անմեղ զոհերի հիշատակը և հերոսների սխրանքներն ամենուրեք արժևորվում են որպես հոգևոր ինքնամաքման և վեհացման գործոններ: Անցյալի հիշողությունը, ճիշտ մոտեցման դեպքում, կարող է ոչ թե հոգեկան բարդությունների ու հասարակության հիվանդության պատճառ դառնալ, այլ վերածվել ազգապահպան հզոր զենքի՝ բարոյական ուժի աղբյուրի, որը ժողովրդին կօգնի դիմագրավել զրկանքները և նոր բարձունքներ նվաճել:

## ՖԻԴԱՅՈՒ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՉ<sup>1</sup>

Երևույթը ժողովրդական պատկերացումներում բացահայտելու գործում հաճախ կարևոր նշանակություն ունի նրա անվանումը: Հայդուկ-ֆիդայիները երբեմն, հատկապես սկզբնական շրջանում, կոչվել են *դաշադ*, ինչպես որ նույն կերպ *Κλέφτες* «ավազակ» են կոչվել հունական հայդուկները: Հիշենք այնպիսի բանահյուսական, գրական և իրական «դրական» ավազակների, ինչպիսիք են անգլիական Ռոբին Հուդը, պոլվակյան Յանոշիկը, Շիլլերի Կառլ Մոորը: Հենց այդպիսի մի կերպար էր հայ հայդուկային շարժման նախակարապետը՝ Արաբոն: Բայց հայ հայդուկները հիմնականում կոչվել են *ֆեդա*, *ֆիդա*, *ֆիդայի*, *ջան ֆիդա* անվանումներով, բառեր, որոնց նախնական իմաստը թուրքերենին չտիրապետող ժամանակակից հայի համար անհայտ է: Թուրքերենում *ֆեդա*, ավելի հազվադեպ՝ *ֆիդա*, նշանակում է «զոռ», «անձնագոհություն», *ֆեդայի ջան* (որտեղ *ջան*-ը նշանակում է «հոգի, ոգի, կյանք»)՝ «կյանքը գոհաբերելը», «ինքնագոհություն»:

Ֆիդային արաբական (մուսուլմանական) տերմին է, որով կոչվում են հավատի, գաղափարի համար իրենց գոհաբերողները: Մի երգում ասվում է՝ «դուշմանը մեզ տվեց ջան ֆիդա» անուն: Մինչև այժմ էլ Առաջավոր և Միջին Արևելքի մուսուլմանական երկրներում երբեմն այդպես են անվանվում սոցիալական, սոցիալ-կրոնական, ազգային-ազատագրական և ազգայնական զինված պայքարի մասնակիցները (հմմտ. պաղեստինցի ֆիդայիներին):

Պատմականորեն ֆիդայիներ՝ «հավատի համար իրենց գոհաբերողներ» են կոչվել իսմայիլյանների 11-12-րդ դարերի պետության հատուկ հավաքագրված և դաստիարակված, շեյխի կամքը կուրորեն կատարող մոլեռանդ նվիրյալները, որոնց հանձնարարվում էին տեռորիստական գործողություններ սելջուկյան կառավարողների, նրանց ծառայող իրանական պաշտոնյաների և ընդհանրապես անցանկալի անձանց դեմ:

<sup>1</sup> Հոդվածի նախնական, համառոտ տարբերակը տես Ա. Պետրոսյան. Մեռնող և հարություն առնող հերոսը՝ հայդուկ. Գոյամարտ (շաբաթաթերթ), 1991, 4:

Այսպիսով հայ հայդուկները կոչվել են «գոհեր», «խրենց կյանքը գոհաբերողներ»: Այդպես է կոչել հայդուկներին թշնամին, այդպիսին է պատկերել ժողովուրդը հայդուկին իր երգերում («ազգի մատաղ իմ տղեն», «դու հայրենյաց սեղանի գոհ»)<sup>2</sup>, և այդպիսին է համարել իրեն հայդուկն ինքը, որը երգվում էր գոհվել հայրենիքի, ժողովրդի համար ու իր հետ պատանք էր ման ածում:

Ջոհաբերության ծեսը և գոհաբերությունը խորապես ուսումնասիրվել են ժամանակակից ազգագրության և առասպելաբանական գիտության մեջ<sup>3</sup>: Չմոնելով մանրամասների մեջ՝ այստեղ կարևոր է հիշատակել հետևյալը: Ջոհաբերությունը ցանկացած ծեսի կենտրոնական իրադարձությունն է, որն ընդհանրապես կատարվում է որոշակի ճգնաժամային իրադրություններում: Այն «սեփական տիեզերքի» պահպանման և նրա փլուզման կանխարգելման հիմնական գործողությունն է: Բարձրագույն գոհաբերությունը մարդու, սեփական ցեղի ներկայացուցչի կյանքն է, երբ ցեղը գոհաբերում է ոչ թշնամուն, այլ իր անդամին, ինչպես մայրը՝ իր որդուն, պահպանելու տիեզերական կարգը քառսի ներխուժումից: Ցանկացած գոհաբերություն համադրվում է «նախագոհի», այսինքն առաջին անգամ գոհ բերված առասպելական կերպարի հետ: Հնդեվրոպական և շատ ուրիշ ժողովուրդների առասպելաբանության մեջ այդ «նախագոհի» կերպարը հանգում է այսպես կոչված «հիմնական առասպելի» աստծո որդու կերպարին, որը գոհվում է և հետո հարություն առնում նոր, ավելի բարձր անձնավորմամբ, վերահաստատում տիեզերական կարգը՝ իր հետ բերելով արդարության երկնային կյանք, բարօրություն, հաջողություն, առատություն և այլն<sup>4</sup> (տիպիկ այդպիսի կերպարներ են Օսիրիսը, Դիոնիսոսը, Քրիստոսը, հայկական ավանդության մեջ՝ Արա Գեղեցիկը, Արտավազդի դրական տարբերակը, Մհերը):

2 Մեջբերումները բերվում են ըստ Ա. Ղազիյանի հրատարակած «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր» (Երևան 1989) աշխատության:

3 Ջոհաբերության՝ որպես մշակույթի հիմքում ընկած երևույթի վերաբերյալ տես հատկապես Р. Жирар. Насилие и священное. М. 2000, քննարկվող առասպելաբանական համատեքստում В. Н. Топоров О ритуале. Введение в проблематику – Архаический ритуал в фольклорных и раннелитературных памятниках. М., 1988.

4 «Հիմնական առասպելի» վերաբերյալ տես հատկապես Иванов В. В., Топоров В. Н. Исследования в области славянских древностей. Москва, 1974.

Հայդուկային երգերում առանձնացվում են հետևյալ պահերը՝ հրաժեշտ մորը, ամուսնությունը գենքի ու մահվան հետ, ազգին գոհ գնալը, ազգին կամ ընկերոջն ուղղված օգնության կոչը, գերեզմանի մոտիվը, հերոսի հարության կոչը, վրիժառության կոչը, երկնային փառքի արժանացումը: Հայդուկը կոչվում է քաջ, հերոս, համեմատվում է համարյա միշտ առյուծի հետ («առյուծի պես կանգնել ես», «ձեզ պես կորյուն աննման»), «Մաքո ջան, ջան Ասլան ջան»), հազվադեպ՝ աշուղ, բլբուլ («Հայրենիքի սիրո համար աշուղ երգիչ եմ դառել», «Ախ անբախտ հայդուկիս, տեր իմ, դու խղճա, յարալի բլբուլ եմ»), արծիվ («ոբպես արծիվ սավառնում ես»), արեգակ («զինվորաց մեջ նա արեգակ»), հիշվում է նրա ձին, գենքը, յարը: Թշնամու մշտական մակդիրն է շունը («շուն թուրք»), համեմատվում է նաև օձի հետ, կոչվում է սատանա, գազան, սուլթանը՝ Կարմիր գազան:

Ինքնագոհաբերությունը հայդուկի համար պարտք է և բարձրագույն բավարարություն («Ես կուզեմ կովել, ես կուզեմ մեռնել», «կամ մեռնիմք, չըլլանք մենք ազգին ծանակ, կամ հաղթիմք, լինիմք հայ ազգին պարծանք»): Այստեղ հայդուկային երգերը նշանակալիորեն տարբերվում են գլխավորապես ողբ ու կոծից բաղկացած զինվորական երգերից («երանի մեռնեի ծնվածս օրը», «մայրիկ ջան, մայրիկ, ինչո՞ւ բերեցիր», «փախեք տղեք, փախեք, գերման եկավ ուր պուկով»): Պարզ է, զինվորին տանում են բռնությամբ, օտար բանակ, ոչ իր հայրենիքի համար կովելու: Հայերի՝ ռուսական բանակ զինվորագրությունը երկար ժամանակ զինվորական ծառայություն չտեսած ժողովրդի համար աղետ էր համարվում: Նույնիսկ ռուսական, այսինքն կայսերական ազգի զինվորական երգերի մեջ բազմաթիվ են ողբ ու կոծի երգերը, իսկ ողբի երգերի մի տեսակը կոչվում է գորակոչիկային՝ рекрутские причитания<sup>5</sup>:

Իսկ հայդուկային երգերը: Այստեղ հերոսի գոհվելու օրը կոչվում է տոն, գատիկ, օրհնյալ օր («Տոն է բազմաշխատ Գևորգ Չավուշին», «Հայոց քաջորի գատիկն էր», «Քո սիրած Սերոբին օրհնյալ օրն այս է»): Բազմաթիվ լեզուներում ծես, տոն նշանակությամբ բառերի նախնական իմաստն է «գոհ»: Հենց *չուն* (հնում՝ *չանն*) բառը ծագում

<sup>5</sup> Մ. Աբեղյան. Ժողովրդական խաղիկներ. Երևան, 1940, էջ 18, Ա. Ղազիյան. Նշվ. աշխ., էջ 40–41:

է հնդեվրոպական \*dap-ni- նախաձևից և ստուգաբանորեն նշանակում է «զոհ, զոհաբերություն», և հետնաբար միայն՝ «տոն, հատկապես Քրիստոսի հարության տոնը»: Այսինքն՝ այստեղ ևս ժողովրդական մտածողությունը հերոսի մահը հանգեցնում է նրա վերածնության, հարության գաղափարին, նույնացնելով նրան վերածնվող դիցաբանական կերպարի հետ: Երգերում ուղղակի նշվում է հայդուկի վերածնության, դրախտ մտնելու գաղափարը («Թե կսպանվես մեր հայ ազգին, դու կհասնես երկնի փառքին», «արժանի լինինք փառաց պսակին», «ամպեր գոռացին, շնթեր արձակվեց, /դրախտի ճամբան արյամբ ողողվեց»), կամ նրա հարության իղձ, ցանկություն է հայտնվում, կոչ արվում վերածնության («Ելիր, ելիր, Մերոբ ջան», «Վեր կաց գերեզմանից, Անդրանիկ փաշա», այստեղ ուղղակի համեմատություն կարելի է անել իր գերեզմանից՝ Ագոավի քարից Փոքր Մհերի կամ Մասիսից՝ Արտավազդի սպասվելիք գալստյան հետ): Առյուծը, արեգակը, բանաստեղծը իր աշուղ և բլրուլ տարբերակներով, որոնց հետ համեմատվում է հայդուկը, առաջավորապես կան մեռնող և հարություն առնող աստվածների խորհրդանիշները և անձնավորումներն են: Առյուծը խորհրդանիշն էր արևի աստված Միթրայի, հրեական մեսիայի՝ առյուծասպան Դավիթ թագավորի, «առյուծաձև» Առյուծ Մհերի, եգիպտական Օսիրիսի, հունական Դիոնիսոսի, իսկ քրիստոնեության մեջ առյուծը և արեգակը Քրիստոսի խորհրդանիշներն են: Բանաստեղծ-գուսան-երգիչ և նրանց հովանավոր դիցաբանական կերպարներ են նույնպես մեռնող և հարություն առնող գերմանական Օդինը, հունական Ապոլոնը, Դիոնիսոսը, Օրփեոսը, հրեական Դավիթը:

Շունը որպես թշնամու մշտական մակդիր, որը հայ իրականության մեջ հնագույն արմատներ և հիշատակություն ունի («շուն» է անվանում Հայկը Բելին), ևս բնորոշ է հիշյալ առասպելությոթին<sup>6</sup>: Շունը ատելի թշնամու արհամարհական մակդիրն է, բայց նա նաև մահվան խորհրդանիշն է, ինչպես հունական Կերբերոսը՝ Հադեսի մահ-

<sup>6</sup> Թշնամու համեմատությունը շան հետ շատ ավանդություններում կապվել է հնդեվրոպական «շուն սպանող» ռազմիկ աստծու առասպելությոթի հետ, տես В.В.Иванов, Древнебалканский и общеевропейский текст мифа о героубийце пса и евразийские параллели. – Славянское и балканское языкознание.

վան թագավորության հսկիչը, անդրաշխարհում մեռնող և հառնող հերոսների մշտական ուղեկիցը, ինչպես հայկական Արտավազդի, վրացական Ամիրանիի, արխազական Արբակիլի շները: Թշնամուն արհամարհաբար «շուն» կոչելը արհամարհանք է նաև մահվան, որի խորհրդանիշն էր շունը, նկատմամբ:

Օձը, չար ոգին, սատանան, հրեշ գազանը որոշակի դիցաբանական կերպարների (Ապոլոն, Միթրա, Մհեր, Դավիթ և այլն) հակառակորդներն են: Այս համեմատություններն ու անձնավորումները՝ առյուծ, արեգակ, աշուղ, շուն, օձ, սատանա, միանգամայն հասկանալի և նույնիմաստ են հայ և ոչ միայն հայ, այլև համընդհանուր բանահյուսական և գրական համատեքստում, բայց պետք է գիտակցել, որ և՛ մեր, և՛ այլ ժողովուրդների մոտ նման խորհրդանիշները շարունակում են մինևույն՝ հին աշխարհի քաղաքակրթությունն ու ավանդները և հասկանալի դառնում, բացատրվում այդ քաղաքակրթության իրողությունների շրջանակներում:

Հայդուկների հովանավորն էր սուրբ Կարապետը, այսինքն քրիստոնեական Հովհաննես Մկրտիչը, որը գոհ է գնում Հերովդեսի խորթ դստեր չար կամքին: «Մշո սուլթան», սուրբ Կարապետը հայության, մանավանդ Տարոնի՝ Մշո դաշտի հայության պաշտպանն էր: Նա նաև մարտնչող ըմբիշների և կյանքը վտանգող լարախաղացների հովանավորն էր, մարդկանց շնորհներ բաշխողը, հատկապես երաժիշտ-աշուղների սուրբը: Այս քրիստոնեական կերպարը շարունակում է բազմաթիվ քաջագործությունների հերոս, արևի և քաջության աստված վիշապաքաղ Վահագնի պաշտամունքը Մշո դաշտում: Հիշենք հներին՝ «գԱրեգակն պաշտեցին և Վահագն կոչեցին» և «քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէ Վահագնէ»<sup>7</sup>, ընդ որում Մովսես Խորենացին Վահագնի քաջագործությունները կոչում է *նահապարկություն* բառով, որի մյուս, ներկայումս ավելի հայտնի իմաստն է

---

Карпато-восточнославянские параллели. М. 1977, с.210–211: Հայկի և Բելի համապատասխան դրվագի վերաբերյալ տես Ա. Պետրոսյան. Հայկ նահապետը համեմատական առասպելաբանության լույսի տակ. – Հնորի ի վերուստ. առասպել, ծես, պատմություն. Հոդվածների ժողովածու նվիրված Մարգիս Հարությունյանի ծննդյան 80-ամյակին. Երևան 2008, էջ 14–15:

<sup>7</sup> Վահագնի և սուրբ Կարապետի ժառանգորդության և համապատասխան գոր-

«մարտիրոսություն»: Հատկանշական է, որ հայդուկների մարտերի մի նշանակալի մասը կենտրոնացած էր հատկապես Սասունում և հարակից Տարոնում, հանրահայտ է նաև նշանավոր սրբավայր Մշո Առաքելոց վանքի կոիվը, որը նույնպես հայդուկների մարտը սրբագործող և Մշո դաշտի սրբությունների հետ կապող պատկերացումներ պետք է առաջացնեն:

Հայդուկապետ Անդրանիկի մասին կան առասպելախառն գրույցներ, որոնք նրան մոտեցնում են էպոսի հերոսներին: Ըստ լեգենդի՝ Անդրանիկին կնքել է ձիավոր սուրբ Գևորգը՝ նույնպես վիշապամարտիկ, մեռնող և հառնող հերոս, նա էպոսի հերոսների պես մարմնի վրա մսե խաչ, կամ շորերի մեջ խաչ ուներ, անխոցելի էր թշնամու համար և մարտից հետո թափ էր տալիս շորերում կուտակված գնդակները, նրան, ինչպես և Սասունցի Դավթին, կարող էր սպանել միայն ազգակցի ուղարկած գնդակը, նա Դավթի պես, ձեռքը ձիու վրա դնելով, ձիուն կռացնում էր, վիրավորվելուց հետո ջրում լողալով վերածնվում և այլն<sup>8</sup>: Չէ՞ որ Անդրանիկը գործում էր Սասունում, որտեղ դեռևս կենդանի էին Սասնա ծոերի և հերոսական ոգին և այդ ոգին երգող ժողովրդական քնարը: Մի երգում իրականում սևահեր Անդրանիկն անվանվում է «ոսկեթել մազերով», այսինքն այնպես, ինչպես պատկերացվել են, օրինակ, արևի և ամպրոպի աստվածները ամենուրեք և բազմաթիվ հերոսներ «սևահեր» ժողովուրդների առասպելներում, ինչպես հունական Մենելաոսը, Ոդիսևսը, հրեական Դավիթը, հնդկական էպոսի՝ «Մահաբրահատայի» սերունդը և այլն, հիշենք վիշապաքաղ Վահագնին, որը «հուր հեր ուներ, բոց ուներ սօրուս, և աչկունք էին արեգակունք»:

Հայդուկների մականունները ևս որոշակի ժողովրդական-բանահյուսական, այսինքն իրենց ակունքներում՝ առասպելական մտածողության արտահայտություններ են: Այսպես, *աղբյուրը*, որը հանդես է գալիս որպես Սերոբի մականուն, նշանակալի դեր ունի բազմա-

---

ծառայությունների մասին տես Ս. Հարությունյան. Հայ առասպելաբանություն. Բեյրութ 2000, էջ 137 հուն. Վահագնի բարդ կերպարի վերաբերյալ՝ Ա. Պետրոսյան. Հայկական դիցարանի հնագույն ակունքները. – Պատմա-բանասիրական հանդես, 2004, 2, էջ 212–214:

<sup>8</sup> Այս տեղեկությունների համար ես երախտապարտ եմ Սարգիս Հարությունյանին (բանավոր հաղորդում):

թիվ ժողովուրդների առասպելներում: Հատկանշական է Իսահակյանի՝ Աղբյուր Սերոբին նվիրված, իր արմատներով խորապես ժողովրդական բանաստեղծությունը՝ «Միայն Սերոբի աղբյուրը սրտի / Խեղճ ժողովրդի սրտի մեջ կերթա»: Հեղինակն ասես Սարգիս Կուկունյանին նվիրված երգի մոտիվով՝ «Օտար արծիվը քրքրելու է քո դիակ», մի նոր առասպել է ստեղծում, որտեղ Նեմրոսի ժայռին նստած արծիվը Սերոբի սիրտը կտցին երգում է նրա մահը. «Ես եկա, հասա, սիրտդ հանեցի, / Որ գեշ դուշմանին փայ-բաժին չըլնի», իսկ սիրտն էլ համեմատվում է արևի հետ: Այս պատկերները հիշեցնում են շղթայված Պրոմեթևսի, որին քրքրում է արծիվը, առասպելը, ընդ որում, կովկասյան Պրոմեթևսը մի գուգորդն է հայկական «շղթայված» Արտավազդի:

Շատ հայդուկների մականուններ՝ Առյուծ Ավագ, Կայծակ Առաքել, Դժոխք Հրայր, Նիկոլ Դուման, պարզ առասպելական անվանումներ էին ժողովրդի, և հաճախ նաև հենց իրենց՝ հայդուկների համար: Հայդուկների խմբերի անունները ևս՝ «Կայծակ», «Մրրիկ» կարող էին և պետք է որ մեկնաբանվեին միևնույն առասպելա-բանահյուսական կադապարների համատեքստում (հմմտ. ամպրոպի և փոթորկի աստվածների՝ հաճախ ռազմական հատկանիշներ ունենալը):

Ժողովրդական հերոսի համադրությունը մեռնող և հարություն առնող աստծո, դիցաբանական հերոսի հետ միայն հայկական երևույթ չէ, այլ հատուկ է քաղաքակրթության որոշակի մակարդակ և համապատասխան մշակութային անցյալ ունեցող նաև այլ ժողովուրդների: Այստեղ հայկականը միայն մեր բանահյուսությանը բնորոշ որոշակի լեզվական, առասպելա-բանաստեղծական և կերպարային առանձնահատկություններն են: Օրինակ, այլ քրիստոնյա ժողովուրդների ռազմիկ հերոսների հովանավորը ոչ թե Հովհաննես Մկրտիչն է, կամ սուրբ Սարգիսը, այլ սուրբ Գևորգը: Իսկ հայդուկների՝ Տարոնի առասպելների հետ կապը շարունակում է տեղի մեծ հերոսների՝ Մամիկոնյան նախարարների ավանդույթը: Սուրբ Կարապետը, իսկ նրանից առաջ՝ Վահագնը Մամիկոնյան նախարարական տան պաշտպաններն էին: Մամիկոնյան հերոսների որոշ բանահյուսական կերպարներ ուղղակի ներկայացնում են Վահագնի

վիպականացված կերպարը: Այսպես, «Քաջ Վարդան» և «Գայլ Վահան» անվանումները ակնհայտորեն կապված են Քաջ Վահագնի՝ գայլային ռազմի աստծու կերպարի հետ, ընդ որում, այդ հերոսների անունները, նույնիսկ անկախ ստուգաբանությունից, Վահագն անվան անագրամներ են: Ըստ Փավստոս Բուզանդի (V.36), զոհված Մուշեղ սպարապետի գլուխը կտրելով կցել են իրանին և հանել մի աշտարակի երդիկը, ասելով. «Որովհետև քաջ մարդ էր, արալեզները կիջնեն ու սրան կկենդանացնեն», այսինքն զոհված հայ հերոսը համադրվել է մեռնող և հարություն առնող հերոսի՝ այս դեպքում՝ Արա Գեղեցիկի հետ, որին լիզելով պիտի կենդանացնեին շնակերպ արալեզները: Հատկանշական է, որ Վահագնի բնիկ հայկական նախորդը, կարծում են, որ եղել է Արա Գեղեցիկը<sup>9</sup>:

Գարեգին Նժդեհը (որի կերպարը ևս ձեռք էր բերել առասպելական հերոսի գծեր) ունի տողեր՝ նվիրված Սիմոն Զավարյանին, որտեղ ժողովրդի համար ինքնագոհությունը մարդուն հավասարեցնում է աստծուն:

Զոհաբերիր, զոհաբերիր անվերջ, առանց մնացորդի,  
Զոհաբերիր ու տանջվիր՝ բավականության լուսավայլ ժպիտդ երեսիդ...  
Եվ դու կմոտենաս Աստծուն, դու կդառնաս մարդ աստված...

Այդպես է պատգամում իմ մարգարեն իր աստվածաշունչ խոսքը և հոգիս՝  
նրա հրեղեն պատգամներին գերի, վեհորեն իր թևերն է պարզում...

<sup>9</sup> Ա. Մատիկյան. Արա Գեղեցիկ. Վիեննա 1930, էջ 237, Ն. Ադոնց. Հին հայոց աշխարհայացքը. Պատմական ուսումնասիրություններ. Պարիս, 1948, էջ 265–266, А. Е. Петросян. Армянский эпос и мифология. Ереван, 2002, с. 95, Ա. Պետրոսյան. Տիգրան Մեծի առասպելաբանական կերպարը. – Պատմա-բանասիրական հանդես. 2008, 2, էջ 167–168:

# ՀԱՅՈՑ ԵՆԹԱԵԹՆԻԿ ԲԱԺԱՆՄԱՆ ՇՈՒՐՁ<sup>1</sup>

Ազգագրական Էտյուդ

## ՍՓՅՈՒՐԸ

1991 թվականին լինելով ԱՄՆ-ում, հիմնականում Լոս Անջելեսում, ես ծանոթացա բազմաթիվ սփյուռքահայերի հետ և որոշակի կարծիք կազմեցի տեղի հայկական գաղութի մասին: Ստորև ներկայացնում եմ իմ դիտարկումները:

1. Որևէ սփյուռքի, և մասնավորապես հայկական սփյուռքի համար առավել էական տարբերակիչ հանգամանքը և կողմնորոշման հիմնական ցուցիչը կարելի է համարել հայրենիքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Մինչև դարաբաղյան շարժումը և Հայաստանի անկախությունը այն կարելի էր բնորոշել այսպես.

Ա. Դրական վերաբերմունք առ հայրենիքը՝ անկախ այնտեղ իշխող վարչակարգից և համագործակցություն հայաստանյան կառույցների հետ:

Բ. Բացասական դիրքորոշում հայրենիքի՝ որպես ԽՍՀՄ մի հատվածի նկատմամբ և համագործակցության բացակայություն:

Առաջին մոտեցումը բնորոշ էր սփյուռքի երեք առաջատար կուսակցություններից՝ ռամկավարներին ու հնչակյաններին, իսկ երկրորդը՝ դաշնակցականներին, նրանց հետևորդներին, հարողներին ու համախոհներին: Պարադոքս է, բայց պատմական պատճառներով ԽՍՀՄ- և Հայկական ԽՍՀ-ի հետ համագործակցում էին ազատական ռամկավարները և չէին համագործակցում սոցիալիստ, բայց հակակոմունիստ դաշնակցականները: Այս հակադրությունը տարածվում էր այլ ուղղություններով՝ ասենք, էջմիածնական եկեղեցիները հակադրված էին անթիլիասականներին և այլն:

Սա հայկական սփյուռքի հիմնական ներքին հակադրությունն էր: Սփյուռքի ողջ կառույցը ձևավորվում էր այս հակադրության վրա: Հակադրությունից դուրս սփյուռքահայերը, կարելի է ասել, որոշ չափով դուրս էին սփյուռքի կյանքից:

<sup>1</sup> Հոդվածի նախնական, համառոտ տարբերակը տե՛ս Ա. Պետրոսյան, Դիտարկումներ հայոց ենթաէթնիկ բաժանման վերաբերյալ. Հայ էթնիկությունը սեփական և այլազգի միջավայրում. Երևան, 2014, էջ 94–101:

2. 1980-ականներից վիճակը փոխվել էր: Սփյուռքը համալրվել էր նշանակալի քանակությամբ նոր հայ ներգաղթյալներով: Սրանց մեջ առավել աչքի ընկնող և նոր խումբը հայաստանցիներն էին: Բացի այդ, նորանոր խմբեր էին ներգաղթել Մերձավոր Արևելքից՝ Լիբանանից, Իրանից և այլն, որոնք որոշակի փոփոխությունների էին ենթարկել եղած գաղութը: Ղարաբաղյան շարժումից և անկախության հռչակումից հետո սփյուռքի մի հատվածի՝ դաշնակցականների և նրանց հարողների բացասական վերաբերմունքը հայրենիքի նկատմամբ կորցրել էր իր հիմքը: Բոլորը դարձել էին հայաստանամետ:

3. Սփյուռքի կառույցի ձևավորման համար անհրաժեշտ քաղաքական հակադրությունը վերացել էր: Այդ իրադրության մեջ անհրաժեշտաբար առաջին պլան պիտի մղվեր մեկ այլ հակադրություն, որի շուրջը կձևավորվեր կառույցը: Եվ այդ հակադրությունը դարձավ հայերի ենթաէթնիկ բաժանումը, ըստ այն երկրների, որտեղից նրանք ներգաղթել էին ԱՄՆ:

Ա. Մի քանի սերունդ ԱՄՆ-ում բնակվող բուն ամերիկահայեր: Սրանք հիմնականում դուրս էին մյուսների կյանքի սովորական իրողություններից (գետտոյական կյանք անկախվերում, ԱՄՆ իրականության մեջ հաստատվելու պայքար և այլն):

Բ. Մերձավոր արևելքի տարբեր, հատկապես արաբական երկրներից ներգաղթածներ, որոնց լեզուն արևմտահայերենն է (այդ թվում՝ պոլսահայեր),

Գ. Պարսկահայեր, որոնց լեզուն արևելահայերենն է, բայց հայաստանյանից տարբերվող առոգանությամբ և ուղղագրությամբ,

Դ. Հայաստանցիներ (1988-ից հետո՝ նաև աղբբեջանահայեր):

Այս խմբերի մեջ կային որոշակի հակասություններ՝ լեզվական, մշակութային, քաղաքական, ամերիկյան հասարակության մեջ գրաված դիրքի և այլն (ասենք, պարսկահայերի մեծագույն մասը հարում էր դաշնակցությանը, բուն ամերիկահայերը լրիվ կայացած էին որպես ամերիկացիներ և այլն):

4. Սփյուռքում մյուսներից բոլորից շատ տարբերվում էին հայաստանցիները: Նրանք բոլորից վատ գիտեին անգլերեն, բոլորից լավ՝ Հայաստանը և հայերեն (նրանց պետք չէր ջանք թափել հայա-

պահպանության համար, նրանք այդ խնդիրը չէին ունեցել), բոլորից վատ էին հարմարված «կապիտալիստական» հարաբերություններին, եկել էին նախկինում արևմտյան աշխարհի հակառակորդ երկրից՝ ԽՍՀՄ-ից և մշակութային առումով հակված էին դեպի Ռուսաստանը: Եվ ԱՄՆ սփյուռքահայերի ենթաէթնիկ բաժանման հիմնական առանցքը դարձել էր հայաստանցի–ոչ հայաստանցի բաժանումը: Թեև, իհարկե, կային նաև այլ ներքին հակասություններ (օրինակ, էջմիածնական և անթիլիասական եկեղեցիների հակադրությունը): Այստեղ ևս հայաստանցիները տարբերակվում էին իրենց՝ հույժ էջմիածնական՝ հայաստանակենտրոն լինելու հանգամանքով:

Մյուսների՝ հայաստանցիների վերաբերյալ վերաբերմունքը հիմնականում բացասական էր: Դրա գլխավոր հիմնավորումն այն էր, որ նրանք թողել են իրենց հայրենիքը և, այսպիսով, կատարել հակահայրենաստիքական արարք, միչդեռ մյուսները, որպես հին սփյուռքահայեր, ընդամենը տեղաշարժվել էին մի երկրից մյուսը: Ապա, հայաստանցիները կենսակերպով և ավանդույթներով շատ տարբեր էին մյուսներից: Հատկապես աչքի էր ընկնում նրանց քրեական հակվածությունը: Սփյուռքահայերն ասում էին, որ մինչ այդ ԱՄՆ-ում ապրելով երբեք ոչ մի հայ չէին տեսել ամերիկյան բանտերում, բայց հայաստանցիները եկան և բանտերը լցվեցին նրանցով:

5. Հայաստանցիները, լինելով ամենաքիչ հարմարվածը և սոցիալական սանդուղքի վրա առավել ցածր դիրք գրավողը, ունեին մյուսներից ավելի բարձր պոտենցիալ: Խորհրդային դպրոցի մակարդակն ավելի բարձր էր, քան ամերիկյան և, առավել ևս, մերձավորարևելյան դպրոցներիը: Այդ տեսակետից, հայաստանցիները շատ ավելի զարգացած էին, քան մյուսները: Բացի այդ, նրանք լավ գիտեին Հայաստանը և, թեև լքել էին այն, սովորաբար ջերմ զգացումներ էին տածում դեպի իրենց այդ իրական հայրենիքը, ի տարբերություն բուն սփյուռքահայերի, որոնց հայրենիքի զգացումը շատ վերացական էր: Իրենց արտագաղթը Հայաստանից նրանք բացառում էին սոցիալական պատճառներով և ոչ հայրենաստիքության պակասով: Նրանց վերաբերմունքը մյուս սփյուռքահայերի նկատմամբ որոշակիորեն բացասական՝ արհամարհական էր, թեև նրանց մի նշանակալի մասը իրականում հենց Հայաստանում որոշ ժամանակ բնակված սփյուռքահայ հայրենադարձներ էին: Այսինքն, նրանց հա-

մար հեղինակավոր և ցանկալի էր լինել հայաստանցի, քան այլ խմբի անդամ:

Մյուս կողմից, նրանք ամենանակազմակերպյա էին մյուսներից: Իսկական սփյուռքահայերը, մշտապես հայրենիքից դուրս ապրելով, ունեին կառույցներ ձևավորելու ավանդույթ, որը հնարավորություն էր տալիս սփյուռքահայ ակտիվ կյանքի: Հայաստանցիները նման բան չունեին: Հայաստանցիները, նաև այդ պատճառով, ավելի հակված էին ձուլման, քան մյուսները:

6. Հայաստանցիներին վատ էին վերաբերվում նաև Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչները ԱՄՆ-ում: Ըստ այդ հայացքի՝ լավագույն բանը, որ կարող էին անել հայաստանցիները, արագորեն ամերիկացի դառնալն էր: Միայն այդ դեպքում հնարավոր կլիներ և՛ Հայաստանին օգնություն ցուցաբերել, և՛ բարելավել սեփական վիճակը:

7. 1998 թ. լինելով ԱՄՆ-ում ես բնակվել եմ Վաշինգտոնում և միայն կարճ ժամանակով կարողացա այցելել Լոս Անջելես՝ ամերիկահայ կյանքի կենտրոնը: Ինչ կարողացա արձանագրել, այն էր, որ իրադրությունը որոշակիորեն փոխվել էր: Հայաստանի նկատմամբ անվերապահ դրական վերաբերմունք չկար, 1990-ականների ներգաղթածները վատ էին վերաբերում հայաստանյան իրականությանը, որպես անարդար և կոռուպացված: Ինչևէ, նշված հիմնական՝ հայաստանցի-ոչ հայաստանցի հակադրությունը պահպանվում էր: Ընդ որում, թեև ԱՄՆ այլ քաղաքներում վիճակը կարող էր որոշ չափով տարբերվել Լոս Անջելեսից, բայց այդ հակադրությունն ամեն տեղ գործում էր:

8. Որքան կարողացել եմ պարզել սփյուռքահայերի հետ մասնավոր զրույցներից, նման իրադրություն կա նաև որոշ այլ, նոր ներգաղթյալներ ընդունող գաղութներում՝ Կանադա, Ավստրալիա և այլն: Ամենուրեք էական դեր է կատարում ենթաէթնիկ բաժանումը: Շատ տեղերում նոր գաղթած հայերը, ասենք, Լիբանանից, որպես ավելի լավ հայերեն իմացողներ և հայկական կյանքին առավել ծանոթ մարդիկ, որոշակի դեր են ստանձնում գաղութում: Իսկ հայաստանցիները հակադրված են մյուսներին:

9. 2005 թ. լինելով Ֆրանսիայում, ես փորձեցի ծանոթանալ նաև ֆրանսահայ գաղութի իրողություններին: Ենթաէթնիկ բաժանման և

հակադրության տեսակետից այն, ինչ առավել նկատելի էր, դա հայաստանցիների նկատմամբ վատ վերաբերմունքն էր: Մարսելում, պարզվում է, որ հայաստանցի և ոչ հայաստանցի (այստեղ՝ հիմնականում ֆրանսահայ) երեխաները եկեղեցում կանգնում էին առանձին, իրարից հեռու: Դա ստիպում էր հայաստանցիներին առավել հեռու լինել հայկական կյանքից և ճուլվել տեղի զանգվածին, որտեղ առանձնահատուկ հակահայաստանյան վերաբերմունք չկար: Ընդհակառակը, տեղի իշխանությունները փորձում էին օգտագործել հայաստանցիների այն հատկանիշները, որոնք չեն սիրվում մյուս հայերի կողմից (ագրեսիվություն, քրեական հակվածություն, մյուսներին հաղթելու ձգտում): Այսպես, նոր կառուցվող թաղամասերում քրեական տեսակետից առաջին տեղը զբաղեցնող արարների հետ նույն շենքերում բնակեցնում են հայաստանցիների, որոնք կարողանում են գալոզ գործոն հանդիսանալ նրանց դեմ:

10. Մարսելում եզակի էր երկու բան: Նախ, հին ներգաղաձների մեջ շատերը շարունակում էին վարժ տիրապետել հայերենին: Կար միջնակարգ հայկական դպրոց, որի աշակերտները բավական վարժ խոսում էին արևմտահայերեն: Մյուսը՝ դա հայերի կարևոր դերակատարությունն էր իշխանություններ ձևավորելիս: Քաղաքի հարավային մասը աջերի՝ հարուստների շրջանն է, հյուսիսայինը՝ ձախերի՝ ոչ հարուստների, արաբների և նեգրերի: Դրանց արանքում երկու թաղամաս նշանակալի չափով բնակեցված են հայերով (խոսքը հին սփյուռքահայերի մասին է), իսկ մյուս բնակիչները հարում են նրանց: Ընտրությունների ժամանակ աջերի և ձախերի ուժերը մոտավորապես հավասար են, և հաղթում է նա, ում կողմից քվեարկում են հայերը և նրանց հարողները: Դա բարձրացնում է հայերի հեղինակությունը իշխանությունների աչքում:

## ՀԱՅԱՍՏԱՆ

1. Հայաստանում, սկսած գոնե Ցեղասպանության փախստականների ներհոսքից, գործում էր տեղացի-գաղթական հակադրությունը՝ գաղթականների նկատմամբ եղել է որոշակի արհամարհական վերաբերմունք: Հետագայում, 1940-ականների հայրենադարձությունից հետո, այդ մտայնությունը, շատ ավելի հզոր ուժով, դրսևոր-

վեց տեղացի-հայրենադարձ հակադրության մեջ, որը մարեց միայն ԽՍՀՄ վերջին տարիներին:

2. Ղարաբաղյան շարժման սկզբից դարաբաղցիների նկատմամբ առաջացավ սիրո և հիացմունքի մի հզոր ալիք, որն առաջ բուլտրովին չկար (նրանք են, որ վերջին դարերում հաղթանակներ են բերել հայոց պատմությանը, նրանք են, որ դարերով բաժանված լինելով Հայաստանից, ամենադժվարին պայմաններում կարողացել են պահպանել իրենց ինքնությունը, նրանք են որ հերոսաբար պայքարում են ազատության համար): Ադրբեջանում հայերի դեմ կազմակերպված ջարդերից և ճնշումներից Հայաստան անցածներին ևս սկզբում վերաբերվում էին սիրով, խղճահարությամբ, լավագույն զգացումներով: Բայց շուտով փաստականների նկատմամբ վերաբերմունքը կտրուկ փոխվեց: Շեշտվում էր նրանց տարբերությունները հայաստանցիներից՝ բարբառը, ռուսախոսությունը, հայաստանցիներից տարբերվող սովորությունները և այլն:

Այդ ժամանակներից սկսվեց, իսկ ավելի ուշ, Հայաստանի դեկավարության մեջ դարաբաղցիների առանցքային դեր ստանձնելուց հետո, մեծ սրություն ձեռք բերեց հայաստանցի-դարաբաղցի հակադրությունը: Ներկայումս ժողովրդի մեջ դարաբաղցիների ու ադրբեջանահայերի նկատմամբ երբեմն առկա է անթաքույց վատ վերաբերմունք: Հայաստանի շրջաններում հոժ խմբերով հաստատված ադրբեջանահայերը ապրում և շփվում էին իրար հետ, մյուսներից կտրված: Ներգաղթից բազում տարիներ հետո է միայն հնարավոր դարձել նրանց և տեղացիների ամուսնությունը:

3. Սովետական բանակում զինվորները ստեղծում էին էթնիկական խմբավորումներ, որոնք իրար միջև պայքարելով փորձում էին ավելի բարձր դիրք գրավել (սա առավել բնորոշ էր կովկասցիներին): Ռուսները, որ շատ բազմաքանակ էին և տարբեր վայրերից գորակոչված, միավորվում էին ըստ տարածաշրջանների: Հայկական բանակում այլազգիներ, կարելի է ասել, չկային, և խորհրդային ավանդույթի պահպանումը պիտի թելադրեր ենթաէթնիկ՝ ըստ մարզերի բաժանված խմբավորումների ձևավորումը՝ երևանցիներ, շիրակցիներ, լոռեցիներ, դարաբաղցիներ և այլն:

Ժողովրդի՝ որևէ երևույթի նկատմամբ վերաբերմունքի կարևոր ցուցիչ են անեկդոտները: ԽՍՀՄ-ում բազում անեկդոտներ կային

տարբեր ազգերի՝ մի որևէ երևույթի նկատմամբ ունեցած տարբեր մոտեցումների վերաբերյալ: Սովետահայ համապատասխան անեկղոտներում կար երկու առավել հաճախ հանդիպող ձև՝ 1) հայը, թուրքը, վրացին, 2) հայը, ռուսը, թուրքը վրացին: Այսինքն, աշխարհի էթնիկական բազմազանությունը մոդելավորվում էր այս երեք կամ չորս հարևան ժողովուրդների միջոցով (Ռուսաստանն աշխարհագրորեն հարևան չէր, բայց ռուսները ներկա էին ամենուրեք): Նրանք էին, որը ներկայացնում էին մեզ տեսանելի և հասանելի աշխարհի հիմնական բնակչությունը:

ՄՍՀՄ փլուզումից հետո եկավ մի պահ, երբ անեկղոտներում ավելի հրատապ դարձավ հայերի ներքին՝ ենթաէթնիկ բաժանումը: Երևանցին, գյումրեցին, լոռեցին, քյավառցին, ապարանցին, դարաբաղցին: Մրանք միշտ էլ կային անեկղոտներում, բայց սկսեցին ավելի մեծ տեղ զբաղեցնել և փոխարինել սովետական ժամանակների եռյակին կամ քառյակին: Առաջին պլան մղվեց մի նոր հիմնական հերոս՝ ապարանցին, որը փոխարինում է ամերիկյան անեկղոտների շիկահեր կնոջը, ֆրանսիականների՝ բելգիացուն, ռուսականների՝ չուկչային: Սկսեցին ավելի հաճախ հանդիպել առաջ հազվագյուտ հանդիպող ամերիկացին, ֆրանսիացին, որպես արձագանք անկախ պետականության և ուղիղ կապերի աշխարհի երկրների հետ:

4. Այսպիսով, Հայաստանում ներկայումս առկա է հայերի ենթաէթնիկ բաժանման ավելի սուր ընկալում, քան մինչ անկախությունը: Այն արտահայտվում է բանահյուսության մեջ, կենցաղում և նույնիսկ քաղաքականության մեջ: Որքանով կարելի դառնել եղած տեղեկություններից, պատկերը նույնն է՝ նաև անկախացած նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններում: Դա բնական է՝ հսկայական բազմազգ կայսրության քաղաքացին դարձել է ազգային, համեմատաբար միատարր և փոքր երկրի քաղաքացի:

## ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՅՈՒՅՈՒՄ

1. Այսպիսով, կարելի է ասել, որ հայոց մեջ ամենուր՝ և Հայաստանում, և սփյուռքում, ներկայումս նշանակալի դեր է խաղում ենթաէթնիկ բաժանվածությունը: Ասվածը թույլ է տալիս ձևակերպել նաև հայոց ենթաէթնիկ այդ երկու ամենամեծ խմբերի՝ հայաստանցիներ-

րի և սփյուռքահայերի ամենաէական տարբերությունը (որն առավել ակնատու է սփյուռքում): Հայաստանցիները ձգտում են հեղինակություն նվաճել ոչ օրինական հարաբերություններում և ոչ օրինական միջոցներով, իսկ սփյուռքահայերը՝ ընդհակառակը, օրինական հարաբերություններում կազմակերպված հանդես գալու ճանապարհով: Հայաստանցին ագրեսիվ է, բայց հակված ձուլման, իսկ սփյուռքահայը՝ հարմարվող և կարողանում է երկար գոյատևել օտար միջավայրում:

2. Հայաստանցիների ոչ օրինապաշտ կերպարի մասին մեզանում խոսվում էր հատկապես ՍՍՀՄ վերջին տարիներին, հրապարակախոսական հոդվածներում: Այն ժամանակ ողջ երկրի մասսայական հրատարակություններում քննարկվում էր «հոմո սովետիկոսի»՝ սովետական դաժան և հակաբնական իրականության մեջ ձևավորված մարդու կերպարը, որին և բազում մեղքեր էին վերագրվում՝ ոչ օրինապաշտություն, քրեական հակվածություն, արժեքային սխալ համակարգ և այլն: Ակնհայտ է, որ սովետական իրականությունը հզոր ազդեցություն է ունեցել ՍՍՀՄ ժողովուրդների ձևավորման վրա: Բայց ամեն ինչ չի կարող բացատրվել միայն սովետական իրականությամբ: Իվան Շոպենը արդեն արդեն համարյա երկու դար առաջ նկատել է, որ Հայկական մարզի և Պարսկաստա նի հայերը (այսինքն՝ արևելահայերը) առավել ճկուն են, հակված առևտրի և խաբեության, իսկ թուրքահայերը՝ ոչ: Հայաստանի ներկայիս բնակչության հիմնական զանգվածը կազմում են նախկին պարսկահայերի, իսկ սփյուռքինը՝ 1915-ին Թուրքիայից տեղահանված թուրքահայերի սերունդները: Այսինքն, այդ տարբերությունը կամ նրա հիմքերը եղել են արդեն այն ժամանակներում և հայաստանցի հայի ոչ օրինապաշտ կերպարը չի կարող պայմանավորված համարվել միայն սովետական անցյալով:



ՄԱՍ

## ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՅ

### 1. ՔԱՉԱԼ ՆԱԶԻԿԻ ԵՎ ԱՅԼՈՑ ՄԱՍԻՆ

Մանկական բանահյուսությունը մեզանում շատ քիչ ուսումնասիրված բնագավառ է: Գրանցվել և քիչ թե շատ ուսումնասիրվել են հին, արխայիկ, հատկապես ազգագրական արժեք ունեցող նմուշները: Այս հողվածում կրերվեն այլ, փաստորեն՝ շրջանցված, համեմատաբար ուշ շրջանների և մանավանդ՝ այլալեզու շերտ պարունակող օրինակներ, և փորձ կարվի դրանց վերլուծության հիման վրա եզրակացություններ անել: Եվ այսպես, հիշում եք՝

Քաչալը գնաց տանձի,  
Վախեցավ գլուխը խանձի,  
Գիշերը մտավ տեղերը,  
Կատուն կերավ բեղերը:

Սա նախադպրոցական բանահյուսություն է, որը ռեչիտատիվով երգվում է բոլոր խուզած մանուկներին ծաղրելու համար: Անցնենք առաջ:

Աշխարհ-աշխարհ-աշխարհ ա,  
Մեր դասատուն ոչխար ա:  
Հենց որ գանգը տալիս ա  
Արածելով գալիս ա:

Ահա դպրոցական բանահյուսության չուսումնասիրված տիպիկ օրինակ: Այս քառատողը ծանոթ է հայկական դպրոցներում սովորող

բոլոր աշակերտներին, ուստի մենք հույս ունենք, որ աշխարհագրության ուսուցիչներն այն չեն համարի մեր կողմից իրենց հեղինակության և իրավունքների ոտնահարման փորձ: Նույնատիպ հանրահայտ՝

Ռուսկի յագիկ՝ քաչալ Նագիկ:

Այս մանկական բանաստեղծության գոհարը, ինչպես և նախորդը, գոյատևում է տասնամյակներ և ներկայումս, որքանով որ ինձ հայտնի է, առավել բարձր ծաղկման է հասել Երևանի 114-րդ դպրոցում՝

Ռուսկի յագիկ՝ ունիտագիկ,

կամ նույնիսկ՝

Ռուսկի յագիկ, քաչալ Նագիկ,

Թռավ նստավ ունիտագիկ

*(ինֆորմանտ՝ Արաքս Սահինյան, 3-րդ դասարան):*

Իհարկե, հայոց լեզվի վարկի բարձրացման ջատագովները կարող էին այս քառատողում հայ երեխաների վերաբերմունքը տեսնել իրենց պարտադրվող ռուսերենի ուսուցման վերաբերյալ, բայց մենք անկողմնակալորեն լռում ենք, և հիշում նաև հայոց լեզվի ուսուցիչների մասին եղածը՝

Հայոց-հայոց-հայոց ա,

Մեր դասատուն մի օձ ա:

Թվում է, թե նրան հակադրվում է ռուսերենի թանկագին ուսուցիչը՝ որը թեև ճաղատ է, բայց ոսկի սիրտ ունի՝

Ռուսկի, ռուսկի, ռուսկի ա,

Մեր դասատուն ոսկի ա:

Բայց մեր բոլոր ինֆորմանտները այդ «ոսկին» արտասանում էին սարկաստիկ կերպով, մի տեսակ չակերտների մեջ: Պետք է ասել, որ այսօրվա դպրոցականները, եթե դատենք ըստ բանահյուսության, ի հակադրություն իրենց ուսումնաստենչ պապերի, շատ էլ մեծ ձգտում չունեն դեպի ուսումը:

Ինչ եմ անում դպրոցը, դպրոցը,  
Քանի որ կա փողոցը, փողոցը:  
Ինչ եմ անում ֆիզիկա, ֆիզիկա,  
Քանի որ կա մուզիկա, մուզիկա, մուզիկա:

Սա երգվում է չեխական «Տանցույ, տանցույ վիկրուցայ» («Պարիք, պարիք, պատվիր») երգի երաժշտությամբ և ցույց տալիս, թե հայ դպրոցականը, եթե նույնիսկ շատ էլ չի սիրում իր հանրակրթական ուսումը և ռուսերենի պարտադիր ուսուցումը, ապա, այնուամենայնիվ, նա դեռևս կորած չէ հասարակության համար, քանի որ կարողանում է ըստ արժանվույն գնահատել եվրոպական երաժշտությունը և հանդուրժողորմբար է տրամադրված դեպի սլավոնական մյուս ազգերն ու նրանց մշակույթը: Իսկ ռուսական դպրոցի մասին, իրոք որ, կա վախեցնող ռուսերեն տեքստ, որը, թեև, կարծես՝ ռուսաստանյան ծագում ունի, բայց տարածված է հենց մեր ռուսական մանկապարտեզներում:

Дети в школу не ходите,  
Эта школа не для вас.  
Там учителя бандиты,  
А директор – Фантомас.

Քառատողը զարգանում է բնիկ հայկական յամբ-անապետով՝

Ֆանտոմաս-Ֆանտոմաս,  
Գլխին ունի երեք մագ,  
Մեկը առաջ, մեկը հետ,  
Մեջտեղինը՝ պոլի փետ:  
Պոլի փետը հանեցին,  
Տեղը լոբի ցանեցին:  
Լոբին աճեց մեծացավ,  
Ֆանտոմասը ծերացավ:

Այագայի պատմաբանին ենք թողնում գրելու, թե ինչպես էին XX դարում հայ մանուկները տառապում դպրոցներում ՀԽՍՀ լուսավորության, կամ նույնն է թե՛ ժողկրթության մինիստրության դաժան լծի տակ: Նշված օրինակում հիշատակվում է մի հերոս՝ Ֆանտոմասը, որը հայ մանուկներին ծանոթ է համանուն կինոնկարից: Պետք է ասել, որ կինոնկարների ազդեցությունը մանկական բանահյուսության վրա նշանակալի է: Ահա մի այլ շատ հետաքրքիր օրինակ՝

Չաղ, Ցանցատ, Նիկուլին,  
Թռան, նստան «ժիգուլին»:  
Չաղը ասաց՝ «բարև ձեզ»,  
Նինան ասաց՝ «թաղեմ ձեզ»:

Այս քառատողում անհայտ հեղինակն անդրադարձել է մանուկների կողմից սիրված «Կովկասի գերուհին» կինոնկարի գլխավոր հերոսուհու՝ Նինայի տառապանքներին, որը հուսահատված իրեն կեղեքող՝ անաշխատ եկամտուների սիրահար Մորգունով-Վիցին-Նիկուլին եռյակի (որոնք բնագրում հանդես են գալիս իրենց քրեական մականուններով) ռոմանտիզմներից, անիծում է իր բախտը և իրեն չարախնդորեն բարևող չարագործներին: Ինչպես տեսնում ենք, մանկական բանահյուսությունը ևս հանդես է գալիս բարոյական արժեքների գնահատմամբ: Այնտեղ ևս գովերգվում և գնահատվում է բարին, մարդկայինը, հավիտենականը, և նշավակվում՝ չարը, գազանայինը, բռպեականը: Բայց, ինչպես և վերը հիշված օրինակներում, այստեղ էլ ցայտունորեն ի հայտ է գալիս օտարամուտ տարրը, ռուսական ազդեցությունը: Ակներև է, որ քառյակի բացասական հերոսը կրում է ռուսական ազգանուն՝ Նիկուլին, իսկ դրական հերոսը մարմնավորված է միանգամայն ինտեռնացիոնալ ծագում ունեցող Նինա անունը կրող աղջկա կերպարում, որը կինոնկարում կովկասցի է, այսինքն հայերին մոտ ծագում ունեցող ժողովրդի գավակ: Եվ այսպես՝ ազգայինը և ինտեռնացիոնալը, մարդկային արվեստի բոլոր ժամանակների ընդհանրական կատեգորիաները ևս իրենց արձագանքն են գտել մանկական բանահյուսության մեջ:

Հայտնի է, որ աշխարհի բոլոր մանուկներն իրենց ֆոլկլորում օգտագործում են ավելի բարձր դասարանցիներից լսած անհասկանալի, հատկապես օտարալեզու տեքստերի պատառիկներ: Այսպես օրինակ, ռուսական эники-беники или вареники-ի առաջին երկու բառը ծագումով գերմանական են, իսկ մի այլ տեքստի վերջին տողում՝ эне-бене ряба, квинтер-финтер жаба-ում արդեն դրանք զուգակցվում են գիմնազիական դասընթացի լատիներեն և գերմաներեն կվինտեր-ֆինտերի հետ: Հայկական խորհրդային մանկական բանահյուսությունը լեզվական ազդեցությունների տեսակետից այդքան ճիշտ է, թեև հնագույն օրինակներում առկա են քրդական, թուրքական,

վրացական բառեր և արտահայտություններ: Ամենուրեք, ինչպես արդեն ասվեց՝ նկատվում է համարյա միայն ռուսական ազդեցություն, որը, կարծում եմ, մեր քաղաքագետներին պետք է հուշի այն արդյունավետ միտքը, թե ռուսական կողմնորոշումը հայ ժողովրդին ընդհանրապես և նրա ներկայացուցիչներին մասնավորապես հատուկ է վաղ մանկությունից: Ամենավառ օրինակը հանրահայտ է.

Այա, բայա, նիցա,  
Դուգ կարանիցա,  
Հեյ գիտի, Վանչո,  
Նաշ կապիտանչո,  
Փալանչո:

Այս տողերը կապ չունեն թուրքերեն բալայի, ինչպես նաև բալնիցայի ու կարանի հետ, որոնք ռուսերեն կարող են իմաստավորվել որպես «հիվանդանոց» և «վայրի խոզ»: Կարծիք կա, որ առաջին տողերն աղավաղումն են մի նույնատիպ ռուսական տեքստի՝ *Алла ба-ловница Дуську боится*, որը նշանակում է՝ «չարաճճի Ալլան վախենում է Դուսկայից» (բայց դա չի հաստատվում, տես ստորև): Տեքստի վերջին տողերում պատմվում է մի ինչ-որ Վանչոյի մասին, որը կարծես թե նախկինում կապիտան է եղել, բայց հետագայում անհայտ պատճառներով անցել փալանչիի, այսինքն՝ էշի թամբագործի համեստ և ծանր, բայց շնորհակալ և պատվավոր աշխատանքին: Այդ Վանչոն իր Վանի տարրերակով հանդիպում է նախախորհրդային մանկական հաշվերգերում՝

Վանի, Վանի, Երևանի,  
Կապիտանի, ձվածեղի, դեղձիկոնի,  
Ով որ բռնի վեր քաշի:

Իրոք, կարելի է ենթադրել, որ այստեղ խոսվում է մեր նախահեղափոխական անցյալի մասին, որովհետև խորհրդային շրջանում կապիտաններն ավելի շատ հակված էին մայր դառնալու, քան թամբագործ: Ներկայումս, կարելի է ասել, որ կոռուպցիոնիստների դարաշրջանում թամբագործների շարքերը կսկսեն համարվել մեր փառապանծ բանակի կապիտաններով, միայն թե այս անգամ՝ ոչ թե էշի, այլ նախորդ քառատողի հերոսներ՝ Չաղի, Ցանցառի և Նիկոլի-

նի, ինչպես նաև նրանց նման քրեական ստվերային էկոնոմիստների ժիգուլիների թամբերի: Թո՛ւ նրանց անամոթ երեսներին, կամ ինչպես ասում էինք մենք մանուկ ժամանակ պահանտոցի խաղալիս՝ «թու գա փսեխ, կարմիր ասեղ, պամփոքով ձվածեղ», որը նշանակում էր ընդամենը ռուսերեն տֆы за все - «թու բոլորի փոխարեն» և հիշվում կարմիր ասեղը, որով վատ արարքների համար պետք է ծակվեր հիշյալ ապագա ստվերային կոռուպցիոնիստների լեզուն՝ նախաճաշի լոլիկով ձվածեղի փոխարեն:

Ի դեպ՝ լոլիկների մասին: Այդ գնդաձև, կարմիր ասեղի գույնով բանջարեղենը, որը կարծես խորհրդանշում է համաշխարհային կոմունիստական հեղափոխության գաղափարը, հիշատակվում է նաև այլ տեքստերում, ինչպես օրինակ՝

- Ասա պամփոք:
- Պոմփոք:
- Տշեմ գնաս կալիդոր:

Այսինքն, նույնիսկ անվան հիշատակությունը բացասական հետևանքների, կոնկրետ՝ աքացու կարող է հանգեցնել: Կամ՝

- Տորեադոր է,
- Աչքի մեկը քոռ է,
- Քիթը պամփոք է,
- Ինքն էլ դիրեկտոր է:

Այստեղ ևս կարմիր լոլիկի հետ համեմատվում է բացասական հերոսի՝ դպրոցի հարբեցող դիրեկտորի քիթը, որը հարբածությունից ու կատաղությունից կուրացած ուզում է տորեադորի նման սրախողխող անել պարտուսի անմեղ զոհերին՝ խեղճ ու կրակ աշակերտությանը: Քառատողն ունի նաև ճանաչողական կարևոր նշանակություն, քանի որ այն երգվում է Բիզեի անմահ օպերայի տորեադորի արիայի մեղեդիով, ինչպես նաև մանուկներին ծանոթացնում հեռավոր ու էկզոտիկ, կրքոտ ու տոթակեզ Իսպանիայի ազգային հանդիսանքին՝ ցլամարտին:

Հիշյալ բանջարեղենի մասին կա մի չքնաղ դպրոցական անեկդոտ. բուսաբանության ուսուցչուհին բացատրում է, թե ինչու է այն կարմիր և վերլուծում կենսաբանական նմանակման՝ միմիկրիայի երևույթը:

— Ընկեր Պողոսյան, ինչ գույնի են գետածիռու աչքերը:

— Կարմիր:

— Իսկ ինչո՞ւ են կարմիր:

— Որպեսզի նմանվեն կարմիր պոմիդորների:

— Իսկ ինչո՞ւ նրանք պետք է նմանվեն կարմիր պոմիդորների:

— Որովհետև գետածիռերը սիրում են թաքնվել կարմիր պոմիդորի թփերի հետևում:

— Բայց ինչո՞ւ մենք նրանց երբեք չենք տեսնում այնտեղ:

— Տեսնում եք, որքան լավ են թաքնվում:

Ընդհանրապես պետք է ասել, որ պոմիդորը, որն իր կարմրությանը չափազանց խորհրդային հավատարմահպատակային և արյունոտ ասոցիացիաներ է առաջացնում, բավական թթու բանջարեղեն է, վնասում է աղեստամոքսային տրակտի հիվանդություն ունեցողներին, և իզուր չէ, որ Ջաննի Ռոդարին «Չիպոլինոյի արկածներում» սինյոր Պոմիդորին ներկայացրել է մեր դասակարգային թշնամիների շարքում: Այստեղ մենք մոտենում ենք մեր թեմայի ամենակարևոր խնդիրներից մեկին՝ մանկական ֆոլկլորի դասակարգային էությունը: Այն ևս սպասում է իր բացահայտողին: Դասակարգային, հրատապ հարցերը միշտ արագորեն արտացոլվում են բանահյուսության մեջ: Օրինակ, թվում է, թե ինչ քաղաքական իմաստ կարող է ունենալ մի այսպիսի երկխոսությունը:

— Ասա որդ:

— Որդ:

— Ուտես տոթ:

Կարելի է կարծել, որ այստեղ միայն նշավակվում է շատակերությունը: Բայց եկեք հիշենք, որ տոթը սինյոր Պոմիդորի սիրած ուտելիքն էր, որը նա կլանում էր՝ կտրելով խեղճ ու սոված, որք ու անապատան մանուկ բողկերի, լոբիների, տխերի և սխտորների բերանից:

Մանկական բանահյուսության մեկ այլ բնութագրական հատկանիշ: Հայտնի է, որ ժամանակակից խորհրդային աֆորիզմն ասում է՝ «հոռետեսներն ուսումնասիրում են չինարեն, լավատեսները՝ անգլերեն, ռեսալիստները՝ Կալաշնիկովի ավտոմատը»: Մանուկներն ամենուրեք լավատես են: Նրանք մերժում են չինարենն ու ավտոմա-

տը: Ահա մի քառատող, որտեղ ակնհայտորեն լսվում է օպտիմիզմին հատուկ նոտաների մետաղյա զրնգոցը:

Բուդկա, բուդկա, բե, բե,  
Աբես, ֆաբես, գումարե,  
Ռիկի, չիկի, ամաչիկի,  
Օֆ, լեն, գլեն:

Փորձենք վերլուծել: Բուդկա-բուդկան արդեն անխուսափելի դարձած ռուսերեն փայտե տնակն է, բե-բեն՝ աշխարհագրության ուսուցիչներին խորհրդանշող ոչխարների լեզվով սիրված բացականչություն: Աբես-ֆաբեսը շվեդական մանկական գրքի՝ «Նիլսի արկածների» հիման վրա նկարահանված մուլտֆիլմի թզուկի կախարդանքի բանաձևի սկիզբն է՝ «արես, ֆարես, կարտոֆլարես», Ռիկի-չիկին անգլիական գրող Ռադյարդ Կիպլինգի քաջարի հերոս մանգուստ Ռիկի-Թիքի-Թավին է՝ ռուսական առողջամտությամբ արտասանված և ամոթխած ամաչիկի-ով հանգավորված, իսկ օֆ-լեն-գլեն ձայնակապակցությունը հատուկ է աշխարհում միայն մի լեզվի՝ անգլերենին: Գլեն անգլերեն նշանակում է «նեղ հովիտ», ֆլեն՝ «կարկանդակ», այսինքն, ամբողջ տողը կարող է իմաստավորվել որպես «օ, կարկանդակ, նեղ հովիտ»: Այսպիսով, այս քառատող հաշվերգում արտացոլվում է մանուկ հեղինակի հույս-երազանքը՝ ամառանոցային փայտե տնակ ունենալ աշխարհագրական այլ՝ ցանկալի է արևմտյան միջօրեականներում, լայն նեղահովիտներում, որտեղ արածում են ոչխարները, հնչում է անգլերեն խոսքը, բուրում է կարկանդակը և կենսամակարդակը հասնում է շվեդական ստադարտին: Հեղինակն իր երազանքի մոտալուտ գալստյանը շատ չի հավատում, և այդ պատճառով օգնության է կանչվում կախարդանքի բանաձևը:

Բայց մանկական բանահյուսությունն արտացոլում է ոչ միայն քչերին մատչելի և համարյա անիրական ռեալությունները, այլ նաև առավել նյութական, ոչ օղեղեն երազանքները: Մինևույն քառատողը կարելի է մեկնաբանել նաև այլ կերպ: Այսպես՝ բուդ կա, բուդ կա, բե բեն նշանակում է, որ խանութում ոչխարի բուդ՝ ազդր է հայտնվել, արես-ֆաբես-գումարեն՝ հայրիկի մոտ մի հրաշքով համապատաս-

խան գումար, ռիկի-չիկի-ամաչիկի՝ միննույն հրաշքով վաճառողի մոտ ի հայտ է եկել ամոթ, խղճի զգացում, և օֆ, լեն, զլեն՝ այսպիսով մենք կհասնենք Ամերիկայի Միացյալ Նահանգներին:

Մանկական ֆոլկլորում հանդիպում ենք նաև քաղաքական, պետական, ռազմական գործիչների կերպարների: Օրինակ, 80-ական թվականների սկզբին՝ Յուրի Անդրոպովի իշխանության տարիներին, Երևանի մանկապարտեզներից մեկում ստեղծվում էր մի մանկական էպոս, որի գլխավոր հերոսը Անդրոպոսն էր, իսկ նրան ծառայում էին նրա բազմաթիվ կամակատարները՝ անդրոպոսիկները: Ահա մի հանրահայտ օրինակ անցյալից:

Լենին պապին մեռել ա,  
Մեզի ավանդ թողել ա,  
Պատիկ բալիկ մեծացիր,  
Կոմունիզմը կառուցիր:

Սա պաշտոնական տարբերակն է, որը կարելի էր արտասանել կոլտնտեսության նախագահի տղայի և կուսկոմիտեի քարտուղարի աղջկա հարսանիքի ժամանակ, իսկ ավելի դեմոկրատական շրջապատում քառատողի վերջին երկու տողերը փոխվում էին՝

Պատիկ բալեք մեծացեք,  
Իրար կերեք, կշտացեք:

Դա այն ժամանակներն էին, երբ սոված հայ դպրոցականները դպրոցում հայիոյում էին քյոխվային ու ռեսին, որոնք ծանր հարկեր էին պահանջել մինչև հեղափոխությունը և գովերգում իրենց ազատ ու երջանիկ ներկան և լուսավոր ապագան, իսկ նրանց խեղճ ու կրակ մայրերը բռնվելու սարսափը սրտում անհիծում էին հարկերի կրկնապատկումը երկրում:

Ստալին ջան, Ստալին,  
Իմալ պահեմ ես իմ բալին,  
Համ հիմա կուգես, համ՝ կալին:

Լուսավոր ապագայի գովերգմանը զուգահեռ հայիոյվում էին մեր անցյալի արժեքները, ազգային հերոսները և նրանց գործը: Ահա ցայտուն մի քառատող, որը պահպանվել է մինչև մեր օրերը:

Անդրանիկը քաջ-քաջ,  
Էշի վրա նստած,  
Մի բուխանկա հաց  
Կրծելով գնաց:

Պարզ է, թե ով է այդ քաջ-քաջ Անդրանիկը: Այո, դուք չեք սխալվում: Խոսքը մեծ հայդուկապետ, հերոս զորավար Անդրանիկի մասին է:

Նորից վերադառնանք խորհրդային ռեալ իրականությանը: Ահա տիպիկ մի հաշվերգ, որտեղ ի հայտ է գալիս աշխարհի բոլոր փոքրիկ տղաների զինվոր դառնալու երազանքը:

Պստիկ պապան գնաց բանակ,  
Հետը տարավ մի սուր դանակ,  
Ո՛ւմ կտանես հետդ բանակ  
Քեզ ընկեր:

Անցնում են խորհրդային պետության կյանքի առաջին տասնամյակները: Բանակը և արդեն մեծացած պստիկ զինվորն այժմ ունեն ռեալ թշնամի, որի նկատմամբ հաղթանակի են սպասում նրանք, հենց ընթացիկ շաբաթվա վերջին կամ հաջորդ շաբաթվա սկզբին՝

Ուրբաթ, շաբաթ, կիրակի,  
Հիտլերի փորը տրաքի:

Եվ այդ ժամանակ կգա երկար սպասված խաղաղությունը՝

Հիտլերն ընկավ ցեխը,  
Աչքը մտավ մեխը,  
Երկու աչքն էլ քոռացավ,  
Պատերազմը մոռացավ:

Եկավ բաղձալի խաղաղությունը: Անցավ մեկուկես տասնամյակ: Խորհրդային պետությունը կարողացավ կարճ ժամանակամիջոցում բուժել իր վերքերը և շուտով, աշխարհում առաջինը, ձեռնարկեց տիեզերքի նվաճման մեծ գործը: Երեխաների արձագանքը չուշացավ՝

Յուրի Գագարին,  
Կերավ մարգարին (կամ՝ մանդարին),  
Ժամը երկուսին  
Թռավ կոսմոսին:

Սա հիշեցնում է «Ահա եկավ նոր տարին, բերեց (կամ՝ առանց) խնձոր մանդարին» երկտողը: Այստեղ տիեզերքի յուրացման սկիզբը՝ տիեզերական դարի գալուստը շատ ճիշտ կերպով համեմատվում է նոր տարվա գալստյան հետ, ընդ որում՝ նշվում է նաև, որ կենսամակարդակի անկումը գրանցող սեղանների նվազ ճոխությունը և բնական յուղի ու ցիտրուսային մրգերի անբավարար քանակը արդյունք են տիեզերական հետազոտությունների վրա կատարված անոնելի ծախսերի, թեև մանկական անմիջականությամբ մանդարինի բացակայության համար մեղադրվում է անձամբ առաջին տիեզերագնացը: Հատկանշական է, որ տիեզերքը ծառի՝ գուցե հենց՝ մանդարինի ծառի պես մի բան է պատկերացվում, որի վրա թռչուննստում են: Բացի այդ, նշվում է երևույթի պատմականությունը և գրանցվում պատմական պահը՝ ժամը երկուսը (պետք է ասել, որ հեղինակի ժամացույցը ակներևաբար հետ ընկած է եղել, քանի որ Գագարինի թռիչքը տեղի է ունեցել ժամը տասին, կամ էլ՝ հեղինակն արձանագրել է ոչ թե թռիչքի, այլ նրա մասին ՏԱՄ-ի առաջին հաղորդագրության պահը):

Բայց ժամանակը թռչում է առաջ: Անցնում է ևս մեկուկես տասնամյակ: Արձանագրվում է հայկական ֆուտբոլի աստեղային ժամը: 1973–74 թվականներ, ԽՍՀՄ ֆուտբոլի առաջնություն և գավաթի եզրափակիչ: «Արարատը» ոսկե «դուբլ» է անում: Նա և՛ չեմպիոն է, և՛ կրկնակի գավաթակիր: Նոր հերոս է երևում հորիզոնում: Հաղթական գուլերի հեղինակն է Իշտոյանը: Հիշում եք «Միմինո» կինոնկարի հերոսի խոսքը՝ «օդանավի ուղեկցորդուհին թռչում է մեծ-մեծ մարդկանց՝ ակադեմիկոսների, մինիստրների, Իշտոյանի հետ: Նա քեզ վրա չի էլ նայի»: Ջահել աղջիկները տառապում են անքնությունից: Նրանց հանգիստ չի տալիս 8 համարի համազգեստ կրող ֆուտբոլիստի հոռուական կիսադեմը: Մեծ քույրերի օրինակին են հետևում փոքրիկ աղջնակները: Եթե բախտը չժպտաց ավագ քրոջը, գուցե իրեն կժպտա, թեկուզ և՛ տաս տարի հետո: Երագանքը մարմնավորվում է հետևյալ քառատողում՝

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10,  
Գնդակն ընկավ դարպաս:  
Մեկ–գրո հոգուտ քեզ՝  
Իշտոյանի կնիկն ես:

Անցնում է ևս մեկուկես տասնամյակ: Փոքրիկ աղջիկն ամուսնացել է ոչ թե լեգենդար Իշտոյանի, այլ շարքային ինժեների հետ: Այս անգամ ժողովուրդը կուտակված է ոչ թե մարգադաշտում, այլ օպերային թատրոնի շուրջը: Օպերան, իհարկե, դուրս չէր մնացել մանկական հետաքրքրությունների շրջանակից: Նրա մասին արդեն վաղուց կար հետևալ քառատողը՝

Օ, օ, օպերա,  
Թթուն դնեմ թող եռա,  
Վայ, մամա ջան, ես մեռա,  
Ադի-բողի չկերա:

Պատկերացրեք խեղճ երեխայի տառապանքը, որը դպրոցական արձնեմենտով գնացել է հեղափոխության մասին երկարաշունչ օպերայի դիտման, և հետը մոռացել է վերցնել նման դեպքերում միակ սփոփանքի դեր կատարող ադի-բողիի թղթե տոպրակը: Օպերայի ավարտի տանջալից, անհամբեր սպասումից մարդ իրոք կարող է մեռնել: Բայց հիմա դրությունն այլ է: Հրապարակը եռում-փոթորկվում է: Միթե իրականալու է ժողովրդի երագանքը՝

Ղարաբաղը մերն է,  
Բայց թուրքերի ձեռն է,  
Հեյնեմ սարի գագաթին,  
Թքեմ թուրքի ճակատին:

Քառատողի հերոսը ցուցադրում է իր պատմական գիտելիքները, նա գիտե, որ Ղարաբաղը հայկական հող է, և պատրաստ է դրա համար բարձրանալ ամենաբարձր սարի գագաթը և այնտեղից իր արհամարհանքն արտահայտել պատմության կեղծարարների նկատմամբ: Հերոսը մենակ չէ: Նրա հետ է իր հայրը, որը թեև առաջացած տարիքի պատճառով չի կարող հասնել սարի գագաթին, բայց հնարավորության սահմաններում իր լուման է ներդնում արդար գործի հաջողության համար պայքարում: Երիտասարդները պետք է պայքարեն, իսկ հայրիկները՝ ապացուցեն իրենց իրավունքների ճշմարտությունն ու արդարությունը՝

Ղարաբաղը մերն է,  
Բայց թուրքերի ձեռն է,

Պապան գնաց ցույցի,  
Որ ապացուցի:

Այժմ, կարելի է ասել, որ պապան ապացուցել-վերջացրել է: Երե-  
խաները պետք է ասեն՝ «պապա, պապա, հերիք է ապացուցես, ան-  
ցիր գործի»: Եվ որոշ պապաներ կարծես թե իրոք անցնում են գործի:  
Ինչպես տեսանք, հայ մանուկների բանահյուսությունը վերջին ժա-  
մանակներս պատմության կարևոր դեպքերին անդրադառնում է մե-  
կուկես տասնամյակը մեկ, և հերթական պատմական քառասուորը  
կծավի արդեն XXI դարի սկզբին: Ինչպիսի՞ն կլինի այն: Դա կախված  
է մեզանից: Պապաներ, անցեք գործի:

Մայիս 1990  
Տպագրվել է 1990 թ. օգոստոսին, «Մունետրիկ» թերթի  
9–10 և 11 համարներում:

## 2. ԱԼԱ-ԲԱԼԱ-ՆԻՑԱ ԵՎ ԱՅԼԸ

Այժմ, քսաներեք տարի հետո, հոդվածի ռուսերեն թարգմանու-  
թյունը և թվայնացումը ինձ ստիպեց վերհիշել անցյալը և ես նորից  
վերադառնում եմ այս նյութին:

Առաջինը, ինչ նկատելի է, հոդվածի՝ խորհրդային իրականու-  
թյան հետ կապված իրողությունները, ներկայումս, կարելի է ասել,  
հրատապ չեն: Պարտուս՝ պարտադիր ուսուցում, կոլտնտեսության  
նախագահ, մթերքների դեֆիցիտ խանութներում, Ստալին...

Դրան հակառակ, մեր իրականության մեջ ռուսական ազդեցու-  
թյունը շարունակում է մնալ ու մնալ: Ուրեմն, չկարողացանք անցնել  
անգլերենին, ինչպես արել ու անում են առաջ ռուսական ազդեցու-  
թյան ոլորտում գտնվող շատ երկրներ՝ Արևելյան Եվրոպայի նախ-  
կին սոցիալիստական ճամբարը, նախկին խորհրդային Լիտվան,  
Լատվիան, Էստոնիան, Վրաստանը, այլ մնացինք, հատկապես մի-  
ջինասիական հանրապետությունների հետ միասին, ռուսական լեզ-  
վոլորտի մեջ: Իհարկե, առանց անգլերենի յուր չենք գնում, ոմանք  
նույնիսկ բլբլում են այդ լեզվով, բայց դե նույնիսկ անգլերեն բառերը  
հաճախ զարմանալի ռուսական ձևերով են մեզանում օգտագործում՝  
ծյունինգ, պի-առ (և ոչ՝ թյունինգ, փի-ար), նաև իրենց հարգող հեղի-  
նակները իրենց հարգող հրատարակություններում:

«Լավատեսներն ուսումնասիրում են անգլերեն, հոռետեսները՝ չինարեն, իսկ ռեալիստները՝ Կալաշնիկովի ավտոմատը» ասացվածքի հոռետեսական սցենարը չիրականացավ՝ չինարենը պետք չեկավ: Չինացիներն իրենք մեզանից առաջ են ընկել անգլերենին անցնելու համաշխարհային մրցավազքում: Իսկ մեզանում անգլերենից, ինչպես ասացինք, դեռևս Պողոս-Պետրոս դուրս չի եկել: Բայց Կալաշնիկովի ավտոմատը գործեց, և այն էլ ինչպես գործեց, ամենուրեք: Ուրեմն, ռեալիզմից, իրոք, չես կարող խուսափել: Պապաներն էլ, և ոչ միայն պապաները, իրոք որ անցան գործի, և Ղարաբաղը ներկայումս մերն է: Բայց ապացուցելու տեսակետից մի քիչ կաղում ենք՝ ադրբեջանական ազիտայրոպը (խորհրդային տերմինով ասած) մերինից ակտիվ է աշխատում:

Ինչևէ... Քանի որ հողվածը երգիծական էր, այսպես ասած՝ գիտա-երգիծական, «չարածնի ուսումնասիրություն», մի ժանր, որ ես փորձում էի ստեղծել այս և մի քանի այլ գործերով, ուրեմն՝ հիմա էլ մի քիչ գիտություն, հետո՝ հումոր:

Եվ այսպես, գիտություն: Նախ, որոշ ճշտումներ: Ալա-բալա-նի-ցայի առթիվ ռուսական Алла баловница-ն թեև շատ հավանական էր թվում, բայց ինձ այդպիսի տեքստ հայտնի չէր: Դիմեցի Ռուսաստանի լավագույն մասնագետներին՝ ռուսական բանահյուսության մեջ նման բան չկա: Ուրեմն, սա տիպիկ մեծական «ժողովրդական ստուգաբանություն է»՝ ռուսերենին տիրապետող ինչ-որ «խելոք» մեծահասակներ հնարել են, որ ռուսական մի նախատիպ է եղել՝ Алла баловница Дуську боится... Ապա որտեղից է այս պարզորոշ սլավոնական տեքստը: Եվ միանգամից առաջ է գալիս «բուլղարական հետքը», որն ակնհայտ էր ի սկզբանե: Եվ իրոք, էլ որտեղից պիտի լինի Վանչո-կապիտանչոն, եթե ոչ այնտեղից, ուր -չոն տարածված նվագական վերջածանց է, Իվանը՝ Վանչո, Դիմիտրը՝ Դիանչո, իսկ Յորդանը՝ Դանչո (այդ մասին տես հաջորդ հոդվածում):

Բողկա-բողկա-բե, բե,  
Աբես-ֆաբես գումարե,  
Ռիկի-չիկի ամաչիկի,  
Օֆ, լեն, գլեն:

Մա ևս ծագումով ռուսական չէ (տարածված է արևելյան Եվրոպայում), թեև մեզ է հասել, ակնհայտորեն, Ռուսաստանից:

Эники, беники, цока, тамэ,  
абель, фабель, гуманэ...

Մրա մի փոփոխակն է արտասանում Անգետիկը Նիկոլայ Նոսովի հայտնի գրքում, փուչիկ-օդապարիկի պայթելուց վայրկյաններ առաջ:

Այժմ՝ ոչ գիտական, մերձգիտական-երգիծական մաս: Թվում էր, թե հայ մանուկները նորագույն պատմության կարևոր դեպքերին անդրադառնում են մեկուկես տասնամյակը մեկ: Բայց հիմա ուզում եմ մի քիչ խորացնել քննարկումը և խոսել ընդհանրապես մանկական բանահյուսության մարգարեական բնույթի մասին: Բուդկաբուդկան, ակհայտորեն, ակնարկում է անկախության տարիների մեծագույն նվաճումներից մեկի՝ «ազատ շուկայական» հարաբերությունների երկրորդ փուլը, քանզի այն մեզանում հետևյալ էվոլյուցիան ունեցավ՝ 1. սեղանիկ, 2. բուդկա, 3. (սուպեր)մարկետ: Այդ փուլի խորհրդանիշը, ռուսերեն բուդկան, սրբնթաց առաջընթացի մի պահի վերանվանվեց համարյա նույնիմաստ և համարյա համահունչ բուտիկի (երկու բառերն էլ գալիս են Ռուսաստանից, մեկն ունի գերմանական, մյուսը՝ ֆրանսիական ծագում):

Առաջ սովոր էինք ամեն ինչ թարգմանել, և բուդկան կրպակ էր, իսկ հիմա՝ վիրավորական կլիներ բուտիկը կրպակ անվանել՝ դա այնպիսի մի բուդկա է, որտեղ մոդայիկ ու թանկարժեք բաներ են վաճառվում: Այդ բուդկա-բուտիկները խոնվում, բազմապատկվում, գումարվում էին իրար Երևանի փողոցների ամենաանսպասելի մասերում կախարդի փայտիկի թափ տալու արագությամբ, ահա և «արես, ֆարես, գումարես»: Բայց եկավ «քաղաքացիական հասարակության» հաղթական առաջնեկը՝ Երկրորդ հիվանդանոցի և Մարգարյանի ծննդատան մերձակա բուտիկների դեպքը...

Պարզվեց, որ այդ տեղանքը, որտեղ առաջ անմոռանալի Արգամի գարեջրի բուդկան էր, իսկ հետո՝ աղբանոց, սրբազան անուն է ունեցել՝ «Մաշտոցի պուրակ» (միանգամայն հնարովի և կեղծ): Այդտեղ քաղաքի բուտիկապատողներն ու բուտիկատերերը բուտիկա-

յին նոր համալիր էին «գումարում», իսկ քաղաքացիական հասարակությունը պայքարում էր դրա դեմ: Պայքարի կուլմինացիային ամենաբարձր մակարդակով հավաստվեց, որ դրանք «սիրուն չեն»: Բուտիկապետերն ու բուտիկատերերն ամաչեցին, օֆ արեցին ու ապամոնտաժեցին-հանեցին դրանք: Ահա և ամաչիկի և օֆ, բայց առնչվում է արդյոք հաջորդ լեն-գլենը ապամոնտաժման ժամանակ կատարվող քլնգոցի կամ մետաղների շփման արդյունքում լավող լնգլնգոցի հետ՝ մնում է հանելուկ:

Հիմա վերհիշենք քննարկված մեկ այլ բանաստեղծություն՝

Ֆանտոմաս, Ֆանտոմաս,  
Գլխին ունի երեք մագ,  
Մեկը առաջ, մեկը հետ,  
Մեջտեղինը՝ պոլի փետ:  
Պոլի փետը հանեցին,  
Տեղը լոբի ցանեցին:  
Լոբին աճեց մեծացավ,  
Ֆանտոմասը ծերացավ:

Ո՞վ կմտածեր, որ այս տողերն այդքան հրատապ կդառնան մեզանում... Հիշենք Արշակ Սաղոյանի թևավոր խոսքը ժամանակին իշխող կուսակցության կադրային քաղաքականության վերաբերյալ՝ «ՀՀԾ-ից լինի, թեկուզ պոլի փետ լինի»: Սա ասված է 1990-ականներին, բայց մինչև հիմա դեռ չի կորցրել իր հրատապությունը: ՀՀԾ-ական պոլի փետերին փոխարինելու են եկել նոր կադրերը, որոնց մանկական երևակայությունը որակում է որպես լոբի: Իրոք, առաջընթացը նկատելի է: Պոլի փետերին հանում-պաշտոնազրկում են, նոր լոբիներն աճում են, իսկ հին հերոսը ծերանում է և այլևս նպատակահարմար չի գտնում մասնակցել նախագահական ընտրություններին: Բայց շարունակենք՝

Օ, օ, օպետա,  
Թթուն դնեմ թող եռա...

Ավանդ, օպերայի հրապարակը, Ղարաբաղյան շարժման սկզբից և ԽՍՀՄ անկումից հետո էլ, ահա քառորդ դար դեռ շարունակում է եռալ ու փոթորկվել: Խորհրդային կայսերապետությունը բարով-խեղով քանդեցինք, հիմա պիտի հայկական-հայաստանյան «ավազա-

կապետությունը» «կազմաքանդենք», ու «վերականգնենք սահմանադրական կարգը»... Ուշադրություն՝ ոչ թե ստեղծենք, այլ վերականգնենք մի բան, որ մեզանում երբեք չի եղել: Բայց փոթորկածիններն ուզում էին հավատալ, որ այն եղել էր ընդհանադիր դարձած նախորդ իշխանավորների օրոք, որոնք, ենթադրվում է, որ «ավագակապետական» չէին, այլ՝ ընտրյալ և «օրինակարգ»:

Ահա եկավ և օրինյալ 2013 թվականը... Օպերայի հրապարակը նորից է եռում: Բայց առաջին դեմքը նոր է: Դե ի՞նչ, եռանք «մինչև վերջ»: Մինչ որոշ հին դեմքեր մտորում են, մյուսները տեղեր են փոխում գտնել այս դեռ չթթված աղաջրում...

Ահա մեծագույն հեղափոխականի՝ Կառլ Մարքսի «Լուի Նապոլեոնի բրյուների 18-ը» աշխատության առաջին հանրահայտ տողերը՝

Հեգելը մի տեղ նշել է, որ համաշխարհային-պատմական մեծ դեպքերը և անձերն ի հայտ են գալիս երկու անգամ: Նա մոռացել է ասել, որ առաջին անգամ ողբերգության տեսքով, երկրորդ անգամ՝ ֆարսի:

Հատկանշական է, որ Մարքսը օգտագործում է թատերական տերմինաբանություն՝ ողբերգություն, ֆարս: Իսկ մեզանում գործողության վայրը օպերայի հրապարակն է, որ ժամանակին կոչվում էր Թատերական հրապարակ: Եվ հարց է առաջանում՝ իսկ երրորդ անգամի համար ի՞նչ կասեք, Կառլ Հայնրիխովիչ: Դերամս, կատակերգություն, օպերետ, շոմ, մյուզիքլ: Այդ բոլորի տարրերը կային: Սակայն Մարքսը, ավաղ, մեռել է վաղուց (ուղիղ 130 տարի առաջ): Եվ պատասխան չկա:

Իսկ պատասխանը, գոնե մեր համատեքստում, պետք է փնտրել մանկական բանահյուսության մեջ: Ահա մեր մանուկների ամենապայծառատեսական և ամենամարգարեական հաշվերգը:

Փուչիկը ընկավ սեղանի տակ,  
Մի օր, մի օր՝  
Գըն՛ի:

Սա պատկանում է հաշվերգերի մի տարատեսակի, հմնտ. օրինակ, ռուսական՝

Катилось яблочко по огороду  
И упало прямо в воду –  
Бульк!

Բայց որքան ավելի փիլիսոփայական է մերը... Այն ստեղծվել է թերևս 1990-ականների սկզբին և հենց 90-ականներին դարձել ամենատարածվածը: Այստեղ հանճարեղ է և հանճարեղորեն պարզ է ամեն ինչ: Այն հիշեցնում է Անտոն Չեխովի հայտնի արտահայտությունը՝ «Եթե պիեսի առաջին գործողությունում պատից հրացան է կախված, ապա վերջինում այն անպայման պիտի կրակի»: Իսկ հայ մանուկները ավելի պարզ են ձևակերպել՝ եթե կա փուչիկ, ապա ինչքան էլ ապահով տեղ ընկնի այն, միննույն է, մի օր անպայման պիտի պայթի: Ելնելով մեր մանուկների մարզարեությունների հիմնականում քաղաքական ուղղվածությունից, փուչիկ ասելով կարելի է հասկանալ քաղաքականություն, քաղաքական գործիչներ են, բայց և ամեն ինչ՝ ընդհանրապես կյանքը, չէ՞ որ հայտնի խոսք է՝ «կյանքը փուչ է»: Դե երեխաների փուչը փոքրիկ փուչ է՝ փուչիկ: Եվ անպայմանորեն պիտի պայթի ամեն մի դատարկ ու հիմար բան, ինչպես ամեն մի փուչիկ, ինչքան էլ լավ ու տաք տեղ ընկնի այն՝ իշանություն, պառլամենտ, նախարարություն... Սա համընդհանուր, տիեզերական մարզարեություն է, տարածության և ժամանակի, կյանքի և իրականության մշտնջենական բանաձև:

Իսկ ինչ կարելի է ասել մասնավորի, կոնկրետի, փաստի՝ եղելության մակարդակով: Չէ՞ որ տիեզերական ճշմարտությունները գործում են բոլոր՝ և՛ ընդհանուր և՛ մասնավոր դեպքերում, և՛ մակրո և՛ միկրո աշխարհներում: Ահավասիկ, անցյալ տարի, հանրապետական կուսակցության պառլամենտական ընտրարշավի տոնախմբության ժամանակ, երբ բոլոր կուսակցություններն ու շարժումները ջանում էին, ինչպես միշտ ընտրություններից առաջ, առավել չափով դուր գալ ժողովրդին, պայթեցին ու այրվեցին ժողովրդին հմայելու համար բերված գազով լցված բազմաթիվ փուչիկներ, վսասելով շատ երիտասարդների:

Այս տողերը գրելու պահին Թատերական հրապարակում ընթանում է հայկական պերմանենտ հեղափոխության հերթական փուլը: Բաֆֆին հայոց նոր ազգային ինքնությունը կերտած մեծագույն գրողն է, Սվո Ռաֆը՝ մեծագույն «օրենքով գողը»: Գրական հեղինակությանը հաջորդել է նույնանուն քրեական հեղինակությունը: Հիմա ունենք և երրորդ Բաֆֆի... Գրական-քրեական, գրող-գող, հաջորդն

ինչ պիտի լինի: Բանաստեղծության տրամաբանությունը գրող-գող հանգավորվող շարքի մեջ կարող է տեսնել է մի շարք այլ հնարավորություններ՝ խեղդվող, որ երագում է փրկության մի օղ, լավատեսը՝ լույսի մի շող, մյուսներին չի խանգարի գոնե մի քիչ փող... Պարզ է մի բան, պետք է ավարտել մեր ժամանակակից պատմության սերիալի ձգձգված վերջին՝ գողական սերիան... Մինչդեռ ոմանք ասում են՝ Բաֆֆին փուչիկ է, ծաղրածու... Օդում թևածում է փուչիկ-գրմի մանկական մարգարեության ահագանգը:

*2013 փետրվար*

### 3. FINITA LA COMEDIA

Անցավ հինգ տարի: Սկսվեց և հաղթանակեց Նիկոլի հեղափոխությունը: Սա մեր պատմության մեջ էական դեր կատարած Նիկոլներից երրորդն էր: Առաջինը Նիկոլայ առաջին կայսրն էր, որը կործանեց Պարսկաստանի՝ մեր տարածաշրջանում հաստատված դարավոր իշխանությունը, գրավեց ներկա Հայաստանի տարածքն ու ազատագրեց մեզ պարսկական լծից (1828 թ.): Եվ նրա անունով է, որ Հայաստանում սկսեցին մանուկներին Նիկոլ կոչել: Իննսուն տարի անց նրա ծոռ Նիկոլայ երկրորդն իր անփառունակ կառավարմամբ կործանեց Ռուսական կայսրությունը, որով և ազատեց մեզ ցարիզմի լծից (1918): Իսկ հարյուր տարի անց (2018 թ.) մեր Նիկոլը կործանեց երկրում հաստատված քրեաօլիգարխիկ համակարգը և ազատեց մեզ հանրապետականների «գաղջից»: Եվ եթե աշխարհում դեռ գործում են միստիկական օրինաչափությունները, ուրեմն, կարելի սպասել չորրորդ Նիկոլի գալստյանը հարյուր տաս տարի հետո:

Ինչևէ, մեր վերջին հեղափոխությունը նախորդ բոլորից կարճատևն էր և բոլորից արդյունավետը: Ուղղակի Կեսարի ոճով՝ «Եկա, տեսա, հաղթեցի»: Բոլորից երիտասարդականը, բոլորից քախտասականը, բոլորից պայծառը և միակը՝ որ ուղեկցվում էր ժպիտով, ուրախությամբ ու հումորով: «Քայլ արա մերժիր Սերժին» և նույնիսկ «մեր ժիր Սերժին»: Դա 90-ականների մանուկների շնորհիվ, որոնք տեղյակ էին փուչիկի մարգարեությանը և ընտրել էին այն պայթեցնելու այլ ճանապարհ: Ժամանակները փոխվել էին, և օպերայի թթուն վերջնականապես եռացել-գոլորշիացել էր: Գործողությունները տե-

դափռվեցին Հանրապետության հրապարակ՝ այնտեղ, որտեղ արդեն մի անգամ պայթել էին հանրապետական փուչիկները: Պետք էր ավելի մոտ լինել Կառավարության տանը, որը պետք էր գրավել խաղաղ, «ոչ բռնի, թավշյա» եղանակով: Եվ փուչիկի հաշվերգի դարաշրջանի մանուկներից ոմանք հիմա նախարարներ են: Փուչիկը վերջնականապես պայթել է, օպերային թատերաշրջանն ավարտվել:

Հաջորդ էտապն այլ կլինի: Փողոցում մանուկները վանկարկում էին՝ «Ով որ սիգնալ չտա՝ հանրա՛պետա՛կան՝ կան՝ ա՛ն»: Ի՞նչ ապագա է խորհրդանշում այս մանկական մարտակոչը՝ չգիտեմ: Բայց նրանք են, որ պիտի անեն հաջորդ քայլը:

*2018 հուլիս*

# ՄԻ ՀԱՆՇՎԵՐԳԻ ՈՐԻՍԱԿԱՆԸ<sup>1</sup>

Խորհրդային բանագիտության զարգացումը մեծապես պայմանավորված է եղել գաղափարախոսությամբ և կաղապարներով: Խորհրդային բանագետը ոչ այնքան հետազոտող էր, որքան մշակութային ժառանգության կրող, նա ոչ թե ուղղակի ուսումնասիրում էր իր առարկան, այլ գնահատում և պահպանում: Ելնելով մանկավարժական, գեղագիտական, քաղաքական և գաղափարախոսական չափանիշներից, խորհրդային բանագետը շրջանցում և հաշվի չէր առնում բանահյուսության բազմաթիվ ստեղծագործություններ, ժանրեր և նույնիսկ ողջ բաժիններ (օրինակ, բանակային բանահյուսություն, «սև հումոր», մոգական տեքստեր, անեկդոտներ, հայիոյանքներ և այլն): Այդպիսի ուսումնասիրություններում կենդանի իրականությունը փոխարինվում էր մի տեսակ անիրական «կոնստրուկտով», որը գոյություն ուներ կարծես ժամանակից ու տարածությունից դուրս, մշակութային հավերժական արժեքների աշխարհում<sup>2</sup>: Հայաստանում համախորհրդային ընդհանուր կաղապարին գումարվում էր ևս մեկ՝ այսպես ասած, փոքր՝ կայսրություններում ճնշված ազգի մշակույթի պահպանման գործունը՝ ընդունված էր գրանցել, քննել և գնահատել առավելապես արխայիկ և ազգային արմատներով նմուշները: Այս հանգամանքներով պետք է բացատրվի այն, որ մեր բանահյուսական գրականության մեջ նույնիսկ չի հիշվում հայկական հաշվեքերից ամենահայտնին ու ամենատարածվածը՝ այս հոդվածի նյութը (ինչպես նաև մանկական բանահյուսության այլ ժամանակակից նմուշներ)<sup>3</sup>:

1 Հոդվածի նախնական, համառոտ տարբերակը տես Ա. Պետրոյան. Մի հաշվեքի պատմություն. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն. Միջազգային գիտաժողով. Զեկուցումների դրույթներ. Գյումրի 2013, 232–234:

2 А. Ф. Белоусов, В. В. Головин, Е. В. Кулешов, М. Л. Лурье. Детский фольклор: итоги и перспективы изучения. Первый Всероссийский конгресс фольклористов: Сборник докладов. Т.1. М., 2005. с. 217. [www.ruthenia.ru/folklore/luriem10.pdf](http://www.ruthenia.ru/folklore/luriem10.pdf).

3 Հայ մանկական բանահյուսության վերաբերյալ տես Ռ. Գրիգորյան. Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր. Երևան, 1970. Նույնի՝ Հայ մանկական բանահյուսություն. Երևան, 2002: Մեր նոր բանահյուսության քիչ ուսում-

## Հայկական Ալա-բալա-նիցան

Ահա հաշվերգի ամենատարածված տարբերակը.

Ալա-բալա-նիցա, / Դու(ր)ս կաբանիցա, / Հեյ գիդի Վանչո, / Նաշ կապի-տանչո, / Փալանչո:

Արմեն Սարգսյանը գրանցել է բազում տասնյակ տարբերակներ Հայաստանի՝ գործնականում բոլոր շրջաններից, մի շարք շարունակություններով: Այն հայտնի է նաև Արցախում և Վրաստանում (Թբիլիսի, Ջավախք):

Պարզվում է, որ այս հաշվերգն ունի բուլղարական ծագում: Ահա Բուլղարիայում նրա ամենատարածված տարբերակը՝ *Ала-бала-ница, / Турска паница, / Ой гиди Ванчо, / Наш капитанчо*<sup>4</sup> Սա նշանակում է՝ «Ալա-բալա-նիցա, / Թուրքական թաս, / Հեյ գիդի փոքրիկ Իվան, / Մեր փոքրիկ կապիտան»: Ժամանակակից բուլղարերենում *ала бала-ն* ժարգոնային կամ խոսակցական արտահայտություն է «անլուրջ, հիմար, անիմաստ բան» իմաստով, կա և *алабализъм* նորաբանությունը, նույն իմաստով<sup>5</sup>: Սրանք, ակնհայտորեն, անբաժանելի են տարբեր լեզուներում տարածված «գույնզգույն», «խառնաշփոթ», «անհեթեթություն» նշանակություններով, թյուրքական ծագման նմանահունչ բառերից<sup>6</sup>: Հեյ գիդի արտահայտությունը ևս թուր-

---

նասիրված ժանրերով (անեկդոտներ, մանկական հաշվերգեր ևն) ներկայումս ինտենսիվորեն զբաղվում է Ա.Սարգսյանը, որը վերջերս մի շարք աշխատություններ է հրատարակել այդ թեմայով, տե՛ս հատկապես Ա.Սարգսյան, Մանկական զվարճախոսություններ, Երևան 2016. Նույնի՝ Ջավելշտի դրսևորման միջոցները ժամանակակից երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում, Երևան, 2017:

- 4 Հաշվերգի բազմաթիվ տարբերակների հետ ես ծանոթացել եմ համացանցից, այլ տարբերակներ՝ Բուլղարական գիտությունների ակադեմիայի Էթնոլոգիայի և բանահյուսության ինստիտուտի աշխատակից Գրիգոր Գրիգորովից (2013 թ. մարտի 17-ի և 23-ի նամակներ): Հաշվերգն ունի մի շարք շարունակություններ:
- 5 Տե՛ս օրինակ *Речник на българския език, т.1, София, 1977, с.220. Български тълковен речник. София, 1994, с.23.*
- 6 Թյուրքական *ала* «բազմագույն, խայտաբղետ» արմատը ձևավորում է հանգավորվող բարդություններ *б-ով* սկսվող երկրորդ մասով՝ *alabula, alan bulan, alaq bulaq, alay balay, alay bolay* և այլն, «բազմագույն», «աղմուկ, խառնաշփոթ», «անմտություն, անհեթեթություն» նշանակություններով, տե՛ս D. Sinor. *Hullaba-*

քերեն է, որը փոխառվել է հայերենում և բուլղարերենում<sup>7</sup>: Նկատենք, որ այստեղ, այբուբենի առաջին՝ ա, բ, գ, դ տառերով կազմված ալա, բալա, գիդի բառերի շրջապատում Վանչոն կարող է ներկայացնել սլավոնական այբուբենի՝ կիրիլիցայի երրորդ՝ վ տառը:

Բուլղարիայում կա ալա-բալայով սկսվող ևս մեկ տարածված հաշվերգ՝ *Ала бала портокала* (որտեղ *портокал* «նարինջ») բառն ուղղակի հանգավորվել է ալա-բալայի հետ)<sup>8</sup>: Ընդ որում, այն հայտնի է և մակեդոներենում<sup>9</sup>, իսկ Ալա-բալա-նիցան՝ ոչ: Բացակայությունը մերձավոր ազգակից լեզվում ցույց է տալիս վերջինիս առանձնահատուկ՝ բուլղարական ծագումը:

### Այլ ժողովուրդների հաշվերգեր ալա-բալա տարրով

Այդ սկզբնամասով հաշվերգերը լայնորեն տարածված են Բուլղարիայի հարևան Ռումինիայում և Մոլդովայում, օրինակ՝ *Ala Bala Portocala / Iesi Gheorghita la portita / Că te-asteaptă Talion, / Talion, fecior de domn*<sup>10</sup>. Այստեղ ևս հանդես է գալիս «Ալա-բալա նարինջը», հիշվում է և Տալիոնը՝ պարոնի որդի: Հայտնի է Լիվիու Դելիանուի մանկական բանաստեղծությունը՝ *Ala-bala-portokala*, որը դարձել է մանկական բանաստեղծությունների ժողովածուի վերնագիր (ոռու թարգմ. *Ала*

---

loo. Comparative-Historical Linguistics: Indo-European and Finno-Ugric. Papers in Honor of Oswald Szemerényi III, edited by Bela Brgyanyi and Reiner Lipp. Amsterdam-Philadelphia, 1993, p. 553–558. [http://books.google.am/books?id=kSmaBmG\\_yC8C&printsec=frontcover&hl=ru#v=onepage&q&f=false](http://books.google.am/books?id=kSmaBmG_yC8C&printsec=frontcover&hl=ru#v=onepage&q&f=false). Սիս այլալեզու օրինակներ՝ հայ. ալ-բալ «կարմիր կանաչ», որից՝ ալ-բալ հագնել «զուգվել», ալարուլա «խայտաբղետ», «տարորինսակ, կասկածելի», վրացերենում հայտնի է *alabala* «իրարանցում, խառնաշփոթություն», անգլ. *hullabaloo* «աղմուկ, խառնաշփոթ»:

- 7 Հ. Աճառյան. Թուրքերենէլ փոխառեալ բառեր հայերէնի մէջ. Էմիսեան ազգագրական ժողովածու, Գ, 1902, էջ 203:
- 8 Տե՛ս օրինակ Н.С. Bolton, նշվ. աշխ. էջ 65. Сборник за народни умотворения, наука и книжнина. София, 1892. Кн. VIII, с. 260.
- 9 Б. Величковски. Македонски детски фолклор. Скопје, 2011, с. 114.
- 10 <http://www.estcomp.ro/~cfg/cfgdescr.html>; <http://www.youtube.com/watch?v=8JjUIj79VFs>; Communication by folklore: comenius multilateral project, p.30. [www.boldog.hu/Intezmenyek/Ovi/.../CF.pdf](http://www.boldog.hu/Intezmenyek/Ovi/.../CF.pdf).

Бала запевала)<sup>11</sup>: Այլա բալան հայտնի է *ce mai ala bala* «ի՛նչ է կատարվում» իմաստով արտահայտության մեջ<sup>12</sup>, այսինքն, հավանաբար, այստեղ ևս, այն ունի «շարժում, անկարգություն, աղմուկ» իմաստը:

Այլա-բալան, որպես հաշվերգի տարր, բայց ոչ սկզբում, հանդիպում է մեկ այլ բալկանյան երկրում՝ Հունգարիայում՝ *An, tan ténusz,/ Szó, raka, ténusz,/ Szó, raka, tiki, táká,/ Álá, bálá, bim, bam, busz*: Որոշ տարբերակներ վերջանում են այլ կերպ՝ *ala bala bambusz*, կամ *ala-bala bambuszka*<sup>13</sup> (հունգարերենում այլա-բալան իմաստ չունի, բիւմ-բամը՝ զանգի հնչյունի բնաձայնությունն է, *bambusz*-ը նշանակում է «բամբուկ», իսկ *bambuszka*-ն նույնի նվազականն է): Սա արևելատվրոպական մի շատ հայտնի, բազում երկրներում տարածված հաշվերգ է: Ահա այլ տարբերակներ՝ *En-den-dini/sava-raka-tini/sava-raka-tika-taka/elem-belem-buf/trif-traf-truf*, կամ՝ ...эле́м, беле́м, бу́с (Սերբիա, Խորվաթիա)<sup>14</sup>, *En ten dem/So raka tem/So raka tike taka/Ela bela boms* (Ֆիլիպինյա), *En don dino,/sofa la katino,/safa la katikato,/Elik-belik bom* (Իսրայել), *En den dino/sof al hakatino/Elik Belik Bom/Shabat Shalom/Un deux trois/et vous Utes pas!* (հրեական տարբերով և ֆրանսերեն վերջավորությամբ՝ Շաբաթ շալոմ/Մեկ, երկու, երեք/Եվ դուք չեք)<sup>15</sup>, հմնտ. և սրանցից որոշակիորեն տարբեր ոռու. элем-белем, тремкомзелем<sup>16</sup>: Այս հաշվերգի արևմտյան՝ իտալական տարբերակը (*En ten tini savara/ ca tini savara/ ca tica taca/ bia baia buf*)<sup>17</sup>, ինչպես և խորվաթական որոշ նմուշներ, չունեն էլեն-բելեն տարրը, ինչը ցույց է տալիս, որ այն, թերևս, գալիս է արևելքից:

<sup>11</sup> Л. Делиану. Ала-бала-портокала. Кишинеу, 1972. Նույնի՝ Алла-бала запевала. пер. с молд. Е. Благинина. Кишинев, 1984:

<sup>12</sup> Румынско-русский словарь. М., 1943, с.14. Молдавско-русский словарь М., 1961, с. 27.

<sup>13</sup> Communication by folklore: comenius multilateral project, p. 47; <http://forum.index.hu/Article/showArticle?go...>; <http://www.gershon-lehrer.be/blog/2011/08/the-source-of-the-song-en-den-dino/>.

<sup>14</sup> <http://www.unilang.org/viewtopic.php?t=6698>; <https://www.filastrocche.it/contenuti/en-den-dinu-sava-raka-tinu/>.

<sup>15</sup> <http://www.gershon-lehrer.be/blog/2011/08/the-source-of-the-song-en-den-dino/>.

<sup>16</sup> М. Н. Мельников. Русский детский фольклор. М. 1987, с.136.

<sup>17</sup> <https://www.filastrocche.it/contenuti/en-ten-tini-savara/>.

Հաշվերգի առաջին հիշատակությունը գտնում են սերբ դասական գրող Բ. Նուշիչի «Ինքնակենսագրության» մեջ՝ 1870-ական թվականներին վերաբերող հատվածում: Այն արտասանելուց հետո սերբերեխաներից վերջինը կոանալով «թուրքական դիրք» էր ընդունում, իսկ մյուսները թոչում էին նրա վրայով, արտասանելով թուրքերեն աղավաղված բառեր (օրինակ՝ *бир капаклари, бир топузлари* «մեկ կափարիչները», «մեկ մահակները»)<sup>18</sup>: Սա կարող էր ակնարկել նաև հենց հաշվերգի թուրքական ծագումը, բայց այն, իր ամբողջության մեջ, թուրքական տեսք չունի: Ընդհանրապես, ավել /էլեմ-բելեմ տարրը հանդիպում է թուրքական հաշվերգերում, բայց ինձ հայտնի օրինակները չէին կարող լինել եվրոպականների նախատիպը<sup>19</sup> (այսինքն, եթե փոխառված է, ապա, հավանաբար, միայն էլեմ-բելեմ տարրը):

Ալա-բալան հանդիպում է երկու անգլիալեզու պարանախաղի հաշվերգում՝ *Ala bala bushka, king of the Jews* և *Alla balla wiskey, Chinese king*<sup>20</sup> («Ալա բալա բուշկա, հրեաների թագավոր», «Ալա բալա վիսկի, չինական թագավոր»): Անգլերենում *bushka*-ն հազվադեպ սլենգային բառ է<sup>21</sup>, բայց Ալա բալա բուշկան հիշեցնում է նաև հունգարական ալա *ala bala bambuszka*-ն (հնչում է բամբուսկա, հմմտ. և սլավոնական *-yшка* և հունգարական *-cska/-չկա/ նվագական ածանցները*): Ալա բալա վիսկի չինական թագավորը կարող է լինել Ալա բալա բուշկայի «ժողովրդական ստուգաբանությունը»՝ անհասկանալի բուշկան փոխարինվել է նմանահունչ հասկանալի վիսկիով, իսկ հրեաների թագավորը դարձել է չինացի: Ալա-բալա տարրով անգլիալեզու հաշվերգեր հայտնի են նաև Կարիբյան և Բահամյան կղզիներից՝ *Intry, mintry, dibbity fig/ Dealia, dohlia, dominig/ Otchy, kotchy, dominotchy/ Alla balla boo/ Out goes you!* (այստեղ առաջին մասը հանգում է այլ եվրո-

<sup>18</sup> <http://www.vilavi.ru/raz/nush/3.shtml>.

<sup>19</sup> Հմմտ. *Allem, Bellem, Chirozi,/ Chirmirozi, fotozi...* (H. C. Bolton, նշվ. աշխ., էջ 64), կամ՝ *...Birinç, turunç/ Elem belem/ Cicim kaleme...*

<sup>20</sup> <http://www.homeschool.co.uk/resource/jump-rope/jump-rope-rhymes.html>; [http://folktrax-archive.org/menus/search%20for%20titles\\_my\\_1\\_z.htm](http://folktrax-archive.org/menus/search%20for%20titles_my_1_z.htm).

<sup>21</sup> <http://www.urbandictionary.com/define.php?term=bushka>.

պական հաշվերգի) և *Alla balla tingo/ The way jon kalla balla/ Alla balla walla balla oo ja ja...*<sup>22</sup>

Ինչպես ասվեց, բերված հունգարական հաշվերգը տարբերակներից մեկն է այն հաշվերգերի, որտեղ այլ լեզուներում ի հայտ են գալիս էլեմ-բելեմ կամ նմանատիպ արտահայտություններ (հավանաբար, արևելյան ծագման): Կարելի է ենթադրել, որ էլեմ-բելեմը Հունգարիայում դարձել է պլա-բալա բուլղարա-ռումինական պլա-բալայի ազդեցությամբ: Ալա-բալա տարրով անգլիալեզու հաշվերգերը, հավանաբար, ստեղծվել են արևելաեվրոպական ազդեցության տակ: Իսկ Ամերիկայից հայտնիները, հավանաբար, հանգում են անգլիական նախատիպերի, բայց կա նաև արևելաեվրոպական ուղղակի ազդեցության հավանականություն: Ակնհայտ է, որ պլա-բալա արտահայտությունը ծագում է նույն բնից, ինչ էլեմ-բելեմը: Բայց, ինչն էլ ինչ, Ալա-բալա-նիցան ստեղծվել է Բուլղարիայում և տարածված չէ հարևան երկրներում:

### Բուլղարիայից Հայաստան

Հայաստանում Ալա բալա նիցան հայտնի և շատ տարածված է եղել Երևանում արդեն 1920-ական թվականներին (ինֆորմանտ՝ Մարգո Մինասյան, ծն. 1917 թ., Երևան): Հայաստանի շրջաններից իմ ունեցած ամենահին վկայությունները 1930-ականներից են, իսկ Թբիլիսիից վկայություն կա գոնե 1940-ականների սկզբից (բանագետ Մարգիս Հարությունյան), ուրեմն, եղել է և 1930-ականներին: Տեսականորեն այն կարող էր Հայաստան բերվել Բուլղարիայից հայրենադարձված հայերի միջոցով: Բայց առաջին բուլղարահայերը Հայաստան են ներգաղթել 1923 թ., այն էլ փոքր քանակությամբ<sup>23</sup>, իսկ 1920-ականներին, ինչպես տեսանք, հաշվերգը Երևանում արդեն հայտնի էր:

<sup>22</sup> <http://www.playgroundjungle.com/2009/12/counting-out-rhymes.html>; <http://mudcat.org/thread.cfm?threadid=27634>. Սրանց առթիվ հիշվում են առավել հեռու քրիտանական օրինակներ՝ oller boller, olla bolla, hally bally bee, որոնք, հնարավոր է, ինչ-որ կերպ կապված են մյուսների հետ:

<sup>23</sup> Ա. Ստեփանյան. XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում. Երևան, 2010, էջ 356: Այդ տարի Հայաստան է հայրենադարձել ընդամենը 1000 մարդ՝ Հունաստանից, Բուլղարիայից, Սիրիայից և Պոլսից:

Մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ այդ բուլղարական հաշվերգը տարածված չի եղել Թուրքիայում և Ռուսաստանում: Քսաներորդ դարի վերջին տասնամյակներից այն, շատ աղավաղված տարբերակներով, ի հայտ է գալիս Ռուսաստանում: Դրանց մի մասը ծագում է Հայաստանից, իսկ մյուսը՝ Վրաստանից՝ Թբիլիսիից, ուր եղել են բուլղարական բնագրից շեղված առանձնահատուկ տարբերակներ<sup>24</sup>: Այսպիսով, կարելի է միայն դատողություններ անել, թե ինչպես է բուլղարական հաշվերգը հայտնվել Հայաստանում: 1896-ի համիդյան ջարդերից հետո Բուլղարիայում են ապաստանում թուրքական լծի դեմ պայքարող հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գործիչներ, քաղաքական կուսակցությունների ղեկավարներ, մտավորականներ, որոնք Բուլղարիայից ղեկավարում էին իրենց կազմակերպությունները և սերտ կապերի մեջ էին տեղի իշխանությունների և տեղի մակեդոնական ազատագրական կազմակերպությունների հետ<sup>25</sup>, որոնք հետո, Ռուսական կայսրության կործանումից հետո անցան Հայաստան: Հնարավոր է պատկերացնել, որ Ալա-բալա-նիցան Հայաստան է հասել նրանց երեխաների միջոցով:

Մա մշակութային երևույթի իսկական ժողովրդական փոխառություն է: Հաշվերգերը սովորաբար ստեղծվում և տարածվում են միայն երեխաների կողմից, բանավոր ճանապարհով: Ալա-բալա-նիցայի այս ողիսականը թերևս բացառիկ է աշխարհում: Հայ մանուկները ինչ-ինչ ճանապարհով փոխառելով հաշվերգը, այն հասցրել են Վրաստան և Ռուսաստան, գուցե նաև նախկին ԽՍՀՄ այլ երկրներ և հեռավոր արտասահման, ուր շատ հայեր կան: Մա հայ-բուլղարական մշակութային կապերի ամենահետաքրքիր դրսևորումներից է, ամենաժողովրդականն ու ամենահմայիչը:

<sup>24</sup> Հաշվերգի մի շարք ռուսական և վրացական տարբերակներ տես <http://blogs.privet.ru/user/Flena/68673162>; <http://www.unn.ru/folklore/schzaum.htm>; <http://www.proza.ru/comments.html?2006/08/14-257>.

<sup>25</sup> Այդ մասին մանրամասն տես Զ. Ղասաբյան. Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից. Երևան, 1978, էջ 5–11. Նույնի՝ Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1996–1970). Երևան, 1986, էջ 16–26:

# IV ՄԱՍ

---

## ԼԵԶՎԱԿԱՆ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ<sup>1</sup>

Մեզանում լեզվական աղավաղումների վերաբերյալ խոսվել և գրվել է բավականաչափ: Հրապարակվել են բազմաթիվ որոշումներ, գիտական և հրապարակախոսական հոդվածներ, սփռվել հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ:

Մեր լեզվական իրադրությունը երբեք էլ անաղարտ չի եղել: Հայոց լեզուն հենց նոր է, ի վերջո, դառնում իսկական, լիարժեք պետական լեզու: Հայոց լեզվով են խոսում երկրի իշխանությունները, օտարերկրյա դեսպաններ, ձևակերպվում և հրատարակվում օրենքներ և միջազգային փաստաթղթեր, գրվում Հայաստանում վաճառվող արտասահմանյան, այդ թվում՝ էկզոտիկ երկրների արտադրանքի պիտակներ: Հայերենը դարձել է անկախ պետության լեզու և նրա վարկը բարձրացել է:

Դրա հետ միասին, որոշ չափով պայմանավորված նաև հենց նշված երևույթներով, հենց վերջերս ի հայտ են եկել լեզվական նոր աղավաղումներ: Վերացել է պետական պարտադրանքը, կայսրության լեզվի՝ ռուսերենի ուղղորդող ազդեցությունը, մեծանում է անգլերենի ազդեցությունը, վերացել է Տերմինաբանական կոմիտեն, իսկ այն փոխարինելու կոչված մարմինների գործունեությունը արդյունավետ չէ:

---

<sup>1</sup> Այս հոդվածի որոշ հատվածներ առաջին անգամ տպագրվել են «Հետաքննություն» (Իրավունք) թերթում (2007, № 39–48):

## ՄԱԿԱՐՈՒՅԾ ԲԱՌԵՐ ԵՎ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«...Բոլոր այս փաստերը, պարոնայք երդվյալ արենակալներ, հեղափոխություն են մեզ հեղափոխության տեսակետից»: Օարապը խոսում էր մինչև հեղափոխական երդվյալ հավաքարմավարի վար եղանակով, որը բռնելով որևէ խոսքի պոչից, այլևս արամներից բաց չէր թողնում և մեծ դարավարության ամբողջ տաս օրերի ընթացքում քաշը էր փախի իր երկից:

Ի. Իլֆ և Ե. Պետրով, «Ոսկե հորթը»

Լեզվական ցածր մշակույթի դրսևորման առավել աչքի զարնող և բնութագրական դրսևորումներից է այսպես կոչված մակաբույծ բառերի և արտահայտությունների օգտագործումը: Դրանք խոսքին ոչինչ չտվող և փաստորեն ոչինչ չնշանակող բառեր և արտահայտություններ են, որոնցով ցածր խոսքային մշակույթի մարդիկ համեմուն են իրենց խոսքը: Մովորաբար օգտագործվում են անիմաստ կերպով, երբեմն՝ խոսքային տարածությունը լցնելու համար, դադարի փոխարեն, երբեմն՝ երբ խոսողը դժվար իրադրությունից չի կարողանում դուրս գալ, ժամանակ է շահում (երբ չգիտի ինչպես պիտի ավարտի սկսած նախադասությունն ու միտքը): Լեզուն ընդհանրապես չի սիրում երբ նույն բառերը հաճախ են կրկնվում խոսքում, իսկ որևէ բառի կրկնությունը մեկ նախադասության մեջ միանգամայն անընդունելի է, վատ տոնի նշան: Նման բառերն ու արտահայտությունները անընդհատ կրկնվելով տհաճություն են պատճառում լսողին:

Ահա մի քանի հանրածանոթ և տիպական օրինակներ՝ ուրեմն, այսպես ասած, ասենք, պետք է ասել: «Նա, ուրեմն, կարծում է, թե ինքը, ուրեմն, շատ խելոք է»: Կամ՝ «Նա, այսպես ասած, կարծում է, թե ինքը, այսպես ասած, շատ խելոք է»: Այստեղ չենք խոսում երիտասարդ տղաների և բազում նախկին երիտասարդների մշտական արա՛-ի մասին, որը, բարեբախտաբար, չի կիրառվում գրավոր խոսքում և պաշտոնական ելույթներում («Արա՛, մեկ էլ տեսա, արա՛, մի յոթ հոգի, արա՛, վրա են տվել»): Իսկ այս անիմաստ ուրեմն-ը և այսպես ասած-ը հանդիպում են ամենատարբեր մասնագիտությունների մարդկանց, այդ թվում՝ ճիշտ խոսքը ուսուցանելու կոչված ուսուցիչների, դասախոսների և լրագրողների բառապաշարում: Ոչ պակաս

տհաճ է, երբ մակաբույծ բառերը լսվում են մեր երկրի խոսող վերնախավի (էլիտա)՝ խորհրդարանականների լեզվում, մանավանդ խորհրդարանի նախագահի կամ կուսակցական առաջնորդի կողմից: Սրանցից է ուրեմն-ը, որն անխղճորեն չարաշահվում է:

Որոշ սովորական բառեր ևս, հաճախ կրկնվելով, դառնում են մակաբույծ բառեր: Այդպիսի մի օրինակ է բերված հոդվածի բնաբանում, որտեղ հերոսը՝ անմոռանալի Օստապ Բենդերը իր խոսքում չարաշահում է «հետաքրքրություն» բառը: Խորհրդարանում այդպիսի վատ արտահայտված, համընդհանուր օգտագործման օրինակներ են կապված-ը և առումով-ը: Ունանց մոտ էլ այդպիսի կիրառություն են ստացել նաև ակնհայտ-ն ու միանշանակ-ը: Սրանց վերջինը հետաքրքիր պատմություն ունի: Այն սկսվեց լայնորեն կիրառվել ԽՍՀՄ կենտրոնականների և հատկապես Մ. Գորբաչովի ելույթներից հետո: Երբ որևէ բարձրագույն որոշում երկրում չէր ընդունվում, երկրի ղեկավարներն ասում էին, որ այդ որոշումը ոչ միանշանակ (ռուս. неоднозначно) է ընկալվել: Այսինքն, ոգևորությամբ և շտրիակալությամբ չի ընդունվել ժողովրդի կողմից, ինչպես լինում էր խորհրդային դասական ժամանակներում: Այդպիսիք էին, օրինակ, Ղարաբաղի հարցի իրենց առաջարկած լուծումները: Հետխորհրդային որոշ գործիչներ ավելի առաջ անցնելով, այս միանշանակ-ը չարաշահելով հաճախ օգտագործում են «կտրականապես այո», «կտրականապես ոչ» իմաստներով:

Հարց. «Ուրեմն՝ այս տարի կլինե՞ն արտահերթ խորհրդարանական ընտրություններ»: Պատասխան. «Միանշանակ»: Եվ այդպես, միանշանակ ողջ հարցազրույցի ընթացքում: Իսկ արտահերթ ընտրություններ չեն լինում ու չեն լինում: Եզրակացություն. տափակ ոճով միանշանակ կանխատեսումները չեն իրականանում:

Խորհրդարանական ժարգոնի առավել բնութագրական և անդուր օրինակներից է առումով բառը: Տիպիկ գրական բառ է, և հաճախ, ինչպես և մակաբույծ բառերը, կիրառվում է, երբ գրական լեզվին լավ չտիրապետող խոսողը օգտագործում է ոչ տեղին, նաև երբ չգիտե, թե ինչպես ավարտի իր դժվար միտքը: Նշանակում է՝ 1. առնելը, գրավում (օրինակ, Թմկաբերդի առումը), 2. բառի տարբեր նշանակություններից՝ իմաստներից յուրաքանչյուրը: Իսկ խորհրդա-

բանում այն ձեռք է բերում նորանոր ինքնահնար իմաստներ: Այսպես, փոխանակ ասելու «այսինչ բանի համար», ասում են՝ «այսինչ առումով» (օրինակ՝ «ծախսերը կրճատելու առումով»): Ժամանակին մենք ակնաստես եղանք, թե ինչպես մի դեռևս ոչ խորհրդարանական երիտասարդ քաղաքական գործիչ, միանգամայն հասու հայաստանյան քաղաքական իրականության մեջ փչող հովերին, սկսեց իր խոսքում կիրառել այս առումով-ը բառի այլևայլ խորհրդարանական «առումներով»:

Խորհրդարանում միանգամայն մակարոյծ կիրառություն ունի կապված բառը, որն անիմաստ կերպով սկսվում է ճառի սկզբից ու փայլատակում ամեն մի հաջորդ նախադասության մեջ: Ահա մեջբերում մի պատգամավորի խոսքից «ԱՄՆ-ն նախանձախնդիր է մեր խորհրդարանական ընտրությունների հետ կապված» (ուզում է ասել, որ ԱՄՆ-ն շահագրգիռ է մեր ընտրությունների արդար ընթացքին), իսկ հետո՝ ամեն ինչ՝ կեղծիքներ, կաշառքներ և այլ անպետք բաներ, բոլորն էլ անիմաստ կերպով «կապված»:

Եթե Օստապ Բենդերն իր խոսքում կրկնում էր մեկ բառ իր հակառակորդին հունից հանելու համար, իսկ նրա նախատիպ մինչեդափոխական երդվյալ հավատարմատարները քարշ էին տալիս իրենց նախասիրած մակարոյծ բառը մեծ դատավարության ընդամենը տաս օրերի ընթացքում, ապա մեր բանը շատ ավելի դժվար է: Հայկական խորհրդարանի ելույթները սփռվում են եթերով արդեն մեկուկես տասնյակ տարի, և դեռ ո՞վ գիտե, թե որքան ժամանակ մեր մեր ուղեղը, ավելի ճիշտ՝ թմբկաթաղանթները պետք թմբկահարվեն առում-ներով ու կապված-ներով:

Մակարոյծ բառերը կարող են լինել նաև թարգմանված կամ փոխառված: Այսպես, «ուրեմնը» և «այսպես ասածը» փոխարինում են ռուսերեն մակարոյծ значит-ին և так сказать-ին: Ռուսերենից փոխառված մակարոյծ բառ է նու-ն (ны): «Ես կասեի, նու, որ նա բավական երկարահասակ է»: Սրանցից ամենաանիմաստը ասում ա-ն է (ռուս. говорят): Այն կիրառվում է բացարձակապես անհարկի՝ «Ասում ա, մի անգամ, հայր, թուրքը, վրացին, ասում ա, ընկնում են մի վայրի ցեղի մեջ»: Առավել մեծ տխմարություն դժվար է պատկերացնել:

Այլևայլ մակարոյծ բառեր հանդես են գալիս որոշակի մասնագիտության մարդկանց լեզվում և դառնում են մասնագիտական ժար-

գոնի բաղադրիչներ: Ողբալի է, երբ դրանք հանդիպում են մեր խոսքը հանրային տարածողների լեզվում: Այսպես, իհարկե-ն, սկսել է դառնալ մակաբույծ բառ՝ ռադիո- և հեռուստատեսային մի քանի երիտասարդ հաղորդավարների լեզվի տիպական մի կրկներգը: «Ավարտվեց այս գեղեցիկ երգը և մենք, իհարկե, կշարունակենք մեր համերգը»:

Մեր ԶԼՄ հաղորդավարների լեզվի ամենատգեղ մակաբույծ բառը, թերևս, հաստատում աղերսող համ-ն է, նույնպես, հավանաբար, թարգմանված ռուսերեն տգետ մի ռճից (да?): «Ենթադրենք, Դուք ունեք, համ, մի խնձոր, եթե ես մեկն էլ տամ, համ, ուրեմն, արտահերթ ընտրություններ չեմ լինի»: Այս ռճն իր մեջ ունի շողոքորթող ու քծնող երանգներ: Թվում է, թե խոսում է թերաբժեքությամբ տառապող մեկը, որն անընդհատ անիմաստ կերպով իր և իր մտքերի գոյության իրավունքի հաստատումն է հայցում զրուցակցից: Այն, որպես ԶԼՄ քաղաքական ժարգոնի մակաբույծ բառ մինչև վերջերս տարածված չէր և, որքան հիշում եմ, բնորոշ էր միայն մեկ քաղաքական գործչի: Հետո այն սկսվեց առատորեն հանդիպել ոչ գրական լեզվով քաղաքական հարցազրույցների հաղորդաշար վարող մի հեռուստալրագրողի խոսքում (որն, ի միջի այլոց, չարաշահում է նաև նու-ն), իսկ ներկայումս սկսում է նորանոր սահմաններ նվաճել:

Այսպես, մի երիտասարդ քաղաքական հաղորդավար և մի հաղորդավարուհի, որոնք մինչ այդ կարծես միանգամայն կիրթ կերպով կարողանում էին յուրա գնալ առանց համ-ի, յուրացրել և օգտագործում են այն, ընկալելով, թերևս, որպես քաղաքական հաղորդավարի կայացման մի անհրաժեշտ տարր: Ի միջի այլոց, կա նաև այդ մակաբույծ բառի մեկ այլ, առանց հարցականի տեսակը, որը բարեբախտաբար, հեռուստա-ռադիոթերում դեռևս չի չարաշահվում: «Հա, ես գնացի, հա, մեկ էլ տեսնեմ, հա, ինքը եկավ»: Սա ավելի հաստատական ձև է, և խոսողը լսողից հաստատում չի աղերսում, այլ անընդհատ «ինքնահաստատում» է իրեն:

## Մենթալիտետ

*Ազգովի դատնում ենք միլիցա՝ մենթ: Բա մի ժողովրդի մեջ որ էդքան մենթ ըլի, ժողովրդի մրածողությունն էլ մենթալիտետ կլինի, էլի:*

*Վարդան Պևրոսյան*

Ժամանակակից հետխորհրդային հայոց լեզվում և հատկապես մամուլում շրջանառվող առավել տհաճ և առավել անգրագետ սխալներից մեկն է:

Բառը վերցված է ռուսերեն *менталитет*-ից, որն իր հերթին փոխառություն է գերմաներենից (*Mentalität*): Վերջինս էլ ծագում է ֆրանսերեն *mental*, ուշ լատիներեն՝ *mentalis* «մտավոր» բառից: Բանի զուգահեռներն են ֆրանս. *mentalité* և անգլ. *mentality* ձևերը:

Նշանակում է «մտածողություն», «խելք, ինտելեկտ», «մտավոր կերտվածք, խառնվածք», «հոգեբանություն», «մտածելակերպ» և այլն: Հայերենում շատ պարզ ու հայտնի, բոլորի կողմից ընդունված, բառի նրբերանգները միանգամայն ճշգրիտ ներկայացնող համարժեք բառեր ունի: Մինչև վերջերս պաշտոնական գրավոր հայերենում չէր կիրառվում. օգտագործվում էին հայերեն ձևերը: Ներկայումս, հատկապես ԶԼՄ-ներում և խորհրդարանում վերին աստիճանի տարածված բառ է և օգտագործվում է սովորաբար ոչ թե ընդհանրապես «մտածելակերպ», այլ մեր ազգին բնորոշ «հայկական առանձնահատուկ, արխաիկ, հետամնաց և գավառական մտածելակերպ» իմաստով, հաճախ այդ անպետք գավառամտությունը քնադատող և իրենց, այդպիսով, ոչ գավառական մտածելակերպի կրող համարող լրագրողների ու գործիչների կողմից: Մինչդեռ այդ քննադատողների ամեն մի հոդվածում կամ ելույթում մի քանի անգամ հանդիպող *մենթալիտետը* տխուր խոհեր է հարուցում նաև մեր առաջադիմած ներկայացուցիչների «մենտալիտետի»՝ իմացություն-ինտելեկտի վերաբերյալ:

Ո՞րն է սխալը: Նախ, օտարահունչ, ռուսերենից վերցված բառի անհարկի կիրառությունը: Բայց դա միայն չնչին մի բան է, թող մի փոխառություն էլ ավել կամ պակաս լինի, կարելի է դիմանալ: Մոդա է, կանցնի, կգնա: Բանավոր խոսքում էլ օգտագործվում է մենտալի-

տետ նորմալ ռուսերեն ձևով (երբեմն՝ *մենտալիծեպ*): Բայց կա մի էական սխալ: Լատիներեն այդ բառի արմատն է մենտ-՝ *մենտալիս*, և ոչ *մենթալ*: Այս որտեղից այս թ-ն: Շատ պարզ, այս բառը սիրող ու օգտագործող մարդիկ այն շփոթել են և սխալ «ստուգաբանել» ըստ մեկ այլ արմատի՝ *մենթոլ*-ի (menthol): Վերջինս քիմիական նյութ է՝  $C_{10}H_{19}OH$ , որը մեծ քանակությամբ պարունակում է դադձում և իր անունն էլ ստացել է լատ. mentha «դադձ» բառից: Իհարկե, այս սխալը կերտող «գիտակաները» չէին կարող տեղյակ լինել օրգանական քիմիայում հազեցած երկրորդային սպիրտների անվանաբանությանը: Նրանք ուղղակի գիտեին, որ կան մենթոլային՝ դադձի բույրմունքով ծխախոտներ ու ծամոններ, որոնց վրա անգլերեն, այսինքն՝ լատիներեն տառերով գրվում է menthol: Լատինական th-ն էլ, հայտնի բան է, հայերեն տառադարձվում է որպես թ:

Լեզվաբանության մեջ երկու նմանահունչ բառերի շփոթությունը հայտնի երևույթ է և կոչվում է բաղարկություն (կոնտամինացիա): Այդ երևույթը սովորաբար բնորոշ է ժողովրդական, ցածր խավի լեզվին: Այս դեպքում, ընդհակառակը, բանավոր-սովորական, բայց ավելի ճիշտ մենտալիտետն է վերածվել լրագրողական-խորհրդարանական, այսինքն՝ ավելի գրագետ ենթադրվող, բայց իրականում անգրագետ մենթալիտետի:

## Չաթի, գատո

Քանի որ խոսվեց բաղարկության մասին, այստեղ հիշենք մեզանում շատ տարածված ժողովրդական լեզվի մի օրինակ: Բարբառներում *զաթ*, *զաթե*, *զաթի* նշանակում է «արդեն իսկ, հենց, ասենք»: Օրինակ, «զաթի դու ես, որ կաս»: Իսկ ռուսերեն *զայոն* (зато) նշանակում է «միաժամանակ, բայց դրա փոխարեն, այդ պատճառով»: Ժամանակին իրենց ավելի գիտակ համարող գավառացիները զաթիի փոխարեն ավելի հաճախ գատո էին ասում: Հիմա այս սխալը քիչ է լսվում և, փառք աստծու, կարծես թե չի շրջանառվում բարձր պաշտոնական ոլորտներում:

## Մամլո ասուլիս, մամլո քարտուղար

*Ձայն բարբառոյ յանապարհ...*

*Մամուլ* հին հայերեն նշանակում է «ճնշելու՝ ճզմելու գործիք»: Տպագրության գյուտից հետո դարձել է տպագրական տերմին, և դարձել պարբերական հրատարակությունների ընդհանուր անվանումը: Թարգմանված է եվրոպական լեզուներից, որտեղ *press*-ը «սեղմում, սեղմելու գործիք» իմաստից ձեռք է բերել «տպագրության գործիք, տպագրություն, հրատարակչություն, պարբերական մամուլ» և այլ նման իմաստներ: Մամուլը ներկայումս առավել հաճախ օգտագործվում է հենց «տպագիր պարբերական» իմաստով, որ բառի նոր, հնից նշանակալիորեն տարբերվող իմաստն է: Մամուլ բառի արևելահայերեն սեռական հոլովածն է *մամուլի*: Ըստ այդմ, պետք է լինի *Մամուլի փուն, մամուլի ասուլիս, մամուլի քարտուղար, մամուլի փեսություն* և այլն: Ժամանակին հենց այդպես էլ ասվում և գրվում էր: Իհարկե, արևմտահայերեն ընդունված է *մամլոյ* սեռական ձևը, բայց այս փոխառության իմաստն անբացատրելի է: Ոչ մի հիմք և անհրաժեշտություն չկա այն փոխառելու համար: Եվ ընդհանրապես, մի՞թե հնարավոր է արևմտահայերեն մի հոլովածն փոխառել միայն մեկ բառի համար:

Ամեն ինչ փոխվեց, երբ Լևոն Տեր Պետրոսյանը, իր նախագահության օրոք, որպես հին հայ լեզվի և մշակույթի գիտակ, իր ելույթներից մեկում օգտագործեց *մամլո* ձևը: Այն իր գրաբարյան արխաիկ հնչմամբ հիացմունք պատճառեց իշխանամետ հայ լրագրողներին, որոնք դրանից հետո համարյա մոռացան նախկին *մամուլի* սեռականը և գլխովին անցան մամլոյի՝ *մամլո ասուլիս, մամլո քարտուղար, մամլո ծառայություն* և այլն: Ընդդիմադիրներըրը հետ չմնացին՝ հաղթեց «թուրքն անիծած, խոսքը օրհնած» մտայնությունը: Հայտնի բան է, մեռած հին լեզուներից վերցված արտահայտություններն ու մեջբերումները վեհացում են մանավանդ դատարկ ու անհամ խոսքը:

Բայց այս ձևն ըստ իս սխալ է և խոտելի: Ըստ Նոր հայկազյան բառարանի, գրաբարում մամուլ բառի սեռականն է *մամլոյ*, ժամանակակից ընդունված արտասանությամբ՝ *մամլո* (այն, ի միջի այլոց, բառարանում ներկայացված չի օրինակներով և հնարավոր է, որ ուշ,

արհեստական ձև է): Ինչևէ, նմանօրինակ գրաքարյան ձևեր, իհարկե, էլի կան և կիրառվում են: Ամենահայտնի օրինակը բերված է բնաբանում (կարդացվում է, և հաճախ նոր ուղղագրությամբ գրվում՝ *ձայն քարքառո հանապարհ*): Նման արտահայտությունները օգտագործվում են որպես մեջբերումներ, որպես քարացած արխաիզմներ: Բայց մամլո ասուլիսը կամ մամլո տեսությունը մեջբերումներ չեն: Չէ որ մամուլը, «տպագրություն, պարբերական հրատարակություն» իմաստով, բոլորովին էլ հին երևույթ կամ քարացած արխաիզմ չէ: Առավել ևս ասուլիսը, «ինտերվյու» իմաստով:

*Մամլո քարտուղարը* այնպես է հնչում, ինչպես, ասենք, *գինյո կոմբինատորը, գարեջրո գործարանը, հեծանվո անիվը*, կամ, ի վերջո, *էշո քոռակը*, այսինքն՝ ծիծաղելի: Այսպիսով, *մամլո*-ն անհաջող մի ձև է, որի կիրառությունը մամուլում պետք է վերացնել:

## Էլիտա, Էլիտար

*Մեր հանրապետությունը որդեգրել է զարգացման «Էլիտար» ուղի: Ամեն ինչի «Էլիտարը» կա՛ Էլիտար սնունդ, Էլիտար խմիչք, Էլիտար զուգարանի թողոթ: Էլիտար հանգիստ՝ միայն ընտրյալների համար: Էլիտար Ծաղկածոր, Էլիտար տնակներ, Էլիտար տնակներից մինչև Էլիտար ճաշարան՝ տաս Էլիտար մետր, գնում ենք «Ջիպով»: Բացվում են մերենայի դռները և դուրս են ժայթքում Էլիտար Վարդուշներն ու էլ ավելի Էլիտար Թոթոշները՝ գնում են Էլիտար ճաշարան ուրելու:*

*Վարդան Պերրոսյան. «Ինչ անել»*

Այս, ինչպես և բազում այլ մոդայիկ բառեր ու ձևեր մեզ են անցել ռուսերենից: Элита բառը ռուսերենում նշանակում է «ընտիր տեսակ» (բույսերի և կենդանիների բազմացման համար ընտրված), «ընտրասերմ» և «ընտրախավ, ընտիր հասարակություն» (ֆրանս. élite «լավագույն, ընտիր»): Ռուսական խորհրդային բառարանները վերջին իմաստի համար տալիս էին «բուրժուական պետության մեջ հասարակության վերնախավ», «ընտիր հասարակություն» մեկնաբանությունները: Այս բառը շատ է դուր եկել մեր երկրի՝ իրեն ընտրախավ և վերնախավ համարող զանգվածին և լրագրողներին: Հետխորհրդային առաջին շրջանում հանկարծ պարզվեց, որ, պայմանավորված մեր ոչ բուրժուական անցյալի հանգամանքով, մեր երկրում ընտրա-

վերնախավ չկա, և սկսեցին ինտենսիվորեն կերտել այն: Բայց, ցավոք, վերնախավի փոխարեն կերտվեց «էլիտա»:

Այս բառը, ինչպես և հայերենում նորաթուխ կիրառություն ունեցող որոշ այլ բառեր, ավելի լայնորեն օգտագործվում է իր, այսպես ասած, չակերտավոր իմաստով՝ «էլիտա»: Այո, մեզանում ժողովրդի ընտրյալը «ժողովրդի ընտրյալ» է, իսկ ժողովրդի կամ անձի մտածողությունը՝ «մենթալիտետ»: «էլիտա» են համարվում, հիմնականում, քրեականորեն հետապնդելի ճանապարհով հարստացած մարդիկ և նրանց «ծոցից ելած» պաշտոնյաներն իրենց ազգուտակով: Այսինքն՝ չակերտավոր «ընտրախավ», որն արժանի չէ նույնիսկ ազատության մեջ գտնվելու, բայց մեր ժողովրդին հետապնդող չար բախտի պատճառով հասարակության մեջ իշխող դիրքի է հասել: Այն, որպես իսկական «ընտիր հասարակություն» իր ճաշակն ու բարքերն է պարտադրում ժողովրդին՝ ռաբիսը նորանոր բարձունքներ է նվաճում: Այդ մարդիկ, պարզ է, պիտի ապրեն «էլիտար» բնակարաններում և տներում, օգտագործեն «էլիտար» կահկարասի, սնունդ և այլն: Իրենց չկորցնող գովազդային լրագրողներն էլ պահը բաց չեն թողել՝ «Բջնի՝ էլիտար հանքային ջուր»: Ընդ որում, որպեսզի անգրագիտությունը կատարյալ լինի, Բջնին էլ արտասանվում է Բժնի: Այո, ռաբիան է իշխում մեր երկնականարում: Դե, իսկ թերթերի առաջնորդողներից չի պակասում մեր «էլիտայի» քննադատությունը:

Եթե այդ էլիտան սովորաբար օգտագործվում է չակերտավոր վերնախավ իմաստով, ապա իրենց առավել գրագետ համարող լրագրողները կարող են հենց այդպես էլ գրել՝ «ընտրախավ» կամ «վերնախավ»:

## Սահակաշվիլի

Վրաստանի նախագահի անուն ազգանունն է Սահակաշվիլի՝ այդպես է գրվում վրացերեն: Բայց ինչու՞ են մերոնք համառորեն գրում Սահակաշվիլի: Ուզում ենք մենք մեր հայկական ներքին շուկայում հաստատել, որ նրա հայրը, պապը կամ նախապապը հայ է եղել: Արդյո՞ք դա նոր փառքի կհասցնի մեր ժողովրդին, կամ արդյո՞ք դրանից նրա վերաբերմունքը հայերի հանդեպ կլավանա:

Աստվածաշնչյան Իսահակ անունը տարբեր լեզուներում տարբեր ձևեր է ընդունել՝ ռուս. Իսակ, անգլ. Այզեք և այլն: Եվ միայն հա-

յերի մոտ այն ունի կրճատ Սահակ ձևը: Այս անունը տարածված չէ վրացիների մեջ, բայց հանդես է գալիս վրացական ազգանվան մեջ:

Վրացական պատմության հանրահայտ դեմքերից է Գեորգի Սաակաձեն (16-17-րդ դարեր): Այս Գեորգին ծագումով կարծես հենց հայ էր: Ազգը պանծացնելու ազնիվ «հայրենասիրական» մղումներից նրան կարելի էր Սահակաձե կամ նույնիսկ Սահակյան դարձնել, բայց ոչ, նրա անունը շատ ճիշտ կերպով հայերենում տառադարձվել է Սաակաձե: Հենց այդպես էր հայերեն կոչվում վրացական՝ իրենց հերոսին փառաբանող և հայկական ծագման մասին բան չասող կիսոնկարը՝ «Գեորգի Սաակաձե»:

Եթե Սաակաձեն Թբիլիսիի քաղաքապետն էր, ապա Սաակաշվիլին՝ Վրաստանի նախագահը: Այսպիսով, այս հայանուն ազգանվակիր անձանց պաշտոնը Վրաստանում դարերի հետ առաջ է մղվում: Սա, ի միջի այլոց, առաջին դեպքը չէ: Հիշենք Բագրատունիներին, որոնք Վրաստանում իշխում էին Բագրատիոնի արքայական տոհմանումով:

Բայց, անկախ պատմական իրողություններից, անվան ստուգաբանությունը անունը «հայեցի» տառադարձելու բավարար հիմք չէ: Այդ տրամաբանությամբ վրացական արիստոկրատների Բագրատիոնի ազգանունը պետք է տառադարձենք Բագրատունի: Բագրատ անունն էլ, ի միջի այլոց, իրանական Բագադատայի հայկական ձևն է: Ուրեմն, պարսիկները հայոց Բագրատունի ազգանունը պիտի տառադարձեն որպես Բագադատունի: Ողջ քրիստոնեական աշխարհը հեղեղված է հունական և հրեական անուններով: Ուրեմն, հույները ռուսական Ֆյոդորով ազգանունը պիտի տառադարձեն որպես Թեոդորոսով, անգլերեն Ստիվենսոնը՝ Ստեփաննոստոն, իսկ հայերեն Պողոսյանը՝ Պավլոսյան: Կամ հրեաները հայ Սահակյանը պիտի դարձնեն Յիցխակյան: Բայց ոչ, փառք աստծու, այդպես չի: Ամբողջ աշխարհում գործում են անունների տառադարձման այլ սկզբունքներ: Սաակաշվիլին պիտի մնա Սաակաշվիլի, անկախ նրա նախնի Սահակի ազգային ծագումից:

Մնում է ավելացնել, որ Սաակաշվիլու անվան ճիշտ ձևն է Միլեիլ, և ոչ Միլասիլ:

## ԹՈՒՎԱԼՈՎ

Ի միջի այլոց, նման մի սխալ ձև է բուրդարացի նշանավոր գրոսմայստերի ազգանվան Թոփալով ձևը: Անկախ ստուգաբանությունից, այն պետք է ներկայացվի որպես Տոպալով (սլավոնական լեզուներում չկա թ հնչյունը): Ինչպես, օրինակ, հայկական Ստեփանյանին համապատասխան ռուսական ազգանունը պետք է գրել Ստեպանով և ոչ Ստեփանով:

## ՄՈՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԵՎԵՐ

Խորհրդային կայսրության անկումից հետո մենք թևակոխեցինք մեր պատմության մի նոր դարաշրջան: Իսկ ամեն մի նոր դարաշրջան իր հետ բերում է նոր քամիներ, նոր ուսմունքներ, նոր առաջնահերթություններ ու գերակայություններ և, իհարկե, նոր բաներ ու արտահայտություններ, նույնիսկ նոր գրելաձևեր: Եվ, իհարկե, նոր սխալներ: Ստորև՝ մի քանի օրինակներ:

## ԵՆ

Մեր մի շարք ԶԼՄ-ներում, չգիտես ինչու, և-ի փոխարեն գրվում է ե: Զարմանալի և համընդհանուր արատ է: Մեր ուղղագրությունը, ինքնագլուխ կերպով, վերափոխվում է մեր աչքի առաջ, բայց նոր ուղղագրության պահապանները, որոնք առիթը բաց չեն թողնում քաղցր խոսքով հիշելու հին ուղղագրության ջատագովներին, չգիտես ինչու, լռում են:

Հին հայերենի *ւ-ն*, որպես առանձին տառ, գոյություն չունի նոր ուղղագրական համակարգում, և հանդես է գալիս միայն որպես ու-ի բաղադրիչ մասնիկ: Հինա դպրոցում անցնում են և, արև, տերև, բայց պարբերական մամուլում գրվում է *և*, *արև*, *տերև* ու մոլորության մեջ գցում աշակերտներին ու հասարակությանը: Այս ձևերի գոյությունը սխալ է, անհարիր մեր նոր ուղղագրությանը և ոչ մի տրամաբանության չի ենթարկվում: Հին ուղղագրության մեջ կան ոչ միայն ե, այլև ա, ի գրաձևերը, որոնք արտասանվում են, համապատասխանաբար, ավ և յու: Եթե գրում ենք արև, ուրեմն պիտի գրենք *գրաւ*, և ոչ *գրալ*: Իրոք, որտեղ է տրամաբանությունը:

Այս հարցը հռետորական է: Ոչ մի տրամաբանություն էլ չկա: Այս սխալ ձևն առաջացել է պատմական հանգամանքներով և ունի իր

նախապատմությունը: Դա, ընդհանուր առմամբ, հին ուղղագրության անցման գաղափարի մի մասնորոշային դրսևորումն է մեզանում: Բայց ուղղագրությունը չի կարող փոփոխվել ըստ ինչ-որ մարդկանց ու ԶԼՄ-ների նախասիրությունների ու գրագիտության աստիճանի: Ի վերջո, ուղղագրությունը պետական օրենք է: Ընդ որում, ասվածը նոր ուղղագրության ջատագովության չէ: Երբ պետական օրենքով անցնեք հին ուղղագրության, գրեցեք, խնդրեմ ես, բայց նաև ա և ի: Իսկ մինչ այդ՝ միայն և: Կեցցե օրենքը:

Իմ մի բարեկամ լրագրող ինձ վերջերս լուսավորեց: Պարզվում է, որ որոշ համակարգչային տառատեսակներում չկա *և* նշանը, մի լրատվական գործակալություն դեռ աշխատում է DOS հին համակարգով, որտեղ չկա *և*-ը, իսկ WINDOWS-ին անցնելը միջոցներ է պահանջում: Այդ բոլորն, ըստ իս, չեն արդարացնում անիմաստ *և*-երի օգտագործումը: Ավելացնեմ, որ քիչ թե շատ տարածված համակարգչային բոլոր հայկական տառատեսակներում էլ կա *և*-ը, որը և պետք օգտագործել:

Ընդհանրապես, ւ տառի արկածները հայերենում բազմաթիվ են: Դրա մեծատառը՝ Ի-ն, շատ նման է Ի-ին: Եվ որոշ ձևավորողներ, կարծելով, թե Ի-ն Ի-ի տառաձևերից մեկն է, Ի-ի փոխարեն գրում են Ի:

## Ով, ովքեր

Հայերենում *ով* և *որ(ը)* ձևերը երբեմն կարող են իրար փոխարինել: Այսպես, «Այն հանգստացողները, որոնք դեռ չեն վերջացրել նախաճաշը», արտահայտության մեջ որոնքի փոխարեն կարելի է ասել ովքեր: Վերջերս, հենց մեր աչքի առաջ, չգիտես թե ինչու, նման դեպքերում *որ*, *որը*, *որոնք* ձևերն անհետացան: Ամենուրեք, երբ խոսքն անձանց է վերաբերվում, կիրառվում են միայն *ով*, *ում* և *ովքեր*: Սրանք, իհարկե, ավելի ճշգրիտ ձևեր են: Կիրառելի են, երբ անհրաժեշտ է որոշակի շեշտված ճշգրտություն: Բայց հայերենում կարծես չկա ոչ մի կանոն, որ պատառի այս ճշգրտությունը: Ժողովրդական լեզուն էլ, այսինքն՝ հայերեն բնիկ մտածողությունը, որից պետք է բռնաբար սովորենք, նման դեպքում կկիրառի *որ* ձևը: Այս նոր «գերճշգրիտ» ոճը անհամության է հասնում: Ահա մի մեջբերում՝ «Տեսա մի որսորդ, ով երկու բաղ էր խփել»: Իսկ ինչպե՞ս ճշգրտենք հետևյալ միտքը՝ «հինգ բժիշկ, որոնցից մեկը՝ թխահեր»: Արդյո՞ք «որոնցից մե-

կը» պիտի ձևափոխենք դարձնենք «ումից մեկը», «ումոնցից մեկը» կամ «ովքերից մեկը»: Իմաստ ունի՞ այս մոդան հասցնել անհեթեթություն:

Հնարավոր է, որ այստեղ ժամանակի շունչն է մեղավոր: Առաջ մենք պատճենում էինք ռուսերենից, որտեղ միշտ նման դեպքերում ասվում է որը, որոնք (которые, которые): Ներկայումս իրադրությունը փոխվել է՝ անգլերենն է սավառնում մեր գլխավերևում: Գրական անգլերենում, ինչպես և հայերենում, կարելի է օգտագործել ոչ միայն who «ով», այլև that և which, համապատասխանաբար՝ «որ» և «որը» ձևերը: Այսպես, երբ պետք է հատուկ ճշգրտություն, անձի համար կարելի է ասել՝ who, բայց միանգամայն ճիշտ են նաև that և which ձևերը:

Միրելի լրագրողներ: Ուրեմն, անգլերենն էլ ձեզ նման բան չի պարտադրում: Ինչու՞ բոլորդ դարձաք այդքան միահամուռ հենց այս հարցում: Չէ՞ որ կան միավորվելու ավելի լավ հնարավորություններ՝ օրինակ, իսկական սխալների դեմ, ազնիվ գաղափարների շուրջ, ի վերջո: Մի եղևք միշտ այդքան ճշգրիտ: Մեզ վերադարձրեք մեր հարազատ *որ, որը* և *որոնք* ձևերը:

## Չինովնիկ

Ռուսերեն բառ է (чиновник), նշանակում է «աստիճանավոր», այսինքն՝ «պաշտոնյա»: Հայերենում օգտագործվել է Հայաստանում գործող կոնկրետ ռուսական ցարական աստիճանավորների համար և թարգմանական գրականության մեջ, ռուսական կոլորիտը պահպանելու համար: Այդ տերմինը չէր կիրառվում Խորհրդային իրականության մեջ՝ ստեղծվել էին նոր տերմիններ՝ սովաշխատող (սովետական աշխատող), ծառայող, պատասխանատու աշխատող: Խորհրդային ռուսերենում այն ձեռք էր բերել բացասական իմաստ՝ «ցարական դաժան ժամանակների վատ պաշտոնյա»: Ներկայիս ռուսերենում այն կիրառվում է նաև չեզոք իմաստով. Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինն ասել է, որ ինքն ընդամենը մի չինովնիկ է:

Հետխորհրդային Հայաստանում, չգիտես ինչու, լրագրողների և խորհրդարականների լեզվում մոդայիկ դարձավ այս բառը, ցարական չինովնիկների նկատմամբ պահպանված վատ, խորհրդային

իմաստով: Կիրառողները հնարավոր է, որ չզգիտեն բառի հայերեն համարժեքը: Ինչևէ, այդ բառը մեզանում ներկայումս ոչ մի հիմք չունի՝ մեր պաշտոնյաները համեմատելի չեն ոչ ցարական և ոչ էլ նոր ռուսական չինովնիկների հետ:

## Էքսկլյուզիվ

Անգլերեն exclusive նշանակում է «բացառիկ», այսինքն՝ «բացառող», հետո՝ «արտոնյալ» և նման բաներ, լրագրողական ժառանգում՝ նաև «միայն մեկ թերթում տպված կյոթ»: Ծագումը լատինական է, մեզ է անցել ռուսերենից, ուր արտասանվում է ֆրանսիական ձևով: Անգլերեն արտասանվում է *իքսքլյուսիվ*: Բոլոր իմաստներն էլ միանգամայն հաղորդելի են հայերեն բացառիկ բառով (օրինակ՝ բացառիկ հարցազրույց): Մինչև վերջերս հայ լրագրողական միտքը կարողանում էր յուր գնալ առանց սրա, բայց հիմա դարձել է անփոխարինելի մի բառ, հատկապես անմակարդակ գովազդներում և լրագրողական հաղորդումներում (*էքսկլյուզիվ առաջարկ, էքսկլյուզիվ հարցազրույց*), որոնք, սովորաբար, բոլորովին էլ բացառիկ չեն լինում, այլ սովորական և մշտական տափակությունը:

## Սեփականաշնորհել

Այս բառը հայտնվեց խորհրդային հանրային սեփականության սեփականաշնորհման հետ միասին: Ժողովուրդը շատ հավանեց այն, որի պատճառով անհարկի կերպով դուրս մղվեց սեփականացնել բառը: Մինչդեռ դրանք իրար նման, բայց և այնպես որոշակիորեն տարբերվող իմաստներ ունեն: Օբյեկտը, ասենք, սուբյեկտին սեփականաշնորհվում է պետության կողմից, բայց ավելի ակտիվ սուբյեկտը այն կարող է սեփականացնել, այսինքն՝ յուրացնել, նաև իր ուժերով:

## Յիմնահարց, հիմնախնդիր, հարցադրում, հարցապնդում

Հանդես են գալիս և՛ խորհրդարականների և՛ լրագրողների լեզվում: Ես բոլորովին դեմ չեմ այս բառերին, միայն դրանք պետք է կիրառվեն ըստ կարիքի, և ոչ փոխարինեն հարց բառին: Այսպես, խորհրդարանական հարցումների ժամանակ տրվում են հարցեր և ոչ հար-

ցապնդումներ: Իսկ հիմնահարցը, որն ընկալվում է որպես «կարևոր, հիմնական հարց» վերածվում է ուղղակի անհեթեթության: Այսպես, մենք ունենք Հայկական հարց, իսկ ըստ որոշ լրագրողների՝ Երևանի Արաբկիր համայնքի կոյուղու հիմնահարց: Ինչ խոսք, վերջինս ավելի կարևոր է ամենագետ լրագրողի համար: Այստեղ ճշգրտությունը տեղին չէ, երբ հատուկ կարիք չկա, պետք է գրել հարց և վերջ:

### Կարգավիճակ

Այս բառը նոր է ստեղծվել, այլալեզու «ստատուսի» փոխարեն, և շատ է սիրվել մեր պաշտոնյաների, խորհրդարանականների ու լրագրողների կողմից: Օգտագործվում է շատ հաճախ անստեղի կերպով, վիճակի փոխարեն՝ ասենք, այսինչը գտնվում է ոչ թե «վատ վիճակում», այլ «վատ կարգավիճակում»: Երբեմն՝ նաև խոսքն իբրև թե ավելի ճոխացնող տափակ արտահայտություններում: Օրինակ, փոխանակ նորմալ մարդկային լեզվով ասելու, որ այսինչ մարդիկ տուժեցին, ասում են «հայտնվեցին տուժողի կարգավիճակում»: Սա, ի միջի այլոց, տարբերվում է ուղղակի «տուժեցին» իմաստից և նշանակում է, որ այդ մարդիկ հանդես են գալիս որպես տուժողներ դատարանում: Բայց դե ասում-գրում են, էլի, կարծելով, որ այդպես ավելի գեղեցիկ, ճշգրիտ, գիտական կամ սրամիտ է հնչում:

### Չափորոշիչ

Օգտագործվում է հետխորհրդային տարիներին, «ստանդարտ» իմաստով: Բայց չի կարող ամբողջովին փոխարինել վերջինիս՝ օրինակ ստանդարտ արտահայտությունները դեռևս չեն փորձում ներկայացնել որպես չափորոշիչ արտահայտություններ: Ինչևէ, մոդայիկ լինելու պատճառով այս բառը դուրս է մղում նմանահունչ չափանիշ տերմինը, որը եվրոպական կրիտերիայի հայերեն համարժեքն է: Ուրեմն, երբ պետք է, օգտագործենք չափանիշ հիմնավի բառը:

### Արտերկիր

«Ժամանակակից հայերենի բառարանում» այս բառը չկա: Կան արտերկրային և արտերկրյա «իր երկրի՝ հայրենիքի սահմաններից դուրս գտնվող», «երկրագնդից դուրս գտնվող» իմաստներով:

Է. Աղայանի «Արդի հայերենի բառարանում», որտեղ ներկայացված է նաև արևմտահայերենի բառապաշարը, նշվում է «արտասահման» իմաստը, հզվդպ. նշումով, այսինքն՝ որպես հազվադեպ բառ: Հիշում եմ, Դաշնակցության հանգուցյալ առաջնորդ Մ. Մարտիայանը մի ելույթում որպես արտերկիր բնորոշեց Սփյուռքը, միանգամայն պատշաճ «իր հայրենիքից դուրս գտնվող» իմաստին, այսինքն՝ հայությունը, որն ապրում է Հայաստանից դուրս: Այդ ժամանակներից այս բառը շատ սիրելի դարձավ մեր լրագրողներին, բայց ավելի պարզ ու հասկանալի «արտասահման» իմաստով: Ներկայումս արտասահման բառն ուղղակի դուրս է մղվել ԶԼՄ-ներից: Ինչու՞: Այն շատ լավ ու ճշգրիտ բառ է և պետք օգտագործվի: Իսկ արտերկիր-արտասահմանը պետք է մղվի երկրորդ պլան, իր՝ նույնիսկ արևմտահայերենում հզվդպ. տեղը:

### Չորս ու վեց տոկոս

Դպրոցում տասնորդական կոտորակը ուսուցանվում է կարդալ ինչպես ռուսերենում, այսպես՝ չորս ամբողջ վաթսույնմեկ հարյուրերորդական, տասնմեկ ամբողջ երեքհարյուրինսուներեք հազարերորդական և այլն: Աշակերտները, որոնք դժվարանում են ճիշտ կարդալ և սիրում են պարզեցել, հաճախ ասում են՝ չորս ու վեց և այլն: Մա կարդալու շատ ավելի հեշտ ու հասկանալի ձև է՝ թե չէ, ո՞վ կարող է ճշգրիտ կարդալ 5,02039 (հինգ ամբողջ երկու հազար երեսունինը հարյուրհազարերորդական) կոտորակը: Մանկական-աշակերտական կարդալու ձևը մուտք է գործել խորհրդարան, որտեղ նույնիսկ մասնագետ տնտեսագետները ասում են «հինգ ու յոթ տոկոս» կամ «հինգ ու յոթ տասնորդական տոկոս», «հինգ ամբողջ յոթ տոկոս»:

Մինչդեռ անգլերենում, օրինակ, շատ պարզ է՝ ասում են հինգ կետ յոթ, համարյա ինչպես մեր աշակերտները, միայն ու-ի փոխարեն՝ կետ, քանի որ նրանց մոտ տասնորդական կոտորակներում ստորակետի փոխարեն կետ է դրվում: 0,7 կոտարակին էլ ասում են ուղղակի «կետ յոթ»:

Մեր աշակերտները, ինչպես և բյուջետային և այլ պաշտոնյաները, կարծում են, չեն փոխելու իրենց այս ոճը, որն, ի միջի այլոց, շատ ավելի պարզ է ու հասկանալի, քան պաշտոնապես ընդունվածը: Այդ ոճն էլ, ի միջի այլոց, հայոց ստեղծագործությունն է, այլ գալիս է ռու-

սերենից (четыре и шесть, четыре и шесть десятых): Ինչևէ, քանի որ գործ ունենք մաթեմատիկայի հետ, պետք է միօրինակություն և ճշգրտություն մտցվի և դասագրքերում, և պաշտոնական խոսքի մեջ: Այսպես, կարելի է առաջարկել կիրառել անգլիական ձևը՝ հինգ ստորակետ յոթ, կամ հենց հինգ կետ յոթ:

## ԹՈՒՐՔԵՐԵՆ ԲԱՌԵՐ

Հայոց գրական երկու լեզուներում էլ բարբառների թուրքերեն բառերը դուրս են մղվել և փոխարինվել գրաբարյան բառերով: Թուրքական բառապաշարի կիրառումը համարվում է վատ տոնի նշան: Դա գիտեն բոլորը: Ընդհանրապես, թուրքերեն բառեր իրոք շատ քիչ են օգտագործվում մեզանում: Բայց կան բառեր, որոնց թուրքական ծագումը լայն զանգվածներին հայտնի չէ: Անկախությունից հետո մի քանի այդպիսի բառ սկսեցին ավելի ու ավելի հաճախ հանդիպել մամուլում ու պաշտոնական խոսքում, ի վերջո համարյա դուրս մղելով մինչ այդ օգտագործվող գրական լեզվի բառերը:

## ԽԱՄԱՃԻԿ

Նշանակում է «տիկնիկ», «խրտվիլակ», ապա և «մարիոնետ», այսինքն՝ «թելերով խաղացվող տիկնիկ»: Ծագումը թուրքական է: Ըստ Հ. Աճառյանի, հանգում է թաթարական գոտա «մի կնոջ ամուսնու մյուս կանայք», թուրք. գոտա «ամուսնու եղբոր կին, տեգրակին», արմատին, թուրքական նվագական ածանցով (արևմտահայ. ճ-ն հնչում է ջ): Մարիոնետն ակնհայտ եվրոպական բառ է (ֆրանս. marionnette, որը գալիս է սուրբ Մարիամի տիկնիկի անվանումից), կա նաև ռուսերենում (марионетка), իսկ խամաճիկը որտեղից է, ինչ ծագում ունի, քչերը գիտեն: Սովորական մարդիկ պարտավոր չեն ամեն բառի համար Աճառյանի «Արմատական բառարանը» նայելու: Դա պետք է անեն համապատասխան մարդիկ: Բայց այդ «համապատասխան մարդիկ» սեր չունեն հաստ ու բազմահատոր գրքերի նկատմամբ: Հանդիպել են այստեղ-այնտեղ, տեսել ինչ-որ բառարաններում և հավանել այդ բառը, ընկալելով այն, հավանաբար, որպես մարիոնետի բնիկ հայկական համարժեք: Այսպես, մարիոնետների թատրոնը դարձել է «խամաճիկների թատրոն»:

Քաղաքական գործիչների լեզվում խամաճիկ, խամաճիկային բառերը լայնորեն կիրառվում են վատ իմաստով՝ մարիոնետային կառավարություն, իշխանություն, գործիչ և այլն, որտեղ ենթադրվում է, որ այդ մարիոնետային իշխանություններն ու իշխանավորները խաղացվում են ինչ-որ վատ մարդկանց կողմից:

Եթե թուրքական բառերը համարվում են վատ տոնի նշան, խամաճիկն էլ արհեստականորեն է հարմարեցված եվրոպական մարիոնետին, ապա, դա անպետք, ինքնահնար բառ է և ճիշտ կլինի, որ դուրս մղվի մեր քաղաքական և թատերական տերմինաբանությունից: Շատ ավելի ընդունելի է ֆրանսերեն մարիոնետը: Ի վերջո, այն ավելի գեղեցիկ ու ճշգրիտ է, քան մուսուլման թուրքի «ամուսնու մյուս կնոջից» վերաիմաստավորված խամաճիկը:

### Փոշմանել

Ոչ թե փոշմանել այլ գոջալ: Դա է ճիշտ գրական ձևը:

### Բարիշել

Ճիշտ ձևն է հաշտվել: Ձեռք քաշենք բարիշելուց և հաշտվենք:

### ՅԻՆ, ԲԱՅՑ ԶԱՎԵՐԺԱՆԱԼՈՒ ԶԳՏՈՂ ՍԽԱԼՆԵՐ

Հայկական իրականությանը բնորոշ է ոչ միայն նորանոր սխալ ձևերի ու ոճերի ի հայտ գալը, այլև բազում հին սխալների պահպանությունը, որոնք, կարելի է ասել, այդպիսով, ձգտում են հավերժանալ մեզանում: Աշխատենք մեր ուժերի ներածին չափով խանգարել դրանց հավերժացմանը:

### Յամփյուր

Այս սխալի մասին այնքան է գրվել որ, թվում է, թե, ճիշտ կլինի, որ ազգովին անցնենք համփյուր-ի ու պաշտոնականացնենք սխալը: Հանդես է գալիս հատկապես սիրատոչոր երգերի բառերում: Հիմնականում, բայց ոչ միայն ուրիշ: Ի՞նչ կլինի, սիրելի երգիչներ, համփյուրը դարձրեք համբոյր, և գուցե մեր բախտը սիրո մեջ ավելի բերի:

### Նախագա

Ճիշտ ձևն է նախագահ: Խորհրդային տարիներին այդ բառը ժողովրդի լեզվում կիրառվում էր գյուղական կոլտնտեսության նախագահի համար, և գյուղացիների լեզվում հնչում էր նախագա, համա-

պատասխան հոլովածներով՝ «նախագեն էկավ» փոխանակ՝ «նախագահը եկավ» և այլն: Իսկ երկրների ղեկավարները կոչվում էին պրեզիդենտ: Հետո որոշեցին պրեզիդենտը թարգմանել որպես նախագահ, և կոլտնտեսական ժարգոնի նախագան սկսեց կիրառվել երկրի նախագահի համար: Բնութագրական է, որ մեր խորհրդարանականների մեծագույն մասը ևս օգտագործում է նախագա ձևը:

### **Որպիսի**

Որպեսզի բառն առավել հաճախ արտասանում են սխալ՝ որպիսի, որն ուրիշ բան է նշանակում: Արտասանենք ինչպես գրվում է՝ որպեսզի:

### **Ասեց, խոսաց**

Ճիշտ ձևերն են՝ ասաց, խոսեց: Նույնիսկ բարձր ամբիոններից, հատկապես խորհրդարանում, հաճախ լսվում է՝ «Ես ասեցի», որը բարբառային, ոչ կիրթ ձև է:

### **Բարյացկամ**

Ճիշտ ձևն է բարյացակամ: Շատ հաճախ, շատ սխալ կերպով, ասում են բարյացկամ: Հեշտ ուղղելի սխալ է:

### **Սննկանալ**

Ճիշտ ձևն է սնանկանալ: Արմատն է սնանկ, որը օգտագործվում է որպես առանձին բառ:

### **Տուժվել, տուժված**

Հինավուրց բայց և միշտ երիտասարդ սխալ է: Փառավոր կերպով օգտագործվում է նաև խորհրդարանում և արդարադատության ոլորտում: Ճիշտ ձևն է տուժել, որը հենց նշանակում է այն, ինչ որ ուզում են ասել տուժվել ասելով: Օրինակ, թաղի բնակիչները ջրատարի պայթյունից տուժեցին և ոչ տուժվեցին: Նրանք, այսպիսով, ոչ թե տուժվողներ, այլ տուժողներ են:

### **Ոտնկայս**

Ճիշտ ձևն է հոտնկայս: Հին արտահայտություն է, որտեղ բառակզբի հ-ն գալիս է գրաբարյան յ-ից: Հազվադեպ օգտագործվում է առավել տխմար սխալ ձևով՝ ոտնկայց:

## Ի շնորհիվ, ի օգուտ

Արհեստական, սխալ ու տգետ հնարանություններ են: *Շնորհիվը* հենց նշանակում է այն, ինչ ուզում են ասել *ի շնորհիվ* ասելով: «Հաղթեցին հակառակորդին շնորհիվ առավել բարձր պատրաստվածության», և ոչ «ի շնորհիվ»:

Մյուս արտահայտության ճիշտ ձևն է *hoqույր* (գրաբար՝ *յօգույր*, որ կարդացվում է hoqուտ): Այսպես, hoqուտ մեր թիմի, և ոչ ի օգուտ: Եվ չի կարելի ասել, որ ինչ որ մեկն աշխատում է ի օգուտ իրեն: Հօգուտ և վերջ:

## Խոսքը գնում է

Բառացի թարգմանություն է ռուսերենից: Իրականում խոսքը ոչ մի տեղ էլ չի գնում, և չի էլ կարող գնալ՝ ոտքեր կամ տրանսպորտային միջոցներ չունենալու պատճառով: Ռուսական ձև է (слово идет), որի հայերեն համարժեքն է՝ «խոսքը վերաբերում է», «խոսքն այն մասին է, որ»:

## Բանը նրանում է

Անդուր թարգմանություն է ռուսերենից (дело в том): Օրինակ, «բանը նրանում է, որ մենք չենք ուզում այդպես ապրել»: Ճիշտ հայերեն ձևն է՝ «Բանն այն է»:

## Նա և այն

Ահա նախորդը հիշեցնող նմանատիպ սխալ մի նախադասություն՝ «հարցը նա է, որ մենք չենք ուզում այդպես ապրել»: Նույն հաջողությամբ «հարցը նա»-ի փոխարեն երբեմն ասում են՝ «մեր ուզածը նա է», կամ «խոսքը նրա մասին է»: Գալիս է, կարծես, ժողովրդական ոճի սխալ գրականացումից: Խոսակցականով կասեինք՝ «ասածս էն ա» որտեղ էն-ը գրական այն-ն է: Բայց սխալ ընկալելով, էն-ը «թարգմանում ենք» նա-ի:

Շատ է լսվում նաև խորհրդարանում: Անընդունելի ձևեր են: Նա-ն կարող է վերաբերել անձի, իսկ այս օրինակներում խոսվում է երևույթի մասին: Նման դեպքերում պետք է ասել՝ «հարցն այն է», «մեր ուզածն այն է», «խոսքն այն մասին է»:

## Որտև

Խոսակցական լեզվում որովհետև բառը հաճախ արտասանում ենք որտև: Խոսակցականը մի բան է, գրականը՝ այլ: Ուրեմն, խորհրդարանում պետք է ասել որովհետև:

### ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

Հայաստանի ցուցանակների սխալներն իրենց որակով ու քանակով աներևակայելի են և թերևս գերազանցում են մնացած բոլոր լեզվական աղավաղումները: Այստեղ քննադատելի է համարյա ամեն ինչ՝ ինչու՞ է, օրինակ, խանութը կոչվում մարկետ կամ մարքեթ, վերնագիրը՝ Քեթրին կամ նման մի բան և այլն և այլն:

Պարզ գավառամտություն է, ուրիշ ոչինչ: Երևանի նորաբաց խանութ-ռեստորան-սրճարան-ակումբները առավել հաճախ կոչվում են օտար անվանումներով, և դրանց ցուցանակներն էլ, առաջին հերթին, լատինատառ են, հիմնականում՝ անգլերեն: Ինչն է պատճառը: ԽՍՀՄ երանելի տարիներին մեր բնակչության մեծամասնության դռների վրա բնակիչներն իրենց անուն-ազգանունը գրում էին ռուսերեն: Բա որ հանկարծ մի այլազգի ուզենա իրենց տուն գալ, ինչպե՞ս պիտի գտնի: Իհարկե, ոչ մի այլազգի այցելու էլ չէր գալիս մեր գավառական քաղաքների բնակիչներին հյուր, բայց ռուսերեն անուններ գրելը դարձել էր հայաստանյան կուսակցա-պետական վերնախավի և նրանց հետևող մտավորականության և բանվորա-գյուղացիության գավառամիտ «ազգային ավանդույթ»: Իսկ հիմնարկների, խանութների և այլ հասարակական կազմակերպությունների ցուցանակները գրվում էին երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն: Երբ ռուսերենը դուրս մղվեց, նրա տեղը զբաղեցրեց անգլերենը: Բայց ոչ թե բնակարանների դռների վրա (ո՞վ ներկայումս սիրտ ու միջոցներ ունի իր անունը գրելու դռան վրա), այլ այլևայլ «օբյեկտների» պատերին: Ավելի ճիշտ կլինի ասել, որ հայկական տառերը դուրս մղվեցին լատինական տառերի կողմից: Բա որ մի օտարազգի այցելու ուզենա գալ մեր դուքան-ակումբ-սրճարան-ռեստորանը: Չէ, խայտառակ կլինենք:

Այսպես, մի սրճարան կոչվում է Two Lips-Թու լիփս (անգլ. «Երկու շուրթ»), մյուսը՝ Squer one-Սքուեթ ուան (անգլ. «Հրապարակ

մեկ»), երրորդը՝ Lucky's (անգլ. «երջանիկի»), չորրորդը՝ Crash-Քրաշ (անգլ. «դղրոյցուն», «կործանում») և այլն: Բայց ինչու՞ ոչ հայերեն ու ստանց թարգմանության: Ինչևէ, օտարահունչ, անհասկանալի անվանումը, կամ հայկականը, ներկայացված լատինական վեհաշուք ու խորհրդավոր տառերով, գավառացու մտքին ու ականջին ինչ-որ գաղտնի ու վեհ բաներ են հուշում: Կամ ենթադրվում է, որ պիտի հուշեն: Ու՞մ է պետք հասարակ հայերեն խանութը, եթե կան մարկետն ու սուպերմարկետը: Ու՞մ են պետք հայերեն սնունդը, մթերքն ու պարենը, եթե կարելի է գրել՝ Food: Բայց... Եթե անուն դնողը կարծում է, թե իր խանութը կամ չորս ու կես քառակուսի մետրանոց դուքանը մարկետ կամ սուպերմարկետ անվանելով ավելի շատ հաճախորդներ կունենա, մանավանդ օտարերկրացի՝ չարաչար սխալվում է: Իսկ եթե կարծում է, թե մարկետն ավելի լավ ու վեհ է հնչում քան հայերեն շուկան ու խանութը, էլի սխալվում է:

Ստորև ներկայացնենք մի քանի օրինակ սխալների այդ օվկիանոսից:

## Ֆեմիդա

Սա հունական արդարադատության և օրինականության դիցուհու անվան ռուսական ձևն է (Фемида): Կիրառվում է խորհրդարանում և մամուլում, սովորաբար մեր երկրի արդարադատությունը քննադատելիս՝ «Հայկական Ֆեմիդան» ավելի վատն է, քան օտարներինը: Հին, մեռած լեզուների բառերն ու անունները վեհացնում են տափակ արտահայտությունները: Բայց դրանք էլ հաճախ օգտագործվելիս անհամ տպավորություն են թողնում, իսկ երբ սխալ ձևեր են կիրառվում, մատնում են հեղինակի անգիտությունը և խեղճացնում քննադատությունը:

Վերջերս էլ բացվել են «Ֆեմիդա» ակումբը, «Ֆեմիդա» ռեստորանը և «Ֆեմիդա» սրճարանը «Օրինաց երկիր» կուսակցության հովանու ներքո, կուսակցության շենքում: Իհարկե, «Օրինաց երկրին» միանգամայն պատշաճ է արդարադատության դիցուհու հետ կապը, բայց գերադասելի է դիցուհուն կոչել իր ճիշտ անունով: Չէ՞ որ կարող է նեղանալ և, վսյ մեզ, թողնել-հեռանալ Հայաստանից:

Նրա անվան հայերեն, ինչպես և հին հունարեն ձևն է՝ Թեմիս: Ռուսերենում, պատմական պատճառներով, հունական թ-ն տառա-

դարձվում է որպես ֆ, իսկ իզական -իս վերջավորությունը՝ -իդա, հմնտ. հուն. հայ. Արտեմիս և ռուս. Արտեմիդա, հուն. Թետիս և ռուս. Ֆետիդա համապատասխանությունները: Բանն այն է, որ ռուսերենում, մինչև հետախոսական ուղղագրությունն ունեւր հունական «թետա» տառը (Θ, θ), որն օգտագործվում էր միայն հունական փոխառված անուններում և բառերում: Ռուսերենում գոյություն չունեցող այդ հնչյունը կարդացվում էր ֆ. օրինակ, Ֆյոդոր Դոստոեւսկին իր անունը գրում էր այդ տառով: Հեղափոխությունից հետո այն հանվեց ռուսերենից և դրա փոխարեն սկսեց կիրաւովել ֆ-ն:

Իսկ այժմ Աքուվյան փողոցի վրա փայլատակում է՝ Restaurant Femida, Café Femida, ի տես աշխարհի բոլոր լատինատառ օտարերկրացիների: Բայց ավանդ, այդ անվանումն իր գործը չի անում: Լատինատառ լեզուներում, այդ թվում՝ մեզ այնքան սիրելի անգլերենում, այդ դիցուհու անունը տառադարձվում է այնպես, ինչպես պիտի տառադարձվեր՝ Themis:

### Վիզավի, vizavi

Ֆրանսերեն է, նշանակում է «հրար դիմաց»: Բայց ֆրանսիական ուղղագրությունը շատ բարդ բան է: Այս արտահայտությունը գրվում է vis-à-vis: Այլ եվրոպական լեզուներում, այդ թվում՝ պաշտելի անգլերենում ևս այս արտահայտությունը կիրաւովում է, բայց ներկայացված ֆրանսիական ուղղագրությամբ: Այսինքն՝ եվրոպացի և ամերիկացի, ինչպես նաև այլ այլալեզու օտարական-այցելուին Viza-vi անվանումը ոչինչ չի ասի:

Ի միջի այլոց, դիմացի սրահարանը կոչվում է «Անդորր-Andorr» հիանալի անունով (որը հայերեն չիմացող օտարերկրացու համար կարող է կապվել միայն փոքրիկ ու խաղաղ Անդորրա պետության հետ), բայց որպեսզի ոչ մեկին կասկածելի չլինի այդ անվանման հիմնավորվածությունը, երեկոյան ժամերին այն, «Վիզավիին» զուգահեռ, հազեցնում է շրջակայքի անդորրը հրետանային ուժգնության անպետքագույն երաժշտությամբ:

### La scalla, Լա սկալլա

Այս սրահարանը գտնվում է օպերայի շենքի մերձակայքում և կրում է Միլանի հռչակավոր «Լա սկալա» («Աստիճան») օպերայի

անունը: Ինձ անհասկանալի են այս սխալ ձևը ծնող պատճառն ու ատիլը: Թեև իտալերենում իրոք կան կրկնակ բաղաձայներ, բայց ոչ միշտ, և այս անվան ճիշտ ձևն է La scala՝ Լա սկալա:

### Sevilla, Սևիլլա

Ռեստորանը կրում է իսպանական Սևիլյա քաղաքի անունը: Այդ քաղաքը հայերենում, ինչպես ռուսերենում, միշտ էլ կոչվել է Սևիլյա: Իսկ ինչու՞ Սևիլլա: Որտեղից հայտնվեց այս սխալ ձևը: Բանն այն է, որ այս անունն իսպաներեն ուղղագրությամբ գրվում է Sevilla, որը և արտասանվում է որպես մոտավորապես Սևիլյա: Այսինքն՝ իսպաներեն երկու լ-ն պետք է տառադարձել որպես յ:

Այս իսպանական կրկնակի լ-ն, ի միջի այլոց, մեկ այլ սխալ ձևի է հանգեցրել: Իսպանացի մեծ երգահան Մանուել դե Ֆալյայի անունը ևս գրվում է այս չարաբաստիկ երկու լ-ով, որի հետևանքով ռադիոյով ստեպ-ստեպ լսում ենք Մանուել դե Ֆալլայի «Կրակի պարը» և այլ ստեղծագործություններ: Այս անունը արտասանում են նաև դը Ֆալլա, քանի որ ֆրանսերենում դե մասիկը արտասանվում է դը:

Ինչևէ, այս ձևերը, թեև շատ լավ հանգավորվում են թուրքերեն քյալլայի հետ, բայց և այնպես սխալ են: Ճիշտ ձևերն են Սևիլյա, դե Ֆալլա:

### Ապոլլո

Սա հունական Ապոլոն աստծու անվան անգլերեն ձևն է (Apollo): Բայց դրանից չի բխում, որ հայերենում ևս այդ անունը պետք է ներկայացնել որպես Ապոլլո: Ուրեմն՝ գրենք Ապոլոն:

### Լոտոս

Այս ծաղկի անվան ճիշտ հայերեն ձևն է լոտոս: Ծագում է հունարենից: Լատիներենը ևս վերցրել է այդ անվանումը հունարենից և իր օրենքների համաձայն դարձրել lotus: Այդ ձևով էլ բառն անցել է անգլերեն: Բայց դա իրավունք չի տալիս «օբյեկտն» անվանել հայերեն Լոտոս: Ճիշտ կլինի՝ «Լոտոս»:

### Պրոմեթեյ

Սխալ տառադարձություն է: Հունական առասպելաբանության այս բազմաչափ տիտանի անվան ճիշտ հայկական ձևն է Պրոմե-

թևս: Անվան անգլերեն ձևն է Prometheus (Փրոմիթիդս), ռուսերենը՝ Прометей (Պրամիժեյ): Մեր բանկի անվան մեջ այն հանդես է գալիս անհասկանալի խառնածին ձևով:

## ԳՈՎԱԶԴԻ ԼԵՉՈՒ

Շուկայական հարաբերություններն իրենց իրողություններն են պարտադրում: Մեր հասարակությունն էլ սրընթաց յուրացնում է իր համար նոր այդ իրողությունները: Դրանցից ամենահայտնին ԶԼՄ-ներում գովազդի մեծաքանակ կիրառությունն է: Այդ գովազդը, որը հենց լավագույն ավանդույթներ ունեցող երկրներում շատ հաճախ ցածրաճաշակ է և զգվեցնող, մեզանում գտնվում է շատ ավելի վատ մակարդակի վրա:

Մեր գովազդների ամենաբազմատեսակ թերությունների մեջ առաջին հերթին այժ են ծակում ցածր ճաշակը, անմակարդակ կատարումը և, իհարկե, լեզվական աղավաղումները: Ստորև նշենք միայն մի քանի օրինակ:

Ռադիոգովազդի ամենանողկալի տեքստը փառաբանում էր «Վեգա 50» դեղամիջոցը իմպոտենցիայի դեմ: Մի կողմ թողնենք դեղերի գովազդման կասկածելի առավելությունը: Բայց ինչպիսի ոճ: «Ձեր պրոբլեմը ձեր ընտանիքի պրոբլեմն է...»: Եվ քանի դեռ դուք չեք հիասթափվել կյանքից և քանի դեռ այդ «պրոբլեմը» չէր վերածվել համաշխարհային աղետի՝ «որպիսի (ուզում էր ասել որպեսզի) ազատվել» այդ պրոբլեմից, անհապաղ պետք էր ձեռք բերել այդ հարբերից ու կուլ տալ, իսկ վերջում՝ զգուշանալ կեղծիքներից: Այս գարշանքը չգիտեմ ում օրինյալ կամքով արդեն վերացավ, բայց մի շարք ոչ լավագույն դեղագործական գովազդներ դեռ շարունակվում են: Հիշատակության արժանի է, օրինակ, «հին ու բարի կորվալուր, այժմ արդեն՝ կանաչ տուփերով»: Մարդկությունն, իհարկե, հենց նոր է հայտնաբերել կորվալուրի՝ կանաչ տուփերում վաճառելու ակնհայտ առավելությունը և բարերար ազդեցությունը հիվանդ սրտերի վրա: Ապա՝ «Դուք անընդմեջ տառապում եք այրոցով» և այլն: Ի՞նչ կարելի է ասել այս տխմարությամբ:

Բազում արտասահմանյան, հանրահայտ ֆիրմաների դեղերի մասին ասվում է, որ դրանք ստուգված են մեր առողջապահության

նախարարության կողմից և հաստատված լաբորատոր փորձաքննությամբ: Ակնհայտ է, որ աշխարհի բոլոր դեղերն էլ ստուգվում, փորձաքննվում և հաստատվում են, և դա հատուկ շեշտելը նույնն է, եթե շեշտես, որ դրանք գոյություն ունեն: Իսկ այն, որ որ արտասահմանյան հանրահայտ դեղերը իբր ստուգվում են մեր առողջապահության նախարարությունում, ուղղակի չափազանցություն է: Առավել ևս, դրանք մեզանում չէ, որ հաստատվում են լաբորատոր փորձաքննությամբ: Այդ հայաստանյան հաստատումն էլ, մեզ՝ հայաստանցիներին համար, ի միջի այլոց, ոչ մի լավ բան չէր ասի այդ դեղերի մասին: Այդ անիմաստ նախադասություններն ուղղակի պետք է վերացնել գովազդներից և վերջ:

### Կաթնամթերքի կայսրություն

Ռա մի զարմանալի գովազդ է՝ «Աշտարակ կաթ. կաթնամթերքի կայսրություն»: Պատմությունից հայտնի է, որ ինչքան փոքր ու ողորմելի են լինում իշխողները, այնքան ավելի մեծարանք, քծնանք ու շողոքոթություն են պահանջում: Այսպես, որևէ գերմանական մի իշխանիկի համար իրեն Ալեքսանդր Մակեդոնացու հետ համեմատելը կարող էր ստորացուցիչ թվալ: Պալատականները պիտի ասեին, որ նա բարձր է Ալեքսանդրից: Այլ կերպ՝ կպատժվեին:

Ահա մի երկիր, որը կայսրությունների ամենափոքր նահանգներից էլ փոքր է: Այդ երկրում կա մի ֆիրմա, որը, ի թիվս այլոց, կաթնամթերք է արտադրում և տարածում այդ փոքր երկրի որոշ մարզերում: Եվ գովազդում է իրեն որպես կայսրություն:

### Իրական

Այս բառը մինչև վերջերս նշանակում էր ուղղակի «գոյություն ունեցող, ոչ անիրական, ոչ կեղծ»: Բայց հիմա, գովազդներ ստեղծող որոշ ստեղծագործ ուղեղների կամքով այն ձեռք է բերում նոր, անհասկանալի և անիմանալի իմաստներ: Այսպես, ասացեք խնդրեմ, թե ինչ է նշանակում «իրական գներ» հիմար գոյունը: Ըստ գովազդի համատեքստի՝ թերևս «ցածր գներ»: Իսկ ինչ կնշանակի այդ դեպքում մեկ այլ գոյուն՝ «Յունի բանկ. իրական ներդրումներ»: Արդյո՞ք «Էժան ներդրումներ»: Կամ մյուս բանկերը, որ գլխի չեն ընկել իրենց գովազդը պատվիրել համապատասխան մտավոր կենտրոնում, ար-

դյո՞ք անիրական կամ կեղծ ներդրումներ են անում, վերցնում կամ ընդունում: Մի՞թե կարելի է հանդուրժել այս հիմարությունը:

## Ջիանի

Իտալերենի ուղղագրական կանոնների համաձայն, ճի տառակապակցությունը կարդացվում է ջ: Այսպես, Ջուզեպե Վերդիի անունը գրվում է Giuseppe: Ժամանակին էլ բոլորիս հայտնի և սիրելի էր իտալացի գրող Ջաննի, և ոչ Ջիաննի Ռոդարին (գրվում է Gianni): Իսկ հիմա, երբ հայերն առաջին անգամ, առանց ռուսերենի միջնորդության, տեսնում են Gianni և ուզում են գովազդել այն, ասում են Ջիաննի: Ուրեմն՝ ճիշտ ձևն է Ջաննի և ոչ Ջիաննի:

## ՌՈՒՄԱԿԱՆ ԵՎ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՌՈԳԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գավառամտության ամենաստորացուցիչ դրսևորումներից մեկն այն է, երբ փոքր ժողովրդի զավակները սկսում են իրենց իսկ մայրենի լեզվով խոսել կայսերական ժողովրդի առոգանությամբ, դրանով իսկ իրենց փորձելով հասցնել կայսերական ժողովրդի ավելի բարձր ենթադրվող մակարդակին: Արդյունքը ծիծաղելի և ողբալի է:

Դա հատկապես կիրառվում է փոխառյալ բառերի արտասանության ժամանակ, երբ բառը, փաստորեն, օգտագործվում է, մի տեսակ, որպես մեջբերում: Այսպես, մինչև հիմա էլ որոշ ռուսական կրթությամբ մարդիկ մեզանում արտասանում են սիսծեմա, պոարլեմա, սիստեմի ու պրոբլեմի փոխարեն: Սա թերևս անխուսափելի մի բան էր, մեզանում հիմնականում կորցնում է իր հրատապությունը:

Մի ռուսաբանություն մեզանում շատ խոր արմատներ ձգեց: Այսպես, գրում ենք Մուրադյան, մատյան, խաղաղություն, բայց կարդում «ռուսերեն»՝ Մուրաձյան, մաձյան, խաղաղուցյուն: Խորհրդային ժամանակներում այս թերությունը պաշտոնական ամբիոն չունե՞ր՝ բոլոր հաղորդավարներին ցուցում էր տրված արտասանել շատ ճշգրիտ՝ Մուրադյան, մատյան, խաղաղություն:

Կա մի հին անեկդոտ: Պոլոզ Մուգուչը, ավելի «կուլտուրական» երևալու մղումով, մի տիկնոջ հետ խոսում է ռուսական առոգանությամբ՝ տիկին բառն արտասանելով ծիկին, ինչն ի վերջո հանգում է հայերեն հայիոյանքը ևս այդպես արտասանելուն:

Ռուսերենն ունի փափուկ և կոշտ լ, մինչդեռ հայերենը՝ ոչ: Եվ հայերը շատ հաճախ, օրինակ, ալֆա, գոլֆ ու նման այլ բառեր արտասանում են ռուսերեն փափուկ լ-ով՝ альфа, голф: Մինչդեռ այդ բառերը ռուսերեն չեն և իրենց բնիկ արտասանությունն էլ ավելի նման է հայերեն նորմալ արտասանությանը:

Հայերենում կա մի զարմանալի առոգանություն՝ ր և ռ հնչյունների «փոխառված» արտասանությունը: Ռուսերենը չի տարբերակում փափուկ և կոշտ ր և ռ հնչյունները: Այդ լեզվում կա միայն մեկ՝ հայ. ռ-ին մոտ մի հնչյուն: Այդ պատճառով շատ ռուսախոսներ մինչև հիմա էլ հայերեն ր-ն հաճախ արտասանում են որպես ռ: Իսկ անգլերենն ունի միայն մեկ ր, այնքան փափուկ, որ դժվար է նույնիսկ այն լիարժեք ր անվանել: Եվ եթե ռուսական ռ-ի արտասանությունը երբեք չբարձրացավ եթերային հնչողության մակարդակի, ապա անգլերեն ր-ն մի պահ փառավոր դիրքեր գրավեց հատկապես երիտասարդական հաղորդումներ վարող երիտասարդ հաղորդավարների շրջանում: Հիմա, փառք աստծու, կարծես թե վերանում է:

Իսկ ռուսական առոգանությունը դեռևս մնում է ու մնում: Բազմաթիվ ոչ ռուսերեն բառերի և անվանումների ռուսական արտասանությունը մեր խոսքի մշտական ուղեկիցն է:

### Էդելվեյս, edelweis

Այս ալպիական ծաղկի անունը գերմաներեն է՝ Edelweiß: Գերմաներենում ատասանվում է էդելվայս: Ռուսերենում, պատմական պատճառներով, գերմանական ei-ը արտասանվում է էյ: Բայց դա չի կարող տարածվել հայերենի վրա: Այսպիսով, եթե շատ եք ուզում ձեր խանութը կոչել գերմաներեն, ապա դարձրեք այն «Էդելվայս»:

### Feti, Ֆեծի

Այս ապրանքանիշը հեռուստատեսությամբ գովազդողի բերանում հնչում է Ֆեծի, այսինքն՝ արտասանվում է ռուսերեն: Այս Ֆեծին ոչ մի հիմք չունի, բացի անգիտությունը: Պետք է արտասանել Ֆետի, կամ, եթե շատ են ուզում բնագրային հնչողությանը հասնել, նույնիսկ՝ Ֆեթի, նայած թե ինչ լեզվից է գալիս անունը: Բայց ոչ Ֆեծի:

## Multi group, Մուլթի գրուպ

Սա հայաստանյան, բայց օտարաձև անվանում է, որը ժամանակին հեռուստատեսությամբ ամեն օր գովազդվում էր որպես Մուլ՝ծի գրուպ (Мульти груп): Այստեղ կար ռուսական արտասանությունից եկող երկու սխալ: Մուլ՝ծին պիտի լինեք մուլտի (անգլերենում էլ, ի միջի այլոց, արտասանվում է մալթի), իսկ գրուպը՝ գրուպ:

## Բլեֆ, Բել Ձյուկ, Блеф, Бель дюк

Այսպես էին կոչվում երևանյան երկու տաքսի ծառայություն: Հիմա կան թե՛ չկան, չգիտեմ: Զարմանալի բան էր: Մարդիկ որոշել էին իրենց ծառայությունները կոչել իտալական «Բլեֆ» կինոնակարի «մոտիվներով»: Իհարկե, գովելի է սեփական բիզնեսներն անվանել արվեստի հետ առնչվող անվանումներով: Բայց նաև զարմանալի և, մեղմ ասած, մի քիչ էլ երկինաստ է հնչում՝ գործն անվանել բլեֆ: Այն անգլերեն bluff «խաբեություն» բառի սխալ ռուսական արտասանությունն է (անգլերենում հնչում է բլաֆ): Արդյո՞ք այդ մարդն իր գործը կանվաներ հայերեն «խաբեություն»:

Ինչ վերաբերում է Բել դյուկին ապա այդ անվան առաջին մասը հիշեցնում է ֆրանսերեն (իգական սեռի) «գեղեցիկ, գեղեցկուհի», իսկ երկրորդը՝ «դուքս» բառերը: Այս քերականորեն անիմաստ բանկապակցությունը ֆիլմի բացասական հերոսուհու մականունն էր:

## ԳՐԱԿԱՆ ԼԵՉՈՒ, ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵՉՈՒ, ԲԱՐԲԱՌ, ԺԱՐԳՈՆ

Պատմական հանգամանքների բերումով արդի հայերենն ունի մի քանի հիմնական դրսևորումներ՝ արևելահայ գրական լեզու, արևմտահայ գրական լեզու, արևելահայ խոսակցական լեզու և բարբառներ: Հայ գրական լեզուները ստեղծվել են 18–19-րդ դարերում, համապատասխանաբար՝ Պոլսի և Արարատյան (Երևանի) բարբառների հիման վրա: Այդ դարաշրջանում հայերը վաղուց կորցրել էին իրենց պետականությունը: Հայոց դասական լեզուն՝ գրաբարը, որով իրականացվում էր ուսուցումը, անհասկանալի էր դարձել ժողովրդին, որը խոսում էր մի քանի տասնյակ բարբառներով: Այդ բարբառները խճողված էին մեծ քանակությամբ օտար, հատկապես թուրքերեն բառերով:

Նոր գրական լեզուները ստեղծվեցին կենդանի բարբառների քերականության հիման վրա (որոշ փոփոխություններով), իսկ օտար՝ թուրքերեն բառերը փոխարինվեցին հին՝ գրաբարյան բառերով: Այա, նորից հիմնականում գրաբարի բառապաշարի միջոցներով, եվրոպական լեզուներից պատճենվեցին կամ հայկական մտածողությանը ստեղծվեցին նոր բառեր՝ շոգենավ, հեծանիվ և այլն: Այսպիսով, այդ երկու գրական լեզուներն էլ որոշ առումներով արհեստածին են, ինչն իր հետքն է դրել նրանց զարգացման ընթացքի վրա:

Գրական արևմտահայերենը, չնայած ներկայումս կորցնում է իր դիրքերը, բայց իրական, կենդանի լեզու է: Դրանով են հաղորդակցվում նախկին ԽՍՀՄ-ից և Իրանից դուրս բնակվող և իրենց լեզուն պահպանած արևմտահայերը: Իսկ արևմտահայ բարբառները Հայոց ցեղասպանությունից հետո հիմնականում դադարել են խոսվելուց:

Ի հակադրություն գրական արևմտահայերենի, գրական արևելահայերենը բնակչության լայն զանգվածների համար երբեք էլ կենդանի, խոսակցական լեզու չդարձավ: Նախ, Հայաստանում, Արցախում, Ջավախքում, Արխազիայում, Կրասնոդարի երկրամասում և այլուրեք դեռևս պահպանվում էին հայերենի բարբառները: Իսկ Երևանում, գրական լեզվի ազդեցությամբ, ձևավորվեց Երևանի խոսակցական լեզուն: Այն նշանակալիորեն տարբերվում է և՛ Արարատյան հին բարբառից և՛ գրական լեզվից: Այսպես, Արարատյան բարբառով պետք է ասվեր՝ անըմ եմ, բայց հիմա ասվում է՝ ասու՛մ եմ: Հիմնական, աչքի ընկնող տարբերությունը գրականի և խոսակցականի միջև եզակի երրորդ դեմքի օժանդակ բայն է՝ հմմտ. գրական խոսում է և խոսակցական խոսում ա: Բացի այդ, բազմաթիվ հույժ գրական բառերի փոխարեն օգտագործվում են դրանց ռուսերեն համարժեքները, կան և հին բարբառի ու թուրքերեն բառապաշարի որոշ հետքեր (օրինակ, էթում ա, դորդ ու բեշ անել):

Ներկայումս Երևանի խոսակցական լեզուն վերածվել է Հայաստանի, Իրանի և նախկին ԽՍՀՄ երկներում բնակվող հայերի հաղորդակցության լեզվի: Հայաստանի քաղաքային բնակչությունը, բացի որոշակի պատմական անցյալ ունեցող մի քանի քաղաքներից (Գյումրի, Գավառ, Գորիս) հիմնականում հաղորդակցվում է Երևանի խոսակցական լեզվով: Այն նաև տարբեր բարբառներով խոսող մարդ-

կանց հաղորդակցության հիմնական միջոցն է՝ այդ լեզվով կարող են հաղորդակցվել, ասենք, իրար հանդիպած դարաբաղցին ու արտաշատցին: Ըստ այդմ, այն ունի արտասանական տարբերակներ, որոնցից գրականին առավել մոտ է բուն Երևանի խոսվածքը:

Մեր խոսակցական և գրական լեզուների տարբերությունը այլևայլ անհարմարություններ է ծնում: Մարդիկ չեն կարողանում իրենց մտքերն արտահայտել գրական լեզվով: Որոշ դեպքերում հույժ գրականը նույնիսկ անտեղի ու ծիծաղելի է թվում: Մխիթարվենք այն բանով, որ հարցում մենք միայնակ չենք: Այսպես, շվեյցարացի մեծ գրող Մաքս Ֆրիշը ասել է, որ իր հերոսները հաճախ շվեյցարացիներ չեն, քանի որ ինքը չի կարող գրել, թե երկու շվեյցարացի հանդիպեցին ու բարևեցին իրար գրական գերմաներենով: Բայց ինչ արած, քանի դեռ գեղարվեստական գրքերը գրվում են գրական գերմաներենով, շվեյցարացիները և բարբառախոս գերմանացիները պիտի այսօրինակ խնդիրներ ունենան: Հարցի լուծման համար կա մեկ ճանապարհ: Խոսակցական լեզուն, ի վերջո, իր համար ճանապարհ է հարթում և ընդունվում որպես գրական լեզու, ինչպես եղավ գրական արևմտահայերենի և արևելահայերենի դեպքերում: Բայց դա երևի երբեք չի լինի շվեյցարացիների համար: Իսկ մեզանում, եթե դա լինի էլ, դեռ շատ ճանապարհ պիտի անցնենք:

Ժարգոնը մարդկանց որոշ խմբերի բնորոշ յուրահատուկ խոսվածքն է, որտեղ, ի թիվս լեզվի համար սովորական բառերի ու արտահայտությունների, օգտագործվում են առանձնահատուկ, միայն սովյալ ժարգոնին բնորոշ ձևեր: Այսպես, հայտնի են գողերի, զինվորականների, երաժիշտների, դպրոցականների և այլ ժարգոններ: Թեև մեզանում ժարգոն տերմինը հաճախ օգտագործվում է վատ իմաստով, բայց ժարգոնում բոլորովին էլ ինչ-որ նախնական վատ բան չկա: Մարդկանց բազում խմբերի էլ բնորոշ են առանձնահատուկ բառեր և արտահայտություններ: Նույնիսկ լեզվի ուսուցիչները, պայմանավորված իրենց գործունեության ոլորտով, ունեն իրենց ժարգոնը: Օրինակ, ժարգոնային կարող են համարվել այնպիսի բառեր, ինչպես գերազանցիկ (ռուսերեն отличник-ի ազդեցությամբ), պատուհան «դասերի միջև ուսուցչի ազատ ժամանակը» (ռուս. окно) և այլն: Հայտնի են բազմաթիվ մասնագիտական՝ այդ թվում՝ արհես-

տավորների, արվեստագետների և գիտնականների (երաժիշտներ, ֆիզիկոսներ և այլն) ժարգոններ:

Պետք է նշել լեզվական աղավաղումները քննադատող հրապարակումների մի թերությունը: Քննադատողները հանդես են գալիս հիմնականում գրական լեզվի ուղղախոսության պաշտպանության դիրքերից: Պետք է այսպես խոսել ու գրել և ոչ թե այդպես: Չպետք է աղավաղել հայոց լեզուն: Ընդ որում, «հայոց լեզու» և «մայրենի» է համարվում գրական լեզուն, և քննադատության սլաքը ուղղված է լինում ոչ գրական՝ խոսակցական լեզվի, բարբառի և ժարգոնի դեմ:

Իրականում և՛ խոսակցական լեզուն, և՛ բարբառը, և՛ ժարգոնը նույնպես հայոց լեզու և մայրենի են, լեզվի կարևոր և անհրաժեշտ դրսևորումներ, լեզվի հարստությունը: Նույնիսկ հայիոյանքն ու կոպիտ արտահայտությունները լեզվի անհրաժեշտ տարրեր են: Հարցն այն է, որ լեզվի այդ դրսևորումներն օգտագործվեն ամեն մեկն իր տեղում: Կան տգետ և տգեղ ոճեր և արտահայտություններ, խոսքի ցածր մակարդակ, որոնք բնորոշ են լեզվական ցածր մշակույթի տեր մարդկանց: Կարելի է խոսել խոսակցականով, բարբառով, ժարգոնով, բայց խելոք, կամ գոնե՝ ոչ տգետ, և ընդհակառակը, կարելի է հույժ գրականով տգետ և տգեղ խոսել: Ամենատիպիկ օրինակ է մակարոյծ բառերի և արտահայտությունների չարաշահումը, որը հաճախ օգտագործվում է գրական լեզվով խոսելիս:

Անընդունելի է հաղորդակցության այս ձևերի ոչ պատշաճ դեպքերում կիրառությունը միայն: Այսպես, տրամաբանությունը հուշում է, որ պաշտոնական հանդիպումների ժամանակ պետք է օգտագործվի պետության պաշտոնական լեզուն: Առօրյա կյանքում խոսակցական լեզուն: Ֆիզիկոսները, մարզիկները, զինվորականները և այլ սոցիալական խմբեր իրենց միջավայրում օգտագործում են իրենց մասնագիտական ժարգոնները: Համապատասխանաբար, խուլիզանական կամ քրեական «հանդիպումների» լեզուն պիտի լինի քրեական ժարգոնը:

Անընդունելի է միայն խոսակցականի և ժարգոնի անհարկի և անտեղի օգտագործումը և չարաշահումը: Եվ իրոք, ի՞նչ իմաստ և պիտի ունենա, ասենք, ֆիզիկոսների ժարգոնի չարաշահումը քարտաշների շրջանում: Կամ՝ քրեական, գողական ժարգոնի օգտագործումը պետական գրագրության մեջ և քաղաքական գործիչների խոսքում,

գրավոր կամ պաշտոնական ելույթներում, դպրոցում, ընտանեկան կամ հասարակական կյանքում:

Քրեական ժարգոնը, պատմական պատճառներով, ԽՍՀՄ-ում և նրա հաջորդ երկրներում լայն ոլորտներ է գրավել և ծանոթ է շատերին: Կա ռուսական գողական մի ամբողջ լեզու՝ ֆենյա (феня), իսկ ռուսական քրեական ժարգոնի բազում արտահայտություններ մտել են ռուսական ոստիկանական ժարգոն, խոսակցական ռուսերեն, ապա, փոխառվելով կամ թարգմանվելով՝ հետխորհրդային այլ երկրների լեզուներ:

Մեր ԶԼՄ-ներում և նույնիսկ խորհրդարանականների պաշտոնական խոսքում, որպես անդրադարձ հասարակության, մի կողմից՝ ժողովրդավարացման, մյուսից՝ քրեականացման, սկսել են հայտնվել ռուսական քրեական ժարգոնի նմուշներ: Այդպիսի օրինակներ են քսիվ (ксива) «բանտ ուղարկվող գաղտնի տեղեկություն», քցել (տգետ թարգմանված՝ кинуть) «խարել», որի հայերեն ժարգոնային համարժեքն է քաշել-ը, մենտ կամ մենթ «միլիցիոներ, ոստիկան» (мент), բեսպրեդել «ժայրահեղ անօրինականություն» (беспредел) և նույնիսկ՝ պաստավկա անել (подставить), անգրագետ մի արտահայտություն, որը վերջերս է սկսել հանդիպել մամուլում:

Նման բառերը թերևս կարելի է օգտագործել որպես մեջբերումներ, ապա՝ երգիծական և ոճավորված խոսքում: Աստված իրենց հետ: Բայց միանգամայն անթույլատրելի է, երբ քրեական ժարգոնը չարաշահվում է խորհրդարանում, կամ նույնիսկ որոշ ելույթներ ամբողջովին ներկայացվում են քրեական ժարգոնով: Սա էլ թողնենք պատգամավորների խղճին: Չէ՛ որ պատգամավորի ելույթը ևս կարող է ոճավորված կամ երգիծական լինել: Ուղղակի հիշեցնենք, որ և մեզանում և Ռուսաստանում քրեական հեղինակությունների ոլորտում առավել բարձր է գնահատվում հույժ գրական, «գերնրբաճաշակ» խոսքը (в изысканной манере), որը նրանք կիրառում են սովորաբար, և հատկապես այն դեպքերում, երբ ցանկանում են հաստատել են իրենց առավելությունը հակառակորդի և ցածր կարգի քրեականների նկատմամբ:

Մեզանում որոշ հեռուստատեսային հաղորդումներ անցկացվում են ամբողջապես Երևանի խոսակցական լեզվով, այնպիսի մարդկանց կողմից, որոնք ի վիճակի չեն գրական լեզվով հաղորդում-

ներ անցկացնելու և նույնիսկ կապակցված մտքեր արտահայտելու: Խոսքը չի վերաբերում «Կարգին հաղորդմանը» և նման բաներին, որտեղ ներկայացվում է կենդանի խոսքը: Ուղղակի սովորական հաղորդումներ են, որոնք պետք է անցկացվեն գրականով, բայց քանի որ ընտրված հաղորդավարը չի տիրապետում գրական լեզվով մտքերը հաղորդելու արվեստին, խոսում է խոսակցականով:

Կա մի ոլորտ, որտեղ խոսակցական լեզուն և ժարգոնը բացարձակապես անընդունելի են: Դա պաշտոնական և քաղաքական հաղորդումների լեզուն է: Անընդունելի է, երբ պետական բարձրաստիճան պաշտոնյայի ելույթը կամ հեռուստատեսային քաղաքական հարցազրույցն ընթանում է ամբողջությամբ խոսակցականով և ժարգոնով, մակաբույծ բառերի անխիղճ չարաշահմամբ, այսինքն՝ քրեստոմատիկ կերպով այնպես, ինչպես չի կարելի: Դա արհամարհանք է երկրի, պետության, պետականության, լեզվի և մշակույթի նկատմամբ և ստորացնում է երկիրը:

ԿԱՅԱՑԱԾ ԱՉԳՆ ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ  
ՉԻ ՎԱԽԵՆՈՒՄ<sup>1</sup>  
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Արմեն Պետրոսյանի հետ զրուցեց  
Ռինա Գրիգորյանը

*Պարոն Պետրոսյան, ըստ հայերի ծագման Ձեր վարկածի՝ հայերենի կրողները ուրարտական դարաշրջանում բնակվել են Էթիունիում՝ մոտավորապես սպազա Այրարատ աշխարհում: Ինչպես է այդ վարկածը փնդավորվում հնդեվրոպական նախահայրենիքի մասին այսօր եղած հիմնական վարկածների համարեքստում:*

Հնդեվրոպական հայրենիքի խնդիրը հայ ժողովրդի ծագման, ձևավորման խնդիրներից միանգամայն տարբեր հարց է: Ժամանակակից գիտության տվյալներով հնդեվրոպական հայրենիքը ժամանակագրվում է մ.թ.ա. չորս հազար թվականից ութ հազար թվականը՝ շատ հին ժամանակներում, երբ խոսել որևէ ժամանակակից ժողովրդի ձևավորման մասին ոչ մի իմաստ չունի: Դա նոր քարե դարի ժամանակաշրջան էր, և որևէ ժողովրդի ծագումը ուղղագիծ կապել հնդեվրոպական հայրենիքի դարաշրջանի հետ՝ հատուկ է մերձգիտական աշխատանքներին:

Կա լեզվի ծագման հարց, բայց դա ուրիշ խնդիր է: Անկախ հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրությունից, այդ լեզուների կրողները հնուց ի վեր տարածված են եղել Եվրասիայում՝ Հնդկաստան, Պարսկաստան, Փոքր Ասիա, Հունաստան: Ինչո՞ւ չպիտի լինեն հենց դրանց կենտրոնում՝ Էթիունիում:

<sup>1</sup> Առաջին անգամ հրատարակվել է «Իլուր» լրատվական կայքում (18.09.2013):

*Ունենք արդյոք ենթադրություններ, թե ինչպիսի ճանապարհներով և երբ հայերը կարող էին հայտնվել այդ տարածքներում, թե՛ այս հարցին հնարավոր չէ անգամ նախնական պատասխան տալ:*

Երբ ասում ենք հայեր, պետք է ճշտել՝ հայերենի կրողներ, որովհետև հայերը, ինչպես և այլ ժողովուրդները ձևավորվել են իրենց մեջ ներառելով նաև այլալեզու խմբերի, այսինքն՝ պետք է խոսենք հայերենի նախնական տարբերակներով խոսող մարդկանց մասին: Հայերենը հնդեվրոպական լեզու է. դա նշանակում է, որ ազգակից է մի շարք լեզուների, որոնք հնում տարածված են եղել Հնդկաստանից մինչև Իսպանիա, իսկ ներկայումս աշխարհի մարդկանց մեծամասնությունը խոսում է հնդեվրոպական լեզուներով: Այդ լեզուների նախահիմքը՝ մայր լեզուն պետք է ինչ-որ մի տեղ և ինչ-որ ժամանակ խոսված լիներ: Գիտնականները դեռևս դարեր առաջ փորձել են այն տեղայնացնել: Հետաքրքիր է, որ առաջին տեղայնացումը, գիտության արշավույսին (XVIII դարում) առաջարկվել է Հայաստանում՝ կապված Նոյի լեգենդի, Արարատի հետ: Հետագայում այլ տեղայնացումներ են առաջարկվել և հիմա էլ առաջարկվում են: Այդ հարցը միարժեք լուծում չունի:

Վրացական՝ քարթվելական լեզուները, օրինակ, խոսվել և խոսվում են Վրաստանում և մերձակայքում՝ Սև ծովի արևելյան շրջաններից մինչև Ադրբեյջանի սահմանը, Կովկասից մինչև Հայաստանի սահմանը, ուրեմն՝ ակնհայտ է, որ նրանց նախալեզուն, ինչպես էլ փորձենք տեղայնացնել, ոչ շատ հեռու պիտի լիներ Վրաստանից ու Կովկասից: Իսկ հնդեվրոպական լեզուների լայն տարածվածությունը անսահմանորեն դժվարացնում է խնդիրը: Ներկայումս շրջանառության մեջ է հիմնականում երկու մեծ վարկած. ըստ դրանցից մեկի՝ հնդեվրոպական «նախահայրենիքը» պիտի լիներ կենտրոնական հարավային Փոքր Ասիան՝ ոչ հեռու Հայկական լեռնաշխարհից, իսկ ըստ երկրորդի՝ Ուկրաինան և Ռուսաստանի հարավը՝ մինչև Կասպից ծովից հյուսիս ընկած տարածքները: Ընդ որում՝ այդ երկրորդը, եթե ոչ առաջնային, գոնե երկրորդային հայրենիք է եղել շատ լեզուների համար: Եվ հնարավոր է, որ առաջնային հայրենիքը եղել

է Փոքր Ասիան, որտեղից որոշ խմբեր անցել են Բալկաններ, ապա՝ Ուկրաինա, և հինք դրել այդ երկրորդային հայրենիքին: Այսինքն, այս երկու վարկածները, հնարավոր է, որ որոշ չափով «ծածկում» են իրար:

Նախորդ դարի 70-ական թվականներից խորհրդային գիտնականներ Թամազ Գամկրելիձեն և Վյաչեսլավ Իվանովը առաջ քաշեցին մի վարկած, ըստ որի հնդեվրոպական նախահայրենիքը տեղայնացվում է Հայկական լեռնաշխարհում և մերձակայքում, թվագրելով այն շուրջ մ.թ.ա. հինգ հազար թվականով: Ժամանակակից գիտության մեջ այդ կարծիքը լայն շրջանառություն չունի: Այն հիշվում է որպես «հայկական» վարկած, հաճախ հիշյալ կենտրոնափոքրասիական վարկածի շրջանակներում: Վերջինս բրիտանական գիտնական Քոլին Ռենֆրյուի տեսակետն է, որը նորացված ձևով ձևակերպվեց արդեն 21-րդ դարում: Այն ժամանակագրում է հայրենիքը ավելի վաղ, քան մ.թ. հինգ հազար թվականը: Ներկայումս այդ տեսակետը շատ համակիրներ ունի, թեև ամենատարածվածը դեռևս հարավուսական վարկածն է:

Մ.թ.ա. ութից չորս հազար տարի առաջ եղած լեզուների հայրենիքից մինչև Էթիոպիան, որ ավանդված է մ.թ.ա. առաջին հազարամյակում՝ 9-րդ դարի վերջից, հսկայական ժամանակագրական խզում կա, և մենք այդ խզումը չենք կարող լցնել՝ փաստեր չկան: Եթե հնդեվրոպական հայրենիքը պիտի լիներ Փոքր Ասիայի կենտրոնում, ապա հնարավոր է երկու տեսակետ. վաղնջական հայերենի կրողները կարող էին գալ միանգամից այդտեղից, կամ գնալ Բալկաններ, կամ՝ Հարավային Ռուսաստան և գալ այնտեղից: Կամ՝ եթե հայրենիքը եղել է Կովկասից հյուսիս, գալ այնտեղից, կովկասյան կամ բալկանյան ճանապարհով: Կա այսպիսով, մի քանի հնարավոր ճանապարհ: Քանի որ եղած լեզուներից մեջ հայերենը, ըստ շատ հնդեվրոպաբանների, ավելի մոտիկ է հունարենին (և նոր միայն հնդիրանական լեզուներին), տարածված կարծիք կա, որ հայերենի հնագույն տարբերակների կրողները՝ վաղնջահայերը Բալկաններից են անցել Հայաստան: Բայց դա միանշանակ չէ՝ ընդամենը քիչ թե շատ հավանական ենթադրություն:

Ինչ վերաբերում է Էթիունիին, մենք արդեն գործ ունենք այլ փաստի հետ: Հնագիտորեն նայելով՝ կարող ենք ասել, որ այդ երկրամասը՝ հետագա հայկական Այրարատ նահանգի տարածքը և մերձակայքը, նույն ցեղերով պիտի բնակեցված լիներ գոնե մինչև ուշ բրոնզե դարի սկիզբը՝ մ.թ.ա. հազար հինգ հարյուր թվականը: Մի արժեքորեն ասել, որ դրանից առաջ ևս երկիրը բնակեցված է եղել հենց նույն ցեղերով՝ ավելի դժվար է: Իհարկե հնարավոր է օդի մեջ կրակել, որ մ.թ.ա. հինգ հազար թվականից, կամ՝ տասնհինգ հազար թվականից, կամ նույնիսկ՝ դինոզավրերից էլ առաջ, այստեղ կամ ողջ Հայկական լեռնաշխարհում հայեր են ապրել: Բայց դա գիտական չէ: Ինչևէ, որոշ հանգամանքներ թույլ են տալիս դատել, որ գոնե մ.թ.ա. երկրորդ հազարամյակից այս նույն ցեղախումբը պիտի ապրած լիներ այստեղ: Ավելի խորը գնալը ավելի դժվար է: Մենք կարող ենք մոտենալ որևէ ժողովրդի ծագման հարցին երկու կողմից. մեկը՝ լեզվական ծագման խնդիրն է՝ հնդեվրոպական նախահայրենիքը, լեզվի տեղաշարժը և նոր հայրենիքում տարածումը, իսկ մյուսը՝ ժողովրդի՝ մինչև ամենավաղ դարաշրջանի պատմության և հնագիտության տվյալները: Այսինքն՝ վերևից և ներքևից գալով: Ցանկացած դեպքում արանքում մեծ խզում է մնում: Ահա այդ խնդիրը պետք է փորձել լուծել: Դա է մեր գիտության և հմայքը, և՛ դժվարությունը:

***Մի քիչ խոսենք այս մասին, թե ինչու և ինչպես եք պարկերացում Էթիունիի հայկական լինելը:***

Նախ ասեմ, որ կան նաև այլ տեսակետներ հայ ժողովրդի ծագման վերաբերյալ: Հիմա գիտական շրջանառության մեջ է երեք վարկած, որոնք իրարից տարբերվում են հայ ցեղանվան ծագման տեսակետով: Մեզանում ամենատարածվածը հայասական վարկածն է, ըստ որի՝ հայ ցեղանունը ծագում է մի երկրանունից, որը խեթական արձանագրություններում կոչվում է Խայասա (Հայկական լեռնաշխարհի արևմուտքում): Եվ որպեսզի ավելի մոտիկ հնչի հայ ձևին, գրում են Հայասա: Ուրեմն, այստեղ մի փոքրիկ խաբեություն կա: Ինչևէ, այս տեսակետը բավականաչափ տարածված է և շատ առաջատար գիտնականներ՝ Ղափանցյանը, Ջահուկյանը, Ռոթը, Կրեչմերը, Պիտրովսկին, Մելիքիշվիլին, Գամկրելիձեն, Իվանովը, Թումանովը

վը, Գեորգիևը, Բընըցյանուն և շատ ուրիշներ, եղել են այս տեսակետի կրողներ: Ելնում են նաև այն բանից, որ ըստ հունական լեգենդի՝ հայերը հիմնավորվել են նախ լեռնաշխարհի արևմուտքում, հետո միայն տարածվել:

Ըստ մյուս տեսակետի՝ հայ ցեղանունը առաջացել է խեթերի՝ կենտրոնական Փոքր Ասիայի հին բնակչության խաթի անվանումից: Այստեղ էլ խնդիր կա, թե ինչու է խ-ն հ դարձել: Վերջին ժամանակներում այդ տեսակետը պաշտպանում էր Իգոր Դյակոնովը: Ներկայումս իրազեկ մասնագետների մեջ այս տեսակետի կրողներ չկան, բայց ընթացիկ միջազգային մասսայական գիտական գրականության մեջ այն ամենատարածվածն է, որովհետև մյուսը Արևմուտքում համարվում է հայ ազգայնական (այնտեղ շատերն անտեղյակ են, որ այդ տեսակետը պաշտպանել են բազմաթիվ ոչ հայ՝ ռուս, գերմանացի, վրացի, բուլղարացի, ռումինացի գիտնականներ):

Իմ տեսակետը ես առաջ եմ քաշել երեսուն տարի առաջ: Այն հենվում է մի շարք փաստարկների վրա: Անընդհատ խոսելով լեռնաշխարհի արևմտյան տարածքների՝ որպես «նախնական Հայաստանի» մասին՝ հաշվի չեն առնում մեր ունեցած ներքին տվյալները՝ հայկական ազգածին ավանդությունը: Այստեղ խնդիրն այն չէ, որ այդ լեգենդները պատմական փաստեր են. դրանք առասպելներ են՝ Հայկի, Բելի, Արամի և Արա գեղեցիկի մասին, բայց առասպելները վիպականացած (էպիկականացած) են՝ այստեղ խոսքը դյուցազունների մասին է, ոչ թե աստվածների: Իսկ առասպելը վիպականանալով, էպոս դառնալով՝ ձեռք է բերում ժամանակային և տեղային հատկանիշներ, այսինքն՝ արտացոլում է նաև պատմական իրողություններ: Հայկը և նրա ժառանգները, ակնհայտորեն, առասպելական կերպարներ են, բայց նրանց տեղաշարժերը կարող են հիշողություններ լինել ցեղերի ռեալ տեղաշարժերի մասին: Եվ ահա, ասվում է, որ Հայկի որդուց՝ Արամանյակից սկսած՝ Հայքի կենտրոնն է դառնում Արարատյան դաշտը և մնում որպես այդպիսին մինչ օրս: Իսկ արևմտյան տարածքները ազգածին ավանդության մեջ, մինչև Արամ նահապետ, չեն էլ հիշվում: Նույնիսկ հետագայում համարյա բոլոր մայրաքաղաքները եղել են Արարատյան դաշտում:

Ուրարտական դարաշրջանում այդ երկրամասը՝ հետագա Այրարատ նահանգը կոչվում էր Էթիունի: Այս անվանումը, հնարավոր

է, որ սեպագիր հաղորդումն է հայերի ցեղանվան հին՝ հաթիռ ձևի, որը պիտի դառնար հայո, հետո՝ հայ (այդ հաթիռն էլ իր հերթին, պիտի ծագեր հնդեվրոպական պոտի- «տեր» արմատից): Մ. թ. ա. առաջին հազարամյակի Հայկական լեռնաշխարհում Էթիունին իր ներուժով երկրորդ միավորումն էր Ուրարտուից հետո՝ դեռևս չկազմավորված որպես կոռ, միասնական թագավորություն, բայց շատ հզոր մի դաշնություն, որ մինչև Ուրարտուի անկումը մշտական թշնամության մեջ է եղել նրա հետ: Ի դեպ, ուրարտական արձանագրություններում միայն մեկ մարդ է հիշվում որպես Էթիունիի արքա՝ Դիուծինի կամ Տիուծինի անունով (երկու ընթերցումն էլ հնարավոր է): Սա կարող է պարզ հայկական զուգահեռը լինել հունարեն Դիոգենես անվան՝ Տիւ – ծին կամ Դիւ – ծին՝ «ոյուցազն, աստուծոց ծնված»: Ուրարտական տեքստերի լայնածավալ անվանաբանության մեջ այդքան թափանցիկ հայկական անունով այլ արքա չկա:

Կան ասորեստանյան տվյալներ, որ էթիունցիները ավերել են Ուրարտուի տարածքները: Ուրարտուի արքաները, առաջիններից մինչև վերջինները, գրում են, որ կռվել և գերիներ են տարել Էթիունիից: Ուրարտուի քարտեզին նայելով՝ կարելի է մտածել, որ դա այնպիսի մի միասնական պետություն էր, ինչպես, ասենք, ժամանակակից Ֆրանսիան, բայց ոչ. դա հին կայսրություն էր, որտեղ ամեն տարի թագավորը արշավում և վերանվաճում իր իսկ տարածքները: Ինչու՞ է Արգիշտին կառուցել Արարատյան դաշտի հզոր քաղաքները՝ Էրեբունին, Արգիշտիխինիլին, Ռուսան՝ Թեյշերաինին, ինչու՞ են հսկայական ամրոցներ կառուցել: Կառուցել են ոչ թե հեռավոր թշնամիների դեմ, որ պիտի գային, ասենք, ժամանակակից Վրաստանի կամ Կովկասի տարածքներից, այլ ներքին թշնամիների, այսինքն՝ էթիունցիների դեմ:

Ինչո՞ւ է Ռուսաստանը Չեչնիայում կառուցել Գրոզնի քաղաքը, ո՞ւմ դեմ. ոչ թե թուրքերի կամ պարսիկների, այլ հենց տեղացիների՝ չեչնների դեմ, թեպետ ռուսական ծառայության մեջ եղել են և՛ տեղական բնակիչներ, և՛ ռուսներ, և՛ այլք: Այսպիսով, կարծում եմ, որ Էթիունին է եղել հայկական էթնոսի կենտրոնական շրջանը: Հնագիտորեն չի բացահայտվում դեպի Էթիունի բնակչության մուտք արևմուտքից, ընդհակառակը՝ կա շարժում Էթիունիից՝ արևմուտք և հարավ:

**Վերջին փաստաւյակներում՝ նշանակալի պեղումներ են կատարվել Թուրքիայի փարածքում: Դրանց արդյունքում ինչ նոր փեղեկություններ են հայտնի դարձել Ուրարտուի վերաբերյալ:**

Վերջին երկու տասնամյակներում ուրարտական պետության մասին մեր պատկերացումները նշանակալիորեն փոխվել են, և դա իրոք կապված է Արևմտյան Հայաստանում՝ Թուրքիայի տարածքում հնագիտական աշխատանքների և արդյունքների մեկնաբանման հետ: Հայաստանի տարածքի հնագիտական պատմությանը նայելով՝ տեսնում ենք, որ մինչև ուրարտական սվաճումը այստեղ տիրում էր մի որոշակի հնագիտական մշակույթ: Անվանենք այն էթիունյան: Ուրարտական ներխուժմամբ ամեն ինչ փոխվում է: Նոր եկած մշակույթը նախորդից տարբեր է, ինչպես սար ու ձոր: Ուրարտական արքաները կառուցում են բոլորովին այլ տիպի ամրոցներ, նրանց բնորոշ են բոլորովին այլ տիպի խեցեղեն, գենքեր, տաճարներ: Բոլորովին ուրիշ աշխարհ է. ակնհայտորեն դա հարավային մի երևույթ է: Մեր գիտնականները, պեղելով ժամանակակից Հայաստանի տարածքը, կարծում էին, որ այդ մշակույթի արմատը պիտի լիներ Վանի շրջանում, որովհետև ուրարտական պետության կենտրոնը Վանն էր, սակայն պարզվեց, որ այդպես չէ: Վանի շրջանի հին մշակույթը նույնն է, ինչ հյուսիսում է՝ էթիունյան: Նույն այդ մշակույթն է տարածված եղել Հայկական լեռնաշխարհի մեծ մասում, բացի ծայր արևմտյան և ծայր հարավային շրջաններից: Իսկ ուրարտական կայսերական մշակույթը՝ իր ամբողջ նորամուծություններով, այսինքն՝ քաղաքներ, ամրոցներ, տաճարներ կառուցելու ձևերով, գենքերով, իր բոլոր կազմակերպական և մշակութային տարրերով այլ է: Այն Հայկական լեռնաշխարհի ծայր հարավից է ծագումով՝ խոտիական աշխարհին մոտիկ ինչ-որ մի տեղից (այն նաև ասորեստանյան նշանակալի ազդեցություն է կրում): Այդ մշակույթի ստեղծողները ուշ են եկել. նրանք սկզբնապես գրավել են Հայկական լեռնաշխարհի հարավը և ապա նաև մնացած տարածքները, մ.թ.ա. իններորդ դարի կեսերից ստեղծելով իրենց պետությունը: Կարծում են, որ հնագիտական աշխատանքների այս արդյունքները կարող են նպաստ բերել հատկապես իմ տեսակետի օգտին:

**Ինչն Ուրարտուի անկմանը հետևեց մշակութային անկումը, ուր կորավ ուրարտական բարձր և ուրույն մշակույթը:**

Կայսրությունը կործանվեց՝ տեղի ունեցավ մշակութային անկում, ինչպես եղավ Սովետական Միության դեպքում: Հայաստանում կային լավ գիտնականներ, ուժեղ ինստիտուտներ, հիմա չկան: Ռուսաստանի պես հզոր երկիրը, որ մեր գիտության մեջ առաջատար դիրքեր ուներ աշխարհում, հիմա չունի: Հին կայսրությունները՝ Ուրարտուն, Ասորեստանը, սեպագիր քաղաքակրթությունները վերացան այդ դարաշրջանում և նրանց փոխարինելու եկան նոր պետություններ, նոր կազմակերպչական ձևեր: Մյուս կողմից, Հին Արևելքի հաջորդ մեծ կայսրությունը՝ հին Պարսկաստանը շատ բան ժառանգեց նախորդներից՝ Բաբելոնից, Ասորեստանից և Ուրարտուից: Ուրարտուի անկումից հետո Հայկական լեռնաշխարհում ուրարտական մշակույթն էլ անկում ապրեց, թեև որոշ տարրեր պահպանվեցին: Բայց հիմքը՝ էթիոնյան նախորդ մշակույթն էր:

Պատկերացրեք՝ Ռուսական կայսրությունը գրավել է Հյուսիսային Կովկասը, կառուցել քաղաքներ են: Եթե Ռուսաստանը հետ քաշվեր կամ կործանվեր, որոշ բաներ Կովկասում գուցե մնային, բայց բնակչությունը կվերադառնար իր հին կենսաձևին՝ լեռնային գյուղեր, փոքր ֆեոդալական տիրույթներ են, քանի որ այնտեղ կմնային նույն բնակիչները, իսկ կայսրություն և կայսերական մշակույթ այլևս չէր լինի: Եվ ոչ միայն այլալեզու ծայրագավառներում՝ հենց ռուսական տարածքներում էլ, եթե կայսրությունը հետ քաշվեր, մարդիկ կվերադառնային իրենց ավանդական, ոչ կայսերական կենսակերպին (առանց նահանգապետերի, ռստիկանապետերի, նրանց նստավայրերի, զորանոցների են):

Ընդհանրապես, Հայաստանի պատմության մեջ, անկախ էթնիկական տեղաշարժերից, վերելքներն ու անկումները մշտապես հաջորդել են իրար: Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների թագավորությունների անկմանը հետևել է մշակութային անկումը: Որոշ առումներով՝ կտրվել է մշակութային ժառանգորդությունը: Արտաշատի, Դվինի, Անիի նման քաղաքները, փաստորեն վերացել են, հետո՝ ձևավորվել են նորերը, որոնք, իրենց հերթին, նորից անկում են ապրել, և այդպես մի քանի անգամ:

*Չսայած պարզ է, որ Հայկական լեռնաշխարհում ուրարտական քաղաքական գերակայությունը փոխարինվել է հայկական գերակայությամբ, սակայն աղբյուրների տղոթյան պայմանով անցման կոնկրետ մեխանիզմը մութ է, մնում և խնդրահարույց: Ինչո՞ւ Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ ցեղերից հենց հայերը կարողացան հասնել քաղաքական գերակայության, ինչպե՞ս դա տեղի ունեցավ:*

Ուրարտուի պատմությանը նայելով՝ տեսնում ենք, որ մշտական հակադրություն կա երկու հզոր միավորների՝ Բիաինիլիի (Վանի նահանգի ուրարտական անվանումն է) և Էթիունիի միջև: Առաջինն առավել հզոր էր, կազմակերպված, և տիրում էր լեռնաշխարհում, բայց վերջինս մինչև վերջ հակադիր մնաց նրան: Ակնհայտ է, որ նրանց միջև պետք է ինչ-որ կապեր լինեին, գուցե անգամ՝ դինաստիական բնույթի, բայց ակնհայտ է նաև, որ թշնամություն կար: Հետագայում հարավային գերակայությունը լեռնաշխարհում փոխարինվում է հյուսիսային գերակայությամբ, թերևս ոչ միանգամից և ոչ բոլոր տարածքներում համընթաց: Ուրարտական արքաները հատուկ մի քաղաքականություն ունեին՝ նրանք անընդհատ մի տարածքից դեպի այլ, անգամ հարյուրավոր կիլոմետրերով հեռու տարածքներ, գերիներ էին տանում ու վերաբնակեցնում, որպեսզի թուլացնեն տեղական կենտրոնախույս ուժերին և իրար խառնելով համահարթեցնեն կայսրության բնակչությունը: Հանրահայտ փաստ է, որ Էրեբունի ամրոցը կառուցելով՝ Արգիշտի Առաջինը 6600 մարդ է այդտեղ բնակեցնում, հնարավոր է նույնիսկ իրենց ընտանիքներով, լեռնաշխարհի ծայր արևմուտքից՝ Ծովքից և Եփրատի մյուս ափից (Մավաթիայից): Այդպես տեղաշարժելով մարդկանց՝ արքաները ստեղծում էին մի միջավայր, որտեղ կայսրության մի քանի լեզուներից մեկը, ի վերջո, պիտի հաղթեր, դառնար համընդհանուր հաղորդակցության լեզու:

Արգիշտի Առաջինի հայրը՝ Մենուան ասում է, որ կես միլիոն գերի է տարել Էթիունիից: Ինչքան էլ չափազանցություն թվա դա (իսկ ուրարտական արքաները սովորաբար գերիների միայն ճշգրիտ թվեր են նշում), այդ թիվը հսկայական պիտի լիներ, և այդքան մարդու որտեղ էլ վերաբնակեցնե՞ր՝ լեռնաշխարհի լեզուն կարող էր դառ-

նալ Էթիունիի լեզուն (իմա՝ հնագույն հայերենը): Նույնիսկ կայսրության կենտրոնում՝ Վանում և մերձակայքում, թագավորները մեծ քանակությամբ գերիներ են վերաբնակեցրել, և այդտեղ ևս էթիունյան տարր է հիշվում: Ես կարծում եմ, որ էթիունցիները (իմա՝ հնագույն հայերը) գերակայեցին, որովհետև պատմականորեն այդպես էլ պիտի լիներ: Նրանք երկրորդն էին լեռնաշխարհում ուրարտական կայսրությունից հետո, և վերջինիս անկումը պիտի հանգեցնել նրանց գերակայությանը: Այլընտրանք, թերևս, չկար:

Ի միջի այլոց, արժե մի քանի խոսք ասել Ուրարտուի վերաբերյալ: Ուրարտուն երկրի՝ ասորեստանցիների կողմից տրված անվանումն է: Երկրի կենտրոնական նահանգը՝ սիրտը, ինչպես ասվեց, կոչվել է Բի-աինիլի (ինչպես Հայաստանինը՝ Այրարատ): Բայց ինչ ցեղանունով է իրեն կոչել երկրի տիրող տարրը, կամ ուրարտերեն խոսող հանրությունը՝ չգիտենք, կարող ենք միայն ենթադրություններ անել: Ուրարտուն կայսրություն էր՝ իր բոլոր ատրիբուտներով: Ուրարտում հիշվում են բազում տասնյակ, երբեմն անկախ կամ կիսանկախ, ցեղեր ու ցեղամիավորումներ, և երբ ասում ենք՝ «ուրարտացիներ», դա ուշ, հնարովի տերմին է, որ շատ նման է ԽՍՀՄ-ի բազմազգ բնակչությունը «սովետացի» անվանելուն, այսինքն՝ ճշգրիտ չէ: Իսկ այդ միավորումների մեջ ամենահզորը եղել է Էթիունիս, որը, որպես հակադիր ուժ, գոյատևել է մինչև Ուրարտուի անկումը:

Պետության ստեղծման գործում շատ մեծ է եղել երկրի վերնախավի դերը: Կարծում եմ, որ այն էթնիկական տարրը, որը կազմել է կայսրության կորիզը (այսպես կոչված «ուրարտացիները», կամ, ավելի ճշգրիտ, ուրարտերեն անվանված լեզվի կրողները), շատ փոքրաքանակ է եղել: Ամերիկյան գիտնական Պոլ Ջիմանսկին, տարբեր փաստարկներ ներկայացնելով դրա համար, որպես շատ փոքրաթիվ մի ցեղի կողմից ստեղծված մեծ կայսրության օրինակ, Ուրարտուն համեմատում է ինկաների ցեղի ստեղծած Պերուի հսկայական կայսրության հետ (Հարավային Ամերիկայում): Ուրարտերեն լեզուն, չնայած որոշ կենդանի լեզուների (հայերեն, վրացերեն) հետ առնչելու անհաջող փորձերին, ազգակից է մեկ այլ հինարևելյան (մեռած) լեզվի՝ խոտիերենին: Այս երկու՝ «խոտաուրարտական» լեզուները, հնարավոր է համարվում, որ շատ հեռավոր ազգակից են

հյուսիսարևելակովկասյան լեզուներին: Բայց ուրարտական արքաների անունները՝ Սարդուրի, Ռուսա, Արգիշտի ևն, խոտաուրարտական տեսք չունեն (ոչ էլ, ի միջի այլոց, հայկական): Իսկ հնում, մինչև մեծ կրոնների (գրադաշտականություն, քրիստոնեություն, իսլամ) ի հայտ գալը, մարդիկ միայն իրենց լեզվով անուններ են կրել: Հավանական է, որ կայսրության արքայատոհմը այլ, ոչ «ուրարտախոս» ծագում է ունեցել, ինչը համատարած երևույթ է համաշխարհային պատմության մեջ: Մի քանի հանրահայտ օրինակ՝ հին Ֆրանսիայում իշխող վերնախավը գերմանական էր, Ռուսիայում՝ սկանդինավյան, Բուլղարիայում՝ թյուրքական, իսկ արքայատոհմը կարող էր նույնիսկ այլ, վերնախավից տարբեր ծագում ունենալ (ինչպես Պարսկական կայսրությանը տիրած պարթևների արքայատոհմն ապարն ցեղից էր, իսկ միջնադարյան Անգլիայում իշխում էր Ֆրանսիայից եկած և ֆրանսախոս, բայց ծագումով՝ սկանդինավյան արքայատոհմը): Այդպես էլ, ինձ թվում է, եղել է Ուրարտուում:

*Շար էք անդրադառնում Դյումեզիլի նկարագրած հնդեվրոպական եռագործառույթ դիցաբանական-սոցիալական սխեմային: Արդյո՞ք կարելի է կես կարակ, կես լուրջ փարածել այդ սխեման ավելի մոտ ժամանակների վրա, և դրա միջոցով նկարագրել նոր շրջանի պարմական իրողությունները:*

Դյումեզիլը իր տեսակետը ձևավորել է՝ հաշվի առնելով ֆրանսիական ազգագրական դպրոցի նվաճումները: Հիմա Դյումեզիլին այնքան էլ շատ չեն հավանում: Մի բան պարզ է, որ հնդեվրոպական միասնության շրջանում՝ Նոր քարե դարում, չի եղել և չէր կարող լինել մարդկանց սոցիալական բաժանում՝ քրմերի, ռազմիկների և աշխատավորների: Դա բնորոշ է համեմատաբար նոր դարաշրջաններին: Ոչ բոլոր հարցերում է Դյումեզիլը ճիշտ, բայց, ամեն դեպքում, նրա հսկայածավալ աշխատանքը նոր որակ է հաղորդել հին առասպելների ուսումնասիրությանը: Իր աշխատությունների արժեքը այն է, որ համեմատել է շատ մեծ քանակությամբ հնդեվրոպական առասպելներ, ինչի միջոցով հնարավոր է վերականգնել և հասկանալ շատ բաներ: Հետո, Դյումեզիլը այդպես հեշտ չի բաժանում այդ ֆունկցիաները՝ քրմական, ռազմական և աշխատավորական, այլ ինքը ավե-

լի շուտ առանձնացնում է տիրակալության (երկու՝ իրավական և մոգական ասպեկտներով), ռազմական և վերարտադրողական ֆունկցիաներ: Այս երեք ֆունկցիաները շատ հնդեվրոպական առասպելներում աչքի են զարնում: Իրականության մեջ ևս՝ եթե ինչ-որ իշխանություն կա, պիտի աշխարհիկ և հոգևոր առաջնորդներ ունենա, առանց ռազմական հենարանի այն ինքն իրեն չի պաշտպանի, իսկ առանց վերարտադրողականության և պտղաբերության չի զարգանա և բազմանա: Ուր էլ նայես՝ նման մի բան կգտնես: Ի միջի այլոց, հնդեվրոպական առասպելներում հիմա փորձում են առանձնացնել նաև չորրորդ՝ անդրաշխարհի հետ կապված ֆունկցիա:

Այլ, ոչ հնդեվրոպական երկրներում, և նույնիսկ ժամանակակից իրականության մեջ ևս այդ ֆունկցիաների հնարավոր դրսևորումները լրջորեն քննարկվել են: Այսպես, հնարավոր է, որ ճապոնացիների նախնիների իշխող տարրը եղել է հնդեվրոպական՝ սկյութական աշխարհից, ինչը համապատասխան՝ «եռաֆունկցիոնալ» դրսևորումներ է թողել ճապոնական առասպելներում: Եվ դա ճապոնացի գիտնականների կարծիքով: Կայացած, հզոր ազգը չի վախենում ասել, որ իրենց իշխող տարրը ժամանակին կարող էր այլ ծագում ունենալ: Իսկ բերված ժամանակակից դրսևորումները կարող են դիտվել, մասամբ՝ որպես տիպաբանական, բնորոշ մարդկային հասարակությանն ընդհանրապես, մասամբ էլ՝ «կես կատակ»: Այսպես, Դյումալի երեք հրացանակիրներին ևս, ցանկության դեպքում, կարելի է համապատասխան գործառույթներ վերագրել:

*Որպես առասպելի հեղազուրոդ՝ ինչպե՞ս կահմաններ առասպելի և իրականության առնչությունները: Արդյո՞ք այն չգիպակցված մակարդակում գործում է նաև այսօր և պայմանավորում հասարակական կապեր, հարաբերություններ, ընկալումներ:*

Ինչպես ասացի, առասպելը վիպականանալով՝ դառնում է էպոս: Մենք առասպելներ չունենք, չեն մնացել. ունենք էպոս: Առասպելները պատմություններ են աշխարհի ստեղծման, քառսի, հին աստվածների մասին, որոնք հաճախ իրական տեղայնացում և ժամանակագրություն չունեն, իսկ երբ դառնում են էպոս, պատմական հիմքեր են ձեռք բերում, տեղայնանում և ժամանակագրվում են:

Նույն առասպելական սխեման, տարբեր ժամանակաշրջաններում վիպականանալով, կարող է ստեղծել տարբեր էպոսներ: Մենք հաճախ հիշում ենք միայն «Սասունցի Դավիթը», բայց մենք ունենք շատ էպոսներ և էպիկական պատմություններ: Առաջինը՝ Հայկյանների ազգածին ավանդությունն է, երկրորդը՝ «Վիպասանքը», հետո՝ «Պարսից պատերազմը» և «Տարոնի պատերազմը» և նոր միայն՝ «Սասունցի Դավիթը»: Ընդ որում՝ դրանք բոլորը կառուցվածքով իրար նման են: Սկսվում են դիցաբանական ծագում ունեցող հիմնադիր երկվորյակներով, որոնցից մեկը, կամ նրա հաջորդը, դառնում է էպոսի մեծ հերոսը, իսկ սրան հաջորդում է «մեռնող և հարություն առնող» կերպարը, որով և պատմությունն ավարտվում է: Այսպես՝ «Վիպասանքում» երկվորյակային կերպարներն են Երվանդն ու Երվազը, մեծ հերոսը՝ Արտաշեսը, վերածնվող հերոսը՝ լեռան մեջ փակված, բայց ազատվելու ձգտող, Արտավազը: Նույնն է և «Սասնա ծռերի» ծննդաբանությունը՝ Սանասար և Բաղդասար՝ երկվորյակներ, մեծ հերոս՝ Դավիթ, և ժայռի մեջ փակված Փոքր Մհեր: Նույն սխեման ամենուրեք պահպանվել է, բայց նրանով ներկայացվել են տարբեր դարաշրջաններ: Այս էպոսներով հայկական միտքը կողավորել է իր պատմության տարբեր ժամանակաշրջանները. ազգածին ավանդությունը նախաուրարտական շրջանն է, «Վիպասանքը»՝ հետուրարտականից մինչև Արտաշեսյանների կործանումը, «Պարսից պատերազմը» և «Տարոնի պատերազմը»՝ Արշակունիների շրջանը, իսկ «Սասնա ծռերը»՝ արաբական տիրապետության: Առասպելաբանական սխեման ամենուրեք նույնն է, բայց պատմությունները տարբեր են:

*Եթե հին սխեմաները գործում են, ապա, հիմնվելով դրա վրա, էպոսները կարող են ինչ-որ ազդեցություն ունենալ ժողովուրդների ճակատագրերի վրա:*

Ես տասնյակ տարիներ աշխատել եմ այս գիտության մեջ և ավելի շատ յունգյան տեսակետների կրող եմ (արխետիպեր, կոլեկտիվ-անգիտակցական ևն): Մեր գիտությունը, հոգեբանական մակարդակում, շատ առումներով ավելի բացատրելի է յունգյան մոտեցումներով, քան այլ: Բայց դա ապագան կանխորոշելու մեխանիզմ չի

տալիս: Կարող եմ ասել, որ մինչև 1873 թվականը՝ «Սասնա ծռերի» առաջին գրանցումը, հայ ժողովուրդի նշանակալի մասը պատկերացում չուներ իր մեծ էպոսի մասին: Հետագայում՝ 20-րդ դարում, այն գրավոր ճանապարհով տարածվեց և համահայկական բնույթ ստացավ, բայց մինչ այդ այն բնորոշ է եղել Արևմտյան Հայաստանի միայն մի քանի շրջանների: Հայտնի են Մոկաց, Մշո և Սասունի պատումները: Այդ շրջաններում էլ տեղայնացված է եղել էպոսը:

Հիմա այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ մարդը փորձում է էպոսով առաջնորդվելով դառնալ երկրի նախագահ և էպոսով ղեկավարվելով կառուցել ապագան: Դա, իհարկե, զարմանալի բան է, բայց աշխարհում մենք թերևս միայնակ չենք: Կան ժողովուրդներ, որ ունեն հին գիր ու գրականություն և պատմություն: Ասենք, ո՛չ հույները, ո՛չ գերմանացիները, ո՛չ անգլիացիները չեն մտածում, որ իրենց էպոսներով պիտի կանխորոշեն ու կառուցեն ապագան: Կան ժողովուրդներ, որ չունեն հին գիր և գրականություն, և այդ առումով տարբերվում են հիշյալ ժողովուրդներից, բայց ունեն զարգացած բանահյուսություն և էպոս: Դրանցից են, օրինակ, կովկասյան ժողովուրդները, որոնց հոգևոր մշակույթի ամենաէական մասը էպոսն է: Էպոսը նրանց կյանքի մեջ շատ խորն է մտած, շատ ավելի՝ քան հայերի մոտ, և համընդհանուր է տարածված եղել: Մեզանում 1873 թվականին Սրվանձոյանը էպոսը հազիվ գրանցել է՝ փնտրելով, իսկ այնտեղ փնտրելու կարիք չի եղել: Նրանց էպոսն այսօր էլ կենդանի կա: Եվ նրանց հոգևոր աշխարհը էպոսով է ձևավորվել: Ասենք, օսերի մեծ մասը քրիստոնյա է, փոքր մասը՝ մուսուլման, բայց Օսեթիայում կան մարդիկ, որ փորձում են անցյալը, ապագան և ներկան մեկնաբանել, պայմանավորել ու պլանավորել իրենց էպոսով: Նրանք չեն ունեցել նշանակալի գրականություն, պետականություն, հին պատմություն, և էպոսն է մնում իրենց ամենամեծ մշակութային արժեքը: Այդօրինակ «էպոսագիտությունը» սիրողական մի երևույթ է, բնորոշ չգարգացած և չկայացած պետականությունների: Բայց չէ՞ որ մենք ունեցել ենք և՛ պետականություն, և՛ հին գրականություն, և՛ զարգացած մշակույթ: Դա նման է նրան, որ հին հրեաները իրենց սուրբ գրքով, որ որոշ առումներով իրենց պատմական էպոսն է կամ վիպականացած պատմությունը, բացատրել են աշխարհը: Բայց դա եղել է մ.թ.ա. 1000թ., իսկ ումանք փորձում են դա կրկնել մ.թ. 2000թ.:

*Աշխարհում և Հայաստանում մեծ տարածում է ապացել կեղծ գի-  
տությունը: Այն քայքայում է մարդկանց գիտակցությունը հաս-  
կապես հայագիտական ոլորտում: Ինչ կարելի է անել այդ մար-  
տահրավերին դիմակայելու, իրական հայագիտությունը մարդ-  
կանց վերադարձնելու իմաստով: Ո՞րոնք են կեղծ գիտության  
տարածման պարճատները և նպաստող հանգամանքները:*

Խորհրդային միությունը՝ իր բազմաթիվ բացասական կողմե-  
րով հանդերձ, հզոր կայսրություն էր, իր հզոր գիտական կենտրոն-  
ներով և ուներ նաև համեմատաբար հզոր հայագիտություն: Կային  
այս հարցերին լավ տեղյակ գիտնականներ, որ լեզուներ գիտեին,  
լավագույնս կրթված էին և երկու ոտքով ամուր կանգնած իսկական  
գիտության հողի վրա, ինչպես Գևորգ Ջահուկյանը, Գագիկ Մարգ-  
այանը, Գևորգ Տիրացյանը և այլք: Բայց խորհրդային ժամանակ էլ՝  
արդեն 60-ական թվականներին, կային ազգային-ազատագրական  
տիպի «գիտական» շարժումներ: Ուրարտերենը հայերեն կարդալ,  
ինչ-որ նշաններ՝ «հայասերեն», հայերին, առանց լուրջ հիմքի, կա-  
պել հին Եգիպտոսը նվաճած վայրի ցեղերի՝ հիքսոսների հետ, ահա  
այդ ուղղության որոշ դրսևորումները: Ես դա անվանում եմ «ազգա-  
յին-ազատագրական» տիպի, որովհետև դա կարելի էր բնութագրել  
որպես ԽՍՀՄ կայսրությունից, մարքս-լենինյան պատմական մատե-  
րիալիզմից և պրոռուսական «ինտեռնացիոնալիզմից» ազատվելու՝  
քաղաքական հիմքեր ունեցող ազատագրական պայքարի դրսևոր-  
ման ձև: Ինչևէ, Խորհրդային Միության ժամանակ լուրջ գիտությունը  
և գիտնականները հեղինակություն էին վայելում և կեղծ գիտության  
դրսևորումները իրենց տեղն էին դրվում: Երբ կայսրությունը փլվեց,  
գիտությունը շատ ծանր անկում ապրեց:

Պատմության մեջ մենք հաճախ տուրք ենք տալիս հակագիտա-  
կան, ազգը պանծացնող մոտեցումների՝ կարծելով, որ դրանով կա-  
րող ենք նպաստել սերունդների առավել հայրենասիրական դաստի-  
արակությանը, բայց արդյո՞ք դա այդպես է: Եթե դու ցույց տաս, որ  
շատ հազարավոր տարիներ առաջ միայն հայեր են ապրել Հայաս-  
տանում, նրանք բարձրահասակ են եղել, քաջ ու չգիտես ինչու՝ շիկա-  
հեր, դրանից ավելի լավը չես դառնա կամ չես սկսկի ավելի լավ  
պաշտպանել հայրենիքը: Պարզունակ խաբեությունը և հատկապես

ինքնախաբությունը հաղթանակի չեն հանգեցնում: Օրինակ՝ չեչենները չեն ասում, որ իրենք հազար տարի առաջ կայսրություն են ունեցել, բայց շատ լավ են կովում: Հասկանալի է, որ դա մեր կողմից պատասխան է թուրքական կեղծարարներին, որոնք ամեն կերպ նսեմացնում են հայերի դերը պատմության մեջ: Բայց լավ պատասխանը պետք է լինի լուրջ, հզոր, իսկական գիտական հիմքի վրա, ուղղված ընդդիմախոսին և հասկանալի ու ընդունելի լինի նաև մյուս «չեզոք» կողմերի համար: Իսկ այդօրինակ «գիտությունը», որ նաև դասագրքեր է մտել, անլուրջ մի բան է և չի կարող տարածվել Հայաստանից դուրս: Արտասահմանում եթե նման բաներ ասես, լուրջ չես ընդունվի: Դա միայն ներքին շուկայի համար է, ուրեմն՝ ինքնախաբեություն: Պատկերացրեք, որ Անգլիայում մի «գիտական» ուղղություն առաջանա, որ պնդի, թե միջնադարյան Անգլիայի իշխողները՝ Վիլիելմ նվաճողից հետո, ոչ թե ֆրանսախոս նորմանդացիներ են եղել, այլ անգլիախոս, «բնիկ անգլիացիներ», ու սկսի կարդալ ֆրանսերենը որպես անգլերեն: Հզոր ու կայացած ազգը, ինչպես ասացի, իր պատմությունից չի վախենում ու չի փորձում այն խեղաթյուրելով՝ ավելի «պանծացնել»:

Ես հավատում եմ, որ այստեղ պետական մոտեցումները շատ կարևոր են: Մեզանում գիտությունը գտնվում է ողբերգական վիճակում: Ինստիտուտը նոր ավարտած և ուսուցիչ աշխատող երիտասարդը մինչև երկու անգամ ավելի շատ է վարձատրվում կայացած, կոչում ունեցող գիտաշխատողից, այսինքն՝ ուսուցիչների ուսուցիչը ավելի քիչ է վաստակում, քան սովորական ուսուցիչը: Ընդ որում ասեմ, որ ուսուցիչները ևս քիչ են ստանում և պետք է ավելի շատ ստանան, բայց այն, որ գիտնականը երկու անգամ քիչ է ստանում ուսուցիչից, դա աշխատավարձային ծիծաղելի հիերարխիա է: Դա պետական սխալ մոտեցում է: Երևի այլ չկայացած պետություններ էլ կան, որտեղ այդպես է: Գուցե մտածում են, որ ուսուցիչը երեխաներին գոնե մի բան է սովորեցնում, իսկ գիտնականը ո՛րն է պետք: Դրա համար էլ առաջ կգնան նրանք, ովքեր կարող են մեծ տիրաժներով գրքեր տպել կամ «ազգային-ազատագրական գիտությունը» ներկայացնել հեռուստատեսությամբ: Այսպիսի տխուր պատմություն:

Նույնպիսի վատ իրավիճակ է տիրում Ադրբեջանում և Վրաստանում: Գուցե դա մի շրջան է, որ պիտի անցնենք: Մեր մյուս հարև-

անը՝ Թուրքիան կայացած է որպես հզոր պետություն, բայց այնտեղ ևս կան նման երևույթներ, ինչը թուլության նշան է: Մյուս կողմից, եթե հետխորհրդային երկրներում գիտությունը հզոր անկում ապրեց 90-ական թվականներին, ապա այնտեղ, ընդհակառակը, առաջադիմեց: Եթե ամեն տարի Թուրքիայից հազարավոր երիտասարդներ են մեկնում սովորելու Եվրոպայում (այդ թվում՝ հնագիտություն, խեթագիտություն, ուրարտագիտություն են), ուրեմն գիտությունը զարգանում է՝ անկախ նրանից, որ այնտեղ ևս կա հակագիտություն: Ճանապարհը դա է՝ սովորել և օգնել գիտության առաջընթացին, և ես կարծում եմ, որ այստեղ պետական քաղաքականությունը շատ մեծ դեր ունի:

***Կարծիքներ կան, որ մշակույթի նկատմամբ ևս պետական քաղաքականությունը սխալ է տարվում: Ինչ կասեք սրա հետ կապված:***

Ինձ թվում է՝ որոշակի տարբերություններ կան մշակույթի և գիտության միջև: Ես ինձ իրազեկ չեմ համարում այդ հարցը քննարկելու: Ինչևէ, ես երեկ մի հայկական ֆիլմ եմ դիտել՝ «Փոքրիկ զորավարը», Օ՛Հենրիի պատմվածքի մի կինոբեմադրություն: Ես ընդհանրապես չեմ հիասթափվում մեր ժողովրդից, մշակույթից, բայց այդ ֆիլմն իրոք մի ուրիշ բան էր՝ ծանր հարված, և չեմ կարող պատկերացնել, որ, ասենք, Վրաստանում կարող էին նման մի ֆիլմ նկարահանել: Դա ուղղակիորեն կապված չէ գիտության հետ, բայց թերևս ինչ-որ տեղ նույն վիճակի արտացոլումն է:

***Ըստ Ձեզ՝ ինչ վիճակում է այսօր հայագիտությունը աշխարհում և Հայաստանում: Ինչ սկզբնապես և հետանկարային հարցեր կան:***

Պատմությունը, ինչպես ամեն ինչ, ունի սկիզբ, միջին մաս և վերջ: Մեր պատմությունը ունի սկիզբ՝ առասպելները, վերջ՝ քաղաքականությունը, որը ևս շատ առասպելականացած է, և միայն միջին մասն է, որ կարող ենք անվանել իսկական պատմություն: Հայագիտության երկու կարևոր խնդիրները կապված են սկզբի ու վերջի հետ՝ հայ ժողովրդի ծագման, ձևավորման խնդիրը և վերջին դարաշրջանի մեր պատմությունն ու ողբերգությունը, որ պիտի ուսումնասիրվի, ներկայացվի: Էլի բաներ կան, բայց կարծում եմ՝ դրանք

ամենակարևոր և աշխարհում ոչ միանշանակ ընդունվող ուղղություններն են: Եթե երկրորդի համար պետությունը, քաղաքական պատճառներով, միջոցներ է ծախսում, ապա առաջինի դեպքում ոչինչ չի արվում. միայն նկատվում է մերձգիտական և հակագիտական մոտեցումների ամենամյա աճ և հզորացում՝ զարգացման կորը դեպի ներքև է գնում:

***Ձեր առաջ քաշած գիտական վարկածները ինչ արձագանքներ են արացել հայկական և միջազգային գիտական շրջանակներում: Ծավալվել են բանավեճեր, քննարկումներ:***

Ներկայումս արտասահմանում մեր քննարկած հարցերի ոչ մի իրազեկ մասնագետ չկա: Կան մարդիկ, որ որոշ չափով տեղյակ են: 1968-ին Երևանում ռուսերենով հրատարակվեց ռուս գիտնական Իգոր Դյակոնովի գիրքը հայ ժողովրդի նախապատմության վերաբերյալ, որը 1984-ին թարգմանվեց անգլերեն: Եվ մինչև այժմ հայ ժողովրդի ծագման և ձևավորման մասին համարյա միայն մի բանավեճ կա արտասահմանում՝ Դյակոնովի տեսակետը համարվում է գիտական, որին հակադրվում է հայասական վարկածը, որպես ավելի քիչ գիտական և «ազգայնական»: Իսկ Հայաստանում էլ, ինչպես ասացի, գիտնականների մեծ մասը հայասական տեսակետի կողմնակիցներ են: Ինտերնետը հեղեղված է դյակոնովյան մոտեցման և հայասական վարկածի ջատագովների ու հակառակորդների փոխադարձ հայտյանքներով, բայց նրանք, իրականում, պարզ սիրողներ են և տեղյակ չեն նույնիսկ Դյակոնովի աշխատանքներից: Վերջինս, օրինակ, աշխատել է գիտականորեն ցույց տալ, որ Ուրարտուի ձևավորումից առաջ հայերենը պիտի ներկա լիներ Հայաստանի տարածքում, և ուրարտերենում կան հայկական փոխառություններ՝ «պրո-հայկական» քայլ, որը անսպասելի պիտի լինի երկու կողմի համար էլ: Կարելի է ասել, որ գիտական մակարդակով ռեալ քննարկում այդ հարցի վերաբերյալ աշխարհում գոյություն չունի: Իսկ Հայաստանում թուլացող գիտությանը զուգահեռ առկա է ուժեղացող «ազգային-ազատագրական» ուղղությունը: Ասենք, ուզում են Հայաստանի պատմությունը սկսել հնդեվրոպական նախահայրենիքից՝ այն տեղադրելով անպայման Հայաստանում, բոլորովին կարդացած չլինե-

լով և չիմանալով գիտության նոր փաստերը, մոտեցումները, տեսակետները: Դա գիտություն չէ, այլ սիրողական մոտեցում և, փաստորեն, Հայաստանում ևս այս հարցի գիտական քննարկում չկա: Եկող տարի ես կիրառարակեմ հայ ժողովրդի ծագման մասին իմ մենագրությունը, որ վաղուց եմ գրել, ուղղակի դժվարություններ կային տպագրության հետ կապված: Հույս ունեմ, որ այն կիրատարակեն նաև անգլերեն (հրատարակվել են 2017–2018 թթ.): Գուցե դրանով որոշակի դրական դինամիկա հնարավոր լինի հաղորդել գործընթացին, և որոշ հարցեր ավելի ճիշտ հունի մեջ դրվեն:

Իմ աշխատանքների մեծ մասը առասպելներին և էպոսին է վերաբերում: Մինչև վերջերս, միջազգային գիտության մեջ համարվում էր, որ համարյա ողջ հին հայկական հոգևոր մշակույթը փոխառված է իրանականից, կարելի է ասել, նրա մի դժգույն դրսևորումն է, ուր կան նաև որոշ աննշան այլ՝ սեմական, խոտաուրարտական, խեթական տարրեր: Հայկական մշակութային ինքնություն տարր, այսպիսով, կարծես չկար: Ես մի շարք մենագրություններ և հոդվածներ եմ հրատարակել հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով, փորձելով ցույց տալ հին հայկական հոգևոր մշակույթում բնիկ հայկական՝ հնդեվրոպական տարրի առկայությունը, ապա և նրա կապերը Հին Արևելքի հետ: Իրանական տարրը մեզանում ուշ է մտել և նրա դերը չափազանցված է: Կարծում եմ, որ իմ աշխատանքներից հետո ոչ ոք այլևս հայկական մշակույթը որպես իրանական ազդեցությունների դաշտ չի ներկայացնի:

***Ուրիշ ինչ հեղափոխական ծրագրեր ունեք, որ պատրաստվում եք իրականացնել սպազայում:***

Բացի ասածիցս, ես աշխատանքներ ունեմ ուրարտագիտության որոշ այլ խնդիրների, հին Հայաստանի կրոնի, ժամանակակից ֆոլկլորի, համեմատական առասպելաբանության, հայ լեզվաբանության վերաբերյալ, որոնցով միշտ զբաղվել եմ: 2006 թվականից, Արամ Քոչյանի և Երվանդ Գրեկյանի հետ համատեղ, հրատարակում ենք «Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies» հանդեսը (ես խմբագրի տեղակալն եմ): Այն նվիրված է Հին Արևելքի և հատկապես Ուրարտուի ուսումնասիրությանը և հայագիտությանը, տպագր-

վում է արևմտաեվրոպական լեզուներով: Դա միջազգային հեղինակության ունեցող հանդես է, որտեղ տպվել ու տպվում են աշխարհի մի շարք նշանավոր գիտնականներ (Վ.Իվանով, Յ.Պուսիվել, Մ.Սալվինի, Գ.Վիլիելմ, Գ.Մելչերտ և այլք):

Ներկայումս Արսեն Բորոխյանի հետ հրատարակության եմ պատրաստում մի գիրք՝ հոդվածների ժողովածու, նվիրված վիշապ կոթողներին: Նախանցյալ տարի մենք Հնագիտության և ազգագրության ինստիտուտում մի գիտաժողով կազմակերպեցինք, հուսալով առաջ մղել այդ կոթողների ուսումնասիրությունը: Դրանք մեր լեռնաշխարհի ամենահին, ամենահետաքրքիր և ամենահանելուկային հուշարձաններն են՝ աշխարհում նման բան չկա: Հետո, 2012 և 2013 թթ. Արսեն Բորոխյանը իր երկու արտասահմանյան գործընկերների հետ հայտնաբերեց մոտ երկու տասնյակ նոր վիշապաքար: Ըստ մեր ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանի, դա XXI դարի հայ հնագիտության ամենանշանավոր հայտնագործությունն է: Այդ կոթողների հայտնաբերումը և ուսումնասիրությունը սկսվել է 1909 թ. Նիկոլայ Մառի կողմից: Փաստորեն, հարյուր տարի անց միայն կարողացանք նոր իրական քայլ կատարել դրանց հայտնաբերման և ուսումնասիրության մեջ: Հույս ունենք այս տարի հրապարակել այդ գիրքը (հրատարակվել է 2015-ին):

Գրականության ինստիտուտի նախկին տնօրեն Ազատ Եղիագարյանի ջանքերով 2003-ից մեզանում կազմակերպվեց հայկական էպոսին նվիրված գիտաժողովների մի շարք: Վերջինը՝ չորրորդը, եղավ անցած տարի՝ նվիրված կովկասյան և հայկական էպոսների կապերին: Մասնակիցների մեծ մասը Կովկասից էր: Այդ հարցերի վերաբերյալ ուսումնասիրություններ գրեթե չկան: Բայց հետաքրքիր է, որ մեր կապերը կովկասյան էպոսների հետ ավելի խորն են, քան վրացականի հետ. այն, ինչ կա, ասենք, մեզ մոտ և Օսեթիայում, չկա Վրաստանում: Ազդեցությունները և կապերը, մի տեսակ, «թռել» են Վրաստանի վրայով: Այդ գիտաժողովի նյութերի ժողովածուն հավանաբար կխմբագրեն և կհրատարակեն հաջորդ տարի:

Մենք հիմա 4 հոգով՝ ես, Երվանդ Գրեկյանը, Նվարդ Տիրացյանը, Միքայել Բադալյանը, պետական գրանտ ենք շահել, որի ծրագրի շրջանակներում պիտի ուսումնասիրենք Ուրարտուի էթնիկական կազմը:

Եկող տարի մայիսին, իմ նախաձեռնությամբ, Երևանում տեղի կունենա համեմատական առասպելաբանության միջազգային ընկերակցության հերթական գիտաժողովը: Նմանօրինակ հեղինակավոր գիտաժողովներ մեզանում շատ չեն եղել, և այն, հուսով եմ, մի տոր խթան կլինի հայաստանյան գիտության զարգացման համար:

*Կարծիքներ կան, որ հասարակության և գիտության կապը կտրվել է: Պարմության մասին հասարակության պարկերացումների մակարդակը մնացել է նախորդ դարում, նոր մտրեցումներից տրեղյակ են միայն նեղ մասնագետները: Ինչ անել դասագրքային պարմության հետ, որի հիմքը 20-րդ դարի առաջին կեսի գիտնականների աշխարություններն են: Թեպետ դասագրքայինը միշտ էլ պահանդակյան է, սակայն շար չէ արդյոք այն հնացել և ոչ համարժեք պարկերացումներ տրալիս:*

Վերջին ժամանակներում դասագրքերի հետ չեմ շփվել, բայց տեղյակ եմ, որ որոշ հարցերում (նաև՝ մեր քննարկած) դասագրքերում ևս առկա են մերձգիտական մոտեցումներ: Կա նաև մի կարևոր բան՝ այդ դասագրքերը հաճախ հետաքրքիր չեն: Սովետական դարաշրջանում հայոց պատմությունը անցնելիս ես հաճախ տհաճություն եմ ապրել: Օրինակ, Լեոն բարձր դասարաններում շատ հետաքրքիր կարդացվում էր, իսկ դասագիրքը՝ ոչ: Գրված են վատ, երեխայի համար անհասկանալի են և անհետաքրքիր. հեղինակներն աշխարհից տեղյակ չեն և միայն մի աղբյուր ունեն՝ ռուսական դասագրքերը: Տասնհինգ տարի առաջ, ԱՄՆ-ում, վերջին դասարանի պատմության մի տեղական դասագիրք կարդացի մեծ հետաքրքրությամբ: Պետք է գտնել երեխաներին հետաքրքիր և հասկանալի ձևեր:

*Ժամանակին Արեղյանը, Աճառյանը, Մանանդյանը հսկայական աշխարանք էին կարարում, հաճախ՝ անգամ ինստիտուտների ծավալի աշխարանք: Այսօր հնարավոր է նման մասշտաբային աշխարանք. դրա կարիքը կամ, թե՛ մարդիկ չունեն նման կամք:*

Դարաշրջանն է փոխվել: Մեր դարաշրջանը Լեոնարդո դա Վինչիներ չի ծնում: Մեր ոչ մի ինստիտուտ չի կարող հիմա Աճառյանի աշխատանքը կատարել, բայց քանի որ նա արդեն եղել է, նրա գործի հիման վրա փորձում ենք առաջ գնալ: Միայն անձերի և դա-

րաշրջանի խնդիր չէ: Կան հզոր երկրներ, որտեղ գիտությունը մեծ անկումներ չի արձանագրում: Մեզ մոտ այդպես չէ, և մեր գիտության վիճակը պայմանավորված է պատմական դարաշրջանով՝ ասենք, պատերազմ կա թե չկա, կապեր կան առաջատար գիտական կենտրոնների հետ, թե ոչ: Աճառյանը, Աբելյանը, Մանանդյանը գնացել են Եվրոպա, կրթություն ստացել, վերադարձել, աշխատել այստեղ: Ոմանք հիմք են դրել իրենց նոր դպրոցներին: Մենք չունենք հնարավորություն այստեղ նոր աճառյաններ պատրաստելու: Կարող ենք միայն ուսանողներ և ասպիրանտներ ուղարկել սովորելու, կամ լավ դասախոսներ բերել այստեղ դասավանդելու: Դրա համար փող է պետք՝ ոչ այնքան շատ, և կամք: Ունենք շատ լավ լեզվաբան՝ Հրաչ Մարտիրոսյանը, որն ապրում է Հոլանդիայում: Ակտիվ գիտնական է, սիրում է դասավանդել: Կարելի է նրան բերել: Ռուս գիտնական Իլյա Յակուբովիչը նախանցյալ տարի Հայաստանում էր և ուզում էր մեկ տարի այստեղ ապրել և հնդեվրոպական լեզվաբանության կուրս վարել: Դրա համար պետք էր միայն վարձատրել նրան. կապերը այստեղ և կգարգացներ մեր գիտությունը: Ուսանողները, երբ լսեն լավ գիտնականների, զարգացման խթան կունենան: Բայց ցավոք, դա չի արվում:

Ներկայումս մեր՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը շատ հզոր, գիտության հիմքերի վրա կանգնած ինստիտուտ է: Ինչո՞ւ: Հնագիտությունը, որ ինստիտուտի առաջատար ճյուղն է, օբյեկտիվ գիտություն է: Ինչքան էլ պայծառացնենք մեր հնագիտությունը, այն Հին Եգիպտոսի, Միջագետքի, Հունաստանի հզորությունը չունի ո՛չ մշակութային առումով, ո՛չ տարածվածությամբ: Մենք չենք կարող հորինել ու պնդել, որ մենք բուրգեր ենք ունեցել՝ չկան: Եվ հնագիտությունը մեզանում դինամիկ զարգանում է: Մենք ունենք կապեր արևմտյան հնագետների հետ: Նրանք են գալիս, մերոնք են գնում, մշտապես մասնակցում ենք միջազգային գիտաժողովների: Մեր հնագետներից ոմանք խոսում են օտար լեզուներով: Այս վիճակը նաև այլ օբյեկտիվ պատճառ ունի. արտասահմանյան հնագետների համար Հայաստանի հողը, նրա ընդերքի հնագիտական մնացորդները հետաքրքիր են: Գալիս են պեղելու, ուսումնասիրելու: Իսկ մյուս հումանիտար գիտությունների համար կամք և միջոցներ են պետք:

*Լեզվաբան Հրաչ Մարտիրոսյանը ակտիվ է ֆեյսբուքում, հրապարակում է հայոց լեզվի պատմությանը վերաբերող մատչելի գործեր: Ինչո՞ւ Դուք և ուրիշ գիտնականներ չեք շարադրում Ձեր: Ժամանակի պակասն է, թե՛ այլ պատճառներ կան:*

Իմ տարիքն արդեն մեծ է, և ես ինտերնետաֆեյսբուքյան կերպար չեմ: Ֆեյսբուքից ես ինձ վատ եմ զգում: Ինձ համար Հայաստանի իրականության գլխավոր թերություններից մեկն այն է, որ ամեն ինչ շատ է քաղաքականացված, ինչպես և հայագիտությունն է քաղաքականացված: Անընդհատ իրար «սխալ հանելը» և հայիոյելը առաջընթաց չի կարող ստեղծել: Կարծում եմ, որ քաղաքական ենթատեքստով մշտական հակադրվածությունները արդյունավետ չեն և վնասում են մեր ժողովորին: Երեկ իմ ընկերը մի դրվագ պատմեց Սարոյանի «Antranik of Armenia» գրվածքից: Ֆրեզնոյում մի հայ մյուսին չի վերադարձնում պարտքը, բայց Անդրանիկին տեսնելուց հետո ուզում է վերադարձնել, իսկ մյուսը չի վերցնում: Անդրանիկի հետ հանդիպումը փոխում է վերաբերմունքն իրար նկատմամբ: Պետք է կարողանալ միավորել մարդկանց, ոչ թե թշնամացնել:

*Իլուր, 18 սեպտեմբեր, 2013*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Նախաբան	5
<b>ՄԱՍ ԱՌԱՋԻՆ</b>	
Առասպելաբանական երկյակ հակադրությունները և հայոց հիմնական ներքին հակասությունը	11
Առասպելաբանական եղբայրները և հայոց ենթաէթնիկ խմբերը	22
Առասպելաբանական ժամանակը և հայաստանյան իրականությունը	32
Առասպելաբանական խաբեբան և հայաստանցի հայր	43
Ջոհի առասպելությոը և հայոց ողբերգությունը	53
Առասպելաբանական երկվորյակները, հայր և եղբայրը «Եռամաս գաղափարախոսությունը» և ժամանակակից իրականությունը	62 79
<b>ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ</b>	
Հայոց պատմությունը և վիպական բանահյուսությունը	86
Ցեղասպանություն և ազգաճնություն	102
Ֆիդայու կերպարը հայ բանահյուսության մեջ	113
Հայոց ենթաէթնիկ բաժանման շուրջ	121
<b>ՄԱՍ ԵՐՐՈՐԴ</b>	
Մանկական բանահյուսությունը որպես ուղիղ ճանապարհ	129
1. Քաչալ Նազիկի և այլոց մասին	129
2. Ալա-Բալարնիցա և այլն	141
3. Finita la comedia	147
Մի հաշվերգի ողիսականը	149
Հայկական Ալա-բալա-նիցան	150
Այլ ժողովուրդների հաշվերգեր ալա-բալա տարրով	151
Բովարիայից Հայաստան	154

## ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

Լեզվական աղավաղումներ	156
Մակարոյժ բառեր և արտահայտություններ	157
Մոդայիկ բառեր և ձևեր	167
Թուրքերեն բառեր	173
Հին, բայց հավերժանալու ձգտող սխալներ	174
Ցուցանակներ և այլ անվանումներ	177
Գովազդի լեզու	181
Ռուսական և անգլիական առոգանություններ	183
Գրական լեզու, խոսակցական լեզու, բարբառ, ժարգոն	185
Կայացած ազգն իր պատմությունից չի վախենում	191

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ  
ԱՌԱՍՊԵԼ  
ԵՎ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էջադրումը և ձևավորումը՝  
Արթուր Հարությունյանի



ՀՀ ԳԱԱ Հնագիտության և  
ազգագրության ինստիտուտի և  
Մաշտոցի անվան Մատենադարանի  
գիտաշխատող: Հեղինակ է  
14 գրքի և շուրջ 300 գիտական,  
գիտահանրամատչելի և այլ  
հրապարակումների, տպագրված  
Հայաստանում, Ռուսաստանում,  
Եվրոպայում և Ամերիկայում:  
Աշխատանքի հիմնական  
ուղղություններն են՝ Հայաստանի  
նախապատմություն, հնագույն  
պատմություն և մշակույթ,  
Հայաստանի, հին Արևելքի և  
Կովկասի հին կրոններ, առասպելներ  
և էպոսներ, համեմատական  
առասպելաբանություն,  
բանահյուսություն, լեզվաբանություն:

ISBN 978-9939-9178-7-0



9 789939 917870